

ՎԻՈՒԵՏՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ:
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ**

2015



*Հրապարակվում է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի «Հեռանկարային
ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն» ծրագրի, շրջանակներում
(Պայմանագիր 10-19/1-2)*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1.1. Հետխորհրդային պետությունների կայացման հիմնախնդիրների առանձնահատկություններն ու դրանց լուծման հնարավորությունները

1.2. «Պետության կայացածություն» հասկացությունը. հիմնական մոտեցումներ

1.3. Պետության կայացածության գնահատման մեթոդները

ԳԼՈՒԽ 2. ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԿԱՊԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԵՏ

2.1. Ազգերի ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, ընդգրկումը և բովանդակությունը ժամանակակից միջազգային իրավունքում

2.2. Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման գործընթացները

2.3. Պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները: Մոնտեվիդեոյի կոնվենցիա

2.4. Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման քաղաքական գործոնը

ԳԼՈՒԽ 3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԿՈՆՏԼԻԿՏԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

3.1. Պետության կառուցման պատմական և կառուցվածքային ժառանգությունը

3.2. Պետության կառուցման խնդիրն արդի գլոբալ միջավայրում

3.3. Պետության կառուցումը պայմանավորող կարևորագույն գործոնները

ԳԼՈՒԽ 4. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԶՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Զճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունները

4.2. Զճանաչված պետությունների կայացածության գնահատման հեռանկարները. «Խաղաղություն աշխարհին» ցուցիչ

ԳԼՈՒԽ 1.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1.1. Հետխորհրդային պետությունների կայացման հիմնախնդիրների առանձնահատկություններն ու դրանց լուծման հնարավորությունները

Պետության ստեղծումը յուրաքանչյուր ժողովրդի գլխավոր նպատակներից է՝ որպես իր անվտանգության, բարեկեցության և բնականոն զարգացման ապահովման հիմնական մեխանիզմ: Հատկանշական է, որ 20-րդ դարի երկրորդ կեսին՝ ՄԱԿ-ի կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո, միջազգային իրավունքում տեղի ունեցած լուրջ զարգացումների արդյունքում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ճանաչվել է միջազգային իրավունքի բարձրագույն, անվերապահ նորմ¹ և արձագանագրվել է պետականաստեղծման երկու բուռն շրջան: Առաջինը 60-70-ական թվականների ապագադրության ալիքն էր, որի արդյունքում ձևավորվեց յոթ տասնյակից ավելի նոր պետություն², երկրորդը՝ 90-ականների սկիզբը, երբ ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի փլուզումներից հետո անկախություն հռչակեցին երկուսուկես տասնյակից ավելի երկրներ: Ընդ որում, դրանց մի մասի անկախությունը ճանաչվեց անմիջապես, մյուսները դեռևս մնում են չճանաչված: Այդուհանդերձ, թե՛ 20-րդ դարի երկրորդ կեսին, թե՛ մինչ այդ ստեղծված պետությունների փորձը ցույց է տալիս, որ պետության ստեղծումը և անգամ միջազգային ճանաչումն ինքնաբերաբար չի հանգեցնում անվտանգության, բարեկեցության և բնականոն զարգացման ապահովմանը: Ավելին, խիստ բազմազան են պետություններում առկա իրավիճակներն ու զարգացման հետագծերը, ինչն էլ ավելի է դժվարացնում այնպիսի բարդ համակարգերի կատարելագործումն, ինչպիսին պետությունն է, և միանգամայն բնական է պետությունների գործունեության արդյուվետության կամ կայացածության գնահատման մեթոդների, մոդելների ու ցուցանիշների ստեղծմանն ուղղված գիտական հետազոտությունների թվի կտրուկ աճը վերջին տասնամյակների ընթացքում, որոնց նպատակն է ոչ միայն գնահատել իրավիճակն, այլև բացահայտել առկա թերությունների պատճառներն ու օբյեկտիվ հիմք ստեղծել վերոհիշյալ խնդիրների լուծման համար:

Այդ խնդիրները հատկապես բարդ են ԽՍՀՄ փլուզման հետևանքով անկախության ձեռք բերած պետությունների համար, որոնք ստիպված են եղել հաղթահարել առանձնահատուկ դժվարություններ և դիմակայել մի շարք բարդ մարտահրավերների: Դրանք հետևանք էին ոչ միայն համաշխարհային պատմության մեջ նախադեպը չունեցող համակարգային ճգնաժամի՝ պայմանավորված ԽՍՀՄ փլուզմամբ, այլև այդ ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ գիտելիքների ու փորձի բացակայության և դրանց ձեռքբերման ճանապարհին թույլ տրված սխալների: Այդ փլուզումով սկսված և այսօր էլ շարունակվող գործընթացը՝ ինստիտուտների համընդգրկուն, արագ և հիմնարար վերակառուցումը, ինստիտուցիոնալ գործիքների միջոցների վերաբաշխումը, որոնք մատչելի են հասարակության անդամների համար և դրանց բնույթի, կառուցվածքի ու բաշխման

¹Թորոյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2008:

²United Nations Judicial Yearbook 1980, pp. 182-183.

արմատական փոփոխությունը հնարավոր չէ բնութագրել այլ կերպ, քան հասարակական համակարգի տրանսֆորմացիա³: Ընդ որում, այդ ամենը տեղի էր ունենում համաշխարհային նշանակության մեկ այլ, ոչ պակաս բարդ տրանսֆորմացիայի երևույթի՝ գլոբալիզացիայի խորացման պայմաններում: Ակնհայտ է, որ հետխորհրդային առաջին տարիներին և՛ խնդիրների լուծման դժվարությունները, և՛ թույլ տրված սխալներն ունեին նաև օբյեկտիվ պատճառներ. ծայրահեղ բարդ պայմաններում անհրաժեշտ էր ոչ միայն հիմքից կառուցել գրեթե բոլոր՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և մյուս համակարգերն, այլև դա անել բացառիկ պայմաններում, քանզի հասարակական-քաղաքական ոլորտին վերաբերող գիտելիքներն ու փորձը նոր պայմաններում անհրաժեշտ էր հիմնովին վերանայել⁴:

Տրանսֆորմացիայի առաջին տարիներին այդ բազմաշերտ անցումային շրջանը քաղաքագիտական հետազոտությունների տեսակետից թվում էր միանգամայն հասկանալի և մեկնաբանվող ու տեղավորվող ժողովրդավարացման «երրորդ ալիքի»⁵ տեսության շրջանակներում⁶: «Ժողովրդավարացման ալիքը» ենթադրում է որոշակի ժամանակահատվածում անցումներ ոչ ժողովրդավարական վարչակարգերից ժողովրդավարականին, որոնց թիվը անհամեմատ մեծ է տվյալ ժամանակահատվածում հակառակ ուղղությամբ անցումներից: Այս ալիքը ներառում է նաև ազատականացումը և մասնակի ժողովրդավարացումն այն քաղաքական համակարգերում, որոնք չեն դառնում լիովին ժողովրդավար: Առանձնացվում են ժողովրդավարացման երեք ալիքներ՝ ժողովրդավարացման առաջին ալիք (երկար)՝ 1826-1926թթ., առաջին ետընթաց՝ 1922-1942թթ., ժողովրդավարացման երկրորդ ալիք (կարճ)՝ 1943-1962թթ., երկրորդ ետընթաց՝ 1958-1975թթ., և, վերջապես, ժողովրդավարացման երրորդ ալիքը՝ 1975թ.-ից մինչև մեր օրերը⁷: Ժողովրդավարացման առաջին երկու ալիքներին հաջորդել է ետընթաց. մի շարք երկրներ, որոնք արդեն կատարել էին անցում դեպի ժողովրդավարություն, վերադարձան ոչ ժողովրդավարական կառավարման:

Հարկ է առանձնացնել աշխարհում տեղի ունեցած հինգ փոփոխություն, որոնք ժողովրդավարությանն անցման վերջին՝ 3-րդ ալիքի գործոններն են եղել՝

1. տնտեսական (երբեմն՝ ռազմական) անհաջողությունները հաղթահարելու գործություն չունեցող ավտորիտար կառավարություններում էլ ավելի խորացող դելեգիտիմացիայի խնդիրը,
2. 60-ականներին գլոբալ տնտեսական անախադեպ աճը, ինչն իր հերթին բարձրացրեց կենսամակարդակը, կրթության և ուրբանիզացիայի մակարդակը, միևնույն ժամանակ ավելացնելով հասարակության սպասելիքների և դրանց արտահայտման հնարավորությունները,

³Шнедер Ж. и др., Очерки трансформации в Венгрии, Социологические исследования, 2002, № 5, с. 47-56 (ըստ Թորոսյան Ս., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, «Գիտություն» հրատ., 2006):

⁴Թորոսյան Ս., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Գիտություն հրատ., Երևան, 2006:

⁵Անցած դարի 70-ական թվականների կեսերից մեծ թափ առավ ոչ ժողովրդավարական վարչակարգերի փուլման համաշխարհային գործընթացը՝ գրեթե բոլոր մայրցամաքներում: Մույն գործընթացը Ս. Հանթինգտոնը սահմանել է որպես «Ժողովրդավարացման երրորդ ալիք»; տես Huntington S., The Third Wave: Democratization in the Late Twentieth Century, University of Oklahoma Press, Norman, 1991.

⁶Թորոսյան Ս., Հասարակական համակարգի...:

⁷Huntington S., նույն տեղում:

3. կրոնական հաստատություններում, մասնավորապես կաթոլիկ եկեղեցու դիրքորոշումներում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք արտահայտվել են Վատիկանի խորհրդում 1963-1965թթ. և ազգային կաթոլիկ եկեղեցու ստատուս-քվոյի պաշտպանությունից անցումն ավտորիտարիզմի հակազդմանը,
4. արտաքին դերակատարների (օրինակ ԱՄՆ, ԽՍՀՄ՝ Գորբաչովի պաշտոնավարման ժամանակ, և Եվրոպական համայնք) ճնշումը մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման գործընթացներում,
5. «ձևագնդի էֆեկտը» կամ ցույցերի ազդեցությունը. միջազգային նոր կապերի հաստատման և զարգացման, ինչպես նաև մի շարք երկրներում ժողովրդավարացման միտումները⁸:

Սակայն մի շարք ուսումնասիրություններում լուրջ կասկածներ էին հայտնվում, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի համեմատությունները Հարավային Եվրոպայի և Լատինական Ամերիկայի հետավտորիտար ժողովրդավարությունների հետ մեծ հիմքեր չունեն⁹: Մասնանշվում են¹⁰ այդ գործընթացների առնվազն հինգ էական տարբերություն.

- հետխորհրդային տրանսֆորմացիան ունի երկակի բնույթ՝ հիմքից պետք է միաժամանակ ստեղծվեին և՛ բազմակարծիք ժողովրդավարություն, և՛ շուկայական տնտեսություն, մինչդեռ երրորդ ալիքի երկրներում հատկապես երկրորդի հիմքերն առկա էին,
- ժողովրդավարության երրորդ ալիքն ընդգրկում էր սոցիալ-տնտեսական և արդյունաբերական ավելի ցածր մակարդակ ունեցող երկրներ, որտեղ ավելի հեշտ էր իրականացնել մասնավորեցում և հասարակական զարգացման ռազմավարություն,
- երրորդ ալիքն ընդգրկող երկրներում գոյություն չունեին ազգային հարց, մինչդեռ հետխորհրդային երկրների ճնշող մեծամասնությունը ստիպված էր հաղթահարել նաև այդ մարտահրավերը,
- հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում քաղաքացիական հասարակության առկայության մասին կարելի է խոսել չափազանց մեծ վերապահումներով՝ սաղմնային ձևերով, այն էլ ոչ թե որպես խնդիրների փոխզիջումային լուծման մեխանիզմներ, այլ հասարակական անկայունության օջախներ,
- 70-ական թվականներին միջազգային իրավիճակն ավելի կայուն և նպաստավոր էր, քան 90-ականներին¹¹:

Վերջին երկու տասնամյակների իրադարձությունների համատեքստում էլ ավելի արդիական դարձան պետության կայացածության հիմնախնդիրները: Հատկանշական է, որ նոր անկախ պետությունների առաջացումը, նախկին սոցիալիստական պետությունների ազատականացումը և ժողովրդավարացումը ընդհանուր առմամբ ուղեկցվում էին ժողովրդավարությանն անցման ուսումնասիրությունների թվի մեծացմամբ: Սակայն, աստիճանաբար հետխորհրդային տարածաշրջանի և հետկոմունիստական երկրների ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողները, հասկանալով, որ ժողովրդավարացման ավանդական հայեցակարգը չի կարող ամբողջությամբ արտացոլել հետխորհրդային

⁸Huntington S., նշվ. աշխ.:

⁹Bunce V., Regional Differences in Democratization: The East Versus the South, Post-Soviet Affairs, 1998, vol. 14, № 13, pp. 23-31 (ըստ Թորոյան Ս., Հասարակական համակարգի...).

¹⁰Terry S., Thinking about Post-Communist Transitions: How Are They?, Slavic Review, 1993, vol. 52, № 2, pp. 333-337 (ըստ Թորոյան Ս., Հասարակական համակարգի...).

¹¹Թորոյան Ս., Հասարակական համակարգի...:

տրանսֆորմացիայի բազմավեկտոր քաղաքական զարգացումները, իրենց ուշադրությունը ժողովրդավարացման գործընթացից աստիճանաբար տեղափոխեցին դեպի պետության կայացման հիմնախնդիրները:

1.2.«Պետության կայացածություն» հասկացությունը. հիմնական մոտեցումներ

Քաղաքական գիտություններում արդեն իսկ կուտակվել է պետությունների կայացածության էմպիրիկ ուսումնասիրությունների բավական մեծ փորձ: Խնդիրն ակտիվ քննարկումների առարկա է սկսած անցած դարի երկրորդ կեսից, և այդ խնդրի ուսումնասիրություններն ունեն կարևոր հայեցակարգային նշանակություն, քանզի դրանց ընթացքում ձևավորվում են պետության կայացման գործընթացների ընդհանուր սկզբունքները, էմպիրիկ մոդելները, ձևավորվում է ազգային կամ տիպաբանական առանձնահատկությունները որոշող գործոնների հանրագումարը:

Թեև այդ ընթացքում արդեն իսկ իրականացվել են պետությունների կայացածության զգալի թվով էմպիրիկ ուսումնասիրություններ, սակայն ինչպես իրավամբ նշում է Ե. Մելեշկինան, պետությունների կայացածության հայեցակարգը դեռևս մնում է ոչ բավարար հստակեցված, քանզի դրա հայեցակարգային և գործառնության ձևակերպումների վրա հետագա աշխատանքի կարիք կա: Հեղինակը դա բացատրում է հետևյալ գործոններով՝

1. հեղինակները, օգտագործելով «պետության կայացածության» հասկացությունը, չեն բացատրում, թե կոնկրետ ինչ իմաստ են դրա մեջ դնում,
2. հետազոտողների միջև չկա համաձայնություն, թե ինչ է հարկավոր հասկանալ այդ տերմինի տակ,
3. գոյություն ունեն իմաստի ձևակերպման օբյեկտիվ դժվարություններ, որոնք կապված են այդ հասկացության բարդության և տեսակետների բազմազանության հետ¹²:

Խնդրի լուծման բարդությունը պայմանավորված է մի շարք այլ հանգամանքներով ևս: Այս կամ այն պետության հնարավորությունների և կարողությունների մասին խոսելիս՝ հետազոտողները շատ հաճախ օգտագործում են այնպիսի անորոշ բառեր, ինչպիսիք են «ուժեղ», «թույլ»¹³: Հարկ է նշել, որ պետությունները բնութագրող «ուժեղ» և «թույլ» ձևակերպումների վերաբերյալ տարբեր հեղինակների պատկերացումները մեծապես տարբերվում են միմյանցից՝ սկսած պետական ապարատների արդյունավետ գործունեությունից մինչև պետության զգալի միջամտությունը հասարակության կյանքին, ավտորիտար կառավարումը, զարգացած հանրային սեկտորը և արտաքին ազդեցությունը չթույլատրելու կարողությունը¹⁴:

Երբեմն այս կամ այն երկիրը նկարագրելու համար մի շարք հեղինակներ օգտագործում են վիճելի հասկացություններ, ինչպիսիք են «վերահսկողություն», «պետության ուժ» կամ «պետության թուլություն», «չկայացած պետություններ» և այլ ձևակերպումներ: Որոշ ուսումնասիրություններում, որոնցում այդ արտահայտություններն օգտագործվում են

¹²Мелешкина Е., Исследования государственной состоятельности: какие уроки мы можем извлечь?, Политическая наука, № 2, 2011, с. 9-27.

¹³Мелешкина Е., նույն տեղում:

¹⁴Lauridsen L., The Bebate on the Developmental State, Development Theory and the Role of the State in Third World Countries, J. Martinussen (ed.), Roskilde univ. centre, Roskilde, 1991, pp. 108–133 (ըստ Мелешкина Е., նույն տեղում):

այս կամ այն երկիրը կամ երկրների խումբը բնութագրելու համար, որպես ապացույց ներկայացվում են փաստական նյութեր: Այնուամենայնիվ, հաճախ բացակայում է ուսումնասիրվող երևույթի էմպիրիկ մոդելը, գնահատման գործիքը և տվյալների հստակ ամրագրումը: Ի հավելումն, նմանատիպ բառերի և բառակապակցությունների օգտագործումն էմպիրիկ հետազոտություններում հղի է հասկացությունների խեղաթյուրմամբ¹⁵, և, ինչն ավելի վտանգավոր է, հետազոտությունների արդյունքների կամայական մեկնաբանությամբ՝ քաղաքական նպատակներով¹⁶:

Որոշ հեղինակների աշխատանքներում փորձ է արվում խուսափել վերոհիշյալ բարդություններից՝ պետությունների կայացածության հիմնախնդիրը դիտարկելով էմպիրիկ համեմատական վերլուծությունների պրիզմայով: Ուսումնասիրությունների մեկ այլ խումբ էլ փորձ է արել տալ այդ հիմնախնդրի առանձին բաղադրիչների սահմանումներ: Այսպիսով, հիշատակության արժանի աշխատանքները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի¹⁷:

Առաջին խմբի աշխատանքները անդրադառնում են պետականության սահմանմանը և ենթադրում են դրա երկու հատկորոշիչների՝ պետականության (statehood) և պետության կայացածության (stateness) բացահայտումը: Հեղինակներն ուսումնասիրում են կարգավիճակի ազդեցությունը տարածքային միավորների կազմավորման վրա, մասնավորապես միջազգային գործընթացներին մասնակցությունը և այդ միավորների դերն այդ գործընթացներում¹⁸:

Այս խմբում և առհասարակ պետության կայացածությանը նվիրված աշխատանքների շարքում առանձնահատուկ հիշատակման է արժանի Ջ. Նեթթը, ով առաջարկել է «պետության կայացածություն» եզրը 1968թ. հրապարակված «Պետությունը որպես բովանդակային փոփոխական» հոդվածում, մասնավորապես՝ «պետականության կայացածության» (state-ness) կամ «պետության կայացածության» (nation-ness) փոփոխականների անկախության գաղափարը: Նեթթը պետության կայացածության՝ որպես

¹⁵Сартори Дж., Искажение концептов в сравнительной политологии, Полис, № 3, 2003, с. 67-77.

¹⁶МелешкинаЕ., նույնտեղում:

¹⁷Տես նաև МелешкинаЕ., Формирование новых государств в Восточной Европе, ИНИОН РАН, Москва, 2012.

¹⁸Nettl J., The State as a Conceptual Variable, World politics., Vol. 20, N 4, Princeton, 1968, pp. 559-592; Tilly Ch., Reflections on the History of European State-Making, The Formation of National States in Western Europe, Ch. Tilly (ed.), Princeton University Press, Princeton, 1975; Tilly Ch., War Making and State Making as Organized Crime, Bringing the State Back in/ Ed. by Evans P., Rueschemeyer D., Skocpol T., Cambridge University Press, Cambridge, 1985; Spruyt H., The Sovereign State and its Competitors. An Analysis of System Change, Princeton University Press, Princeton, 1996; Lindberg S., Forms of State, Governance and Regime: Reconceptualising the Prospects for Democratic Consolidation in sub-Saharan Africa, International Political Science Review 22 (2), 2001, pp. 173-199; Lindberg S., Democratization by Elections: A New Mode of Transition?, John Hopkins University Press, Baltimore, 2009; Lehbruch G., Consociational Democracy and Corporatism in Switzerland, Publius: The journal of federalism, Vol. 23, N 2, Oxford, 1993, pp. 43-60; Fukuyama F., State-Building: Governance and World Order in the 21st Century, Cornell University Press, Ithaca, 2004; Fukuyama F., Building Democracy After Conflict, "Stateness" First, Journal of Democracy, Vol. 16, No. 1, 2005, pp. 84-88; Bartolini S., Restructuring Europe: Centre Formation, System Building, and Political Structuring between the Nation State and the European Union, Oxford University Press, Oxford, 2005; МельвильА., ИльинМ., МелешкинаЕ. и др., Политический атлас современности: Опыт многомерного статистического анализа политических систем современных государств, МГИМО-Университет, Москва, 2007.

պետության ուժի կամ թուլության ցուցիչի մեկնաբանության կողմնակիցն էր և գտնում էր, որ կայացածությունը կարող է ի հայտ գալ պետական կառավարման և մյուս ինստիտուտների գործառնությամբ (ֆունկցիոնալ) բնութագրիչներում, որոնք արտացոլում են օրենքի կիրառման, ներկայացուցչական գործառնությունների իրականացման և նմանատիպ այլ գործընթացների առկայությունը¹⁹:

Պետության կայացածությունը, Ջ. Նեթթի կարծիքով, ունի 2 հարթություն՝ տարածքային և ֆունկցիոնալ: Առաջինը ենթադրում է գերակայություն իշխանության մյուս սուբյեկտների վրա, երկրորդը՝ կառավարության իշխանության տարածման շրջանակները, նրա «մասնակցության» աստիճանը (մի շարք խնդիրներ, որոնց լուծման գործընթացում ներգրավված են պետական իշխանությունները, շրջանակները, որոնց միջամտում է պետությունը): Այս տեսության շրջանակներում Նեթթը առաջարկել է որոշ պատմականորեն ձևավորված քաղաքական միավորների (Պրուսիա/Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և ԱՄՆ) խմբավորման և դասակարգման համակարգ: Սակայն, քանի որ Նեթթի մոտ պետության կայացածության հասկացության մանրամասն հայեցակարգումը (conceptualization) և ձևայնացումը (operationalization) բացակայում են, նրա առաջարկած սխեման չի կարող օգտագործվել որպես ունիվերսալ հետազոտական գործիք:

Վաղ հետազոտությունների շարքում հիշատակության է արժանի նաև Չ. Թիլլի աշխատանքը, որը պետության կայացածությունը դիտարկում է կառուցվածքային հատկությունների (պայմանական «արտաքին» և «ներքին») տեսանկյունից որպես «մակարդակ, որտեղ կառավարման գործիքները տարբերակված են (differentiated), համակենտրոնացված, ինքնավար (autonomous) և պաշտոնապես փոխհամակարգված»²⁰: Հեղինակը՝ որպես պետությունների կազմավորման գործոններ դիտարկում է նաև միջազգային գործընթացներին մասնակցությունը, պատերազմները և բռնի ուժի դրսևորման այլ տեսակները: Նրա կարծիքով ժամանակակից պետության կայացածության ձևավորման համար հարկավոր է բռնության և ռեսուրսների կուտակում և համակենտրոնացում: Այս հետևությունը, ինչպես և պետության կայացածության Թիլլիի մեկնաբանությունը, հիմնականում եվրոպական երկրների ձևավորման ուսումնասիրությունների արդյունք են: Ըստ այդմ, առանձին դերակատարների իշխանական ռեսուրսների ավելացումը չի բերում պետության ձևավորմանը, քանի որ այս դերակատարները սկսում են մրցակցել միմյանց հետ իշխանության համար: Համակենտրոնացումն առանց միավորման նույնպես չի հանգեցնում պետության կայացմանը, քանի որ առկա ռեսուրսների մակարդակը թույլ չի տալիս ձևավորել համակարգված իշխանական հարաբերություններ, ինչպես նաև բավականաչափ ընդհարձակ պետական կառավարման մարմինների ցանց:²¹

90-ականներին պետությունների կայացածությանը նվիրված ուսումնասիրություններն ունեին այլ հենք: Մասնավորապես, Հ. Սպրույտը առաջ քաշեց պետության և իր մրցակիցների միջև զոյատևման համար պայքարի հասկացությունը: Համաձայն այդ հայեցակարգի՝ հիերարխիկ և կենտրոնամետ կառավարումը պետությունները դարձրել է պարագիտությունը (freeriding) և ուխտադրությունը (defection) սանձելու առավել

¹⁹Nettl J., The State as a Conceptual Variable, World politics, Vol. 20, N 4, Princeton, 1968, pp. 559-592.

²⁰Tilly Ch., Reflections on the History of European State-Making, The Formation of National States in Western Europe, Ch. Tilly (ed.), Princeton University Press, Princeton, 1975.

²¹Tilly Ch., War Making and State Making as Organized Crime, Bringing the State Back in, Ed. by Evans P., Rueschemeyer D., Skocpol T., Cambridge University Press, Cambridge, 1985.

արդյունավետ և ազդեցիկ գործիք՝ դրանք վերածելով իրենց հասարակությունների ռեսուրսների մոբիլիզացման լավագույն միջոց²²: Ըստ այդմ, ժամանակակից պետություններն իրենց կարգավիճակի համար պարտական են հենց կազմակերպական արդյունավետությանը, ինչի շնորհիվ նրանց հաջողվել է նվաճել և պաշտպանել «բռնության հարկադրման լեգիտիմության» մենաշնորհը՝ համաձայն վերերյան հայտնի ձևակերպման:²³

Ավելի ուշ, որպես պետությունների կայացածության գնահատման հնարավորություն, Ս. Բարտոլինին առաջարկեց ուսումնասիրել վերազգային ինտեգրումը և դրա հետևանքները²⁴: Այդ մոտեցումը թույլ է տալիս բացատրել ոչ միայն ժամանակակից պետությունների ձևավորման գործընթացներն, այլ նաև նրանց ընթացիկ տրանսֆորմացիաները՝ պայմանավորված գլոբալացման գործընթացով, միջազգային ինտեգրմամբ, վերազգային կազմավորումների ստեղծմամբ և այլ նմանատիպ գործընթացներով: Հարկ է նաև նշել, որ Բարտոլինին այդ ունիվերսալ տրամաբանությունը կարողացավ մեծ հաջողությամբ կիրառել եվրոպական ինտեգրման վերլուծության շրջանակներում: Յուրաքանչյուր տարածքային միավորի ձևավորումը նա դիտարկել է քաղաքական կենտրոնի կայացման, ինչպես նաև անդամակցության և քաղաքական կազմավորման չափանիշների սահմանման պայմաններում: Նմանատիպ մոտեցումը թույլ է տալիս նկարագրել աշխարհի յուրաքանչյուր կետում պետության առաջացումը և զարգացումը որպես մի գործընթաց, որն իր հերթին ենթադրում է տարածքային միավորում, ինստիտուցիոնալ պետական միավորի կառուցվածքի ձևավորում և համայնքի միավորման սոցիալ-մշակութային մեխանիզմներ²⁵:

Նշված խմբում, թերևս, առանձնահատուկ ուշադրության են արժանի Ֆ. Տուկոյամայի աշխատանքները, ով փաստում է, որ մեր օրերում խնդիր է ոչ թե պետությունների աճող «հետամնացությունը» (obsolescence), այլ չափից ավելի մեծ թվով պետությունների «սկաբությունը» (weakness), քանի որ մինչ օրս լուծված չէ, այսպես կոչված, «թույլ» (weak) կամ «ձախողված» (failed) պետությունները լիարժեք գործող ժամանակակից պետությունների (fully functioning modern polities) փոխակերպման խնդիրը: Հեղինակը շեշտում է ինստիտուտների որոշիչ դերը պետության զարգացման և կայացման գործընթացում՝ զուգահեռականներ անցկացնելով իշխանության շրջանակների, կարողությունների և արդյունավետության միջև: Որքան կայացած է պետությունը, այնքան ավելի արդյունավետորեն է այն կատարում ժողովրդի անվտանգության և բարգավաճման ապահովման իր դերը և ավելի մեծ ներդրում է ունենում միջազգային կայունության պահպանման գործում: Հիրավի, ինստիտուցիոնալ զարգացման համար առաջարկը նույնքան կարևոր է որքան պահանջարկը, սակայն, երբ ինստիտուտների ներքին պահանջարկը բավարար չէ, ապա ինստիտուցիոնալ զարգացումը պետք է խթանվի արտաքին միջամտության միջոցով: Մա, իր հերթին, հղի է մարտահրավերներով, քանի որ, չնայած իրենց հնարավոր բարի մտադրությունների, միջազգային դոնորները երբեմն հանցակից են դառնում բազմաթիվ զարգացող երկրներում ինստիտուցիոնալ կարողությունների

²²Spruyt H., *The Sovereign State and its Competitors. An Analysis of System Change*, Princeton University Press, Princeton, 1996.

²³Вебер М., *Политика как призвание и профессия, Избранные произведения*, Ю.Н. Давыдов (сост., общ. ред. и послесл.), П.П. Гайдено (предисл.), Прогресс, Москва, 1990.

²⁴Bartolini S., *Restructuring Europe: Centre Formation, System Building, and Political Structuring between the NationState and the European Union*, Oxford University Press, Oxford, 2005.

²⁵Bartolini S., *Restructuring Europe....*

ոչնչացմանը: Ըստ այդմ, դոնորները պետք է ոչ թե պարզապես հասցեատերերին տրամադրեն այն ծառայությունները, որոնք ինստիտուցիոնալ կարողությունների արդյունքում են առաջանում, այլ որպես առաջնային նպատակ ընտրեն հենց այդ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ուղին, որպեսզի ստեղծվեն ինքնուրույն գործող և զարգացող տեղական ինստիտուտներ, որոնք չեն վերադառնա նախկին իրավիճակին արտաքին միջամտության դադարեցումից հետո²⁶:

Անդրադառնալով հետկոնֆլիկտային պետության կայացածության ամրապնդման շրջանակներում ժողովրդավարության հաստատմանը՝ Ֆուկույաման փաստում է, որ հետկոնֆլիկտային շրջանում քաղաքական ինստիտուտների վերակառուցումը բախվում է երկու խնդրի: Առաջին խնդիրն այն է, որ արտաքին կառավարումը կարող է խաթարել պետության կողմից ինքնուրույն գործող և զարգացող տեղական քաղաքական ինստիտուտների զարգացումը: Երկրորդ խնդիրը առաջացել է պետության կառուցման և ժողովրդավարության հաստատման գործընթացների միջև գործող հակասությունների պատճառով, քանի որ առաջինը փորձում է կառուցել իշխանություն, մինչդեռ երկրորդը փորձում է սահմանափակել այն: Ի հավելումն նշված խնդիրների, ծառանում է մեկ այլ՝ էլ ավելի բարդ խնդիր. նախքան հնարավոր կլինի ապահովել ժողովրդավարական կամ տնտեսական զարգացում, հարկավոր է ունենալ պետություն: Ինչպես ցույց տվեց փորձը, կատաղի քաղաքական մրցակցությունը, որը խթանել էր Եվրոպայում պետության կառուցման գործընթացը, ծնունդ է տվել երրորդ աշխարհի համեմատաբար չկայացած պետությունների: Ուստի, «պետության կայացածությունը» պետք է «խնդրել, փոխառել կամ գողանալ» այլ աղբյուրներից՝ սկսած բազմավեկտոր կառույցներից, ինչպիսիք են ՄԱԿ-ը կամ Համաշխարհային բանկը՝ իրենց ծավալած գործունեությամբ, օրինակ, Արևելյան Թիմորում և Սիերա Լեոնեում, մինչև ԵՄ Բարձրագույն ներկայացուցչի գրասենյակը (the Office of the High Representative) Բոսնիայում և ԱՄՆ օկուպացիոն իշխանությունն Իրաքում: Դոնորները խնդրահարույց պետությունների ներպետական դյուրաբեկության պատճառով ստիպված են լինում հանձն առնել ինքնիշխան պետության գործառույթները: Սակայն, արտաքին միջամտության արդյունքում ձեռք բերված պետության կայացածությունը խաթարում է տեղական դերակատարների սեփական կայուն ինստիտուտների ստեղծումը: Արդյունքում, պետության կառուցման և կայացման գործընթացում արտաքին երկարաժամկետ միջամտությունը հանգեցնում է կախվածության աստիճանի բարձրացմանը, ինչն իր հերթին, հանգեցնում է տեղի բնակչության կողմից տեղական դերակատարների և ինստիտուտների որպես ոչ լեգիտիմ դիտարկմանը²⁷:

²⁶Fukuyama F., *State-Building: Governance and World Order in the 21st Century*, Cornell University Press, Ithaca, 2004.

²⁷Fukuyama F., *Building Democracy After Conflict*, “Stateness” First, *Journal of Democracy*, Vol. 16, No. 1, 2005, pp. 84-88.

Այսպիսով, Ջ. Նեթթըլ²⁸, Չ. Թիլլին²⁹, Հ. Մպրույտը, Ս. Բարտոլինին³⁰, Ֆ. Ֆուկույաման³¹ առաջարկում են պետության կայացածության օպերացիոնալ սահմանումներ: Օպերացիոնալ սահմանումներ առաջարկող աշխատանքների խմբում, թերևս, առանձնահատուկ ուշադրության են արժանի «Արդիականության քաղաքական ատլաս»³² ծրագրի հեղինակների՝ Ա. Մելվիլի, Մ. Իլինի և Ե. Մելեշկինայի աշխատանքները, որոնց շրջանակներում մշակված ցուցիչի հիմնական ենթացուցիչները միտված են պետության կայացածության³³ աստիճանի գնահատմանը:

Երկրորդ խմբի ուսումնասիրություններն անդրադառնում են համայնքների քաղաքական կառուցման գործընթացի հայեցակարգմանը և ձևայնացմանը: Այդ ուսումնասիրությունների շարքին են դասվում Ա. Լեյփհարտի³⁴, Ս. Լիպսետի և Ս. Ռոքքանի³⁵, Դ. Քարամանի³⁶ ուսումնասիրությունները: Այդ աշխատանքներում առանձնակի ուշադրության են արժանացել սոցիալ-քաղաքական բաժանման հայեցակարգերը, որոնք իրենցից ներկայացնում են առավել առանցքային հասարակական տարաձայնությունները, որոնք ստացել են ինստիտուցիոնալ արտացոլում քաղաքական մակարդակում և կազմավորում են իշխանության և հասարակության համակարգը՝ որպես պետության քաղաքական «մարմին»:

Ինչպես նշում է Լեյփհարտը, գոյություն ունի մասնատված հասարակության քաղաքական խնդիրներն առանց ժողովրդավարությունը վտանգելու լուծելու 3 ուղի՝

1. առնմանում (assimilation), երբ մեծամասնական ընտրակարգով (օրինակ՝ վեստմինստերյան/բրիտանական) մեկ խոշոր խումբ կազմում է մեծամասնություն,
2. համագործակցային ժողովրդավարություն (consociational democracy),
3. մասնատում միատարր պետությունների, եթե առաջին երկու ուղիներն իրենց չեն արդարացնում³⁷:

²⁸Nettl J., նույն տեղում:

²⁹Tilly Ch., Reflections on the History of European State-Making, The formation of National States in Western Europe, Ch. Tilly (ed.), Princeton University Press, Princeton: 1975; Tilly Ch., War Making and State Making as Organized Crime, Bringing the State Back in/ Ed. by Evans P., Rueschemeyer D., Skocpol T., Cambridge University Press, Cambridge, 1985.

³⁰Bartolini S., The Political Mobilization of the European Left, 1860–1980: The Class Cleavage, Cambridge University Press, Cambridge, 2000; Bartolini S., Restructuring Europe: Centre Formation, System Building, and Political Structuring between the Nation State and the European Union, Oxford University Press, Oxford, 2005.

³¹Fukuyama F., State-Building: Governance and World Order in the 21st Century, Cornell University Press, New York, 2004.

³²Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., Политический атлас современности: Опыт многомерного статистического анализа политических систем современных государств, МГИМО–Университет, Москва, 2007; Political Atlas of the Modern World: An Experiment in Multidimensional Statistical Analysis of the Political Systems of Modern States, Andrei Melville (ed.), Institute for Public Projects, Expert Magazine. MGIMO University Press, Moscow, 2009.

³³Stateness Index: Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նույն տեղում:

³⁴Lijphart A., Thinking about Democracy: Power Sharing and Majority Rule in Theory and Practice, Routledge, New York, 2007.

³⁵Lipset S., Rokkan S., Cleavage Structures, Party Systems and Voter Alignments: An Introduction, Party Systems and Voter Alignments: Cross-National Perspectives, The Free Press, New York, 1967.

³⁶Caramani D., The Nationalization of Politics: The Formation of National Electorates and Party Systems in Western Europe, Cambridge University Press, Cambridge, New York, 2004.

³⁷Lijphart A., Democracy in Plural Societies: A Comparative Exploration, Yale University Press, New Haven, London, 1977.

Դիտարկելով այն փաստարկները, որ երկկուսակցական համակարգը նպաստում է հասարակության մեջ պառակտումներին կամ խորը մասնատված հասարակությունները չեն կարող ունենալ ժողովրդավարություն՝ Լեյփհարտը հակադարձում է, որ նշված փաստարկները ճիշտ չեն նույնիսկ Եվրոպայի պարագայում (որտեղ թվում է՝ դրանց ճիշտ լինելու հավանականությունն առավել մեծ է), հատկապես Շվեյցարիայում, Ավստրիայում, Բելգիայում և Նիդեռլանդներում: Փոխարենը, այդ փոքր, ըստ ազգային պատկանելության խիստ մասնատված պետությունները որդեգրել են, ինչպես Լեյփհարտն է բնորոշում, համագործակցային ժողովրդավարության մոդելը³⁸:

Այսպիսով, առաջադրելով համագործակցային ժողովրդավարության³⁹ (consociational democracy, լատիներեն՝ con –համա, sociare - գործակցել) մոդելը՝ Լեյփհարտը ներկայացնում է դրա 4 գլխավոր բնորոշ առանձնահատկությունները՝

1. «Մեծ կոալիցիա» (“Grand coalition”): Սովորաբար խորհրդարանական կուսակցությունները ձևավորում են «նվազագույն հաղթող կոալիցիա» (“minimum winning coalition”), այն է՝ կոալիցիա, որը բավարար է խորհրդարանում մեծամասնություն կազմելու համար, ինչը հնարավորություն է տալիս կոալիցիոն ուժերին նվազագույն զոհաբերություններ պահանջող քաղաքականություն վարել: Մինչդեռ համագործակցային ժողովրդավարության պայմաններում ձևավորվում է «Մեծ կոալիցիա», այն է՝ խորհրդարանում ներկայացված են նաև այնպիսի կուսակցություններ, որոնք ներկայացնում են հասարակության ավելի լայն զանգվածի շահերը: Ընդ որում, սույն մեխանիզմը կարող է դե-յուրե ամրագրված լինել (Շվեյցարիայի «Կախարդական բանաձևը») կամ դե-ֆակտո կիրառվել (Ավստրիա):
2. Փոխադարձ վետո: Բոլոր խմբերը (այդ թվում փոքրամասնություն կազմող) հնարավորություն ունեն արգելակել որոշում ընդունելու գործընթացը, այն է, ըստ էության, կարող են վետո դնել քաղաքականության փոփոխության յուրաքանչյուր փորձի վրա: «Փոխադարձ վետոյի» շնորհիվ խմբերը պահպանում են համակարգի կայունությունը, քանի որ այն նպաստում է միջխմբային խաղաղությանը, ուստի նրանք ժամանակ առ ժամանակ պատրաստ են գնալ փոխզիջումների:
3. Համամասնություն: Հասարակության տարբեր հատվածներին կառավարական սուբսիդիաների ձևով քաղաքացիական ծառայությունների և սուղ ֆինանսական ռեսուրսների տրամադրման մեթոդ է, ինչը հակադրվում է մեծամասնական ժողովրդավարության «հաղթողը ստանում է ամենը» (the winner takes it all) սկզբունքին: Համամասնությունը՝ որպես չեզոք և անկողմնակալ չափանիշ, որոշումների կայացման գործընթացն ազատում է տարակարծությունների տեղիք տվող մեծաքանակ պոտենցիալ խնդիրներից և, ըստ այդմ, կրճատում համագործակցային կառավարության առջև ծառայած խնդիրները: Ընդ որում, բոլոր խմբերն ազդում են որոշումների կայացման գործընթացի վրա ըստ իրենց թվային համամասնության: Այս առումով համամասնությունը և մեծ կոալիցիան ևս փոխկապակցված են. քաղաքական խնդիրների կարգավորման գործընթացում

³⁸Lijphart A., Democracy in Plural...

³⁹ Lijphart A., Consociational Democracy, World Politics, Vol. 21, No. 2, 1969, pp. 207-225; տես նաև՝ Daalder H., The Consociational Democracy Theme, World politics, Vol. 26, N 4, 1974, pp. 604-621; Lehmbrecht G., Consociational Democracy and Corporatism in Switzerland, Publius: The journal of federalism, Vol. 23, N 2, Oxford, 1993, pp. 43-60.

ազդեցության համամասնական բաշխումը կարող է միայն կիրառելի լինել, եթե որոշումների կայացման գործընթացին մասնակցում են բոլոր խմբերը: Մակայն, հատկանշական է, որ համամասնության սկզբունքը լրացնում է «Մեծ կոալիցիայի» հայեցակարգը, քանի որ որոշումների կայացման գործընթացում պետք է ապահովված լինի ոչ միայն բոլոր խմբերի ներկայացվածությունը, այլև դրանց ներկայացվածության համամասնությունը:

4. *Մասնակի ինքնավարություն և ֆեդերալիզմ:* «Փոքրամասնական գերակայություն» ենթադրող մասնակի ինքնավարությունը մեծամասնական ժողովրդավարությունից վերջնական շեղումն է. այն «Մեծ կոալիցիայի» տրամաբանական եզրափակումն է: Հասարակության բացառապես բոլոր խմբերը պետք է համամասնորեն մասնակցեն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացին: Այդուհանդերձ, կան մի շարք հարցեր, որոնց շրջանակում որոշումների կայացումը և դրանց կատարումն իրականացնում են մի շարք առանձին խմբեր: Մասնակի ինքնավարության առանձնահատուկ ձև է ֆեդերալիզմը, թեև, հատկանշական է, որ այն նաև կիրառելի է բազմակազմ հասարակություններում: Ֆեդերալիզմի՝ որպես տեսության, և համագործակցային տեսության միջև կարելի է անցկացնել մի շարք հատկանշական գույգահեռներ. առավել կարևոր առանձնահատկությունն է բնակչության բաղկացուցիչ մասերին ինքնավարության շնորհումը, ինչպես նաև իրենց «ֆեդերալ պալատում» (federal chamber) ավելի փոքր խմբերի գերներկայացվածությունը: Հետևաբար, ֆեդերալիզմի տեսությունը կարելի է համարել համագործակցային տեսության սահմանափակ և յուրահատուկ տեսակ: Մինևույն ժամանակ ֆեդերալիզմը կարող է օգտագործվել որպես համագործակցային մեթոդ, երբ բազմակազմ հասարակությունը «ֆեդերալ հասարակություն» է, այն է՝ հասարակություն, որում յուրաքանչյուր խումբ կենտրոնացած է մեկ տարածքում և առանձնացած մյուս խմբերից, այլ կերպ ասած՝ հասարակություն, որում խմբային բաժանումները համընկնում են տարածքային բաժանումների հետ⁴⁰:

Հետագայում զարգացնելով իր հայեցակարգը՝ Լեյփհարտը առաջադրում է կոնսենսուսային ժողովրդավարության մոդելը (համագործակցային ժողովրդավարության լրամշակված տարբերակը)՝ որպես յուրաքանչյուր պետության (ոչ միայն խորը մասնատված) «կատարյալ պետական կառավարման տեսակ»: Ինչպես նշում է հեղինակը, խիստ մասնատվածությունը կարող է կանխել խաչաձև (crossover, “swing”) քվերակությունը՝ նվազեցնելով այսօրվա փոքրամասնության՝ երբևէ վաղվա մեծամասնություն դառնալու իրատեսական հնարավորությունները: Ավելին, նմանատիպ հասարակությունում փոքրամասնության և մեծամասնության շահերի փոխհատումը քիչ հավանական է: Արդյունքում, փոքրամասնության իսպառ բացառումը կարող է հանգեցնել անկարգությունների և բռնության: Լեյփհարտը, որպես այդ խնդրի ինստիտուցիոնալ լուծում, առաջարկում է կոնսենսուսային ժողովրդավարությունը, քանի որ վերջինս թույլ է տալիս իրականացնել ժողովրդավարական կառավարումը՝ հաշվի առնելով փոքրամասնությունների իրավունքները և հնարավորություն տալով փոքրամասնություն կազմող խմբերին մասնակցել քաղաքական որոշումների կայացման գործընթացին: Թեև, այդ դեպքում

⁴⁰Lijphart A., Democracy in Plural..., pp. 25-44.

հավանական է օրենսդիր իշխանության նվազում, այդուհանդերձ, կառավարությունը հնարավորություն կունենա ներկայացնել շահերի ավելի լայն շրջանակ⁴¹:

Լիպսետը և Ռոքքանն ուսումնասիրում են հասարակության խմբաբաժանումներն (cleavages) ու վերջիններիս ազդեցությունը կուսակցական համակարգի ձևավորման վրա: Հեղինակներն առանձնացնում են հասարակության շրջանում խմբաբաժանումների երկու հիմնական տեսակ՝ տարածքային և ֆունկցիոնալ: Տարածքային խմբաբաժանումները հանդես են գալիս որպես ազգային-տարածաշրջանային բնութագրիչներ, որոնք գլխավորապես ներկայացնում են եկեղեցի – կառավարություն հարաբերակցության համատեքստում ազգային բարքերի, աշխարհիկության և գաղափարախոսության շուրջ, ինչպես նաև մշակութային խմբերի միջև «ենթական ընդդեմ գերիշխող մշակույթի» («subject vs. dominant culture») «պայքարը»: Վերոնշյալ խմբաբաժանումները ձևավորվել են Եվրոպան ողողած և Ֆրանսիայում մեկնարկած «ազգային» հեղափոխությունների համատեքստում: Մինչդեռ ֆունկցիոնալ խմբաբաժանումներն արդյունաբերական-տնտեսական շահերի վրա հիմնված և աշխատավորներ – գործատուներ / սեփականատերեր, ինչպես նաև ազատ շուկայական – ստվերային տնտեսության «պայքարը» ներկայացնող բնութագրիչներն են, որոնք էլ իրենց հերթին ձևավորվել են Մեծ Բրիտանիայում մեկնարկած արդյունաբերական հեղափոխությունների համատեքստում⁴²:

Հեղինակներն այնուհետև անդրադառնում են այն հարցին, թե ինչպես է տարածքային և ֆունկցիոնալ բաժանումների շրջանակում ընթացող «պայքարը» իր ինստիտուցիոնալ անդրադարձն ունենում կուսակցական համակարգերի ձևավորման և զարգացման վրա: Լիպսետը և Ռոքքանը եզրակացնում են, որ Արևմտյան Եվրոպայում ձևավորված կուսակցական համակարգերն ազգային և արդյունաբերական հեղափոխությունների հաջորդական փոխներգործության «արգասիքն» են, իսկ այդ «արգասիքների» միջև էական տարբերություններն, իրենց հերթին, առաջացել են այդ հեղափոխությունների ժամանակագրական և որակական տարբերությունների համատեքստում: Հեղինակները նաև մատնանշում են այդ գործընթացը պայմանավորող չորս նախապայման՝

1. Լեգիտիմություն. արդյո՞ք բողոքները և ընդդիմադիր շարժումները որակվում են որպես հիմնավորված, թե դավադիր:
2. Ընդգրկում. արդյո՞ք շարժման մասնակիցներն ու ընդդիմադիրներն ունեն միևնույն քաղաքացիական իրավունքները:
3. Ներկայացվածություն. արդյո՞ք ընդդիմադիր շարժումը կարող է ինքնուրույն ապահովել իր ներկայացվածություն և/կամ մուտքը կառավարություն, թե պետք է միանա արդեն իսկ գործող մեկ այլ շարժման:
4. Մեծամասնական իշխանություն. արդյո՞ք համակարգը լիովին մեծամասնական է, թե գործում է հակակշիռների և զսպումների համակարգ⁴³:

Սույն չորս փոփոխականների հիման վրա հեղինակներն առաջարկել են Եվրոպայի կուսակցական համակարգերի «գեներացման» մոդել, որի «Այլընտրանքային դաշինքների և ընդդիմության» ենթամոդելի շրջանակներում հետաքրքրական մոտեցում է ներկայացվում. պետական կառավարման մեխանիզմները վերահսկող կենտրոնական դերակատարները

⁴¹ Lijphart A., Patterns of Democracy: Government Forms and Performance in Thirty-Six Countries, Yale University Press, New Haven, 1999, pp. 31-47.

⁴² Lipset S., Rokkan S., նշվ. աշխ., pp. 9-13:

⁴³ Lipset S., Rokkan S., նշվ. աշխ., pp. 27-33:

(«nation-builders» - N) պայքարում են կենտրոնամետ իշխանությանը հակադրվող ծայրահեղական ընդդիմադիր խմբերի (P) դեմ (N against P): Ընդ որում, կենտրոնական դերակատարները կարող են թե՛ կրոնական – գաղափարական, թե՛ տնտեսական շահեր հետապնդող դաշինքներ կազմել⁴⁴: Արդյունքում, հեղինակներն հանգում են այն եզրակացության, որ վերջին տասնամյակում կուսակցական համակարգերը պահպանել են կայունություն, իսկ վերջիններիս ձևավորումն ու զարգացումը պայմանավորող հասարակության խմբաբաժանումները մնացել են անփոփոխ:

Քարամանին սոցիալ-քաղաքական բաժանումները ներկայացնում է յուրատեսակ տեսանկյունից՝ իր ուսումնասիրության շրջանակներում ուշադրությունը կենտրոնացնելով քաղաքականության ազգայնացման մակրոպատմական գործընթացների վրա: Օգտագործելով Արևմտյան Եվրոպայի տասնյոթ երկրներում առանձին ընտրատարածքներից ստացված մեծաքանակ տվյալներ՝ նա ուսումնասիրում է տարածքային կազմակերպությունների կողմից կուսակցություններին նախընտրական աջակցության տրամադրման հնարավորությունները, ինչպես նաև 19-րդ դարի կեսից ի վեր վերջիններիս վաղ շրջանում խորը մասնատված հասարակությունից մինչև համազգային հավասարության/միատարրության հաստատման էվոլյուցիան: Նկարագրելով քաղաքականության փոխակերպումն այնպիսի պայմաններում, որտեղ քվեարկողների վարքագիծը պետության տարբեր շրջաններում էականորեն տարբեր է, ինչպես նաև այնտեղ, որտեղ այն համանման է՝ Քարամանին կառուցում է իր ուսումնասիրությունը կուսակցական ընտանիքների (party families) հետազոտության շուրջ և բացահայտում է ներկայումս տարբեր պետություններում գրանցված հասարակության միատարրության տարբեր մակարդակների պատճառները: Սույն համատեքստում հեղինակը ներկայացնում է բոլոր կարևորագույն սոցիալական և քաղաքական բաժանումների (պետություն-եկեղեցի, գյուղ-քաղաք, էթնիկ-լեզվական, կրոնական, հասարակության խավեր) վերլուծությունը, որի շրջանակներում էլ նա զննահատում է ազգային և արդյունաբերական հեղափոխությունների արդյունքում առաջացած հասարակության խավերի միջև բաժանումների ազգայնացման (nationalizing) ազդեցությունը, ինչպես նաև նախաարդյունաբերական մշակութային գործոնների ազգային ինտեգրման արգելակումը⁴⁵:

Երրորդ խմբի ուսումնասիրություններն անդրադառնում են պետության կայացման ռազմավարական տեսակներին: Ի լրումն արդեն հիշատակված հեղինակների՝ Ս. Ռոքքանի, Ա. Լեյպհարտի, Չ.Թիլլիի, հիշատակության են արժանի նաև Հ. Ռեյխ⁴⁶, Ռ. Բրուբեկերի⁴⁷, ինչպես նաև Խ. Լինցի և Ա. Ստեփանի⁴⁸ աշխատանքները, որոնք կենտրոնանում են էթն-քաղաքական նույնականացման քաղաքականության և դրա տարբերակների վրա:

Հ. Ռեյխը, դիտարկելով վերջին վեց դարերի ընթացքում եվրոպական երկրներում կառավարությունների կողմից ազգային փոքրամասնությունների հանդեպ իրականացրած ցեղասպանության, էթնիկ գտումների, քաղաքացիական իրավունքների ոտնահարման և տեղահանման խնդիրները, պնդում է, որ առաջնորդներն օգտագործում են հալածանքների

⁴⁴Lipset S., Rokkan S., նշվ. աշխ., pp. 33-37.

⁴⁵Caramani D., նշվ. աշխ.:

⁴⁶Rae H., *State Identities and the Homogenisation of Peoples*, Cambridge University Press, Cambridge, 2002.

⁴⁷Brubaker R., *Nationalism Reframed: Nationhood and the National Question in the New Europe*, Cambridge University Press, Cambridge, 1996.

⁴⁸Linz J., Stepan A., *Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America and Postcommunist Europe*, John Hopkins university, Baltimore, London, 1996.

վերոնշյալ տարատեսակները, որոնք, ի դեպ, Ռեյը բնութագրում է որպես «պաթոլոգիկ միատարրացման» ("pathological homogenization"), որպես պետության կառուցման հատուկ ռազմավարություն՝ հաստատելով և վերահաստատելով իրենց իշխանությունը և լեգիտիմությունը: Իր աշխատանքում հեղինակը ներկայացնում է պետության կառուցման և վերնախավի կողմից գործի դրվող պաթոլոգիկ միատարրացման ռազմավարության միջև փոխհարաբերությունները, որոնք, առկա մշակութային ռեսուրսներին (օրինակ՝ կրոն) զուգահեռ, օգտագործվում են վերոնշյալ վերնախավի կողմից ժամանակակից պետության մեջ բացառիկ փակ քաղաքական համայնք կառուցելու համար՝ միաժամանակ նվազեցնելով արտաքին միջամտության աստիճանը: Ձևավորելով միատարր հասարակություն՝ քաղաքական վերնախավը լեգիտիմացնում է իշխանության վերարտադրությունը: Աշխատանքը, թերևս, առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև այն պատճառով, որ ներկայացնում է, թե ինչպես է ազգայնական գաղափարախոսությունն ազդում միջազգային պետական համակարգի ձևաչափի վրա՝ ներկայացնելով կոնկրետ դեպքեր մինչազգայնական և ազգայնական դարաշրջաններից, 15-րդ դարում հրեաների և մավրերի տեղահանումն Իսպանիայում, Լյուդովիկոս XVI-ի թագավորության օրոք հուգենոտների հետապնդումները Ֆրանսիայում, քսաներորդ դարում հայերի ցեղասպանությունը Թուրքիայում և էթնիկ զտումները նախկին Հարավսլավիայում⁴⁹:

Ազգայնականության, էթնիկ պատկանելության և ազգային ինքնության խնդիրների շրջանակներում, թերևս, հետաքրքրական և նորարարական ուսումնասիրություն է կատարել Ռ. Բրուբեկերը՝ ներկայացնելով 20-րդ դարում ազգայնականության առանձնահատկությունները և հեռանկարներն Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միության տարածքում: Հաշվի առնելով աշխարհագրական սահմանների վերաձևավորման խնդիրները՝ հեղինակն ուսումնասիրում է նախկինում բազմաէթնիկ կայսրությունների մաս կազմած և նախորդ դարի հիմնական քաղաքական իրադարձությունների ազդեցությունը իրենց վրա կրած ժամանակակից պետությունների «ազգային հարցի» հիմնախնդիրը: Ի տարբերություն թեմային նվիրված գրականության ճնշող մեծամասնության՝ Բրուբեկերը դիտարկում է ազգայնականությունը ոչ թե պետության «որոնման» շրջանակներում, այլ ուսումնասիրում է ազգայնականությունը, երբ այն «ունի» պետություն՝ ընդգծելով եռակողմ փոխներգործող սցենար. գերակշռող էթնիկ խմբի ("the core nation") ազգային նկրտումները, հարևան երկրներում բնակվող ազգակիցների խնդիրներով միայն վերջերս մտահոգված «մայր պետության» հավակնությունները և տեղի այլ էթնիկ փոքրամասնությունների՝ փոխհատուցման մասին պարբերական պահանջները⁵⁰:

Ինչ վերաբերում է Լինցին և Ստեփանին, ապա վերջիններս պետության կայացածությունը ներկայացնում են յուրատեսակ հարթությունում՝ պետության, ազգ(եր)ի և ժողովրդավարության միջև առկա եռամիասնական փոխհարաբերություններով պայմանավորված խնդիրների շրջանակներում: Իրենց աշխատանքում հեղինակներն օգտագործում են ժողովրդավարությանն անցման ու կայացման գործընթացների վերլուծության համար առանձնահատուկ կերպով կարևոր յոթ անկախ ընդհանրական փոփոխականների (որոնցից երկու առավել կարևորները հեղինակներն անվանում են մակրոփոփոխականներ՝ 1. պետության կայացածություն, 2. նախորդ վարչակարգի տիպ) տրամաբանորեն փաստարկված և մշակված տեսական շրջանակ նկարագրելու և վերլուծելու

⁴⁹Rae H., նշվ. աշխ.:

⁵⁰Brubaker R., նշվ. աշխ.:

համար դեռևս շարունակական բնույթ կրող ժողովրդավարացման գործընթացները երեք տարածաշրջաններում՝ Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա: Հեղինակները, կանխավ ներկայացնելով երկու կախյալ փոփոխականների՝ անցումային ժողովրդավարության և կայացած ժողովրդավարության սահմանումները, կայացած ժողովրդավարությանն անցման վարքային, արժեքային և սահմանադրական բաղադրիչները (մակարդակները), ինչպես նաև այն պոտենցիալ խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել, որպեսզի նորելուկ ժողովրդավարական վարչակարգերը հնարավոր լինի կայացած համարել, վերհանում են փոխկապակցված և միմյանց վրա փոխադարձաբար ազդող հետևյալ ոլորտների՝ ազատ և եռանդուն քաղաքացիական հասարակության, հարաբերականորեն ինքնուրույն քաղաքական հասարակության, օրենքի գերակայության, գործուն պետական կառավարման համակարգի և ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակության դերը և տեղը ժողովրդավարության կայացման գործում: Վերոնշյալ տեսական հիմքի վրա էլ վերլուծության են ենթարկվում ժողովրդարացման գործընթացում պետության կառուցման (state-building) և ազգակերտման (nation-building) տարբեր ռազմավարությունների նշանակությունը, երբ պետությունը և ազգը չեն համընկնում, կամ երբ ազգային պետությունն ու ժողովրդավարությունն ունեն տարամիտվող և փոխհակասող տրամաբանություններ, ինչը, ինչպես նշում են հեղինակները, բավական հաճախ է պատահում: Ընդունված կարծիք կա, որ անցումը ժողովրդավարության ենթադրում է պայքար ոչ ժողովրդավարական վարչակարգի դեմ, և ժողովրդավարության հետ հաստատվում է նոր լեզվաբանական համակարգ: Մակայն մի շարք երկրներում ոչ ժողովրդավարական վարչակարգերի ճգնաժամը միախառնվում է նաև սուր տարաձայնություններին, թե ինչից պետք է իրականում կազմված լինի հասարակարգը (կամ քաղաքական համայնքը) և թե որ դեմոսը կամ դեմոսները (բնակչությունը) պետք է լինեն տվյալ քաղաքական համայնքի անդամ: Երբ տարաձայնություններ են առաջանում քաղաքական համայնքի կազմավորած պետության տարածքային սահմանների և տվյալ պետությունում քաղաքացիության իրավունքի շուրջ, ծագում է պետության կայացածության հարցը: Ժողովրդավարության ձգտող ժամանակակից վարչակարգերը կարող են խստորեն տարբերվել այն հասարակարգերից, որոնք չունեն պետության կայացածության խնդիր, մինչև այնպիսիները, որտեղ ժողովրդավարության առկայությունն անհնար է, քանի դեռ պետության կայացածության հարցը չի լուծվել⁵¹:

Ի լրումն աշխատանքների այդ խմբերի, հիշատակության են արժանի նաև պետությունների և ժողովուրդների ձևավորման գործընթացի համար հայեցակարգային սահմանումներ առաջարկող աշխատանքները: «Դասականների» թվում հարկ է նշել Բ. Մուրի աշխատանքները, ով ուշադրությունը կենտրոնացնում է պետական միավորների ձևավորման այլընտրանքների վրա, Կ. Դոյչի աշխատանքներն, ով ներկայացրել է ժողովուրդների ձևավորումը որպես ազգային ստանդարտիզացիայի և սոցիալական մոբիլիզացիայի հանրագումար⁵², ինչպես նաև Ս. Ռոքքանի և նրա գործընկերների աշխատանքները⁵³: Ս. Ռոքքանը պետությունների և ժողովուրդների ձևավորման մոդելների

⁵¹Linz J., Stepan A., նշվ. աշխ.:

⁵²Deutsch K., Social Mobilization and Political Development, American political science review, Vol. 55, N 3, 1961, pp. 493-514.

⁵³Rokkan S., Cities, States and Nations: A Dimensional Model for the Study of Contrast in Development, Building states and nations: Method and data resources, Vol. 1., Sage, Beverly Hills, 1973, pp. 13-

նախագծման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձրել կենտրոնի ու ծայրամասի (periphery) և այլ սոցիալ-քաղաքական միավորների միջև փոխհարաբերություններին⁵⁴: Հենց այդ փոխհարաբերությունների հիման վրա է Ռոքքանը կառուցել Եվրոպայի հայեցակարգային քարտեզը⁵⁵, որի շրջանակներում առանձնացրել է ազգերի և պետությունների կազմավորման մոդելները⁵⁶:

Պետականաստեղծ գործոնների հայտնաբերման առումով հետաքրքրական են պատմական ինստիտուցիոնալիզմի կողմնակիցների աշխատանքները: Հատկապես նրանց աշխատանքների շնորհիվ 20-րդ դարի երկրորդ կեսին հետաքրքրություն առաջացավ պետության՝ որպես ուսումնասիրության օբյեկտի նկատմամբ⁵⁷: Այդ աշխատանքների մեջ առանձնահատուկ ուշադրության են արժանի նրանք, որոնցում վերլուծության է ենթարկվում ստեղծված ինստիտուցիոնալ ժառանգության ազդեցությունը պետության զարգացման վրա, ինչպես նաև պատմության ընթացքում ծագած ծայրահեղ իրավիճակները և դրանց ազդեցությունն ինստիտուցիոնալ որոշումներ ընդունող դերակատարների վրա⁵⁸: Մի շարք այլ աշխատանքներում էլ ուսումնասիրվում են այն պետությունների ձևավորման առանձնահատկությունները, որոնք ձևավորվել են կայսրությունների փլուզման հետևանքով⁵⁹:

Եթե պետության և ազգերի ձևավորման ուսումնասիրությունների սկզբնական շրջանում դրանց առարկան Արևմտյան Եվրոպայի երկրներն էին, ապա ավելի ուշ դրանք ընդգրկում էին այլ տարածաշրջանների պետությունները ևս, մասնավորապես, Եվրոպայի բնութագրիչ հատկանիշներն առանձնացնելով, Ս. Ռոքքանն և նրա գործընկերները փորձել են

38; Rokkan S., Territorial Structures in Western Europe: An Overview and Possible Model, Center Periphery Structures in Europe: An ISSC Workbook in Comparative analysis., Campus Verlag, Frankfurt am Main, 1987; Rokkan S., The Center-Periphery Polarity, Center Periphery Structures in Europe: an ISSC Workbook in Comparative analysis, Campus Verlag, Frankfurt am Main, 1987; Rokkan S. Territories, Centres, and Peripheries: Toward a Geoethnic-Geo-economic-Geopolitical Model of Differentiation within Western Europe, Centre and Periphery. Spatial Variation in Politics, ed. by J. Gottmann, Sage Focus Editions, Beverly Hills, London, 1980; Rokkan S., Valen H., The Mobilization of the Periphery, Approaches to the Study of Political Participation, Michelsen Institute, Bergen, 1962.

⁵⁴Rokkan S., Territories, Centres....

⁵⁵Rokkan S., Territorial Structures

⁵⁶Rokkan S., Cities, States

⁵⁷Bringing the State Back in, Ed. by Evans P., Rueschemeyer D., Scocpol T., Cambridge University Press, Cambridge, 1985.

⁵⁸Pierson P., Increasing Returns, Path Dependence, and the Study of Politics, American political science review, Vol. 94, N2, 2000, pp. 251-267; Pierson P., Politics in Time: History, Institutions and Social Analysis, Princeton University Press, Princeton, New Jersey, 2004; Mahoney J., The Legacies of Liberalism: Path Dependence and Political Regimes in Central America, Johns Hopkins University Press, Baltimore, 2001; Collier R., Collier D., Shaping the Political Arena, Princeton University Press, Princeton, 1991; Skocpol T., States and Social Revolutions: A Comparative Analysis of France, Russia and China, Cambridge University Press, Cambridge, 1979; Ziblatt D., Structuring the State: the Formation of Italy and Germany and the Puzzle of Federalism, Princeton University Press, Princeton, New Jersey, 2006; States and Development. Historical Antecedents of Stagnation and Advance, Ed. by Lange M., Rueschemeyer D., Palgrave Macmillan, New York, 2005, etc.

⁵⁹After Empire: Multiethnic Societies and Nation-Building. The Soviet Union, and the Russian, Ottoman and Habsburg Empires, Ed. By Barkey K., von Hagen M., Westview press, Oxford, 1997; Lieven D., Empire: the Russian Empire and its Rivals, Pimlico, London, 2003; Nationalism and Empire: The Habsburg Empire and the Soviet Union/ Ed. by Rudolph R., Good F., St. Martin's Press, New York, 1992.

կենտրոնի և ծայրամասերի փոխհարաբերությունների վերլուծության տրամաբանությունը կիրառել նաև այլ պետությունների համար⁶⁰: Իսկ Էյզենշտատը փորձել է բացահայտել կենտրոնի և ծայրամասերի մշակութա-քաղաքակրթական առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց փոխհարաբերությունները, որոնք բնորոշ են նախկին ֆեոդալական, կայսերական և ավանդապաշտ հասարակություններին: Նրա ուսումնասիրության շրջանակներն ընդգրկում են նաև նախկին ԽՍՀՄ պետությունները⁶¹:

Պետության կայացածության ուսումնասիրության առավել բազմակողմ տեսություն է առաջարկել Վ. Ֆրիցը: Համաձայն այդ տեսության պետության կայացածությունը ներառում է 3 հիմնական տեսանկյուն՝

1. պետության սփռվածության «չափ» կամ «տարածք», այն է հասարակական բարիքների շրջանառության փաստացի ծավալ (պետության եկամուտները, հիմնախնդիրները, պարտավորությունները և այլն): Հեղինակն իրավամբ նշում է, որ «տարածքը» կարող է լինել մեծ, սակայն օգտագործվել ոչ արդյունավետ,
2. արդյունավետ կառավարման կարողությունը (state capacity), որն իր մեջ ներառում է որոշումներ կայացնելու ունակությունը, դրանց իրականացումը և վերահսկողությունը: Այս պարամետրի շրջանակներում կարելի է հակադրել «մեխանիկական» կառավարման մոդելները և ենթակառուցվածքային արդյունավետությունը,
3. կառավարման «որակը» (good or bad governance), որը ներկայացնում է պետության գործունեության ընթացքը և արդյունքները: Այն արտահայտում է «ինքնիշխանության» առկայությունը կամ բացակայությունը, որն ունակ է երաշխավորել միանման խաղի կանոններ, իշխանության տարբեր կրողների միջև զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգ, վերնախավի պատասխանատվություն և հաշվետողակա-նություն: Այդ հարթությունում «վատ» կառավարման չափորոշիչը, որը ենթադրում է բռնապետական կառավարման ձև, տարբեր դերակատարների կողմից պետության «մասնավորեցում», պոպուլիզմի լայն կիրառում և այլն, հակակշիռ է «լավ» կառավարման չափորոշիչին, որին, բնականաբար, բնորոշ են հակադիր բնութագրեր⁶²:

Թեև Ֆրիցը պետության կայացածության իր էմպիրիկ հետազոտությունն օգտագործել է լոկ բյուջետային ոլորտի համար, սակայն այդ մոտեցումը բացառիկ նշանակություն ունի՝ որպես բազմակողմ մոդել ներկայացնելու առաջին փորձ:

Պետության կայացածության հասկացության մանրամասն, տրամաբանական և ոչ հակասական էմպիրիկ ձևակերպումը պատկանում է Ս. Բարտոլինիին, ով պետության կայացածության 4 մակարդակ է առանձնացրել՝

1. ռեսուրսների մոբիլիզացիայի համար կառույցի ստեղծում (բյուրոկրատիայի և հարկային համակարգի),
2. տարածքի արտաքին կոնսոլիդացման մարտահրավերի հաղթահարում (բանակի ձևավորում և ամրացում),

⁶⁰Rokkan S., *The Center-Periphery ...*, Rokkan S., *Territories, Centres...*

⁶¹Eisenstadt S., *Cultural Orientation and Center-Periphery in Europe in a Comparative Perspective, Mobilization Center-Periphery Structures and Nation-Building*, Univer-sitetsforlaget, Bergen, Oslo, Tromsø, 1981.

⁶²Fritz V., *State-Building: A Comparative Study of Ukraine, Lithuania, Belarus, and Russia*, Central European University Press, Budapest, New York, 2007.

3. ներքին կարգի պահպանում ուստիկանության և արդարադատության համակարգի օգնությամբ,

4. հասարակության համախմբման մեխանիզմների գործադրում, այդ թվում տնտեսական և սոցիալական շրջանակներին միջամտության ճանապարհով⁶³:

Եվրոպական երկրների էմպիրիկ համեմատություն անցկացնելու նպատակով Ս. Բարտոլինին այս չափումներից յուրաքանչյուրը ներկայացրել է ցուցանիշների համախմբի տեսքով: Այսպես, օրինակ, ռեսուրսների մոբիլիզացման կառույցի ստեղծումը բնութագրվում է չորս բաղադրիչներով՝

- հարկերի տեսակարար բաժնեմասը պետության ՀՆԱ-ում,
- պետական կառավարման ապարատների կողմից հավաքագրվող հարկերի տեսակարար բաժնեմասը հարկերի ընդհանուր համախմբում,
- հարկերի տեսակարար բաժնեմասը, որը հավաքագրվում է պետական մարմինների կողմից,
- բնակչության ընդհանուր թվաքանակի զբաղվածության տեսակարար մասնաբաժինը կենտրոնական պետական ապարատում⁶⁴:

Թեև Բարտոլինիի առաջարկած մոդելը բավական համընդգրկուն է, այն ևս զերծ չէ թերություններից: Մասնավորապես, այստեղ քիչ է հաշվի առնվում այս կամ այն պետության գոյության համատեքստը, կապված պետության՝ իր ֆունկցիոնալ բնութագրերի իրականացման տարբեր գործիքների օգտագործման հետ: Օրինակ, մի շարք երկրների համար (մասնավորապես Շվեյցարիա) բանակի առկայությունը, առավել ևս նրա չափերն ամենևին կայացածության կարևոր գործոն չեն: Այդ երկրները հաջողությամբ օգտագործում են ուրիշ մեխանիզմներ, մասնավորապես վերազգային կառույցները և անվտանգության երաշխիքները: Մինչդեռ գոյություն ունեն նաև այնպիսի երկրներ, որոնցում առկա է բնակչության թվաքանակի համեմատ մեծաքանակ բանակ (օրինակ Լեռնային Ղարաբաղ), սակայն դա դեռևս երաշխավորում այդ երկրներում պետության կայացածության հետ կապված խնդիրների բացակայությունը: Վիճելի է նաև բնակչության թվաքանակի շրջանակներում կենտրոնական պետական ապարատում զբաղվածության մասնաբաժնի օգտագործումը որպես ցուցանիշ: Կառավարման պետական մարմինների թե՛ թերզարգացած և թե՛ ուռճացած լինելը պետության կայացածության համար անցանկալի գործոններ են: Ըստ Մելեշկինայի, Բարտոլինիի առաջարկած մոդելը բազմաթիվ հարցեր է առաջացնում, որոնց ընդհանուր թվաքանակը ահագանգում է, որ առաջարկված օպերացիոնալ մոդելն ունի վերսալ չէ⁶⁵:

Այսպիսով, պետության կայացածության խնդիրն նվիրված ուսումնասիրությունները կենտրոնանում են պետության կայացածության հիմնախնդրի առանձին բաղադրիչների սահմանման վրա (պետականության սահմանման⁶⁶, համայնքների քաղաքական կառուցման

⁶³Bartolini S., The Political Mobilization of the European Left, 1860–1980: The Class Cleavage, Cambridge University Press, Cambridge, 2000.

⁶⁴Bartolini S., նույն տեղում:

⁶⁵Мелешкина Е., նույն տեղում:

⁶⁶Nettl J., The State as a Conceptual Variable, World politics., Vol. 20, N 4, Princeton, 1968, pp. 559-592; Tilly Ch. Reflections on the History of European State-Making, The Formation of National States in Western Europe, Ch. Tilly (ed.), Princeton University Press, Princeton, 1975; Tilly Ch., War Making and State Making as Organized Crime, Bringing the State Back in, Ed. by Evans P., Rueschemeyer D., Skocpol T., Cambridge University Press, Cambridge, 1985; Spruyt H., The Sovereign State and its Competitors. An Analysis of System

հայեցակարգման և ձևայնացման⁶⁷, պետության կայացման ռազմավարական տեսակների որոնման⁶⁸, պետությունների և ժողովուրդների ձևավորման գործընթացին հայեցակարգային սահմանումներ առաջարկող⁶⁹ փորձեր), սակայն բացակայում են ընդհանրացնող հայեցակարգային աշխատանքները և համընդգրկուն էմպիրիկ համեմատությունները:

1.3. Պետության կայացածության գնահատման մեթոդները

Քաղաքական գիտություններում ըստ գնահատման արդյունքների ընդգրկման առանձնացվում են պետության կայացածության գնահատման հետևյալ ձևերը՝

- պետության կայացածության առանձին ոլորտների գնահատող ցուցիչների (index), որոնք ներկայացնում են պետության կայացածության միայն մեկ ոլորտի մանրամասն գնահատումը, ինչպես օրինակ՝ պետական կառույցների որակն ու լեգիտիմությունը, սոցիալական կայունությունը և այլն,

Change, Princeton University Press, Princeton, 1996; Bartolini S., Restructuring Europe: Centre Formation, System Building, and Political Structuring between the Nation State and the European Union, Oxford University Press, Oxford, 2005; Мельвил А., Ильин М., Мелешкина Е. и др., Политический атлас современности: Опыт многомерного статистического анализа политических систем современных государств, МГИМО–Университет, Москва, 2007.

⁶⁷Lipset S., Rokkan S., Cleavage Structures, Party Systems and Voter Alignments: An Introduction, Party Systems and Voter Alignments: Cross-National Perspectives, The Free Press, New York, 1967; Lijphart A., Thinking about Democracy: Power Sharing and Majority Rule in Theory and Practice, Routledge, New York, 2007; Daalder H., The Consociational Democracy Theme, World politics, Vol. 26, N 4, 1974, pp. 604-621; Caramani D., The Nationalization of Politics: The Formation of National Electorates and Party Systems in Western Europe, Cambridge University Press, Cambridge, New York, 2004.

⁶⁸Rokkan S., Cities, States and Nations: A Dimensional Model for the Study of Contrast in Development, Building states and nations: Method and data resources. Vol. 1, Sage, Beverly Hills, 1973, pp. 13-38; Lijphart A.: Thinking about Democracy: Power Sharing and Majority Rule in Theory and Practice, Routledge, New York, 2007; Daalder H., The Consociational Democracy Theme, World politics, Vol. 26, N 4, 1974, pp. 604-621; Tilly Ch., Reflections on the History of European State-Making, The Formation of National States in Western Europe, Ch. Tilly (ed.), Princeton University Press, Princeton, 1975; Rae H., State Identities and the Homogenization of People, Cambridge University Press, Cambridge, 2002; Brubaker R., Nationalism Reframed: Nationhood and the National Question in the New Europe, Cambridge University Press, Cambridge, 1996; Linz J., Stepan A., Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America and Postcommunist Europe, John Hopkins University Press, Baltimore; London, 1996.

⁶⁹Deutsch K., Social Mobilization and Political Development, American political science review, Vol. 55, N 3, 1961, pp. 493-514; Moore B., Social Origins of Dictatorship and Democracy, Beacon, Boston, 1968; Rokkan S., Cities, States and Nations: A Dimensional Model for the Study of Contrast in Development, Building states and nations: Method and data resources. Vol. 1, Sage, Beverly Hills, 1973, pp. 13-38; Rokkan S., Territorial Structures in Western Europe: An Overview and Possible Model, Center Periphery Structures in Europe: An ISSC Workbook in Comparative Analysis, Campus Verlag, Frankfurt am Main, 1987; Rokkan S., The Center-Periphery Polarity, Center Periphery Structures in Europe: an ISSC Workbook in Comparative Analysis, Campus Verlag, Frankfurt am Main, 1987; Rokkan S., Territories, Centers, and Peripheries: Toward a Geoethnic-Geo-economic-Geopolitical Model of Differentiation within Western Europe, Centre and periphery. Spatial Variation in Politics, ed. by J. Gottmann, Sage, Beverly Hills, London, 1980; Rokkan S., Valen H., The Mobilization of the Periphery, Approaches to the Study of Political Participation, Michelsen institute, Bergen, 1962.

- պետության կայացածության գնահատում ինտեգրալ մոդելների միջոցով, որոնք ներկայացնում են պետության կայացածության ոլորտների միաժամանակյա և մաքսիմալ համընդգրկուն գնահատումը:

1.3.1. Պետության կայացածության առանձին ոլորտների գնահատման մոդելները

Պետության կայացածության առանձին ոլորտների գնահատման ցուցիչները թույլ են տալիս ներկայացնել պետության կայացածության առանձին ոլորտի մանրակրկիտ ուսումնասիրությունը՝ հնարավորություն տալով բացահայտել և շտկել առկա բացթողումները և խնդիրները: Մակայն, պետության կայացածության մակարդակի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար վերոնշյալ ցուցիչները կիրառելի չեն, քանի որ դժվար է համադրել պետության կայացածության տարբեր ոլորտների գնահատումը ներկայացնող բոլոր ցուցիչները: Դա պայմանավորված է նրանով, որ այդ ցուցիչների համադրումը կպահանջի շատ ժամանակ, ջանք և ամենակարևորը՝ համադրման արդյունքները կարող են լինել վիճելի, քանի որ տարբեր ցուցիչներ ունեն տարատեսակ մեթոդաբանություն, չափանիշներ և հետազոտական խմբեր: Դժվարություն է ներկայացնում նաև այն փաստը, որ գոյություն ունեն նույն ոլորտը գնահատող տարբեր ցուցիչներ (օրինակ՝ Human Development Index⁷⁰ - Quality of Life Index⁷¹, Freedom in The World⁷² - Institutional Basis of Democracy⁷³), և պետության կայացածությունը գնահատելու համար հարկ է ընտրել, թե նրանցից որ մեկն օգտագործել:

Հարկ է նաև նշել, որ չնայած տարբեր վիճակագրական ծառայությունների կողմից հավաքագրվող վիճակագրական տվյալների բազմազանությանը, կայացածության գնահատման տեսակետից կարևոր մի շարք ցուցիչներ ենթակա չեն թվային գնահատման: Մասնավորապես, խոսքը վերաբերում է անցումային քաղաքական գործընթացների տարբեր գործոնների՝ ավտորիտարիզմից «ձերբազատման» առանձնահատկություններ, մրցակցային ընտրությունների արդյունքում իշխանափոխություն, քաղաքական և այլ տեսակների կոնֆլիկտների լուծման ժամանակ բռնի ուժի կիրառում, միջազգային ազդեցության համար բաց լինելը, հիմնական սահմանադրական կանոնների փոփոխականություն, սահմանադրական կարգի հիմունքների շուրջ համաձայնություն, պետական լիազորությունների սեփականաշնորհում և այլն:

Պետության կայացածության առանձին ոլորտները գնահատող ցուցիչներից ստորև կներկայացվեն սույն աշխատանքի շրջանակներում առավել մեծ հետաքրքրություն ներկայացնողները:

Կառավարման ցուցիչը (Governance Indicators), որը ներկայացնում է Համաշխարհային Բանկը՝ 215 երկրների համար, ձևավորվում է տվյալների 31 բազաների հիման վրա և ներառում է 6 չափում՝

1. ձայնի իրավունք և պատասխանատվություն (իշխանության),

⁷⁰Human Development Index 2015, <http://report.hdr.undp.org/>, (11.11.2016).

⁷¹Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նշվ. աշխ.:

⁷²Freedom in the World 2016, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>, (11.11.2016).

⁷³Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նշվ. աշխ.:

2. քաղաքական կայունություն,
3. կառավարման արդյունավետություն,
4. կարգավորման կարողություն (պետության կարողությունը մասնավոր հատվածի զարգացման արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման),
5. օրենքի գերակայություն,
6. կոռուպցիայի վերահսկողություն⁷⁴:

Կառավարման մակարդակը որոշելու համար օգտագործվել է 6 ցուցիչ, որոնք չունեն ենթացուցիչներ:

Մարդկային ներուժի զարգացման ցուցիչը (Human Development Index), որը ներկայացնում է ՄԱԿ անդամ 193 պետությունների գնահատումը, ինչպես նաև՝ Հնկոնգն ու Պաղեստինը: Հաշվարկվում է կյանքի հավանական տևողության, գրագիտության, ուսուցման ակնկալվող տևողության և մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամուտի մասնաբաժինը, որն էլ իր հերթին հաշվարկվում է ԱՄՆ դոլարի գնման փոխարժեքով⁷⁵:

Ցուցիչը վայելում է մասնագետների վստահությունն այն մշակողի և կիրառողի՝ ՄԱԿ Զարգացման Ծրագրի (UN Development Programme)⁷⁶, «քաղաքական չեզոքության», ինչպես նաև ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերով դեպարտամենտի (DESA)⁷⁷ տվյալների բազայի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի⁷⁸ տվյալների օգտագործման շնորհիվ: Ըստ մարդկային պոտենցիալի զարգացման մակարդակի՝ այն թույլ է տալիս պետությունները բաժանել չորս խմբի՝

1. շատ բարձր,
2. բարձր,
3. միջին,
4. ցածր:

ՄԱԿ Զարգացման Ծրագրի 2010թ. զեկույցում⁷⁹ առաջարկվել են չափման այլ չափանիշներ, որոնք ներառում են բազմաշերտ անհավասարություններ, գենդերային անհավասարություններ, մեծածավալ ձախողումներ և կորուստներ (անհատների և խմբերի հիմնական կենսական կարիքների բավարարման հնարավորությունների կրճատում կամ մերժում), որոնք թույլ են տալիս բարելավել մարդկային պոտենցիալի զարգացման գնահատման ցուցիչը:

Պետության դյուրաբեկության ցուցիչը (State Fragility Index)⁸⁰ մշակվել է “Polity” նախագծի⁸¹ շրջանակներում և հաշվարկվել է 162 պետությունների համար և ընդգրկում է 3 հարթություն՝

⁷⁴Worldwide Governance Indicators, <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home>, (11.11.2016).

⁷⁵Human Development Report 2015, http://hdr.undp.org/sites/default/files/2015_human_development_report.pdf, (11.11.2016).

⁷⁶United Nations Development Programme, http://www.undp.org/content/undp/en/home/operations/about_us.html, (11.11.2016).

⁷⁷UN Department of Economic and Social Affairs, <https://www.un.org/development/desa/en/>, (12.11.2016).

⁷⁸UNESCO Institute for Statistics, <http://uis.unesco.org/>, (11.11.2016).

⁷⁹The Real Wealth of Nations: Pathways to Human Development, Human Development Report 2010, 20th Anniversary Edition, http://hdr.undp.org/sites/default/files/reports/270/hdr_2010_en_complete_reprint.pdf, (11.11.2016).

⁸⁰State Fragility Index, <http://www.systemicpeace.org/inscr/SFImatrix2015c.pdf>, (11.11.2016).

1. քաղաքական բռնության դեպքեր՝ զինված հակամարտություններ,
2. կառավարում («Ժողովրդավարություն» - «ավտոկրատիա» առանցքով),
3. զարգացում⁸²:

Մեկ այլ ցուցիչ՝ «Ազատության վարկանիշն աշխարհում» առաջարկում է «Ֆրիդրմ հաուս»-ը: 1973-2016թթ.⁸³ Տարեկան զեկույցներում, ինչպես և նախորդ զեկույցներում, պահպանվել են վարկանիշային հետազոտության մեթոդաբանության հիմունքները: Այսպես, առանձնացված երկրներում ազատության վարկանիշի սահմանման համար կիրառվում են երկու հիմնական ամփոփ ցուցիչներ՝ քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություններ: Նշված երկու ամփոփ ցուցիչները ձևավորվում են թվով 7 ենթացուցիչների հանրագումարի հաշվարկի հիման վրա, որոնցից երեքը դասվում են քաղաքական իրավունքների, մնացածը՝ քաղաքացիական ազատությունների ենթացուցիչների ներքո. այսպես՝

Քաղաքական իրավունքներ

1. ընտրական գործընթաց,
2. քաղաքական բազմակարծություն և մասնակցություն,
3. կառավարության գործունեություն,

Քաղաքացիական ազատություններ

1. ինքնարտահայտման և դավանանքի ազատություն,
2. հաղորդակցական և կազմակերպական իրավունքներ,
3. օրենքի գերակայություն,
4. անձնական ինքնավարության և անհատական իրավունքներ:

Յուրաքանչյուր ցուցիչ և ենթացուցիչ ենթադրում է թվային միավոր 1-7 թվերի սահմանում, որտեղ 1 միավորը բնորոշում է տվյալ պետության քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների բարձրագույն, 7-ը՝ ամենացածր վարկանիշը: Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություն ցուցիչների համադրումը տալիս է տվյալ երկրի ազատության վարկանիշային կարգավիճակը, որը ենթադրում է 3 կատեգորիա՝ ազատ, մասամբ ազատ և ոչ ազատ: 1-2.5 միավորը համարվում է ազատ, 3.0-5.0՝ մասամբ ազատ, իսկ 5.5-7.0՝ ոչ ազատ պետություն:

«Տնտեսական ազատության ցուցիչը»⁸⁴, որը «Ուոլ Սթրիթ» օրաթերթի հետ համատեղ ներկայացնում է «Հերիթիջ» հիմնադրամը, տարբեր պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա գնահատել և 2013թ. հունվարի 12-ին հրապարակել է 184 պետությունների համար 2013թ.-ի տնտեսական ազատության ինդեքսը: Այդ ցուցիչի գնահատման սկզբունքները և մեթոդաբանությունը հետևյալն է՝ նախ, կիրառվում է 0-ից մինչև 100 տոկոս գնահատման համակարգ, ընդ որում՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի բարձր աստիճանի մասին: Երկրորդ, տնտեսական ազատության

⁸¹Polity IV Project: Political Regime Characteristics and Transitions, 1800-2010, <http://www.systemicpeace.org/polity/polity4.htm>, (11.11.2016).

⁸²Marshall M., Cole B., Global report 2009: Conflict, governance, and state fragility, Center for Systemic Peace and Center for Global Policy, George Mason University, 2009, <http://www.systemicpeace.org/vlibrary/GlobalReport2009.pdf>, (14.11.2016).

⁸³Freedom in the World 2016, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>, (11.11.2016).

⁸⁴Index of Economic Freedom 2016, The Heritage Foundation in Partnership with WALL STREET JOURNAL, <http://www.heritage.org/index/>, (12.11.2016).

ինդեքսը գնահատելիս օգտագործվում են 50 անկախ տնտեսական գործոններ, որոնք ներառված են և գնահատվում են 10 գործոնների շրջանակներում: Այդ գործոններն են՝

1. գործարարության ազատությունը,
2. առևտրի ազատությունը,
3. հարկաբյուջետային ազատությունը,
4. կառավարության ծախսերը,
5. դրամավարկային ազատությունը,
6. ներդրումների ազատությունը,
7. ֆինանսական ազատությունը,
8. սեփականության իրավունքը,
9. կոռուպցիայից զերծ մնալը,
10. աշխատանքի ազատությունը:

Բացի այդ, «Հերիթիջ» հիմնադրամը դիտարկվող պետությունները, տնտեսական ազատության ցուցիչներին համապատասխան, դասակարգում է ըստ հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես, 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես «ազատ», 70.0-79.9%՝ «հիմնականում ազատ», 60.0-69.9%՝ «չափավոր ազատ», 50.0-59.9%՝ «հիմնականում ոչ ազատ», 49.9%-ից ցածր՝ «ճնշված» երկրներ⁸⁵:

«Արդիականության քաղաքական ատլաս»⁸⁶ հետազոտական ծրագրի շրջանակներում իրականացվել է ժամանակակից աշխարհի 192 ինքնիշխան պետությունների համեմատական ուսումնասիրությունը, որը բազմաշերտ վիճակագրական վերլուծության հիման վրա մշակել է նրանց տիպաբանությունը: Հետազոտությունը ներառում է քաղաքական համակարգերի հետազոտության համեմատական ուսումնասիրության քանակական մեթոդների օգտագործման մեթոդաբանական ապարատի նկարագրության և հետազոտության հիմնական արդյունքների ամփոփում: Արդյունքները ներկայացված են պետությունների վարկանշային ցուցակի տեսքով հինգ ցուցիչների հիման վրա՝

1. պետականության ցուցիչ,
2. արտաքին և ներքին սպառնալիքների ցուցիչ,
3. միջազգային ազդեցության ներուժի ցուցիչ,
4. կյանքի որակի ցուցիչ,
5. ժողովրդավարության ինստիտուցիոնալ հիմքերի ցուցիչ:

Պետականության կայացածության ցուցիչը (Stateness Index)⁸⁷ կիրառվում է պետության իր գոյությունը պահպանելու, ինքնուրույն զարգացումն ապահովելու, ծագող ներքին և արտաքին խնդիրները լուծելու («կայացած ինքնիշխան պետություններ» - «չկայացած ոչ ինքնիշխան պետություններ» առանցք), այն է՝ իր ինքնիշխանության լիազորությունների օգտագործման, կարողության գնահատման համար: Յուրաքանչյուր իր գնահատման շրջանակներում օգտագործում է հետևյալ փոփոխականները՝

1. արտաքին օգնության մասնաբաժինը պետության համախառն ազգային եկամուտի մեջ,

⁸⁵Index of Economic Freedom: The Heritage Foundation with WALL STREET JOURNAL, <http://www.heritage.org/index/about>, (13.11.2016).

⁸⁶Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նշվ. աշխ.:

⁸⁷Stateness Index - Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նշվ. աշխ.:

2. վարչակարգի կայունության վրա արտաքին հակամարտությունների ազդեցությունը,
3. արտաքին պարտքը,
4. ինքնիշխան պետության գոյության ժամանակահատվածը,
5. ներքին հակամարտության առկայությունը և զոհերի քանակը,
6. ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների արտոնագրային հայտերի հարաբերակցությունը,
7. ներքին հակամարտությունների տարածքային հավակնությունները,
8. պետության տարածքում օտարերկրյա ռազմական ստորաբաժանումների ներկայությունը,
9. ազգային արտարժույթի կապը ռեժիմի հետ,
10. գերիշխող էթնիկ խմբի մասնաբաժինը պետության բնակչության համագումարում⁸⁸:

Չնայած գնահատված ՄԱԿ-ի անդամ պետությունները բոլորն էլ պաշտոնապես ինքնիշխան են, սակայն իրականում նրանց ինքնիշխանության աստիճանը տարբեր է: Մի շարք պետություններ, ընդ որում, ոչ մեծ թվով, իրենց ներքին և արտաքին քաղաքականության հաստատման գործընթացում լիովին անկախ և ինքնուրույն են, ինչպես նաև ի վիճակի են ինքնուրույն ապահովել իրենց ինքնիշխան լիազորությունների իրականացումը: Մյուս պետությունների համար այդ լիազորությունների իրագործումը մեծապես կախված է այլ պետություններից, միջազգային հանրությունից, այլ ոչ թե սեփական քաղաքական, տնտեսական և այլ հնարավորություններից: Նրանք ի գորու չեն ինքնուրույն պատասխանել մի շարք ներքին և արտաքին մարտահրավերների:

Ըստ էության, այս ցուցիչի օգնությամբ չափվում է պետության ինքնիշխանության, կառավարման, կայացածության և արդյունավետության աստիճանը: Այս ցուցիչում միավորված են յուրաքանչյուր պետության գոյության գլխավոր չափանիշները միավորող առավել ունիվերսալ, քանակական և բավարար չափով օբյեկտիվ որակները արտահայտող փոփոխականները:

Արտաքին և ներքին սպառնալիքների ցուցիչը⁸⁹ օգտագործվում է 15 ենթացուցիչների հիման վրա տվյալ պետությունների արտաքին և ներքին միջավայրից եկող սպառնալիքների և մարտահրավերների ծավալները և ինտենսիվությունը որոշելու համար:

Արտաքին սպառնալիքների դեպքում խոսքը վերաբերում է արտաքին միջավայրում ծագող սպառնալիքներին՝ այլ պետությունների կողմից ակտիվ միջամտություն, ահաբեկչություն, համաշխարհային տնտեսություն, իսկ ներքին սպառնալիքների դեպքում՝ երկրի ներքին կյանքում ծագող սպառնալիքներին՝ ներքին հակամարտություններ, ընդվզումներ, բնապահպանության հետ կապված խնդիրներ: Արտաքին և ներքին սպառնալիքները մեծապես սահմանում են պետության գոյության պայմանները և իրականացրած գործառնությունները: Բոլոր պետությունները ստիպված են այսպես թե այնպես արձագանքել իրենց առաջ ծագող սպառնալիքների և մարտահրավերների տարատեսակ կոմբինացիաներին: Սույն ցուցիչում ներկայացված են հիմնական և առավել տարածված սպառնալիքները, որոնց այս կամ այն չափով բախվում կամ կարող են բախվել

⁸⁸Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նշվ. աշխ.:

⁸⁹նույն տեղում:

ժամանակակից աշխարհի բոլոր պետությունները և, որոնք կարող են ունենալ վիճակագրական/էմպիրիկ արտահայտություն:

Յուրաքանչյուր պետություն կարող է բախվել միաժամանակ թե՛ վերոնշյալ (օրինակ՝ Եթովպիա, Աֆղանստան⁹⁰), թե՛ մի շարք առանձնահատուկ սպառնալիքների: Արձագանքներն այս սպառնալիքներին և մարտահրավերներին, իհարկե, կարող են տարբերվել, սակայն, ընդհանուր առմամբ, և ոչ մի պետություն, սեփական գոյատևման և զարգացման շահերից ելնելով, չի կարող անտեսել դրանք:

Միջազգային ազդեցության ներուժի ցուցիչն⁹¹ ունի 8 ենթացուցիչ և միավորում է այն առանձնահատկությունները, որոնք բնութագրում են պետության միջազգային քաղաքականության և տնտեսության մեջ ինտեգրվելու քանակական և որակական առավել էական և ունիվերսալ մեխանիզմները, դրանց դիրքը ժամանակակից միջազգային և համաշխարհային տնտեսական հարաբերություններում, ինչպես նաև դրանց միջազգային ներգործության և ազդեցության գործիքները:

Ցուցիչում միավորվում են ռազմաքաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական բնույթի բաղադրիչներ: Յուրաքանչյուր պետության արտաքին ներուժի և միջազգային ազդեցության սահմանման ժամանակ այդ բաղադրիչների հաշվառման անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ որոշ դեպքերում ռազմաքաղաքական հզորությունը դժվար է կամ նույնիսկ անհնար է փոխակերպել մրցունակ տնտեսական առավելությունների ապահովման միջոցների: Սակայն առկա ռազմական ներուժը կարող է դառնալ պետության ինքնիշխանության և ազգային անվտանգության ապահովման հիմնական միջոց, մասնավորապես, միջազգային կառավարման կառույցների և խաղաղության պահպանման հարցերում լուրջ ձախողումների դեպքում: Հարցը մեկ այլ կողմից դիտարկելով՝ կարելի է փաստել, որ տնտեսական աջակցություն չստացող ռազմական ներուժը կործանարար կարող է լինել տնտեսական աճի տեսանկյունից և արագ կորցնել իր նշանակությունը, այն է ծավալուն և ինտենսիվ ռազմական սպառազինումը ծախսատար է և բախվում է սպառազինման տեխնոլոգիաների անընդմեջ նորացման խնդրի հետ: Այստեղ հատկանշական է նաև, որ որոշ դեպքերում ինդեքսի տարբեր բաղադրիչների ցուցանիշները կարող են նաև չհամընկնել: Այսպիսով, մի պետության կարող է լինել տնտեսական կամ ֆինանսական գերտերություն, սակայն այդտեղ գոյություն չունենան տնտեսական հզորությունը ռազմաքաղաքական ուժի փոխակերպման մեխանիզմներ, օրինակ Ճապոնիան, Գերմանիան⁹²: Գոյություն ունեն նաև հակառակ օրինակներ, մասնավորապես Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ)՝ մինչև 70-ական թվականների տնտեսական բարեփոխումների սկիզբը և բարձր տեմպեր արձանագրող տնտեսական աճի ժամանակաշրջանում, Ռուսաստանը 1991թ.-ից հետո և դեֆոլտից հետո տնտեսական արագընթաց զարգացման ժամանակաշրջանում:

Հարկ է հաշվի առնել նաև, որ որոշ իրավիճակներում առկա ներուժը կարող է միայն մասնակիորեն փոխակերպվել իրական միջազգային ազդեցության: Որոշ դեպքերում միջազգային ազդեցության ռեսուրսների պակասը կարող է մասամբ փոխհատուցվել արտաքին քաղաքականության հմուտ ռազմավարության և դիվանագիտության օգնությամբ

⁹⁰ նույն տեղում:

⁹¹ նույն տեղում:

⁹²Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նշվ. աշխ.:

կամ առկա ռեսուրսների ներուժն այս կամ այն սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով⁹³ չի կարող իրագործվել մինչև վերջ:

Կյանքի որակի ցուցիչը ներառում է սոցիալ-տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների համախումբը, որոնք բնութագրում են առանձին պետության բնակչությանն ընդհանուր առմամբ հասանելի նյութական և մտավոր ծառայությունների օգտագործման մակարդակները:

Չնայած այս կամ այն պետությանը հասանելի հնարավորությունների և ռեսուրսների բոլոր տարբերություններին, նրանց բնակչության կյանքի որակն առավելապես որոշվում է սոցիալական բարիքների ստեղծման և բաշխման քաղաքական և սոցիալ-տնտեսական կոնկրետ ռազմավարություններով: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ սույն ցուցիչը արտացոլում է պետության՝ սեփական բնակչության նկատմամբ իր ֆունկցիաների իրագործման հաջողությունը և արդյունավետությունը:

Կյանքի որակի ցուցիչի բաղադրիչները մասամբ համընկնում են մարդկային ներուժի ցուցիչի բաղադրիչների (Human Development Index⁹⁴) հետ, սակայն, ի տարբերություն վերջինի, կյանքի որակի ցուցիչում ներառված են լրացուցիչ վիճակագրական արտահայտում ունեցող ցուցանիշներ՝ առողջապահական ոլորտին տրամադրվող պետական ծախսերը, մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերը, ինչպես նաև փոխանցվող հիվանդությունների, դժբախտ պատահարների, սպանությունների, ինքնասպանությունների արդյունքում մահացության դեպքերը: Սակայն հարկ է նշել, որ կյանքի որակի սուբյեկտիվ գնահատումները, անհատների՝ իրենց իսկ արժեքային համակարգերի համատեքստում սեփական դիրքորոշման ընկալումը հասարակությունում և մշակույթում, սպասելիքներն ու նպատակները (սոցիոլոգիական մոտեցում, որը օգտագործվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO⁹⁵ կողմից) սույն ցուցիչում չեն օգտագործվում, քանի որ այն առաջին հերթին կենտրոնացած է օբյեկտիվ վիճակագրական ցուցանիշների վրա: Դա լուրջ թերություն է, քանի որ, հաշվի առնելով առավելապես վիճակագրական տվյալները և արհամարհելով վերը նշված կարևոր ցուցանիշները, չի կարելի ամբողջությամբ և արդյունավետ նկարագրել կյանքի որակը ուսումնասիրության առարկա դարձած և որևէ երկրում:

Ժողովրդավարության ինստիտուցիոնալ հիմքերի ցուցիչը⁹⁶ ներառում է ցուցանիշներ, որոնք բնութագրում են միանգամայն անհրաժեշտ, սակայն միաժամանակ դեռևս անբավարար, քաղաքացիների՝ իրենց շահերին անմիջականորեն առնչվող հարցերի լուծման, այն է՝ ժողովրդավարական կառավարման ձևավորման և զարգացման, լուծմանը մասնակցության համար ոչ բավարար, հիմքերի և պայմանների զարգացման միտումներն ու աստիճանը:

Ցուցիչը որոշում է հասարակությունում ժողովրդավարության զարգացմանը նպաստող ինստիտուցիոնալ-ընթացակարգային ավանդույթների արմատավորվածության աստիճանը՝ մրցակից քաղաքական պրակտիկաները, գործադիր իշխանության

⁹³Ընդ որում, սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները տարբեր պետությունների համար տարբեր են և առանձնահատուկ:

⁹⁴Human Development Index: Calculating the human development indices – graphical presentation, http://hdr.undp.org/sites/default/files/hdr2015_technical_notes.pdf, (14.11.2016).

⁹⁵World Health Organization, <http://www.who.int/gho/en/>, (12.11.2016).

⁹⁶Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., նույն տեղում:

սահմանափակման ավանդույթները, քաղաքական մասնակցությունը, իշխանության ձևավորման վրա ազդեցություն գործելու հնարավորությունները, սահմանադրականությունը և այլն: Մրցակից և ներկայացուցչական պրակտիկաների գոյության տևողությունը, նույնիսկ ձևավորվող տարատեսակ քաղաքական ռեժիմների և կառավարման ձևերի շրջանակներում (հաճախ ոչ ժողովրդավարական), հաստատված կանոնների հետամուտ լինելը նպաստում են այս պրակտիկաների և համապատասխան ինստիտուտների ամրապնդմանը և կատարելագործմանը, ամրագրում է դրանք և ձևավորում է ժողովրդավարական զարգացման պոտենցիալ կետերը: Այս ցուցիչը տարբերվում է ժողովրդավարության և ազատության բազմաթիվ այլ ցուցիչներից, մասնավորապես Freedom House-ի առաջարկած ցուցիչից⁹⁷, իր մինիմալիստական մոտեցմամբ, քանի որ ոչ թե հաշվի են առնվում արդյունքները, ինչը տեղի է ունենում մաքսիմալիստական մոտեցման դեպքում, այլ՝ քաղաքացիների՝ իրենց շահերին առնչվող կարևոր քաղաքական հարցերի կարգավորման վրա արդյունավետ ազդեցություն ունենալու պայմանները:

Հայաստանում պետության կայացածության առանձին ոլորտների գնահատման մոդելներին անդրադարձ է կատարվել միայն «Գլոբուս» վերլուծական հանդեսում⁹⁸: Ընդ որում

⁹⁷Methodology: Freedom in the World 2016, <https://freedomhouse.org/report/freedom-world-2016/methodology>, (14.11.2016).

⁹⁸Վերանյան Կ., «Խաղաղասեր երկրներ» 2010թ. Վարկանիշային զեկույցը Vision of Humanity. «Global Peace Index», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4914&sphrase_id=21723, (15.11.2016); Վերանյան Կ., Համաշխարհային տնտեսական ֆորում. «Համաշխարհային առևտրի խթանում 2010 թ.» զեկույցը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4925&sphrase_id=21723, (15.11.2016); Վերանյան Կ., Ժողովրդավարության վարկանիշը 2008-2010թթ. «The Economist Group»-ի զեկույցները, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5814&sphrase_id=21723, (15.11.2016); Վերանյան Կ., ՀՀ-ն Հարավային Կովկասի ամենախաղաղասեր երկիրն է «Խաղաղասեր երկրներ» 2011թ. Վարկանիշային զեկույցը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5799&sphrase_id=21723, (15.11.2016); Վերանյան Կ., ՄԱԿ զարգացման ծրագիր. Մարդկային զարգացման ինդեքսը 2011թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6113&sphrase_id=21723, (15.11.2016); Վերանյան Կ., ՀՀ Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2011թ. Transparency International. Corruption Perception Index 2011, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6185&sphrase_id=21713, (15.11.2016); Վերանյան Կ., ՀՀ միջազգային վարկանիշը. «Տեղեկատվական-հեռահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացածության ինդեքսը» և «Գործարարության համար լավագույն երկրները» 2011թ., «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 6, 2011, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6202&sphrase_id=21713, (15.11.2016); Վերանյան Կ., «Տնտեսական ազատության ինդեքսը» 2000-2012թթ. The Heritage Foundation, The Wall Street Journal. «Index of Economic Freedom», «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 3 (24), 2012, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6417&sphrase_id=21713, (15.11.2016); Վերանյան Կ., Freedom House. «Ազատության վարկանիշն աշխարհում» 2011-2012թթ. զեկույցները, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 4 (25), 2012, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6447&sphrase_id=21713, (15.11.2016); Վերանյան Կ., Համաշխարհային տնտեսական ֆորում. Գլոբալ մրցունակության 2012-2013թթ. զեկույցը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 11, 2012, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6767&sphrase_id=21713, (15.11.2016); Վերանյան Կ., ՀՀ-ն գործարարության վարկանիշով ԱՊՀ տարածքի առաջատարն է, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 1, 2013, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6885&sphrase_id=21912, (15.11.2016):

ուսումնասիրության առարկան ոչ թե ընդհանուր խնդրի դիտարկումն է, ցուցիչի վերլուծությունն է, այլ այդ հետազոտությունների արդյունքների հանրագումարում Հայաստանի զբաղեցրած տեղի ներկայացումը, ինչպես նաև Հայաստանի արձանագրած միավորային արդյունքների համեմատությունը հարևան կամ հետխորհրդային մյուս պետությունների հետ:

1.3.2. Պետության կայացածության ինտեգրալ գնահատման մոդելները

Պետության կայացածության գնահատման ինտեգրալ մոդելները հնարավորություն են տալիս ներկայացնել պետության կայացածության ոլորտների միաժամանակյա և մաքսիմալ համընդգրկուն գնահատումը: Պետության կայացածության գնահատման ինտեգրալ մոդելները կազմավորվում են և՛ վիճագրական (առանձին ոլորտների գնահատում ցուցիչների օգնությամբ), և՛ փորձագիտական գնահատման միջոցով և իրականացնում են պետության կայացածության համընդգրկուն ուսումնասիրություն և գնահատում: Փորձագիտական գնահատումը պահանջում է մի շարք խնդիրների լուծում՝ բոլոր պետությունների համար գնահատման չափանիշների նույնությունը, գնահատման հիմնավորվածությունը և հուսալիությունը: Թերևս, ամենաբարդը հիմնավորվածության խնդիրն է, քանի որ հետազոտության նպատակը և հետազոտողի անձնական փորձը կարող են հանգեցնել գնահատման ընթացքում արձանագրված պարբերական բնույթ կրող (երբեմն ոչ պատահաբար և չգիտակցված) սխալների, որոնք իրենց հերթին հանգեցնում են գնահատականների աղավաղման և հիմնավորվածության բացակայության: Այնուամենայնիվ, փորձագիտական գնահատումը կազմում է քաղաքական էմպիրիկ հետազոտությունների անքակտելի մասը: Բավական է նշել, որ ժողովրդավարության մակարդակը հաշվարկող Polity IV և Freedom House-ի կողմից առաջարկված երկու ամենահայտնի ցուցիչները հիմնված են գրեթե ամբողջապես փորձագիտական գնահատման վրա: Փորձագիտական գնահատման որակը և օբյեկտիվությունը կարելի է գնահատել մի շարք չափորոշիչներով՝ կողմորման ալգորիթմի թափանցիկություն, վերստուգման համար անհրաժեշտ սկզբնաղբյուրների հասանելիություն (առկայություն), փորձագետների որակավորում և այլն:

Պետության կայացածության ինտեգրալ գնահատման ամենահայտնի մոդելն է Դյուրաբեկ պետությունների ցուցիչը (Fragile States Index⁹⁹) (մինչև 2014թ. կրում էր Չախողված պետությունների ցուցիչ - Failed States Index¹⁰⁰ անվանումը¹⁰¹), որն ամեն տարի ներկայացվում է Խաղաղության Հիմնադրամի (The Fund for Peace) կողմից: Ուսումնասիրվում են 178 երկիր 12 ենթացուցիչներով, որոնք իրենց հերթին խմբավորված են ցուցիչների 3 խմբի մեջ՝

- ա) սոցիալական,
- բ) տնտեսական,
- գ) քաղաքական:

Սոցիալական խմբի ենթացուցիչներն են՝

⁹⁹ Fragile States Index 2016, <http://fsi.fundforpeace.org/rankings-2016>, (09.12.2016).

¹⁰⁰ Failed States Index scores 2013, <http://www.fundforpeace.org/global/?q=fsi2012>, (09.12.2016).

¹⁰¹ From Failed to Fragile: Renaming the Index, Fund For Peace: Fragile States Index, <http://library.fundforpeace.org/fsi14-namechange>, (04.09.2014).

1. դեմոգրաֆիկ ճնշումների ավելացում,
2. փախստականների/ տեղահանված անձանց էական տեղաշարժեր, որոնք ստեղծում են բարդ արտակարգ հումանիտար իրավիճակներ,
3. պատմական անարդարության հանդեպ կոլեկտիվ բողոքներ,
4. բնակչության խրոնիկ և բավականին երկարաժամկետ միգրացիա,

Տնտեսական խմբի ենթացուցիչներն են՝

5. սոցիալական խմբերի տնտեսական զարգացման անկանոնություն (անհավասարություն),
6. կտրուկ և/կամ ծանր տնտեսական անկում,

Քաղաքական խմբի ենթացուցիչներն են՝

7. պետության քրեականացում և/կամ ապաօրինականացում,
8. հանրային ծառայությունների որակի (առողջապահություն, կրթություն և այլն) ավելացող վատթարացումը,
9. օրենքի ոտնահարումը կամ մասնակի օգտագործումը և մարդու իրավունքների մեծաքանակ խախտումները,
10. անվտանգության կառույցների անվերահղկողությունը,
11. վերնախավի պառակտման ավելացումը,
12. այլ պետությունների կամ արտաքին քաղաքական դերակատարների միջամտությունը¹⁰²:

Մոդելի բոլոր 12 ենթացուցիչներն էլ գնահատվում են միևնույն սանդղակով: Որոշ աղբյուրներ նշում են ձախողված (չկայացած) պետությունների ցուցիչի «քաղաքականացված» լինելու մասին: Մասնավորապես, կարծիք կա, որ որպես «ձախողված» որակավորվում են այն պետությունները, որոնց վարչակարգերը/իշխանությունները խնդիրներ ունեն ԱՄՆ-ի հետ (ամենավառ օրինակն է Իրանը)¹⁰³: Իրանը գտնվում է դյուրաբեկ պետությունների 47-րդ հորիզոնականում, մինչդեռ, օրինակ, Ալբանիան 124-րդում, իսկ Բահրեյնը 121-րդում¹⁰⁴:

Պետության կայացածության ինտեգրալ գնահատման մոդելի օրինակ է նաև «XX դարի երկրորդ կեսին – XXI սկզբին Եվրոպայի և Ասիայի սոցիալիստական և հետսոցիալիստական երկրների պետականության զարգացման և անկման գործոններ» հետազոտությունը՝ քանակական և որակական մեթոդների (ներառյալ որակական համեմատական վերլուծությունը – Qualitative Comparative Analysis¹⁰⁵ օգնությամբ) Տնտեսագիտության Բարձրագույն Դպրոցի Ազգային Հետազոտությունների Համալսարանի հետազոտական ծրագիրը¹⁰⁶, որը զբաղվում է պետության կայացածության մոդելավորման մեթոդաբանությամբ, նրա վեկտորային ցուցիչների ձևավորման մոտեցումների, ինչպես նաև տիպաբանության սահմանումով: Հետսոցիալիստական երկրներում պետության կայացածության վրա ազդեցություն գործող գործոնների բացահայտման համար

¹⁰² Fragile States Index: The Methodology Behind the Index, <http://fsi.fundforpeace.org/methodology>, (09.12.2016).

¹⁰³ Beehner L., Young J., The Failure of the Failed State Index, World Policy Journal, July, 2012, <http://www.worldpolicy.org/blog/2012/07/17/failure-failed-states-index>, (09.12.2016).

¹⁰⁴ Fragile States Index 2016, <http://fsi.fundforpeace.org/>, (09.12.2016).

¹⁰⁵ Qualitative Comparative Analysis, <http://www.encyclopedia.com/doc/1O88-qualitativecomparatvnllyss.html>, (11.12.2016).

¹⁰⁶ Стукал Д., Хавенсон Т., Моделирование государственной состоятельности постсоциалистических стран, *ПОЛИТЕКС*, № 1, 2012, с. 238-264.

օգտագործվել է Բուլյան հանրահաշվի վրա հիմնված որակական համեմատական վերլուծության ալգորիթմը:

Հետազոտությունն իրականացվել է 29 հետխորհրդային երկրների շրջանակներում: Տվյալների հանրագումարը բաժանված է երկու մասի՝ պետության կայացածության ցուցանիշների և գործոնների: Ցուցանիշները ենթադրում են այն փոփոխականները, որոնք այս կամ այն չափով արտացոլում են տվյալ պետության գործունեության բնութագիրը: Գործոնները, իրենց հերթին, հեղինակների կարծիքով կարող են ներգործել պետության կայացածության այս կամ այն տեսակի ձևավորման վրա՝ հանդես գալով որպես անհրաժեշտ պայման:

Դիտարկվող ցուցանիշները հեղինակները խմբավորել են 4 խմբերի մեջ՝

1. Պետական կառավարման որակի ցուցանիշներ՝
 - հիմնական կանոնների փոփոխականություն (փորձագիտական գնահատում),
 - կարգավորման կարողություն՝ ըստ Համաշխարհային Բանկի տվյալների, (պետության կարողությունը մասնավոր սեկտորի զարգացման արդյունավետ քաղաքականության մշակում և իրականացում)¹⁰⁷,
 - կառավարման արդյունավետություն (Համաշխարհային Բանկի տվյալներով),
 - պետական լիազորությունների «մասնավորեցում» (փորձագիտական գնահատում),
 - վերնախավի և հասարակության միջև պետության սահմանադրական կարգի հիմունքների վերաբերյալ համաձայնություն (փորձագիտական գնահատում):
2. Ներքին և արտաքին ինքնիշխանության ցուցանիշներ՝
 - անջատողականություն (փորձագիտական գնահատում),
 - անօրինական զինված կազմավորումներ (փորձագիտական գնահատում),
 - քաղաքացիական պատերազմ (փորձագիտական գնահատում),
 - սահմանների աղճատվածություն (փորձագիտական գնահատում),
 - տվյալ պետության հանդեպ տարածքային հավակնություններ (փորձագիտական գնահատում),
 - տվյալ պետության տարածքում արտաքին ագրեսիա (փորձագիտական գնահատում):
3. Իրավական պետության ցուցանիշներ՝
 - արտադատարանական հաշվեհարդար (CIRI տվյալներով)¹⁰⁸,
 - մարդկանց անհետացում (CIRI տվյալներով),
 - քաղ. բանտարկյալներ (CIRI տվյալներով¹⁰⁹),
 - կոռուպցիայի վերահսկողություն (Համաշխարհային Բանկի տվյալներով),
 - ահաբեկչություն (փորձագիտական գնահատում):
4. Պետության սոցիալ-տնտեսական կարգավիճակի ցուցանիշներ՝
 - եկամուտներ ՀՆԱ: Տեղեկատվությունը ստացվել է երկու ցուցանիշների հիման վրա՝ պետական բյուջեի եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ի տոկոսային

¹⁰⁷Marshall M., Cole B., նշվ. աշխ.:

¹⁰⁸Ցուցիչն ունի 3 արժեք՝ 0 – ոչ միարդյունք; 1 – 1-ից մինչ 49 դեպք, 2 – 50 և ավելի դեպք; Political and Other Extrajudicial Killings, Arbitrary or Unlawful Deprivation of Life, Cingranelli, Richards, 2009.

¹⁰⁹Political Imprisonment, Cingranelli, Richards, 2009, pp. 23–28.

համագումարում (Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի¹¹⁰ և EconomyWatchPortal-ի¹¹¹ տվյալներով),

- ծախսեր ՀՆԱ: Տեղեկատվությունը ստացվել է երկու ցուցանիշների հիման վրա՝ պետական բյուջեի եկամուտների մասնաբաժինը ՀՆԱ-ի տոկոսային համագումարում (Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի և Economy Watch Portal-ի տվյալներով),
- մասնավոր սեկտորին ներքին կրեդիտը (Համաշխարհային Բանկի տվյալներով),
- առողջապահության ոլորտի ծախսեր (Համաշխարհային Բանկի տվյալներով),
- Գիտահետազոտական աշխատանքներին տրամադրվող ծախսեր ՀՆԱ (Համաշխարհային Բանկի տվյալներով)¹¹²:

Հետազոտությունում օգտագործվող պետականության այս կամ այն տեսակի ձևավորման գործոնները վերացական են և ներառում են հետևյալ հատկանիշները՝

1. արտաքին աուդիտի միջազգային չափանիշներին համապատասխանություն (փորձագիտական գնահատում),
2. վարչակարգի կայացածություն (Polity IV-ի տվյալներով),
3. անկախ պետականության ավանդույթները (փորձագիտական գնահատում),
4. բարեփոխումների ինտենսիվություն (փորձագիտական գնահատում),
5. կրոնական մասնատվածություն¹¹³,
6. էթնիկ մասնատվածություն¹¹⁴,
7. Ջինիի գործակից¹¹⁵,
8. բնակչության խտությունը (Համաշխարհային Բանկի տվյալներով),
9. ՀՆԱ-ի մասնաբաժինը մեկ շնչի հաշվով (Համաշխարհային Բանկի տվյալներով),
10. երեխաների մահացության դեպքերը (Համաշխարհային Բանկի տվյալներով)¹¹⁶:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև Ա. Մելվիլի, Դ. Ստուկալի, Մ. Միրոնյուկի հետազոտությունը: Հեղինակներն իրենց ուսումնասիրություններում մեծամասամբ անդրադառնում են մեր հետազոտության համար առանցքային դեր ունեցող հետխորհրդային երկրներին և նրանց կայացածության աստիճանին: Հեղինակներն իրենց ուսումնասիրությունները կառուցում են թե՛ այս ոլորտում ակնառու հետազոտություններ կատարած հեղինակների աշխատանքների, և թե՛ իրենց արդեն իսկ կատարած հետազոտությունների վրա: Այսպիսով, հեղինակներն օգտագործել են Մելվիլի և Ստուկալի¹¹⁷

¹¹⁰Forecasts, Macro Data, Transition Indicators: GDP, <http://www.ebrd.com/what-we-do/economic-research-and-data/data/forecasts-macro-data-transition-indicators.html>, (15.12.2016).

¹¹¹Econ Stats: The Economic Statistics and Indicators Database, <http://www.economywatch.com/economic-statistics/>, (15.12.2016).

¹¹²Стукал Д., Хавенсон Т., նշվ. աշխ.:

¹¹³Alesina A., Devleeschauwer A., Easterly W., Kurlat S., Wacziarg R., Fractionalization, Journal of Economic Growth, N 8,2003, pp. 155-194.

¹¹⁴Նույն տեղում:

¹¹⁵Solt F., Standardizing the World Income Inequality Database, Social Science Quarterly, N 90 (2), 2009, pp. 231-242.

¹¹⁶Стукал Д., Хавенсон Т., նշվ. աշխ.:

¹¹⁷Мельвиль А., Стукал Д., Условия демократии и пределы демократизации. Факторы режимных изменений в посткоммунистических странах: опыт сравнительного и многомерного статистического анализа, Полис, № 3, 2011, с. 164-183.

միացյալ նախագծի շրջանակներում մշակված ժողովրդավարության ինտեգրման ցուցանիշը՝ PSADI – Principal Components Analysis Democracy Index¹¹⁸, ինչպես նաև 1989-2008թթ. ժամանակահատվածում 29 հետխորհրդային պետությունների շրջանակներում հատուկ ստեղծված տվյալների բազա, որը, սակայն, ինչպես նշում են հեղինակները, ուներ անխուսափելի բաղթողումներ, որոնք նեղացնում են հետազոտությունում ընդգրկված պետությունների խումբը¹¹⁹:

PSADI օգնությամբ իրականացված դասային վերլուծությունը թույլ է տվել առանձնացնել 6 կլաստեր, որոնք ներկայացնում էին դիտարկվող հետխորհրդային պետությունների վարչակարգային հետազոտի համապատասխան խմբերը: Լրացնելով կլաստերային վերլուծությունը որակական համեմատական վերլուծությամբ՝ հեղինակները ներկայացրել են հետևյալ խմբերը՝

1. կայացած ժողովրդավարության ճանապարհին (Բուլղարիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Մոնղոլիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Չեխիա և Էստոնիա),
2. ժողովրդավարության ճանապարհին (Ալբանիա, Վրաստան, Մակեդոնիա, Մոլդովա և Ուկրաինա),
3. ճեղքում դեպի ժողովրդավարություն (Մերթիա և Խորվաթիա),
4. խնդրահարույց հետազոտ (Հայաստան, Ղրղստան և Ռուսաստան),
5. ավտոկրատիայի ճանապարհին (Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան և Տաջիկստան),
6. կայացած ավտոկրատիաներ (Թուրքմենստան և Ուզբեկստան)¹²⁰:

Ա. Մելվիլը, Դ. Ստուկալը և Մ. Միրոնյուկը պետականությունն ընկալում են որպես «կարգավիճակի» (statehood) և կայացածության (stateness) միակցում: Պետականության կատեգորիան կարգավիճակի շրջանակներում ներկայացվում է որպես պետության ինքնիշխանության (միջազգային հանրության ինքնիշխան անդամ) արտաքին և ներքին ճանաչվածությունը: Պետականության կատեգորիան կայացածության շրջանակներում ներկայացնում է պետության հատկանիշներն իր գործառույթների, դրանց որակի և ծավալների իրականացման շրջանակներում: Ընդ որում, պետության զարգացումը, փլուզումը և կայացումը պայմանավորված են ինչպես «օբյեկտիվ» («կառուցվածքային»), այնպես էլ «սուբյեկտիվ» («ընթացակարգային») գործոնների ազդեցությամբ¹²¹:

Ժամանակակից պետության խնդիրների շրջանակներում, աշխատանքում առանձնացվում են ժամանակակից պետության հետևյալ բազային գործառույթները՝

1. արտաքին անվտանգության ապահովում,
2. ներքին կարգուկանոնի ապահովում,
3. լեգիտիմության ապահովում,
4. կառավարման ապահովում,
5. զարգացման ապահովում¹²²:

¹¹⁸PSADI-ն ստանում են 2 ցուցանիշների գլխավոր բաղադրիչների՝ Polity IV և Freedom House-ի օգնությամբ: PSADI-ն առաջին գլխավոր բաղադրիչն է, որը դուրս է բերվում նշված 2 ցուցանիշներից և ունի այնպիսի կառուցվածք, որտեղ ժողովրդավարության ցածրագույն մակարդակին համապատասխանում է 0-ն, իսկ բարձրագույնին՝ 10-ը:

¹¹⁹Мельвил А., Стукал Д., Миронюк М., Траектории режимных трансформаций и типы государственной состоятельности, Полис, № 2, 2012, с. 8-30.

¹²⁰Նույն տեղում:

¹²¹Նույն տեղում:

¹²²Նույն տեղում:

Իհարկե տարբեր պետություններ տարբեր կերպ են իրականացնում այդ գործառնությունները, ինչը կապված է ավանդույթների, ծագող արտաքին և ներքին մարտահրավերների, ազգային առաջնահերթությունների, քաղաքական վերնախավի ընտրած ռազմավարության հետ և այլն¹²³:

Հեղինակները, հաշվի առնելով անխուսափելի վիճակագրական և այլ տեսակի խոչընդոտները, կանգ են առել ցուցիչների հետևյալ խմբի վրա, որոնք թույլ են տալիս դատել այդ գործառնությունների ապահովման մասին, և սահմանվում են վիճակագրական կամ փորձագիտական ճանապարհով¹²⁴.

- Արտաքին անվտանգություն՝
 - ա) տվյալ պետության տարածքում ազդեցիկ առկայություն (փորձագիտական գնահատում),
 - բ) տվյալ պետությունը ներկայացվող տարածքային պահանջների առկայություն (փորձագիտական գնահատում),
 - գ) սահմանների ճշգրտվածությունը (փորձագիտական գնահատում):
- Ներքին կարգուկանոն՝
 - ա) ահաբեկչական ակտիվության առկայություն (փորձագիտական գնահատում),
 - բ) քաղաքացիական պատերազմ (փորձագիտական գնահատում),
 - գ) անօրինական զինված կազմավորումների առկայություն (փորձագիտական գնահատում),
 - դ) մարդկանց անհետացում (CIRI¹²⁵ տվյալներով),
 - ե) արտադատարանական ռեպրեսիա (հաշվեհարդար) (CIRI տվյալներով):
- Լեզիտիմություն՝
 - ա) հիմնական սահմանադրական օրենքների փոփոխականություն (փորձագիտական գնահատում),
 - բ) սահմանադրական կարգի հիմնադրությունների հետ համաձայնեցվածություն (փորձագիտական գնահատում),
 - գ) քաղ. բանտարկյալների առկայություն (CIRI տվյալներով):
- Կառավարում՝
 - ա) պետական լիազորությունների «մասնավորեցում» (փորձագիտական գնահատում),
 - բ) կառավարման արդյունավետություն (Համաշխարհային Բանկի տվյալներով),
 - գ) տնտեսական կանոնակարգման որակ (Համաշխարհային Բանկի տվյալներով):
- Ջարգացում՝
 - ա) առողջապահության ոլորտի ծախսեր (Համաշխարհային Բանկի տվյալներով),
 - բ) գիտահետազոտական և փորձաշինարարական աշխատանքների ծախսեր (Միջազգային Բանկի տվյալներով),
 - գ) ներքին կրեդիտ մասնավոր սեկտորին (Համաշխարհային Բանկի տվյալներով)¹²⁶:

Պետության կայացածության ընկալումը՝ որպես իր հիմնական գործառնությունը կատարելու պետության կարողություն, և այդ կարողության չափումը հնգաչափ մոդելի

¹²³Мельвиль А., Стукал Д., Миронюк М., նշվ. աշխ.:

¹²⁴Փորձագիտական գնահատականները տրվում են 4 բալանոց սանդղակով (1-4), որտեղ 1-ը նշանակում է առանձնահատկությունը բնորոշ չէ, իսկ 4-ը՝ առանձնահատկությունը բնորոշ է:

¹²⁵Cingnarelli – Richards Human Rights Data Project, <http://ciri.binghamton.edu>, (06.12.2016).

¹²⁶Мельвиль А., Стукал Д., Миронюк М., նշվ. աշխ.:

օգնությամբ, թույլ է տվել դրա հեղինակներին պայմանականորեն առանձնացնել պետության կայացածության 3 տեսակ՝

1. «կայացած»,
2. «միջին»,
3. «չկայացած»¹²⁷:

Միաժամանակ հեղինակներն առանձնացրել են հետխորհրդային պետությունների կայացածության դինամիկայի հինգ տարատեսակ՝

1. «կայացած» պետական կայացածության հավասարաչափ ընդլայնում,
2. «միջին» պետական կայացածության «պայթյունավտանգ» ընդլայնում,
3. «միջին» պետական կայացածության կտրուկ կրճատում,
4. «միջին» պետական կայացածության նվազագույն դինամիկա,
5. «չկայացած» պետական կայացածության չափազանց անհամաչափ (միակողմանի) ընդլայնում:

1990-2000թթ. հետխորհրդային տարածքի պետությունների կայացածության տեսակների և վարչակարգային տրանսֆորմացիաների հետազոծերի որակական համեմատական վերլուծությունը թույլ է տալիս խոսել այն մասին, որ այն երկրները, որոնք ձգտում են ժամանակակից պետության գործառույթների առավել ամբողջական իրականացման, որպես կանոն, ընթանում են դեպի ժողովրդավարություն (նույնիսկ եթե անգամ մեկ կամ բազմակի անգամներ սայթակումներ են ունեցել): Հարկ է նշել, որ Ռուսաստանն առանձնահատուկ դեպք է, քանի որ պատմականորեն խաղացել է կայսերական միավորի կենտրոնի դեր, իսկ կենտրոնի և ծայրամասերի միջև տարբերություններն իրենց զգալի հետքն են թողնում կայսերական միավորի փլուզումից հետո առաջացած պետությունների և ժողովուրդների ձևավորման առանձնահատկությունների վրա: «Չկայացած» պետական կայացածություն ունեցող երկրները, որպես օրենք, կայացած ավտոկրատիաներ են և շարժվում են հենց այդ ուղղությամբ: Մակայն, իհարկե, գոյություն ունեն նաև կանոնից դուրս դեպքեր. օրինակ Մոլդովան ունի տրանսֆորմացիայի ժողովրդավարական հետազիծ, սակայն միննույն ժամանակ «տկար» պետական կայացածության «ներկայացուցիչ է»¹²⁸:

Պետության կայացածության ուսումնասիրության փորձի համագումարը ցույց է տալիս, որ հաճախ հեղինակները պետության կայացածությունը սահմանելու համար օգտագործում են բավականին վիճարկելի հասկացություններ, երբեմն նաև այլաբանություններ, օգտագործում են հետազոտության ոչ բավականաչափ արդյունավետ գործիքներ կամ դրանք առհասարակ բացակայում են: Այդ մոտեցումը մեծ տարածում ունի ոչ միայն քաղաքական, այլև գիտական շրջանակներում, ինչը պայմանավորված է ոչ միայն խնդրի բարդությամբ, այլև այն պատճառով, որ դեռևս գոյություն չունեն պետության կայացածության գնահատման հստակ չափանիշներ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է այս կամ այն պետության «ուժի», «թուլության», կազմալուծվածության, գործունակության, անգործունակության, ազդեցության մասին կամայական քաղաքական գնահատականների:

¹²⁷Նույն տեղում:

¹²⁸Նույն տեղում:

Մոտեցումը թույլ չի տալիս օբյեկտիվորեն ուսումնասիրել պետության կայացածության երևույթը:

Ինչ վերաբերում է պետությունների կայացածության գնահատման մոդելներին, աշխատանքում առաջարկվել է դրանք բաժանել երկու խմբի՝ առանձին ոլորտների գնահատման և ինտեգրալ գնահատման մոդելների: Առանձին ոլորտների գնահատումը թույլ է տալիս մանրակրկիտ ուսումնասիրել պետության գործունեության առանձին ոլորտ՝ բացահայտելով այդտեղ առկա խնդիրները: Իհարկե, դրանց լուծումը հնարավորություն կտա բարելավել պետության կայացածության վիճակը, սակայն ամբողջական գնահատական ունենալու համար կծառանա առանձին ոլորտների գնահատականների համադրման խնդիրը: Թեև գնահատման ինտեգրալ մոդելներն այն լուծում են, սակայն դրանց կիրառման ժամանակ տեղեկությունների մշակումը պահանջում է այլ՝ ավելի բարդ խնդիրների լուծում՝ բոլոր պետությունների համար գնահատման համաչափելիության ապահովում, գնահատման հիմնավորվածություն և այլն: Թեև աշխատանքում ներկայացված ինտեգրալ գնահատման երեք մոդելներն¹²⁹ էլ կարելի է վստահությամբ անվանել այս ոլորտում ընդհանրական գնահատման լավագույն փորձերը, այդուհանդերձ, դրանցից յուրաքանչյուրն ունի մի շարք թերություններ: Առաջին հերթին դա վերաբերում է ցուցանիշների ընտրության և համադրման մեխանիզմների հիմնավորվածությանը:

Եվ, թերևս, սույն հետազոտության շրջանակներում պետության կայացածության գնահատման մոդելների հետ կապված լրջագույն խնդիրը, եթե ոչ խոչընդոտը, կայանում է նրանում, որ թե՛ ինտեգրալ, թե՛ առանձին ոլորտների (բացառությամբ «Ազատության վարկանիշն աշխարհում» զեկույցի) գնահատման մոդելներն անդրադառնում են բացառապես ճանաչված պետություններին, ինչն էլ իր արտացոլումն է գտնում մոդելի ենթացուցիչների որոշման մեջ, որոնք էլ, իրենց հերթին, ամբողջությամբ չեն ներկայացնում և բացահայտում նորաստեղծ և չճանաչված պետությունների կայացածության խնդիրները:

Ինչ վերաբերում է հետխորհրդային ճանաչված պետություններին՝ ապա վերջիններիս պետության կայացածության աստիճանն ունի հետևյալ վարկանիշային արտահայտումը սույն աշխատանքում ներկայացված պետության կայացածության (և՛ առանձին ոլորտների, և՛ ինտեգրալ) գնահատման մոդելներում (տես Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հետխորհրդային պետությունների վարկանիշային ցուցանիշն ըստ պետության կայացածության գնահատման մոդելների

Հետխորհրդային պետություններ	Կառավարման ցուցիչ						Մարդկային ներուժի զարգացման ցուցիչ	Չախտված պետությունների ցուցիչ
	Չայնի իրավունք և պատասխանատվություն	Քաղաքական կայունություն	Կառավարման արդյունավետություն	Կարգավորման կարողություն	Օրենքի գերակայություն	Կոռուպցիայի վերահսկողություն		

¹²⁹Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др, նշվ. աշխ.; Мельвиль А., Стукал Д., Миронюк М., նշվ. աշխ.:

Ռուսաստան	22.54	20.75	42.18	38.86	25.35	13.27	66	83
Ուկրաինա	46.48	41.51	21.80	31.75	23.00	17.06	76	113
Բելառուս	5.16	37.26	13.74	9.48	14.08	25.12	65	85
Հայաստան	27.70	43.40	52.13	58.29	43.66	33.65	86	102
Վրաստան	43.19	22.17	68.72	73.46	50.70	56.40	75	51
Մոլդովա	48.36	41.98	33.65	51.18	45.07	31.28	111	73
Ադրբեջան	11.74	27.83	23.22	37.91	21.60	9.48	91	68
Լատվիա	69.48	58.02	72.51	79.62	74.18	63.51	43	136
Լիտվա	72.77	68.40	72.04	78.67	72.77	65.88	40	149
Էստոնիա	83.57	66.04	84.83	90.52	85.45	78.67	34	143
Ղազախստան	13.62	41.04	45.50	42.65	31.46	15.17	68	107
Ուզբեկստան	1.88	27.36	24.64	3.79	5.16	4.27	115	39
Թուրքմենստան	0.94	54.72	4.27	1.90	4.69	2.37	102	81
Տաջիկստան	9.39	17.45	16.59	18.96	11.27	9.00	127	46
Ղրղստան	27.23	15.57	30.81	45.02	9.39	10.43	126	41

Հետխորհրդային պետություններ	Պետության դյուրաբեկության ցուցիչ	Ազատության վարկանիշն աշխարհում	Տնտեսական ազատության ցուցիչ	Արդիականության քաղաքական աստլաս				
				Պետականության ցուցիչ	Արտ.և ներքին սպառնալիքների ցուցիչ	Միջ. Ազդ. Ներուժի ցուցիչ	Կյանքի որակի ցուցիչ	Ժողովրդավարության ինստիտուցիոնալ հիմքերի ցուցիչ
Ռուսաստան	7	ոչ ազատ	139	27	81	7	73	93
Ուկրաինա	6	մաս. ազատ	161	113	140	29	101	41
Բելառուս	4	ոչազատ	154	102	160	71	89	149
Հայաստան	6	մաս. ազատ	38	177	120	108	104	67
Վրաստան	8	մաս. ազատ	21	183	38	110	114	160
Մոլդովա	10	մաս. ազատ	115	164	134	126	129	81
Ադրբեջան	12	ոչ ազատ	88	141	24	83	122	135
Լատվիա	0	ազատ	55	110	161	128	55	52
Լիտվա	1	ազատ	22	108	162	120	50	32
Էստոնիա	0	ազատ	13	122	152	155	47	58
Ղազախստան	10	ոչ ազատ	68	111	141	73	107	152
Ուզբեկստան	13	ոչ ազատ	162	94	93	78	128	159
Թուրքմենստան	10	ոչ ազատ	169	87	97	118	123	187
Տաջիկստան	12	ոչ ազատ	131	172	12	134	139	172
Ղրղստան	14	մաս. ազատ	89	191	19	131	121	154

ԳԼՈՒԽ 2.

ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԿԱՊԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԵՏ

Էթնո-ազգային հավակնությունների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1990-ական թվականների առաջին կեսին¹³⁰, սակայն ուսումնասիրությունները հաստատում են դրանց «երկարակեցությունը»։ 2009թ. վերջին աշխարհի 18 երկրներում դեռևս շարունակվում էին ինքնորոշման համար ծավալվող էթնո-քաղաքական հակամարտությունները¹³¹, իսկ «Ֆրիդրմ հաուս»-ի կողմից տարեկան ներկայացվող «Ազատության վարկանիշն աշխարհում» 2016թ. զեկույցում¹³² առանձնացված են 2 «հարակից» (related) և 13 «վիճելի» (disputed) տարածքներ¹³³, սակայն վերջիններիս թվին հարկ է ավելացնել նաև միայն մասնակի ճանաչում ստացած Կոսովոյի Հանրապետությունը¹³⁴։ Սակայն, ինդիքը միայն թվային տվյալներով չի պայմանավորված, այլ ունի հիմնարար պատճառներ. արդի աշխարհաքաղաքական համակարգի զարգացման միտումներն օբյեկտիվորեն նպաստում են նոր պետությունների առաջացմանը։ Ինչպես նշում է Լյոյդ Քոքսը¹³⁵, նեոլիբերալ գլոբալիզացիան մեծացնում է ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների հնարավորությունները չորս հիմնական պատճառներով՝

- պետությունների լիազորությունների հարաբերական նվազումը, ինչն առաջին հերթին վերաբերում է համեմատաբար «թույլ» (weak) և դյուրաբեկ (fragile) քաղաքական միավորներին։ Նոր պայմաններում նրանց համար զգալիորեն ավելի դժվար է պահպանել իշխանության լեգիտիմությունը, կառավարման և վարչարարության

¹³⁰ Gurr T., Marshall M., Peace and Conflict 2005: A global Survey of Armed Conflicts, Self-Determination Movements, and Democracy, College Park: Department of Government and Politics: Univ. of Maryland, 2005, p. 99, http://www.cidcm.umd.edu/publications/papers/peace_and_conflict_2005.pdf, (17.08.2016).

¹³¹ Marshall M., Cole B.R., Global report 2009: Conflict, Governance, and State Fragility, Center for Systemic Peace and Center for Global Policy, George Mason University, 2009, p. 40, <http://www.systemicpeace.org/Global%20Report%202009.pdf>, (17.08.2016).

¹³² Freedom in the World, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>, (17.08.2016).

¹³³ Freedom in the World 2016, https://freedomhouse.org/sites/default/files/FH_FITW_Report_2016.pdf, p. 24, (17.08.2016).

¹³⁴ Կոսովոյի Հանրապետությունը հռչակել է իր անկախությունը 2008թ. և ճանաչվել է 112 պետության կողմից՝ 108-ը ՄԱԿ անդամ պետություններ (ԵՄ 28 անդամ պետություններից 23-ի, ՆԱՏՕ-ի 28 անդամ պետություններից 24-ի, Իսլամական համագործակցության կազմակերպության 57 անդամ պետություններից 34-ի կողմից), ինչպես նաև Չինաստանի Հանրապետության (Թայվանի), Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի, Կուկի կղզիների և Նիուեի կողմից, թեև Կոսովոյի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում ներկայացված են միայն 96 պետությունները և 2012թ.-ից ի վեր տեղեկատվությունը չի թարմացվել, տես Ministry of Foreign Affairs of the Republic of Kosovo: Countries that have recognized the Republic of Kosovo, <http://www.mfa-ks.net/?page=2,33>, (04.09.2016): Այդուհանդերձ, «Կոսովոյի ժողովրդի երախտագիտությունը» ոչ պաշտոնական էջը մշտապես թարմացնում է տեղեկատվությունը, տես Kosovo Thanks You, Who Recognized Kosova as an Independent State? The Kosovar people thank you, <http://www.kosovothanksyou.com/>, (04.09.2016):

¹³⁵ Cox L., Neo-Liberal Globalisation, Nationalism, and Changed «Conditions for Possibility» for Ceseccionist Mobilization, On the Way to Statehood: Secession and Globalization, A. Pavković, P. Radan (eds.), Ashgate, Aldershot, 2008.

արդյունավետությունը, տնտեսության գործունակությունը, վերահսկել մշակութային բազմազանությունը և ձևավորել ազգային ինքնություն, պահպանել լեզվաբանական մենաշնորհը, ինչպես նաև դիմակայել արտաքին սպառնալիքներին և պատժամիջոցներին,

- երկրներ աշխարհակարգի դարաշրջանից հետո միջազգային կարգերի փոփոխությունը, ինչը մի շարք երկրների թույլ տվեց աջակցել այս կամ այն սեցեսիոնիստական շարժումներին,
- ազգայնական տրամադրությունների վերելքը պայմանավորող տեղական ազգային և տարածաշրջանային մակարդակներում գլոբալացման գործընթացների զանազանիչ (дифференцированное) ընկալումը, ընդ որում, առաջին հերթին այնտեղ, որտեղ իրականացվում է բացառապես էթնիկ քաղաքականություն,
- որպես ազգայնական վերածննդի միջոց գլոբալացման դարաշրջանի տեխնոլոգիական և մշակութային ապրանքների (արբանյակային և օպտիկամանրաթելային կապի, ինտերնետի և այլն) օգտագործման հնարավորություն¹³⁶:

Աշխարհում տեղի ունեցող խորքային փոփոխությունների արդյունքում տեղի է ունենում իշխանության ապատարածքայնացում (deterritorialization): Պետության սահմաններն այլևս չեն համընկնում իշխանության տարածման սահմանների հետ, և իշխանությունը դադարում է լինել տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում որոշումներ կայացնող միակ սուբյեկտը: Այդ գործընթացում նրանց հետ մրցակցում են ֆինանսական կապիտալը և անդրազգային կորպորացիաները, որոշումների կայացման վրա ազդում են մեդիամագնատները, միջազգային ոչ առևտրային, քաղաքական, ինչպես նաև ահաբեկչական կազմակերպությունները, որոնց հետ մի շարք երկրներ, լինելով չկայացած, չեն կարող մրցակցել: Խնդիրը կրկին առավել բարդ է չճանաչված պետությունների դեպքում:

Ժամանակակից աշխարհում ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված քաղաքական միավորները երկարատև պայքար են մղում ճանաչման համար, և կողմերի միջև թվացյալ հրադադարի և հակամարտությունների վերջնական կարգավորման հարցում ձախողման պատճառով այդ հակամարտություններն անվանում են «սառեցված», «չլուծված», իսկ վերջերս էլ ակտիվ շրջանառության մեջ է մտել «ձգձգված» տերմինը, որը փայլուն կերպով արտահայտում է ժամանակակից աշխարհում ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետություններում ընթացող հակամարտությունների զարգացման բնույթը: Այս պետությունները բախվում են մի շարք մարտահրավերների. այստեղ քայքայված է տնտեսությունը և ենթակառուցվածքները, ցածր է մարդկային պոտենցիալի զարգացման մակարդակը, բարձր է իշխանության քրեականացվածության աստիճանը և մի շարք այլ խնդիրներ, որոնք խոչընդոտում են պետության կայացածությանը: Գաղտնիք չէ նաև, որ սեցեսիաներում թույլ վերահսկողության, վատ կառավարման, պատշաճ պետական ինստիտուտների բացակայության կամ թերի գործունեության միջավայրում նպաստավոր պայմաններ են ստեղծվում ահաբեկչական կազմավորումների ստեղծման, թրաֆիքինգի, զենքերի և թմրանյութերի փոխադրման համար¹³⁷:

¹³⁶Cox L., նշվ. աշխ., p. 17.

¹³⁷Ильин М., Структурные параметры неблагополучия государств, Асимметрия системы мирового суверенитета: зоны проблемной государственности, М.В. Ильин, И.В. Кудряшова (ред.), МГИМО-Университет, Москва, 2011, стр. 32.

Դե-ֆակտո պետությունների մասնակի ճանաչումը և տարատեսակ մեծամասշտաբ աջակցության տրամադրումն ամեննին դեռ չեն երաշխավորում պետության կայացածության համար նպաստավոր պայմանների ստեղծում: Ազգային փոքրամասնությունների առկայությունը խոչընդոտում է ժողովրդավարական մեխանիզմների զարգացումը և խթանում նոր տարածքային սահմանազատումը, իսկ ինչ վերաբերում է տնտեսական օգնությանը, ապա այն միշտ չէ, որ արդյունավետ է սոցիալ-տնտեսական ընդհանուր մակարդակի և քաղաքական կուլտուրայի զարգացման համար: Ավելին, ինչպես ցույց է տալիս փորձը, արտաքին կենտրոնների մասնակցությունը մասնակի ճանաչում ստացած միավորներում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և քաղաքական գործընթացներին, նպաստում է կախվածության և ինքնիշխանության բացակայության պահպանմանը¹³⁸:

Փաստորեն, միջազգային խնամակալության հոգաբարձության գործող կազմակերպությունների բացակայության պայմաններում երկրների առաջնորդները ստիպված են հետագայում ևս զբաղվել «անջատողական ծրագրերով»՝ ելնելով ինչպես քաղաքական և տնտեսական կապակցվածության (конъюктура), այնպես էլ ինքնիշխան միջազգային համակարգի տրանսֆորմացիայի պայմաններում հարաբերական վերահսկողության պահպանման նկատառումներից¹³⁹: Իր հովանու տակ գտնվող տարածքների կառավարման վերահսկողությամբ զբաղվող Հոգաբարձուների խորհուրդը, որը հիմնադրվել էր ՄԱԿ-ի Կանոնադրությամբ որպես կազմակերպության գլխավոր մարմիններից մեկը, կասեցրել է իր գործունեությունը 1994թ.¹⁴⁰: Ինչ վերաբերում է միջազգային ադմինիստրացիային, ապա ժամանակակից հայեցակարգերը շատ աղոտ են և ներառում են միջոցառումների բավականին լայն միջակայք: Միևնույն ժամանակ, միջազգային կազմակերպությունները չունեն ՄԱԿ-ի հատուկ մանդատը, ինչպես նաև սեփական մարմինները, սակայն վայելում են Անվտանգության Խորհրդի և ՄԱԿ-ի տարբեր ստորաբաժանումների աջակցությունը: Նրանք զգալիորեն տարբերվում են իշխանական լիազորություններով՝ սկսած ձեռք բերված համաձայնությունների կատարումից և մշտադիտարկումից (Կամբոջա¹⁴¹), մինչև հիմնական քաղաքացիական վարչական գործառույթների անմիջական վերահսկողությունը և իրականացումը¹⁴²(Կոսովո¹⁴³): Սակայն տեղին հարց է առաջանում, թե արդյոք ի գործու է միջազգային հանրությունը ստանձնել նորաստեղծ միավորների «դաստիարակությունը», և թե ինչպիսի քայլեր են ձեռնարկում

¹³⁸ նույն տեղում:

¹³⁹Суверенитет. Трансформация понятий и практик, под ред. М. Ильина, И. Кудряшовой, МГИМО-Университет, Москва, 2008.

¹⁴⁰Հոգաբարձուների խորհուրդը դադարեցրել է իր աշխատանքը ՄԱԿ-ի հովանու տակ գտնվող վերջին տարածքի՝ Պալաուի անկախացումից հետո; United Nations Trusteeship Council, <http://www.un.org/en/mainbodies/trusteeship/>, (18.08.2016):

¹⁴¹UNTAC – Կամբոջայում անցումային ժամանակաշրջանում իրականացված ՄԱԿ-ի վերահսկողական առաքելությունը, որը ստեղծվել է 1992թ. փետրվարին կամբոջական կոնֆլիկտը համակողմանի քաղաքական կարգավորման մասին Փարիզյան համաձայնագրի իրականացումն ապահովելու համար, United Nations Transitional Authority in Cambodia, UNTAC, <http://www.un.org/en/peacekeeping/missions/past/untac.htm>, (18.08.2016).

¹⁴²Кудряшова И., նշվ. աշխ., с. 79.

¹⁴³UNMIK – Կոսովոյում ժամանակավոր կառավարման հարցերով ՄԱԿ-ի առաքելություն (United Nations Interim Administration Mission in Kosovo), որը ստեղծվել է 1999թ. հունիսին համաձայն Անվտանգության խորհրդի 1244 բանաձևի; UNMIK (United Nations Interim Administration Mission in Kosovo), <http://www.unmikonline.org>, (18.08.2016).

միջազգային կառույցները: Տվյալ համատեքստում ավելի արդիական են դառնում պետության կայացածության և ճանաչվածության հարցերը, և հատկապես վերջիններիս կապի ուսումնասիրությունը:

Պետության կայացածության և պետությունների միջազգային ճանաչման նման, իրավամբ, խրթին և բազմավեկտոր քաղաքական գործընթացների և, հատկապես, վերջիններիս կապի կամ դրա բացակայության ուսումնասիրությունը հարկ է իրականացնել հստակ փուլային տրամաբանությամբ՝ որպես հիմք ընդունելով այն փաստը, որ յուրաքանչյուր պետության բնականոն էվոլյուցիան պետք է ընթանա հետևյալ 3 փուլերով՝ անկախության հռչակում, պետության միջազգային ճանաչում (անդամակցություն ՄԱԿ-ին)՝ որպես պետության միջազգային իրավասյուրեկտության պարտադիր պայման, և պետության կայացում: Վերոնշյալը, անշուշտ, տարածվում է նաև ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների վրա, ըստ այդմ, խնդրի ուսումնասիրությունը հարկ է իրականացնել հետևյալ փուլերով՝

- ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման իրավական պահանջների դիտարկում հետևյալ 2 փուլերով՝
 - ժամանակակից միջազգային իրավունքի մեջ ազգերի ինքնորոշման սկզբունքի կարգավիճակի, ընդգրկման և բովանդակության ուսումնասիրություն,
 - ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների ճանաչման միջազգային գործընթացների դիտարկում,
 - միջազգային իրավունքի մեջ ամրագրված պետության իրավասուրյեկտությունը որոշող հատկանիշների ուսումնասիրություն,
- ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման քաղաքական գործոնի դիտարկում, մասնավորապես, պետությունների միջազգային ճանաչման ժամանակ ճանաչման իրավական բաղադրիչի ազդեցության կամ դրա բացակայության դիտարկում,
- պետության կայացածություն հասկացության և դրա գնահատման հնարավորությունների ներկայացում,
- պետության կայացածության և ճանաչվածության կապի կամ դրա բացակայության դիտարկում:

2.1. Ազգերի ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, ընդգրկումը և բովանդակությունը ժամանակակից միջազգային իրավունքում

Ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը գիտական քննարկումների առարկա է դարձել դեռևս XVI դարից սկսած, սակայն, որպես իրավական փաստաթղթի դրույթ, առաջին անգամ ձևակերպվել է 1776թ. հուլիսի 4-ին ԱՄՆ անկախության հռչակագրում, այնուհետև 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրում: Թեև սկզբունքն օգտագործվել է մի շարք կայսրությունների փլուզումից հետո նոր պետությունների ձևավորման ժամանակ, սակայն, որպես միջազգային իրավունքի նորմ, այն սկսել է կիրառվել 1940-ական թթ. և ավելի ուշ ընդունված ՄԱԿ հիմնարար փաստաթղթերում ներառվելուց հետո¹⁴⁴: Այնուամենայնիվ, հատկանշական է, որ

¹⁴⁴ Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2008:

ազգերի ինքնորոշման իրավունքին իրավական նորմի կարգավիճակ շնորհելու փորձեր են կատարվել դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից հետո, հատկապես Վուդրո Վիլսոնի կողմից ինքնորոշման իրավունքը որպես «հրամայական սկզբունք» սահմանելու համատեքստում: Այնուամենայնիվ, Ազգերի լիգայի կանոնադրության մեջ ազգերի ինքնորոշման իրավունքն ընդգրկելու Վիլսոնի փորձերը ձախողվեցին, և արդյունքում այդ ժամանակաշրջանում ինքնորոշումը ձեռք չբերեց իրավական նորմի կարգավիճակ¹⁴⁵: Ազգերի ինքնորոշման իրավունքը հայեցակարգային զարգացում է ապրել հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և առանձնահատուկ թափ է առել հատկապես 60-ական թթ. ապագադուրացման գործընթացի շրջանակներում՝ քաղաքական սկզբունքից վերափոխվելով համապարտադիր, անվերապահ իրավական նորմի և ներկայացնելով ինքնորոշման նոր «հորիզոններ»՝ դուրս պարգապես «դասական» հետզադուրային համատեքստից:

Ժամանակակից միջազգային իրավունքում ազգերի ինքնորոշման սկզբունքի կարգավիճակի, ընդգրկման և դիտարկման համատեքստում բացառիկ նշանակություն ունեն ՄԱԿ հիմնարար փաստաթղթերը: Այսպիսով, ՄԱԿ կանոնադրությունը սահմանում է ազգերի ինքնորոշման սկզբունքը որպես ՄԱԿ-ի գլխավոր նպատակների իրականացման և զարգացման հիմք. ՄԱԿ կանոնադրության 1.2 հոդվածն ամրագրում է. «Զարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման»¹⁴⁶, իսկ 55-րդ հոդվածն ամրագրում է. «Հետամուտ լինելով բարեկեցության ու կայունության պայմանների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են ազգերի միջև խաղաղ ու բարեկամական հարաբերությունների համար՝ հիմնված հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքի նկատմամբ հարգանքի վրա, Միավորված ազգերի կազմակերպությունը նպաստում է՝ ա. կենսամակարդակի բարձրացմանը, բնակչության լրիվ զբաղվածությանը և տնտեսական ու սոցիալական առաջընթացի ու զարգացման պայմաններին, բ. միջազգային տնտեսական, սոցիալական, առողջապահական և համանման հարցերի լուծմանը, մշակույթի ու կրթության բնագավառներում միջազգային համագործակցությանը, գ. բոլորի հանդեպ և բոլորի համար մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների համընդհանուր հարգանքին և պահպանմանը՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից»¹⁴⁷: Եվ հատկանշական է, որ ՄԱԿ Կանոնադրության 103-րդ հոդվածն սահմանում է, որ ՄԱԿ բոլոր անդամ պետությունների համար կանոնադրությունը գերակա է այլ միջազգային համաձայնագրերի նկատմամբ. «Միավորված ազգերի կազմակերպության անդամի՝ սույն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները հակասում են ցանկացած այլ միջազգային համաձայնագրերով նրա ստանձնած պարտավորություններին, ապա գերակայում են սույն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները»¹⁴⁸:

¹⁴⁵ Steiner H., Alston Ph., *International Human Rights in Context*, Oxford University Press, New York, 2000, pp. 1252-1254.

¹⁴⁶ ՄԱԿ կանոնադրություն, Հոդված 1.2, http://www.un.org/res/un%20Treaties/Charter_arm_unicode.pdf, էջ 2, (20.08.2016):

¹⁴⁷ ՄԱԿ կանոնադրություն, Հոդված 55, http://www.un.org/res/un%20Treaties/Charter_arm_unicode.pdf, էջ 17, (20.08.2016):

¹⁴⁸ ՄԱԿ կանոնադրություն, Հոդված 103, http://www.un.org/res/un%20Treaties/Charter_arm_unicode.pdf, էջ 30, (20.08.2016):

Ազգերի ինքնորոշման իրավունքի հայեցակարգային զարգացումը շարունակվեց ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված ազգերի ինքնորոշմանը նվիրված մի շարք բանաձևերում, որոնց թվում առանձնահատուկ հիշատակության կարիք ունեն 1952թ. դեկտեմբերի 20-ին ընդունված «Ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքը» 637A (VII) բանաձևը¹⁴⁹, 1960թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին» 1514 (XV) հռչակագիրը¹⁵⁰, որը սահմանեց ինքնորոշման և ժողովուրդների քաղաքական կարգավիճակի կապը, որն էլ այնուհետև իր արտացոլումը ստացավ ՄԱԿ Մարդու իրավունքների բիլլում, 1960թ. դեկտեմբերի 15-ին ընդունված «Սկզբունքներ, որոնք պետք է ուղղորդեն անդամ պետություններին որոշելիս, թե արդյոք Կանոնադրության 73-րդ հոդվածի ե. կետի համաձայն գոյություն ունի տեղեկատվություն փոխանցելու պարտավորություն թե ոչ» բանաձևը¹⁵¹, որն ունեցավ բացառիկ նշանակություն, քանի որ վերջինիս 6-րդ սկզբունքն ամրագրում է. «Ոչ ինքնավար տարածքը կարող է համարվել այլևս ինքնավար հետևյալ դեպքերում՝ ա) ինքնավար և ազատ պետության ստեղծում, բ) ազատ միացում անկախ պետությանը, գ) ազատ պետության հետ միավորում», ինչն էլ հետագայում իր զարգացումը գտավ 1970թ. «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրում: ՄԱԿ Գլխավոր ասամբլեան տարբեր տարիներին ընդունել է միննույն խորագրով բանաձևերի շարք՝ «Ազգերի ինքնորոշման իրավունքի համընդհանուր իրականացումը» անվանումով, որոնցից յուրաքանչյուրը վերահաստատում է, որ «ազգերի, այդ թվում՝ գաղութային, արտաքին և օտար տիրապետության տակ գտնվող, ինքնորոշման իրավունքի համընդհանուր իրականացումը մարդու իրավունքների երաշխավորման և պահպանման և այդ իրավունքի խթանման հիմնարար պայման է»¹⁵²:

Ազգերի ինքնորոշման սկզբունքը ներկայացնող ՄԱԿ հիմնարար հաջորդ փաստաթուղթն է ՄԱԿ Մարդու իրավունքների բիլլը, որը ներառում է Մարդու

¹⁴⁹ 637A (VII). The rights of peoples and nations to self-determination, <https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/079/80/IMG/NR007980.pdf?OpenElement>, (20.08.2016).

¹⁵⁰ 1514 (XV). Declaration on the granting of independence to colonial countries and peoples, [http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/1514\(XV\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/1514(XV)), (20.08.2016).

¹⁵¹ 1541 (XV). Principles which should guide members in determining whether or not an obligation exists to transmit the information called for under Article 73e of the Charter, [http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/1541\(XV\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/1541(XV)), (20.08.2016).

¹⁵² Universal realization of the right of peoples to self-determination,

իրավունքների համընդհանուր հռչակագիրը¹⁵³ (10 դեկտեմբերի 1948թ.), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը¹⁵⁴ (16 դեկտեմբերի 1966թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը¹⁵⁵ (16 դեկտեմբերի 1966թ.): Դրանցից վերջին երկուսի առաջին հոդվածները արձանագրում են. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:

Եվ, անշուշտ, առանձնահատուկ կարևորություն ունի 1970թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագիրը¹⁵⁶, որը սահմանեց ազգերի իրավահավասարությունը և ինքնորոշումը որպես միջազգային իրավունքի սկզբունք՝ ամրագրելով, որ ինքնորոշումը բոլոր ժողովուրդներին վերաբերող իրավունք է, և նրա կենսագործումը պահանջվում է ՄԱԿ կանոնակարգով. «Համաձայն ՄԱԿ կանոնադրությունում ամրագրված ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի, բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը, հետամուտ լինել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը՝ համաձայն կանոնադրության դրույթների»:

1975թ. օգոստոսի 1-ին Հելսինկիում ստորագրված Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդածողովի եզրափակիչ ակտը¹⁵⁷ սահմանում է մասնակից պետությունների միջև հարաբերությունները կարգավորող 10 սկզբունքներ, այդ թվում՝ ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման իրավունքը: Հետաքրքրական է, որ սույն փաստաթուղթը հաճախակի դառնում է տարատեսակ քաղաքական մանևրների աղբյուր, մասնավորապես, կապված տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայության հետ, սակայն Հելսինկյան եզրափակիչ ակտն ինքնին սահմանում է, որ «Մյուս բոլոր պետությունների հետ հարաբերություններում, անկախ նրանց քաղաքական, տնտեսական կամ սոցիալական համակարգերից, ինչպես նաև նրանց մեծությունից, աշխարհագրական դիրքից կամ տնտեսական զարգացման մակարդակից, հարգել և գործնականում կիրառել հետևյալ սկզբունքները, որոնք բոլորն էլ ունեն առաջնահերթ նշանակություն, և որոնցով առանջնորդվելու են իրենց փոխհարաբերություններում», այն է՝ սկզբունքները չունեն գերակայություն միմյանց նկատմամբ: Իսկ հաշվի առնելով այն փաստը, որ երկու սկզբունքները կարգավորում են միանգամայն տարբեր ոլորտներին առնչվող հարցեր՝ (ինքնորոշման իրավունքը՝ ազգերի մակարդակում, տարածքային ամբողջականությունը՝

¹⁵³ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր,

http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf, (20.08.2016):

¹⁵⁴ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր,

http://www.un.am/up/file/III_4.pdf, (20.08.2016):

¹⁵⁵ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը

http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf, (20.08.2016):

¹⁵⁶ Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, <http://www.un-documents.net/a25r2625.htm>, (20.08.2016).

¹⁵⁷ Հելսինկյան եզրափակիչ ակտ, <http://www.osce.org/hy/mc/39507?download=true>, (20.08.2016).

պետությունների), ապա միանգամայն անհասկանալի են դառնում որևէ «մրցակցության» կամ «գերակայության» մասին ստահոդ խոսակցությունները և քննարկումները: Պատահական չէ, որ տարածքային ամբողջականությունը «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրի 7 սկզբունքների շարքում առանձին ներառված չէ, այլ հանդիսանում է պետությունների ինքնիշխանության սկզբունքի մի մաս՝ արձանագրելով այն որպես միջպետական հարաբերությունները կարգավորող տարրերից մեկը:

Հարցի համընդգրկուն ուսումնասիրության համար կարևոր է նաև ազգերի ինքնորոշման սկզբունքի կարգավիճակի դիտարկումը միջազգային իրավունքում: Այսպիսով, ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանն ինքնորոշման իրավունքը ճանաչել է¹⁵⁸ *jus cogens*¹⁵⁹ նորմ (լատիներեն՝ համապարտադիր, անվերապահ օրենք): Այս նորմի բարձրագույն իրավական կարգավիճակը, մասնավորապես, արտացոլված է Միջազգային համաձայնագրերի մասին Վիենայի կոնվենցիայի¹⁶⁰ 53-րդ և 64-րդ հոդվածներում. «Հոդված 53. Համաձայնագրեր, որոնք հակասության մեջ են ընդհանուր միջազգային իրավունքի անվերապահ նորմին (*jus cogens*): Համաձայնագիրն անվավեր է, եթե կնքման պահին այն հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի անվերապահ նորմին: Սույն Համաձայնագրի շրջանակներում ընդհանուր միջազգային իրավունքի անվերապահ նորմը մի նորմ է, որը երկրների միջազգային հանրության կողմից ընդունվում և ճանաչվում է որպես նորմ, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն նույնպիսի բնույթ ունեցող ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով: Հոդված 64. Ընդհանուր միջազգային իրավունքի նորմ անվերապահ նորմի (*jus cogens*) առաջացումը: Եթե առաջանում է ընդհանուր միջազգային իրավունքի նորմ անվերապահ նորմ, ապա գոյություն ունեցող որևէ համաձայնագիր, որը հակասում է այդ նորմին, դառնում է անվավեր եւ դադարում է»¹⁶¹:

Միջազգային իրավունքի շրջանակներում ինքնորոշման սկզբունքի կարգավիճակի ճշգրտման տեսակետից էական նշանակություն ունեն նաև ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի որոշումները մի շարք գործերի վերաբերյալ: Յոթանասունականների սկզբին այդ դատարանին ուղղակի դերակատարություն էր վերապահված ինքնորոշման իրավունքի կիրառման հարցում: Հենց ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի վճռի հիման վրա ճանաչվեց Նամիբիայի անկախությունը: Սակայն ավելի ուշ՝ 1975-ին, Արևմտյան Սահարայի ապագա դրության հետագա ընթացքը որոշելիս Դատարանի կարծիքը Գլխավոր ասամբլեայի համար այլևս ուներ ոչ թե վերջնական

¹⁵⁸Gros Espiel H., The Right to Self-Determination, UN Doc. E/CN.4/Sub.2/405/Rev.1, UN Sales N E.79.XIV.5 (1980), p. 12. Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (S.W. Africa) 1971, International Court of Justice 16, 89-90(Amoun J., separate opinion). Parker K., Neylon L., *Jus cogens: Compelling the Law of Human Rights - Hastings International Law Review*, N 585, 1998). Parker K., *Definition of Self-Determination -First International Conference on the Right to Self-Determination. United Nations, Geneva, August 2000.* (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի...):

¹⁵⁹Լատիներեն՝ համապարտադիր, անվերապահ նորմ: Միջազգային իրավունքում *Jus Cogens* և *Erga Omnes* նորմերի կարգավիճակի մասին տես. Rubin A., *Actio Popularis, Jus Cogens and Offenses Erga Omnes?*, *New England Law Review*, vol. 35, № 2, 2001, pp. 265-280.

¹⁶⁰Vienna Convention on the Law of Treaties, May 23, 1969, 1155 U.N.T.S. 331. (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի...):

¹⁶¹Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի..., էջ 40-41:

որոշման, այլ իրավական բնույթի աջակցության նշանակություն¹⁶²: Դատարանն անդրադարձել է ինքնորոշման իրավունքին նաև 1995-ին՝ Արևելյան Թիմորի կապակցությամբ¹⁶³: Արդարադատության միջազգային դատարանն այդ գործի¹⁶⁴ 29-րդ պարագրաֆում ինքնորոշման իրավունքը ճանաչել է որպես միջազգային իրավունքում *erga omnes* (լատիներեն՝ բոլորին առնչվող, համապարտադիր) բնույթ ունեցող նորմ. «29... Դատարանի կարծիքով, Պորտուգալիայի պնդումը, որ ազգերի ինքնորոշման իրավունքը, որ զարգացվել է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և պրակտիկայով, ունի *erga omnes* բնույթ, անթերի է: Ազգերի ինքնորոշման սկզբունքը ճանաչվել է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և Արդարադատության միջազգային դատարանի իրավական վճիռներով¹⁶⁵: Դա ժամանակակից միջազգային իրավունքի էական սկզբունքներից մեկն է»: Բայց, միաժամանակ, Դատարանը հիշեցրել է իր գործունեության առանձնահատկությունը, համաձայն որի՝ միջազգային իրավունքում այս կամ այն նորմի կարգավիճակի ճանաչումը Դատարանի կողմից կարող է որևէ պետության նկատմամբ դրա կիրառման հնարավորություն տալ, եթե պետությունը հայցի կողմ է. «Այդուհանդերձ, Դատարանը համարում է, որ նորմի *erga omnes* բնույթը և իրավակիրառությանը համաձայնություն տալը երկու տարբեր բաներ են: Անկախ հանձնառությունների բնույթից՝ Դատարանը չի կարող գնահատել պետության վարքի օրինականությունը, երբ իր դատողությունները ենթադրում են այն պետության վարքի գնահատումը, որը հայցի կողմ չէ: Նման դեպքերում Դատարանը չի կարող գործել, եթե անգամ դիտարկվող իրավունքը *erga omnes* իրավունք է»¹⁶⁶:

Ամերիկյան երկրների՝ Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը նույնպես ինքնորոշման իրավունքին առնչվող դեպքեր քննարկելիս¹⁶⁷ արձանագրել է, որ ինքնորոշման իրավունքն ունի *erga omnes* իրավական կարգավիճակ, այսինքն՝ ինքնորոշման իրավունքը մի նորմ է, որի հարգումը պարտադիր է յուրաքանչյուր պետության համար՝ առանց որևէ վերապահության:

Միջազգային իրավունքի ինստիտուտը 2005թ. ընդունել է բանաձև¹⁶⁸, որով ձևակերպել է միջազգային իրավունքի նորմերի *erga omnes* կարգավիճակից բխող՝ պետությունների պարտավորությունները: Այն ոչ միայն հաստատում է ցեղասպանության և ագրեսիայի արգելման, մարդու հիմնական իրավունքների, ինքնորոշման սկզբունքի հիմնարար արժեքներ լինելն ու դրանց *erga omnes* կարգավիճակը, այլև պետությունների պարտավորություններն այդ նորմերի անվերապահ հարգման, ինչպես նաև մյուս

¹⁶²Westen Sahara, Advisory Opinion, 1975, ICJ 12(16 Oct.) (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի...):

¹⁶³East Timor (Portugal & Australia), Judgment, International Court of Justice Reports 1995, էջ 102, http://www.icj-cij.org/icjwww/icas/ica/ica_ijudgments/ica_ijudgment_19950630.pdf, (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի...):

¹⁶⁴Նույն տեղում, էջ 90:

¹⁶⁵Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) Notwithstanding Security Council Resolution 276(1970), Advisory Opinion, ICJ Reports 1971, pp. 31-32, paras. 52-53; Western Sahara, Advisory Opinion, ICJ Reports 1975, pp. 31-33, paras. 54-59. (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի...)

¹⁶⁶Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի..., էջ 38-40:

¹⁶⁷Inter-American Commission on Human Rights, Organization of American States, Press Communiqué no. 13/93 (May 25, 1993). (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի...):

¹⁶⁸Resolution Obligations erga omnes in International Law. Session 2005, Fifth Commission, The Institute of International Law. (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղի...):

պետությունների իրավունքները՝ այդ նորմերը չհարգող պետության նկատմամբ ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն վերաբերմունք դրսևորելու և միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Այսինքն, ինքնորոշման իրավունքը հիմնական միջազգային իրավունքի մանդատային նորմ է, որի պարտադիր լինելուց որևէ մեկը չի կարող իրեն ազատ համարել կամ որևէ մեկին ազատել՝ ի տարբերություն միջազգային իրավունքի *jus dispositivum* նորմերի, որոնք սկսում են գործել որևէ կողմի համար, եթե այդ կողմը համաձայն է այդ նորմը ստանձնել միջազգային համաձայնագրի միջոցով¹⁶⁹:

2.2. Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման գործընթացները

Ճանաչումը, ըստ էության, միակողմանի որոշում է, որն ազդում է երկկողմանի հարաբերությունների վրա: Ներկայումս ՄԱԿ անդամակցությունն ազդարարում է, այսպես կոչված, կոլեկտիվ ճանաչում. պետությունը, որը դառնում է ՄԱԿ անդամ, ճանաչվում է որպես պետությունների համայնքի լեգիտիմ անդամ, քանի որ անդամակցությունը ՄԱԿ-ին պահանջում է անդամ պետությունների առնվազն երկու երրորդի, այդ թվում՝ Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների, հավանությունը¹⁷⁰ (ՄԱԿ կանոնադրություն, Հոդված 4¹⁷¹): Այն է՝ ՄԱԿ-ի կողմից կոլեկտիվ ճանաչումը չի ենթադրում ճանաչում յուրաքանչյուր ՄԱԿ անդամ պետության կողմից՝ ճանաչման վավերացումը համարելով չափազանց կարևոր հարց կոլեկտիվ որոշմանն ապավինելու համար¹⁷²:

Դասական իրավական շրջանակը, որը կարգավորում է կամ, համենայնդեպս, փորձում է կարգավորել պետության ճանաչման գործընթացը՝ կարելի է ներկայացնել երկայուն համակարգի միջոցով, որի հիմնասյուներն են Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները և *jus cogens* նորմերի անխախտելիությունը: Պետության ճանաչմանն առնչվող ամենահայտնի և ամենից հաճախ վկայակոչվող իրավական փաստաթուղթը, անկասկած, Մոնտեվիդեոյի կոնվենցիան է, որի Հոդված 1-ն ամրագրում է. «Պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, և դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն¹⁷³»: Եթե միավորը ճանաչվում է որպես պետություն՝ չհամապատասխանելով այդ չափանիշներին, ապա նման «վաղաժամ» ճանաչումը համարվում է չմիջամտելու սկզբունքի խախտում, հետևաբար ոչ լեգիտիմ գործողություն: Միևնույն ժամանակ դժվար չէ նկատել, որ այդ չափանիշները, անկախ նրանից սահմանված են քաղաքականության ֆորմալ կանոններով, թե՛ ոչ, թողնում են մեկնաբանելու համար զգալի տարածություն, ինչի արդյունքում պետություններն իրենց վերապահում են մանևրելու հնարավորություններ: Նմանատիպ «առաձգականությունը»,

¹⁶⁹Թորոյան Ս., Լեոնային Ղարաբաղի... էջ 41-42:

¹⁷⁰ About UN Membership, <http://www.un.org/en/sections/member-states/about-un-membership/index.html>, (23.06.2016).

¹⁷¹ Article 4, UN Charter, p. 4, <https://treaties.un.org/doc/publication/ctc/uncharter.pdf>, (23.06.2016).

¹⁷² Klabbers J., International Law, Cambridge University Press, New York, 2013, p. 74.

¹⁷³ Montevideo convention on the rights and duties of states, <http://www.taiwandocuments.org/montevideo01.html>, (23.06.2016).

այնուամենայնիվ, չի չեղարկում այն փաստը, որ պետությունները պարտավորված են հետևել այդ չափանիշներին և օգտագործել վերջիններս ճանաչման գործընթացում: Ի վերջո, ոչ այնքան կարևոր է այդ չափանիշների մեկնաբանությունը, այլ այն փաստը, որ այդ չափանիշներն ընդունվել են որպես նորմատիվային հիմք ոչ միայն իրավագետների և իրավաբանների կողմից, այլ նաև, ինչն առավել կարևոր է, հենց պետությունների կողմից: Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված չափանիշները, հետևաբար, ներկայացնում են ճանաչման առաջին նորմատիվային հիմնասյունը, որի վրա պետությունները հիմնվել են վերջին տասնամյակների ընթացքում: Երկրորդը հիմնասյունը հարաբերականորեն ավելի նոր է և վերաբերում է *jus cogens* նորմերի անխախտելիությանը¹⁷⁴:

Սակայն, մինչև ճանաչման իրավական և քաղաքական գործոնների միջև հավասարակշռության ուսումնասիրությունը, հարկ է ավելի մանրամասն ներկայացնել «պետության ճանաչում» գործընթացը: Պետության ճանաչման հայեցակարգային սահմանման փնտրտուքի յուրաքանչյուր փորձ գրեթե անմիջապես խարսխվում է միջազգային իրավական ժառանգությունը երկու ճակատների բաժանած երկարատև բանավեճի հետ. արդյո՞ք ճանաչվածությունը էական պահանջ է պետականության համար, ինչպես պնդում են սահմանադիր (constitutive) դպրոցի ներկայացուցիչները, թե՞ արդեն գոյություն ունեցող փաստացի կարգավիճակի հաստատում, ինչպես հավաստում են հռչակագրային (declaratory) դպրոցի ներկայացուցիչները: Ըստ այդմ, մինչ ճանաչման գործընթացի շրջանակներում պետությունների վարքագծին և փորձին անդրադառնալը, հարկ է առաջին հերթին դիտարկել ճանաչման բնույթին առնչվող երկսայրաբանությունը: 19-րդ դարում ձևավորված ավանդույթը հանգեցրել էր նրան, որ ուշադրությունը կենտրոնանում էր բացառապես ճանաչման գործընթացի և դրա իրավական հետևանքների վրա, այլ ոչ թե տարբեր տարածքային կառավարական մարմինների կարգավիճակի որոշման կանոնների մշակման, իրավունակության և նմանատիպ այլ խնդիրների վրա: Ինչ-որ առումով, դա անխուսափելի էր, քանի դեռ սահմանադիր ուղղությունը պահպանում էր իր ազդեցությունը, քանի որ, համաձայն վերջինիս, այդպիսի կանոններ չեն կարող գոյություն ունենալ¹⁷⁵:

Համաձայն հռչակագրային դպրոցի, պետականությունը կանխորոշվում է պայմանների հետևյալ համախմբով՝ մշտական բնակչություն, սահմանված տարածք, կառավարություն և այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն: Այդ չափանիշները, որոնք ընդունված է համարել միջազգային սովորության իրավունք, ինչպես արդեն նշվել է, ամրագրված են Մոնտեվիդեոյի կոնվենցիայի Հոդված 1-ում և հետագայում զարգացում են ապրել և մշակվել իրավական դոկտրինաների և դատական պրակտիկայի շրջանակներում¹⁷⁶: Ըստ էության, Մոնտեվիդեոյի կոնվենցիան ոչ միայն ներկայացնում է պետականության հիմնական հատկանիշները, այլև անդրադառնում է պետականության «միջազգայնորեն ընդունմանը», այն է՝ պետականության, թերևս, ամենաբարդ և ամենաքաղաքականացված ասպեկտին՝ ճանաչմանը: Միաժամանակ, այն առաջ բերեց մի շարք հարցեր, ինչպիսիք են՝ կոնկրետ ինչն է ստանում ճանաչում՝

¹⁷⁴ Ryngaert C., Sobrie S., Recognition of States: International Law or Realpolitik? The Practice of Recognition in the Wake of Kosovo, South Ossetia and Abkhazia, *Leiden Journal of International Law*, 24 (2), 2011, pp. 467-490.

¹⁷⁵ Crawford J., *The Creation of States in International Law*, Oxford University Press, Oxford, 2nd edition, 2006, p. 19.

¹⁷⁶ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

պետությունը թե՞ կառավարությունը, *de jure* թե՞ *de facto* ճանաչում (այն է՝ կառավարության լեգիտիմություն թե՞ դրա փաստական գոյություն), և վերջապես՝ ինչպիսին են ճանաչման իրավական հետևանքները¹⁷⁷: Համաձայն հռչակագրային տեսության, երբ միավորը բավարարում է այդ չափանիշներին, այն անմիջապես համարվում է *erga omnes* պետություն: Այսպիսով, հռչակագրային տեսությունը հավաստում է, որ ճանաչումը ոչ այլ ինչ է, քան փաստական իրավիճակի պաշտոնական հաստատում. մի գործընթաց, որը սկսվում է այն պահից, երբ վերոնշյալ չափանիշները բավարարվում են և միավորը դառնում է պետություն: Տորմալ ճանաչումը, անշուշտ, ունենում է ուրույն ազդեցություն ճանաչող և ճանաչվող պետությունների հարաբերությունների վրա, սակայն պետականության պարտադիր տարր չէ¹⁷⁸:

Այսպես կոչված, «մրցակից» տեսությունը սահմանադիր տեսությունն է, որը պնդում է, որ քանի որ պետությունների համայնքը, ըստ էության, քաղաքական համայնք է, ապա անդամակցությունն այդ համայնքին կախված է արդեն գոյություն ունեցող անդամներից: Նմանատիպ մոտեցման շրջանակներում, ճանաչումը կենսական նշանակություն ունի. նույնիսկ եթե բոլոր չորս չափանիշները բավարարված են, պետությունը, որը դեռ չի ճանաչվել, ծանր կեցության մեջ կհայտնվի և ծայրահեղ դժվար կլինի պահպանել սեփական գոյությունը, ինչը սեփական օրինակով հաստատեց Բիաֆրան: Վերջինս, անցնելով Նիգերիայի հետ անջատման համար ծավալված արյունահեղ պատերազմի միջով, 1967թ. հռչակեց իր անկախությունը, սակայն ճանաչվեց միայն հինգ պետությունների կողմից և ընդամենը երեք տարի անց կրկին ընդգրկվեց Նիգերիայի կազմում¹⁷⁹: Այսպիսով, համաձայն այս տեսության, միավորը դառնում է պետություն միայն երբ այն ճանաչվում է որպես այդպիսին: Հետևաբար, ճանաչումը *conditio sine qua non* (կենսական պայման) է պետականության համար: Նման մոտեցումը կիսում է նաև միջազգային իրավունքի ավանդական պոզիտիվիստական հայեցակարգը, որը ներկայացնում է ճանաչումը որպես *jus gentium voluntarium* (voluntary law of nations) փոխհամաձայնություն. միավորը կարող է դառնալ պետություն միայն մյուս պետությունների համաձայնությամբ: Արդյունքում, պետականության նման խրթին հարցը սահմանափակվում է միայն պրագմատիկ խնդրի դիտարկմամբ՝ ճանաչվել է արդյո՞ք միավորը այլ պետությունների կողմից: Ըստ ամենայնի, սահմանադիր տեսությունն ունի մի շարք լուրջ բաղադրումներ, հատկապես կապված այն խնդրի հետ, երբ պետությունը ճանաչվել է միայն մի շարք պետությունների կողմից, ինչպես, օրինակ, Բիաֆրայի դեպքում: Հարց է առաջանում, թե քանի պետությունների կողմից ճանաչվածությունն է միավորին «փոխակերպում» պետության, ինչպես նաև ի՞նչ չափորոշիչներով է կայացվում ճանաչման որոշումը՝ փաստեր, նորմեր, աշխարհաքաղաքական նկատառումներ, թե՞ այլ գործոնների համախումբ: Այսպիսով, նմանատիպ մոտեցման ավելի արմատական և մանրագննին դիտարկումը ցույց է տալիս, որ, ի վերջո, այս տեսությունը հանգեցնում է անտրամաբանական և սեփական հայեցակարգին հակասող եզրակացության, որ պետականությունն ավելի շատ հարաբերական, այլ ոչ թե բացարձակ հասկացություն է¹⁸⁰:

¹⁷⁷ Klabbbers J., նշվ. աշխ., pp. 72-73.

¹⁷⁸ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

¹⁷⁹ Klabbbers J., նշվ. աշխ., p. 73.

¹⁸⁰ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.,

Ժամանակակից իրավական դոկտրինայի և իրավագիտության շրջանակներում գերիշխող դիրք ունի հռչակագրային տեսությունը: Վերջինիս հաջողության գրավականը կայանում է նրանում, որ այն պետականության «շնորհման» հարցում պետություններին զրկում է քաղաքական կամայականությունների վրա հիմնված որոշումներ կատարելու հնարավորությունից, փոխարենը՝ առաջադրում է օբյեկտիվ իրավական նորմերի համախումբ: Այդուհանդերձ, այս տեսությունը նույնպես ունի իր թերությունները: Առաջին հերթին, հաճախ նշվում է, որ չճանաչված պետությունները չունեն միջազգային իրավասություններ և, հետևաբար, չեն կարող համարվել պետություն՝ անգամ եթե բավարարում են բոլոր վերը նշված չափանիշներին: Մեկ այլ խնդիր է, որ տեսության շրջանակներում ուշադրություն չի դարձվում այն բանի վրա, թե ինչ ճանապարհով են պետությունները կարողացել հասնել անհրաժեշտ չափանիշների բավարարմանը, ինչի արդյունքում միավորները կարող են դառնալ պետություն միջազգային իրավունքի կոպիտ խախտումների միջոցով: Պետություններն արձագանքում են նման իրադարձություններին՝ ճանաչում չտրամադրելով այդ միավորներին, պատժամիջոց, որը չի համապատասխանում հռչակագրային տեսության դրույթներին: Ավելի արմատական մոտեցման դեպքում դժվար չէ նկատել, որ հակում կա խնդիրը հանգեցնել հռչակագրային այն ենթադրությանը, որ միավորը կարող է ունենալ «պետություն» իրավական որակում, որպես այդպիսին: «Պետականության» նման գաղափարն ունի փաստերն իրավունքի հետ շփոթելու միտում՝ *ex factis jus non oritur*¹⁸¹: Ավելին, պարզ է, որ ճանաչումը, ըստ էության, քաղաքական գործընթաց է. իրավական չափանիշները, իհարկե, ներկայացնում են որոշակի ուղեցույց (և շատ քիչ պետություններ են ճանաչվում՝ առանց արձանագրելու առնվազն բավարար արդյունքներ չափանիշներից գոնե մի մասի շրջանակներում), սակայն ճանաչելու կամ չճանաչելու որոշումներն ամբողջապես քաղաքական են՝ գերազանցապես առաջնորդվող քաղաքական շարժառիթներով¹⁸²:

Սահմանադիր, որի շրջանակներում ճանաչումը լիապես նորմատիվային է, և դրա «հակառակորդ»՝ հռչակագրային, որի շրջանակներում ճանաչումն չունի որևէ նորմատիվային արժեք, տեսությունների միջև անջրպետը թվում է անհաղթահարելի: Մակայն, մի շարք հեղինակներ առաջարկում են այդ անջրպետը հաղթահարելու «երրորդ ուղի», համաձայն որի ճանաչումը ո՛չ սոսկ սահմանադիր է, ո՛չ սոսկ հռչակագրային: Համաձայն նման մոտեցման, պետականությունը դիտարկվում է արդյունավետության շրջանակներում, իսկ ճանաչումը որպես քաղաքական քայլ, որը ավելացնում է միավորի միջազգային արդյունավետությունը: Ճանաչումը, որպես այդպիսին, և՛ սահմանադիր է, քանի որ այն ստեղծում է բարձր մակարդակի հարաբերություններ ճանաչողի և ճանաչվողի միջև, և՛ հռչակագրային, քանի որ այն ինքնին միավորին չի շնորհում պետականություն: Այդուհանդերձ, այս փակուղուց ելք գտնելու փորձերի փոխարեն, կարելի է կասկածի տակ առնել այս տեսական բանավեճի գործնական արդիականությունը: Ժամանակակից պետությունների փորձը, իրապես, առաջարկում է «բարդ դեպքերի» լայն ընտրանի, որոնք ամբողջապես չեն կարող «տեղավորվել» իրավական տեսություններից և ոչ մեկի շրջանակներում, սակայն ինչ-որ կերպ «հարմարեցվել» են միջազգային իրավական կանոնակարգին: Իսրայելը վերոնշյալի վառ օրինակ է. այն ունի պետականության բոլոր հատկանիշները, սակայն չի ճանաչվել որպես պետություն մի շարք արաբական պետությունների կողմից: Այդ նույն պետությունները, այդուհանդերձ, պահանջում են Իսրայելին պատասխանատվության

¹⁸¹ Նույն տեղում

¹⁸² Klabbers J., նշվ. աշխ., p. 73.

ենթարկել միջազգային իրավունքը խախտելու համար: Նման պրակտիկան, որի շրջանակներում ճանաչումը նորմատիվային է, սակայն չի արգելափակում միջազգային իրավասուբյեկտությունը, չի կարող լիարժեքորեն բացատրվել ո՛չ սահմանադիր, ոչ՝ հռչակագրային տեսության շրջանակներում: Սակայն, դա չի նշանակում, որ ճանաչման նման խրթին գործընթացը պետք է հիմնված լինի միայն պետական (այն է՝ քաղաքական) պրակտիկայի վրա: Միջազգային իրավունքը հիմնված է նուրբ հավասարակշռման վրա՝ մի կողմից պահպանելով տեսաբանական շրջանակներում ամրագրված նորմատիվային սկզբունքները, առանց որոնց միջազգային իրավունքը կկորցնէր իր կարգավիճակը որպես «իրավունք», մյուս կողմից՝ ադապտացվելով մշտապես փոփոխվող պետական պրակտիկային, առանց որի միջազգային իրավունքը կկորցնէր իր արդյունավետությունը և, ի վերջո, իր լեգիտիմությունը: Դա հատկապես տեսանելի է, երբ հարցը վերաբերում է պետության ճանաչմանը, որտեղ քաղաքական պետական պրակտիկան և նորմատիվային միջազգային իրավունքն անխուսափելիորեն միախառնվում են¹⁸³:

Վերոնշյալն ակներև է ամբողջ աշխարհում մի շարք պետությունների ճանաչման գործընթացների ուսումնասիրության ժամանակ: Հարավսլավիայի փլուզումն ազդարարեց, ընդհանուր առմամբ, միջազգային իրավունքի և, մասնավորապես, պետության ճանաչման շրջանակներում արմատական էվոյուցիայի սկիզբը, որի արդյունքները ցայսօր դեռևս ամբողջությամբ չեն բյուրեղացել, ինչի մասին վկայում են զարգացումները Կոսովոյում և Վրաստանում: 1992թ. հունվարի 15-ին Եվրոպական համայնքը, հիմնվելով Բադինտերի հանձնաժողովի դրական կարծիքի վրա¹⁸⁴, որոշում կայացրեց ճանաչել Սլովենիան և Խորվաթիան որպես նոր, անկախ պետություններ, ինչը, ըստ էության, պարզ դարձրեց, որ խոստումնալից նոր չափանիշները, իրապես, կարող են կիրառվել բավական ճկուն կերպով: Խորվաթիան, իր հերթին, այդ ժամանակահատվածում չունէր հաստատուն կառավարություն, որը ի գործու կլինէր վերահսկել իր ամբողջ տարածքը: Ուստի, ճանաչում շնորհելու որոշումը բացահայտորեն շեղվում էր հիմնական ավանդական պահանջներից: Մինևս ժամանակ, Խորվաթիան ճանաչելու որոշումը շեղվում էր նաև նորաստեղծ նորմերից, քանի որ Բադինտերի հանձնաժողովն արձանագրել էր, որ Խորվաթիայի Սահմանադրությունը լիովին չէր համապատասխանում փոքրամասնությունների պաշտպանության պահանջներին: 1992թ. ապրիլի 7-ին Բոսնիայի և Հերցեգովինայի ճանաչման գործընթացում արձանագրվեց պետության ճանաչման իրավական շրջանակի նույնատեսակ ազատ մեկնաբանություն: Այնտեղ չկար արդյունավետ կառավարություն, որն ի գործու կլինէր վերահսկողություն սահմանել սեփական տարածքի զգալի մասի վրա, ինչն անգամ ստիպված էր ընդունել երկրի նախագահը՝ նշելով, որ իր պետությունը չի կարող պաշտպանել իր անկախությունն առանց արտաքին ռազմական օգնության: Այդ իրավիճակը շուտով հանգեցրեց արյունահեղ քաղաքացիական պատերազմի, ինչն ակնհայտորեն չէր ապահովում այնպիսի միջավայր, որում մարդու իրավունքները պատշաճ կերպով պաշտպանված կլինեին: Մինչդեռ երեք պետություններից երկուսի ճանաչման գործընթացները չէին համապատասխանում ո՛չ նորմատիվային շրջանակին, ո՛չ էլ ավանդական կամ նորաստեղծ չափանիշներին, Մակեդոնիան դարձավ հակադիր ֆենոմենի գոհր. թեև այն բավարարում էր բոլոր հնարավոր չափանիշներին, սկզբնական փուլում այն ճանաչվեց միայն մի քանի պետությունների

¹⁸³ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

¹⁸⁴ The Opinion of the Badinter Arbitration Committee: A Second Breath for the Self-Determination of Peoples, http://www.thomasfleiner.ch/files/categories/IntensivkursII/Badinter_Badi.pdf, (03.09.2016).

կողմից: Չնայած Բադինտերի հանձնաժողովը դրական կարծիք էր ներկայացրել նաև Մակեդոնիայի դեպքի համար, Հունաստանը վետո դրեց վերջինիս ճանաչման վրա, և այդ իրավիճակը շտկվեց միայն 1993թ.¹⁸⁵:

Հարավսլավիայի փլուզումից հետո սուր բանավեճեր ծավալվեցին Եվրոպական համայնքի՝ Բալկաններում ճգնաժամի շրջանակներում վարած ճանաչման քաղաքականության շուրջ: Հարցի շուրջ իրավական դոկտրինի դիտարկումը ցույց է տալիս, որ ամբողջապես նոր նորմատիվային շրջանակի անսպասելի ստեղծումը, ինչպես նաև պետությունների կողմից վերոնշյալ նորմերի մեկնաբանության ձևերը, երկմտանքի առիթ են դարձել:

- I. Անորոշության առաջին աղբյուրն է նոր չափանիշների ստույգ բովանդակությունը, մասնավորապես, խոսքը վերաբերում է ազգերի ինքնորոշման իրավունքին: Հարավսլավիայի փորձը ցույց տվեց, որ ազգերի ինքնորոշման իրավունքն այլևս չի կիրառվում սոսկ գաղութային համատեքստում, սակայն նոր շրջանակը մնում է չհստակեցված: Եվ, ցավոք, Կոսովոյի հարցով Արդարադատության միջազգային դատարանի կարծիքը չի տրամադրում որևէ ուղղորդում սլավ խնդրի վերաբերյալ:
- II. Անորոշության երկրորդ կետը նոր պահանջների և ավանդական չափանիշների միջև հարաբերություններն են: Ավելի ստույգ, պետությունների ճանաչման վերոնշյալ դեպքերը կասկածի տակ դրեցին Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված չափանիշների պետությունների կամայականությունները սահմանափակելու հարցում ունեցած դերը: Հարց ծագեց, թե արդյո՞ք նոր չափանիշները եկել են փոխարինելու ավանդականներին թե՞ այդ նոր չափանիշները միտված են պարզապես համալրել արդեն գոյություն ունեցող չափանիշների շարքերը, այլ ոչ թե փոխարինել վերջիններին:
- III. Երրորդ և վերջին խնդիրը վերաբերում է միջազգային իրավունքի հիմքերին և քաղաքական կամայականությունների հետ նրա «բարդ հարաբերություններին», մասնավորապես, թե ինչքանով է դեռևս հնարավոր պետության ճանաչման չափանիշները համարել նորմատիվային կանոններ, երբ, ըստ երևույթին, այդ չափանիշները կարող են այս կամ այն միավորի ճանաչման գործընթացում մի կողմ դրվել՝ կախված քաղաքական իրադրությունից: Հետևաբար, կարող է թվալ, որ Եվրոպական համայնքի ստեղծած նոր չափանիշները գլխավորապես կամ գուցե ամբողջությամբ քաղաքական էին, չնայած Բադինտերի հանձնաժողովի իրավական խոսույթի և միջամտության առկայությանը¹⁸⁶: Այդ էվոլյուցիայի արդյունքն այդպես էլ մնաց խիստ կասկածելի, և միակ բանը, որ հնարավոր էր անել՝ հետևել, թե արդյոք կամ ինչպես պետությունների ճանաչման հաջորդող դեպքերը հստակություն կմտցնեն այդ հարցում:

Երբ 2008թ. փետրվարի 17-ին Կոսովոն հռչակեց իր անկախությունը Սերբիայից, այն, կարծես թե, ազդարարեց պետության ճանաչմանն առջվող վիճահարույց դեպքերով լի տարվա մեկնարկը: Այդ դեպքերն ուրույն հնարավորություն էին կանոնակարգելու այն խառնաշփոթը, որի մեջ հայտվել էր պետության ճանաչման գործընթացը գրեթե 20 տարի առաջ՝ Հարավսլավիայի փլուզումից ի վեր:

¹⁸⁵ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

¹⁸⁶ Craven M., The European Community Arbitration Commission in Yugoslavia, British Yearbook of International Law, 66, 1996, pp. 333-413.

Կոսովոյի անկախության հռչակումից հետո, Սերբիայի ներկայացրած բանաձևի նախագծի հիման վրա ՄԱԿ Գլխավոր ասամբլեան ընդունեց 63/3 բանաձևը՝ հայցելով Արդարադատության միջազգային դատարանի խորհրդակցական կարծիքն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին: 2010թ. հունիսի 22-ին ներկայացրած կարծիքում Արդարադատության միջազգային դատարանը Կոսովոյի անկախության հռչակումը որակեց անհամատեղելի ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևի¹⁸⁷, որ հիման վրա ձևավորվեց Կոսովոյում ՄԱԿ առաքելությունը¹⁸⁸, «Կոսովոյում ժամանակավոր ինքնակառավարման սահմանադրական շրջանակ» (2001)¹⁸⁹ կարգավորման կամ միջազգային իրավունքի հետ: Սակայն, ավելի կարևոր է այն փաստը, որ Դատարանը չի անդրադարձել անկախության հռչակման հետևանքներին, այդ թվում՝ Կոսովոյի ճանաչմանը: Իրականում, անհնար է, որ անկախության հռչակումն օրինական է (ինչպիսին որ այն որակել է Արդարադատության միջազգային դատարանը), մինչդեռ Կոսովոյի ճանաչումը որպես պետություն՝ անօրինական: Կոսովոյի անջատման իրավունքի առնչությամբ Դատարանը սահմանել է, որ «միանգամայն հնարավոր է, որ կոնկրետ գործողություն, ինչպիսին է անկախության միակողմանի հռչակումը, չհանդիսանա միջազգային իրավունքի խախտում՝ առանց դրան շնորհիվ իրավունքի պարտադիր հաստատման»¹⁹⁰: Այն կասկածի տակ է առնում այն փաստը, որ սեցեսիան *jus cogens* նորմերի լուրջ խախտումների համագումար է: Ըստ էության, Կոսովոյի հարցով Արդարադատության միջազգային դատարանի կարծիքի խորքային ուսումնասիրության դեպքում ակնառու է դառնում այն փաստը, որ այն առհասարակ կասկածի տակ է առնում սեցեսիան որպես միջազգային իրավունքի խախտում համարելու փորձերը: Հատկանշական է նաև, որ Դատարանն ամրագրում է, որ «տարածքային ամբողջականության սկզբունքը սահմանափակվում է պետությունների միջև հարաբերությունների կարգավորման հարցերով»¹⁹¹: Այստեղից հետևություն, որ անջատումը և անկախության միակողմանի հռչակումը, վերաբերելով ներպետական հարաբերություններին (երբ պետության ներսում գոյություն ունեցող միավորն անջատվում է «մայր պետությունից»), չի խախտում տարածքային ամբողջականության սկզբունքը: Այսպես թե այնպես, միջազգային իրավունքի շրջանակներում Կոսովոյի ճանաչումը չի կարող համարվել անօրինական: Թերևս, միակ հակադեմ փաստարկը, որ ներկայացնում են մի շարք վերլուծաբաններ, 1999թ. Սերբիայի դեմ

¹⁸⁷ UN Security Council Resolution 1244 (1999), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/172/89/PDF/N9917289.pdf?OpenElement>, (05.09.2016).

¹⁸⁸ UNMIK (United Nations Interim Administration Mission in Kosovo), <https://unmik.unmissions.org/>, (05.09.2016).

¹⁸⁹ Constitutional Framework For Provisional Self-Government In Kosovo, http://www.assembly-kosova.org/common/docs/FrameworkPocket_ENG_Dec2002.pdf, (05.09.2016).

¹⁹⁰ Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo, <http://www.icj-cij.org/docket/files/141/16010.pdf>, (05.09.2016).

¹⁹¹ Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo, <http://www.icj-cij.org/docket/files/141/16010.pdf>, (05.09.2016).

ՆԱՏՕ-ի կողմից ուժի կիրառումն է¹⁹², ինչն էլ հանգեցրեց Կոսովոյում ՄԱԿ ժամանակավոր միջազգային կառավարման կազմավորմանը: Նրանք նշում են, որ ուժի նմանատիպ կիրառումը կարող է խախտել *jus cogens* նորմը՝ փաստորեն, արգելելով պետությունների ճանաչել դրան հաջորդած իրողությունը՝ Կոսովոյի պետականությունը: Գործնականում, սակայն, իրավունքն առաջնային դերակատարություն չի ունեցել Կոսովոյի ճանաչման գործընթացում: Կոսովոյի անկախության հռչակումից հետո, ԵՄ Խորհուրդը հայտարարեց, որ «անդամ պետությունները որոշում կկայացնեն Կոսովոյի հետ իրենց հարաբարեբարությունների վերաբերյալ համաձայն իրենց պետական պրակտիկայի և միջազգային իրավունքի»¹⁹³: Արդյունքում, «պետական պրակտիկան», որը քաղաքական նպատակահարմարության դիվանագիտական կադապարն է, ճանաչման գործընթացում երկրորդ պլան է մղել միջազգային իրավունքը: Այդպիսով, ճանաչում շնորհելու ԵՄ միասնական պրակտիկան ձախողվեց: Ավարտուն և մշակված նորմատիվային շրջանակը, որը մեկ տասնամյակ առաջ օգտագործում էր Եվրոպական համայնքը Հարավսլավիայի փլուզումից հետո, այս դեպքում, ըստ էության, պարզապես բացակայում էր: Մեկ այլ հետաքրքրական փաստ է, որ ուսումնասիրելով Կոսովոյի անկախության հռչակմանը միջազգային արձագանքները, ընդ որում, և՛ եվրոպական, և՛ ոչ եվրոպական երկրների, կարելի է նկատել, թե որքան սակավաթիվ են հղումները միջազգային իրավունքին: Ընդ որում, այդ հղումները հաճախ սահմանափակվում են ընդամենը «միջազգային իրավունքի», «իրավունքի գերակայության» մասին հիշատակումներով, կամ ազգերի ինքնորոշման իրավունքի կամ փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ անորոշ ձևակերպումներով: Կոսովոն ճանաչած պետություններն իրենց որոշումը գրեթե միաձայն բացատրում են (եթե, իհարկե, որևէ բացատրություն տալիս են) բացառապես քաղաքական, մասնավորապես, տարածաշրջանում կայունության, խաղաղության և անվտանգության հաստատման նկատառումներով և այդ գործոնների վրա ճանաչման ունեցած դրական ազդեցությամբ: Մինչդեռ այն պետությունները, որոնք հրաժարվեցին ճանաչել Կոսովոն, իրենց հիմնավորումներում գլխավորապես վկայակոչում էին միջազգային իրավունքը, մասնավորապես, պետական ինքնիշխանության և տարածքային ամբողջականության գաղափարները՝ Վեսֆալյան իրավական շրջանակի հիմնարար սկզբունքները: Այնուամենայնիվ, տվյալ համատեքստում հարկ է ևս մեկ անգամ հիշատակել այն փաստը, որ միջազգային իրավունքը չի արգելում սեցեսիայի ճանաչումը, քանի որ սեցեսիան, հանդիսանալով ներպետական մակարդակի հարց, չի խախտում միջազգային իրավունքի հիմնարար նորմերը (մասնավորապես, պետությունների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության): Ուստի, չճանաչելու հիմնական պատճառը ոչ թե միջազգային իրավունքի, այլ պետական քաղաքականության տիրույթում է՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ մեծ թվով պետություններ իրենք էլ ունեն փոքրամասնությունների և

¹⁹² *Stu Nato Action Against Serbian Military Targets Prompts Divergent Views As Security Council Holds Urgent Meeting On Situation In Kosovo*, <http://www.un.org/press/en/1999/19990324.sc6657.html>, (08.09.2016); Roberts A., NATO's 'Humanitarian War' over Kosovo, *The International Institute for Strategic Studies, Survival*, vol. 41, no. 3, 1999, pp. 102-123; Simma B., NATO, the UN and the Use of Force: Legal Aspects, *European Journal of International Law*, 10 (1), 1999, pp. 1-22; Wippman D., Kosovo and the Limits of International Law, *Fordham International Law Journal*, Volume 25, Issue 1, 2001, pp. 129-150.

¹⁹³ Council of the European Union Press Release: General Affairs and External Relations, 2851st Council meeting, 6496/08 (Presse 41) Brussels, 18 February 2008, http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/gena/98818.pdf, (08.09.2016).

անջատողական միտումների հետ կապված խնդիրներ: Նրանք անհապաղ մատնանշեցին Կոսովոյի նախադեպաստեղծ ճանաչման վտանգները միջազգային և տեղական կայունության համար¹⁹⁴:

Կոսովոն ճանաչած մի շարք պետություններ, գիտակցելով այդ վտանգը, ճանաչման իրենց հայտարարություններում ընդգծեցին Կոսովոյի դեպքի «եզակիությունը»՝ միտում ունենալով հերքել այն պնդումը, որ վտանգավոր նախադեպ է սահմանվել: Ակնառու է, որ Կոսովոյի ճանաչման *sui generis* (եզակի) բնույթի այդպիսի շեշտադրումը նվազեցնում է նմանատիպ ճանաչման կարևորությունը միջազգային իրավունքի շրջանակներում: Օրինակ, 2008թ. փետրվարի 18-ին ներկայացրած հայտարարության մեջ ԵՄ Խորհուրդն ընդգծել է ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքների հիմնարար նշանակությունը՝ միաժամանակ պնդելով, որ այդ սկզբունքները ամբողջությամբ չեն կիրառվի Կոսովոյի *sui generis* դեպքի համար. Խորհուրդը վերահաստատում է ՄԱԿ Կանոնադրությամբ և Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված սկզբունքներին, այդ թվում՝ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքներին, ինչպես նաև ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևերին հավատարիմ մնալու պատրաստակամությունը: Այն նաև շեշտում է, որ հաշվի առնելով 1990-ականներին ծագած հակամարտությունը և Անվտանգության խորհրդի 1244 բանաձևի ներքո գործող ժամանակավոր արտաքին կառավարման երկար ժամանակահատվածը, Կոսովոն հանդիսանում է *sui generis* դեպք, որը չի հակասում վերոնշյալ սկզբունքներին և բանաձևերին¹⁹⁵:

Կոսովոյի դեպքի շուրջ ստեղծված իրավիճակը պարզ դարձրեց, որ պետությունների համայնքը խիստ տարամիտվել է միջազգային ճանաչման հարցում, ինչպես նաև այն, որ միջազգային իրավունքն ունեցել է միայն երկրորդական դերակատարություն ճանաչման գործընթացում: Այդ խրթին իրավիճակը կրկին երևան եկավ ընդամենը մի քանի ամիս անց Վրաստանում ծավալված իրադարձությունների համատեքստում: Ազգերի ինքնորոշման իրավունքը կրկին կիրառվում էր ոչ գաղութատիրական համատեքստում և դիտարկվում էր որպես Հարավային Օսիայի և Աբխազիայի «անջատում հանուն փրկության» վերականգնողական հատուցողական անջատման՝ որպես իրավական պաշտպանության միջոցի (*remedial secession*¹⁹⁶) պահանջների հիմք: «Անջատում հանուն փրկության» իրավունքը, այն է՝ անջատումը, որի օրինականությունը բխում է իշխող ռեժիմի ապօրինի բնույթից, ամրագրված է «ՄԱԿ կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին եւ համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների» հռչակագրում (*Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the*

¹⁹⁴ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

¹⁹⁵ Council of the European Union Press Release: General Affairs and External Relations, 2851st Council meeting, 6496/08 (Presse 41) Brussels, 18 February 2008, http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/gena/98818.pdf, (08.09.2016).

¹⁹⁶ Sfu Simon Th., Remedial Secession: What the Law Should Have Done, from Katanga to Kosovo, *Georgia Journal of International & Comparative Law*, Vol. 40, 105, 2011, pp. 107-172; Cismas I., Secession in Theory and Practice: the Case of Kosovo and Beyond, *Goettingen Journal of International Law* 2, 2010 2, pp. 531-587; Vidmar J., Remedial Secession in International Law: Theory and (Lack of) Practice, *St. Antony's International Review* 6, no. 1, 2010, pp. 37-56.

United Nations¹⁹⁷), որը Արդարադատության միջազգային դատարանը դիտարկում է որպես սովորության միջազգային իրավունք: Միաժամանակ, սույն փաստաթուղթը նաև ընդգծում է ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքները, ինչի վրա պատրաստակամորեն հիմնվում են Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը չճանաչող պետությունները Ռուսաստանի կողմից շնորհված ճանաչումը դատապարտելու գործում: Այդ դիրքորոշումը կիսում էր նաև ՆԱՏՕ-ն. դիրքորոշում, որը Ռուսաստանը որակեց որպես «երկակի ստանդարտների վրա հիմնված միջազգային իրավունքի քաղաքական դրդապատճառներով պայմանավորված կամայական մեկնաբանություն»՝ ակնարկելով ՆԱՏՕ-ի՝ մինչ այդ ներգրավվածությունը Կոսովոյում¹⁹⁸: Մինչդեռ երկակի ստանդարտներ կիրառելու քննադատությունը հավասարապես կիրառելի է նաև Ռուսաստանի դեպքում, որը հրաժարվեց ճանաչել Կոսովոն՝ որակելով որպես միջազգային իրավունքի սկզբունքների խախտում, մինչդեռ ընդամենը մի քանի ամիս անց ճանաչեց Հարավային Օսիան և Աբխազիան: Ի վերջո, այն հարցը, թե արդյոք դիտարկվող այս կամ այն դեպքի հանգամանքները համապատասխանում են remedial secession եզրույթին, և, մանավորապես, լեգիտիմ է ռեժիմը և բավարար կերպով պաշտպանում է փոքրամասնությունների իրավունքները, թե ոչ, «ականատեսներն» էլ կարող են որոշել: Ըստ այդմ, կիրառվող իրավական ստանդարտների անորոշությունը գլխավոր դերակատարներին հնարավորություն է ընձեռում վկայակոչել բարոյական բարձր ստանդարտները և, կախված դեպքից, հաստատել կամ մերժել սեցեսիայի և դրա հաջորդիվ (չ)ճանաչման օրինականությունը¹⁹⁹:

Ինչպես Կոսովոյի ճգնաժամի դեպքում, Հարավային Օսիայի և Աբխազիայի ճանաչման քաղաքական դիսկուրսը նույնպես միտում արձանագրեց սահմանափակվել ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների միջև կեղծ հակադրությունների փնտրտուքների և դրանց ակտիվ քննարկման խնդիրներով: Վերոնշյալը կրկին առաջ է բերում պետության ճանաչման իրավական նորմերի դերի, բովանդակության և ընդգրկման անորոշությամբ պայմանավորված հիմնարար խնդիրները: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Միջազգային անկախ փաստահավաք կոմիտեի ներկայացրած ամփոփիչ գեկույցը²⁰⁰ պարունակում է բավական մշակված փաստարկներ, որոնց շրջանակներում միավորների ճանաչման կամ չճանաչման գնահատման համար օգտագործվել են ինչպես ավանդական, այնպես էլ հետ-հարավսլավական չափանիշները: Ցավոք, այդ մանրագնին իրավական դիսկուրսը չի արժանացել պետությունների համայնքի ուշադրությանը և չի ունեցել կարևոր դերակատարություն՝ ի տարբերություն Հարավսլավիայի փլուզման ընթացքում պետական և կառուցվածքային դիսկուրսի վրա Բադինտերի հանձնաժողովի ունեցած զգալի

¹⁹⁷ 2625 (XXV). Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, <http://www.un-documents.net/a25r2625.htm>, (08.09.2016).

¹⁹⁸ Weitz R., Global Security Watch – Russia: A Reference Handbook, Praeger Security International, Santa Barbara, Calif, 2010, pp. 150-157.

¹⁹⁹ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

²⁰⁰ Independent International Fact-Finding Mission on the Conflict in Georgia, Report, Vol. I, http://www.mpil.de/files/pdf4/IIFFMCG_Volume_I2.pdf, (08.09.2016); Independent International Fact-Finding Mission on the Conflict in Georgia, Report, Vol. II, http://www.mpil.de/files/pdf4/IIFFMCG_Volume_II1.pdf, (08.09.2016); Independent International Fact-Finding Mission on the Conflict in Georgia, Report, Vol. III, http://www.mpil.de/files/pdf4/IIFFMCG_Volume_III1.pdf, (08.09.2016).

ազդեցությանը: Թերևս, դա պայմանավորված էր այն փաստով, որ Փաստահավաք կոմիտեի գեկույցը հրապարակվեց Վրաստանում ծավալված իրադարձություններից գրեթե մեկ տարի անց²⁰¹:

Հարավսլավիայում, Կոսովոյում և Վրաստանում զարգացումները նշանավորեցին այն ժամանակաշրջանի ավարտը, երբ ճանաչման հարցում պետությունների վարքագիծը հարաբերականորեն հետևողական էր և միասնական: Որպես վերոնշյալի անմիջական հետևանք, օրեցօր աճում է անորոշությունն այն հարցի շուրջ, թե որ նորմերն են ներկայումս կարգավորում պետությունների ճանաչման գործընթացը: Եթե միջազգային իրավունքը ցանկանում է պահպանել իր հեղինակությունը և դերը որպես միջազգային հարաբերությունները կարգավորող ուժ, այն պետք է ադապտացնի ինքն իրեն ժամանակակից զարգացումներին՝ միաժամանակ չհրաժարվելով իր նորմատիվային նկրտումներից²⁰²: Վերջին շրջանում ծավալված իրադարձությունները կրկին եկան ապացուցելու, որ պետությունների համայնքը դեռևս ստիպված է բախվել այդ նույն անորոշության և դրանից բխող հետևանքների հետ:

Պետության միջազգային ճանաչման մեկ այլ՝ ավելի հաջողված դեպք է Հարավային Սուդանը, որն անջատվեց Սուդանից 2011թ.: Հարավային Սուդանը քիչ թե շատ ինքնավար մարզ էր Սուդանի կազմում, սակայն երկու արյունալի քաղաքացիական պատերազմներն ազդարարեցին Խարթումի կենտրոնական կառավարության և Հարավային Սուդանի ժողովրդի միջև հարաբերությունների վատթարացումը: Անջատման համար հանրաքվեն անցկացվեց 2011թ., որի արդյունքում ընտրողների 98,83 տոկոսը կողմ քվեարկեց անկախությանը²⁰³, և 2011թ. հուլիսի 9-ին Հարավային Սուդանը հռչակեց իր անկախությունը: Ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 14-ին, Հարավային Սուդանն անդամակցեց ՄԱԿ-ին²⁰⁴, և ներկայումս արդեն ճանաչվել է 130 ՄԱԿ անդամ և 7 ոչ անդամ պետությունների կողմից²⁰⁵: Այդ պետություններից առաջինը Սուդանն էր, ինչը մատնանշեց այն փաստը, որ Հարավային Սուդանի անջատումը տեղի է ունեցել Սուդանի համաձայնությամբ: Մինչդեռ ոչ Կոսովոն, ոչ Աբխազիան և Հարավային Օսիան չեն ճանաչվել համապատասխանաբար Սերբիայի²⁰⁶ և

²⁰¹ Ryngaert C., Sobrie S., նշվ. աշխ.:

²⁰² Crawford J., *The Creation of States ...*, p. 98.

²⁰³ Results of the Referendum of Southern Sudan, <http://southernsudan2011.com/>, (09.09.2016).

²⁰⁴ UN welcomes South Sudan as 193rd state, <http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=39034#.WADJ--V97IU>, ((08.09.2016).

²⁰⁵ Any link, which indicates how many states have recognized South Sudan so far

²⁰⁶ “Resolution of the National Assembly of the Republic of Serbia on Basic Principles for Political Talks with Interim Institutions of Self-Government in Kosovo-Metohija” defines six basic principles for political talks with Priština, the first of which is “The Republic of Serbia, in accordance with international law, the Constitution and the will of the citizens, does not recognize and will never recognize Kosovo’s unilateral declaration of independence” see Resolution of the National Assembly of the Republic of Serbia on Basic Principles for Political Talks with Interim Institutions of Self-Government in Kosovo-Metohija, https://www.ceas-serbia.org/images/Resolution_on_the_basic_principles_for_political_talks_with_the_Provisional_Institutions_of_Self-Government_in_Kosovo.pdf, (09.09.2016); Armakolas A., Maksimovic M., Serbia’s Resolution on Kosovo and Metohija & the Belgrade-Priština dialogue: Is there a solution after the Resolution?, ELIAMEP Briefing Notes, Hellenic Foundation for European and Foreign Policy (ELIAMEP), Issue 9, 2013.

Վրաստանի²⁰⁷ կողմից: Սուդանի կողմից ճանաչմանն անմիջապես հաջորդեց տարածաշրջանային տերություն Եգիպտոսի և այդ ժամանակահատվածում ՄԱԿ Անվտանգության խորհուրդը նախագահող Գերմանիայի կողմից ճանաչումը: Չինաստանը, ԱՄՆ և Ռուսաստանը հետևեցին վերջիններիս օրինակին՝ ըստ այդմ, մատնացույց անելով, որ գերտերությունների համար Հարավային Սուդանի պետականությունն ընդունելի էր²⁰⁸:

Այնուամենայնիվ, Հարավային Սուդանի դեպքը զարկ տվեց բանավեճերի նոր փուլի մեկնարկին, հատկապես Հարավային Սուդանի շուտափույթ ՄԱԿ անդամակցության և Պաղեստինի պետականության համար ներկայացված հայտի շուրջ բուռն հակասությունների և խնդիրների համեմատության համատեքստում՝ առաջ քաշելով բավականին հետաքրքրական հարցեր: Այսպիսով, կշեռքի մեկ նժարին ունենք ենթակառուցվածքային և տնտեսական զարգացման ծայրահեղ ցածր մակարդակով, ապակայուն կառավարությամբ, ծառայությունների ոչ պատշաճ մատուցմամբ, 44,35% գրագիտության մակարդակով²⁰⁹ և մանկական թերսնման և մահացության չափազանց բարձր մակարդակով²¹⁰ Հարավային Սուդանը: Բնակչության ավելի քան կեսն ապրում է աղքատության շեմից ցածր պայմաններում, իսկ տարբեր ցեղախմբերի (հատկապես դինկա, նուեր և շիլլուկ) միջև կատաղի վեճերն էլ ավելի են սրում առկա իրավիճակը: Արդյունքում, Հարավային Սուդանը դեռևս անգոր է երաշխավորել կայունություն և խաղաղություն. հատկապես անջատումից հետո սրվել են թշնամական հարաբերությունները Հարավային Սուդանի բազմաթիվ էթնիկ խմբերի միջև, ինչը հանգեցրել է տարածաշրջանում աճող ապակայունացմանը²¹¹: Թերևս, ակնհայտ է, որ պետությունն ունի ժողովրդավարական կառավարման փորձի պակաս, իսկ քաղաքական մրցակցության ինստիտուտը դեռևս շատ թույլ է և թերի ձևավորված²¹²: Միաժամանակ, կշեռքի մյուս նժարին ունենք մի շարք մասնակի ճանաչված պետություններ, ինչպիսիք են Պաղեստինյան Պետությունը²¹³ և Կոսովոյի Հանրապետությունը, կամ, ինչն ավելի պարադոքսալ է, մի շարք չճանաչված պետություններ, որոնց թվում հատկապես Արցախի Հանրապետությունը, որոնք անհամեմատելի ավելի լավ վիճակում են, քան Հարավային Սուդանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ միանգամայն բնական է այն հարցադրումը, թե ինչու Հարավային Սուդանը կարող է ճանաչվել որպես պետություն, մինչդեռ Պաղեստինը, Կոսովոն կամ Արցախը՝ ոչ: Սակայն, Հարավային Սուդանն անջատվել

²⁰⁷ Abkhazia, S. Ossetia Formally Declared Occupied Territory, Civil Georgia,

<http://www.civil.ge/eng/article.php?id=19330>, (09.09.2016); South Ossetia is not Kosovo, The Economist, <http://www.economist.com/node/12009678>, (09.09.2016).

²⁰⁸ Klabbers J., նշվ. աշխ., p. 75.

²⁰⁹ UNESCO data center: Literacy rate, South Sudan 2015, <http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=166>, (09.09.2016).

²¹⁰ Levels & Trends in Child Mortality, Report 2015: Estimates Developed by the UN Inter-agency Group for Child Mortality Estimation, United Nations Children's Fund p. 24, http://www.childmortality.org/files_v20/download/IGME%20report%202015%20child%20mortality%20final.pdf, (09.09.2016).

²¹¹ Manby B., The Right to a Nationality and the Secession of South Sudan: A Commentary on the Impact of the New Laws, Open Society Initiative for Eastern Africa, 2012.

²¹² Freedom in the World 2016: South Sudan, <https://freedomhouse.org/report/freedom-world/2016/south-sudan>, (09.09.2016); Fragile States Index 2016: South Sudan, <http://fsi.fundforpeace.org/2016-southsudan>, (09.09.2016).

²¹³ Strangled: Gaza collapsing in the grip of a humanitarian crisis, Euro-Med Monitor for Human Rights, May 2015, http://euromedmonitor.org/uploads/reports/Strangled_En.pdf, (11.09.2016);

է Սուդանից վերջինիս համաձայնությամբ (գրեթե չորս տասնամյակ տևողությամբ քաղաքացիական պատերազմից հետո), մինչդեռ Պաղեստինը, Կոսովոն և Արցախը չեն հասել նման համաձայնության համապատասխանաբար Իսրայելի, Սերբիայի և Ադրբեջանի հետ: Նույնը ճշմարիտ է ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա հարաբերականորեն վերջերս անկախություն հռչակած մի շարք պետությունների դեպքում, մասնավորապես, Էրիթրեայի Պետությունը (միջազգայնորեն ճանաչվել է 1993թ.²¹⁴) և Թիմոր Լեստեի Ժողովրդավարական Հանրապետությունը (միջազգայնորեն ճանաչվել է 2002թ.²¹⁵), որոնք ստացել են իրենց «մայր պետությունների» Եթովպիայի և Ինդոնեզիայի, ճանաչումը, սակայն, ինչպես Հարավային Սուդանում, այստեղ կառավարման արդյունավետությունը և կայունության մակարդակը, մեղմ ասած, լավ վիճակում չեն: Վերոնշյալը կրկին առաջ է քաշում այն հարցերը, թե ո՞ր դեպքում է կարելի միավորի անկախության պահանջը և սեփական պետություն ձևավորելու փորձերը ճանաչել լեգիտիմ, և արդյո՞ք կարող է և/կամ պետք է «մայր պետության» կողմից ճանաչումը լինել հիմք կամ չափանիշ միջազգային ճանաչման համար:

2.3. Պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները: Մոնտեվիդեոյի կոնվենցիա

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում²¹⁶ ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների վերլուծությունն անչափ կարևոր է ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացածության և կառուցման գործընթացների գնահատման համար՝ հանդիսանալով, ըստ էության, վերջիններիս հիմքը: Միաժամանակ, նմանատիպ վերլուծությունը նաև թույլ է տալիս արձանագրված արդյունքների հիման վրա գնահատել վերոնշյալ պետությունների միջազգային ճանաչում ստանալու հնարավորությունները: Ստորև ներկայացվում է Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների՝ մշտական բնակչության, սահմանված տարածքի, կառավարության և այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողության, վերլուծությունը, ինչին հաջորդում է Կոսովոյի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեպքերի համար յուրաքանչյուր հատկանիշը ներկայացնող աղյուսակը (Աղյուսակ 4):

- **Մշտական բնակչություն**

Համաձայն Մոնտեվիդեոյի կոնվենցիայում նշված առաջին հատկանիշի, պետությունը պետք է ունենա մշտական բնակչություն: Սույն չափանիշը, անշուշտ, մեծ կարևորություն ունի, քանզի բնակչության ֆիզիկական բացակայության դեպքում, պետության գոյության

²¹⁴ Admission of Eritrea to membership in the United Nations, <http://dag.un.org/handle/11176/193150>, (11.09.2016), UN Security Council Resolution 828 (1993), [http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/828\(1993\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/828(1993)), (11.09.2016).

²¹⁵ UN General Assembly Resolution 57/3 (2002): Admission of the Democratic Republic of Timor-Leste to membership in the United Nations, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96F9%7D/UNMembers%20ARES573.pdf>, (11.09.2016); Unanimous Assembly Decision Makes Timor-Leste 191st United Nations Member State, <http://www.un.org/press/en/2002/ga10069.doc.htm>, (11.09.2016).

²¹⁶Montevideo convention on the rights and duties of states, <http://www.taiwandocuments.org/montevideo01.htm>, (23.06.2016).

հաստատումն առնվազն անհնար է²¹⁷: Այնուամենայնիվ, մշտական բնակչության գնահատման հայեցակարգում կան մի շարք երկսայրաբանություններ. անկախ նրանից, թե բնակչության թվաքանակը մեծ է (Չինաստան, Հնդկաստան) թե փոքր (նույնիսկ Նաուրուն և Վանուատուն, որոնք ունեն ընդամենը մի քանի տասնյակ բնակիչներ) համարվում են լիարժեք պետություններ: Եվրոպայի գաճաճ պետությունները (Անդորրան, Մոնակոն, Լիխտենշտեյնը, Սան Մարինոն) նույնպես համարվում են իրավասուբյեկտ պետություններ և ունեն պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները²¹⁸: Չնայած նրան, որ Լիխտենշտեյնի պաշտպանության խնդրով զբաղվում է Շվեյցարիան, վերոնշյալ հանգամանքը չի խաթարում Լիխտենշտեյնի պետականությունը, թեպետ ժամանակին բացասականորեն է ազդել 1920թ. Ազգերի լիգային Լիխտենշտեյնի անդամակցության վրա²¹⁹:

- **Սահմանված տարածք**

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված երկրորդ հատկանիշն է «սահմանված տարածքը: Պետությունը պետք է ունենա տարածք. առանց տարածքի չի կարող լինել պետություն: «Կիբեր պետության» (cyberstate), այն է՝ պետություն առանց տարածքի, գաղափարն անհամատեղելի է միջազգային իրավունքի չափանիշներին: Սակայն, հատկանշական է, որ թեև հատկանիշն ամրագրված է որպես «սահմանված տարածք», այնուամենայնիվ, ամբողջ տարածքը պարտադիր չէ լինի սահմանված, այլ բավարար է, որ տարածքի հիմնական և առանցքային մասը լինի սահմանված, եթե նույնիսկ սահմանները մնում են վիճելի: Բանն այն է, որ մեծ թվով պետություններ ունեն սահմանների շուրջ վեճեր: Վերոնշյալը վերաբերում է անգամ այնպիսի խաղաղասեր պետություններին, ինչպիսիք են Նիդերլանդները, Գերմանիան և Բելգիան: Իսկ մի շարք պետությունների (վառ օրինակ է Իսրայելը) սահմանների խնդիրն այնքան հակասական է և խրթին, որ հստակ ամրագրված սահմաններով տարածքի պահանջը կլիներ ոչ իրատեսական: Այդպիսով, միակ կարևոր չափանիշը հիմնական տարածքի առկայությունն է: Միաժամանակ, միջազգային իրավունքը չի առաջադրում տարածքի շուրջ պահանջներ, և, օրինակ, չի նշում տարածքի ոչ նվազագույն, ոչ առավելագույն չափը²²⁰:

Տարածքի վերահսկողությունը և դրա տարատեսակները: Սահմանաված տարածքի շրջանակներում մեկ այլ կարևորագույն հարց է տարածքի վերահսկողության խնդիրը: Տարածքի վերահսկողությունը բոլոր ժամանակներում եղել է իրական իշխանության խորհրդանիշը, ինչպես նաև դրա աղբյուրը: Դեռևս Վերսալյան աշխարհի ժամանակաշրջանից ի վեր միջազգային հարաբերությունների գլխավոր դերակատարներն ինքնիշխան պետություններն են, որոնց գլխավոր հատկանիշներից մեկը եղել և մնում է տարածքի առկայությունը: Այնուամենայնիվ, պետությունների ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունն ոչ մեկ անգամ են կասկածի տակ առնվել, ինչն էլ հանգեցրել է դրանց մասնատմանը (փլուզմանը, կազմալուծմանը): 20-րդ դարի ընթացքում

²¹⁷Crawford J., Brownlie's Principles of Public International Law, Oxford University Press, Oxford, 2012, p. 128.

²¹⁸Klabbers J., նշվ. աշխ., p. 71.

²¹⁹Ազգերի լիգան չընդունեց Լիխտենշտեյնին ճիշտ այս պատճառաբանությունը բերելով, սակայն ավելի ուշ այդ նույն հանգամանքը խոչընդոտ չհանդիսացավ ՄԱԿ անդամակցության համար: Լիխտենշտեյնն անդամակցեց վերջինիս 1990թ.:

²²⁰ Klabbers J., նշվ. աշխ., pp. 70-71.

կայսրությունների փլուզման, ինչպես նաև գաղութների ազատագրման արդյունքում, պետությունների թիվը 55-ից աճեց մինչև 193-ը²²¹:

20-րդ դարի վերջին, սակայն, սկսեցին դարձավ, որ նորաստեղծ ճանաչված պետություններից զատ գոյություն ունի նաև քաղաքական-տարածքային միավորների այլ տեսակ: 1990-ական թվականների կեսերին հետազոտողների ուշադրության կենտրոնում հայտնվեցին այն տարածքային միավորները, որոնք միջազգային իրավունքի ընթացակարգերով չեն ճանաչվել «մայր պետությունից» անկախ, սակայն կամ ունեն սեփական կառավարման մարմիններ, իշխանություններ կամ էլ կառավարվում են պարտիզանական բանակի առաջնորդների, թմրանյութերի վաճառքի պարագլուխների, դաշտային հրամանատարների, տեղական առաջնորդների կողմից²²²: Եվ այդ համատեքստում առավել սրվեց տարածքի վերահսկողության խնդիրը:

Տարածքի վերահսկողությունը յուրաքանչյուր պետության բնական պահանջն է, որը թույլ է տալիս ստանալ գոյության ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսներ, հանդիսանում է նրա ինքնիշխանության հիմքը և տարբերում է նրան այլ քաղաքական կազմավորումներից: Բացի այդ, տարածքը պետության գաղափարախոսական հենքն է²²³: Միննույն ժամանակ, պետությունը ստեղծվում է տվյալ տարածքի բնակիչների կողմից՝ պարտավորվելով իրականացնել մի շարք գործառույթներ, որոնք գլխավորապես կայանում են քաղաքացիներին հասարակական բարիքներով ապահովման մեջ: Այդ «հասարակական պայմանագրի» երկկողմանի իրագործումն ապահովում է պետության տարածքի կայունությունը և դարձնում է այն վերահսկելի²²⁴:

Այսպիսով, տարածքի վերահսկողությունը տարածքի և դրա բաղադրիչների (բնական, մարդկային, արդյունաբերական, ենթակառուցվածքային կապիտալ) լիարժեք կառավարման հնարավորությունն է, որը թույլ է տալիս նկարագրել այն միասնական քաղաքական-տարածքային համակարգի համատեքստում: Քաղաքական-տարածքային համակարգի միասնությունը նշանակում է օրենքների և տարածքի կառավարման մոտեցումների միասնություն: Հատկանշական է, որ տարածքի վերահսկողությունը պետության մենաշնորհը չէ: Արդյունքում, ժամանակակից տերմինաբանության մեջ օգտագործվում են արտաքին (դե-յուրե, իրավական, բացասական) և ներքին (դե ֆակտո, փաստացի, դրական) ինքնիշխանության հասկացություններ²²⁵:

Արտաքին ինքնիշխանությունը պետության սեփական տարածքի վերահսկողության իրականացման իրավունքն է: Փաստորեն, խոսքը գնում է միջազգային հանրության

²²¹ Себеццов А., Колосов В., Феномен неконтролируемых территорий в современном мире, *Полис*, № 2, 2012, с. 31-46.

²²² Kolosov V., O'Loughlin J., Pseudo-States at Harbingers of a New Geopolitics: The Example of the Trans-Dniestr Moldovan Republic– Boundaries, Territories and Postmodernity, Frank Cass, London, 1999; Колосов В., Мироненко Н., Геополитика и политическая география, Аспект Пресс, Москва, 2011 (ըստ Себеццов А., Колосов В., նշվ. աշխ.):

²²³ Jones M., Jones R., Woods M., An Introduction to Political Geography: Space, Place and Politics, Routledge, London, 2004, p. 21.

²²⁴ Rotberg R., State Failure and State Weakness in a Time of Terror, Brookings Institution Press, Washington D.C., 2003, p. 49.

²²⁵ Jackson R., Quasi-states: Sovereignty, International Relations and the Third World, Cambridge University Press, Cambridge, 1990; Ильин М., Мелешкина Е., Мельвиль А., Формирование новых государств: внешние и внутренние факторы консолидации, *Полис* № 3, 2010, с. 26-39.

անդամների կողմից ֆորմալ-իրավական ճանաչման մասին, որը ենթադրում է չմիջամտել ինքնիշխան պետության ներքին իրավասություններին վերաբերող հարցերին: Արտաքին ինքնիշխանությունը հանդիսանում է մյուս պետությունների համայնք մուտք գործելու անցաբուրդ, որոնց համակարգը հանդիսանում է միջազգային կարգուկանոնի վկայակոչման (референтный) հիմք: Բացի այդ, ճանաչումն օգնում է հաստատել մյուս պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ և միջազգային կազմակերպություններին անդամակցելու միջոցով համագործակցություն²²⁶:

Ներքին ինքնիշխանությունը ենթադրում է պետության իրական վերահսկողությունն իր տարածքում, որն արտահայտվում է նրանով, որ քաղաքացիների մեծամասնությունը ենթարկվում է սովյալ պետության օրենքներին և իրեն համարում է այդ պետության մասը: Պետությանը ենթարկվելու պատրաստակամությունը թույլ է տալիս վերջինիս ստանալ իր գոյության համար ռեսուրսներ: Փաստորեն, ներքին ինքնիշխանության հասկացությունը մոտ է տարածքի վերահսկողության հասկացությանը: Այնուամենայնիվ, ներքին ինքնիշխանությունը միշտ չէ, որ ենթադրում է տարածքի փաստացի վերահսկողություն: Մի շարք դեպքերում հանցավոր կառույցները, վայելելով հասարակական աջակցություն, վերահսկում են լայնածավալ տարածքներ՝ բնավ չձգտելով տարածքի վերահսկողության օրինականացմանը²²⁷:

Կարելի է առանձնացնել տարածքի վերահսկողության տարբեր ձևեր և տեսակներ՝

Աղյուսակ 2

Տարածքի վերահսկողության տեսակների դասակարգումը

Տարածքի վերահսկողություն	Ղաւ	Ենթադաս
Ըստ տեսակների	Ուժային	Ոստիկանական, ռազմական, պարտիզանական, ահաբեկչական
	Քաղաքական	
	Գաղափարախոսական	
	Տնտեսական	Օրինական (սպիտակ), Հանցավոր (մոխրագույն, սև)
Ըստ տարածքային պատկերի	Բացարձակ	
	Օջախային	
	Եզակի	
	Ցանցային	
Ըստ ժամանակային ընդգրկման	Մշտական	
	Ժամանակավոր	Սեզոնային, օրական

Տարածքի վերահսկողությունը և չճանաչված պետությունների դասակարգումը:
 Չճանաչված պետությունների համար, ի լրումն այլ սահմանումների (օրինակ, վիճելի տարածքներ, սառեցված հակամարտություններ և այլն), երբեմն օգտագործվում է նաև «չվերահսկվող տարածքներ» եզրույթը: Ռ. Լեմբը այդ հասկացության մեջ նեղ իմաստով

²²⁶ Себецов А., Колосов В., նշվ. աշխ, ժ. 33.

²²⁷ Себецов А., Колосов В., նույն տեղում:

ներառում է կենտրոնական իշխանությունների կողմից չվերահսկվող տարածքները, իսկ լայն իմաստով՝ նրանց կողմից վատ վերահսկվող տարածքները, ինչն իշխանության վակուումը լրացնող տարբեր անօրինական խմբավորումների ազատ գործելու հնարավորություն է ընձեռում²²⁸: Նմանատիպ սահմանումներ կարելի է գտնել նաև Վելանի աշխատանքներում²²⁹:

Վերահսկողության չափման մեթոդների և չափորոշիչների բացակայությունը թույլ չի տալիս հստակ որոշել այն սահմանը, որից այն կողմ կենտրոնական իշխանությունը կորցնում է տարածքում վերահսկողությունը: Երբեմն չվերահսկվող տարածքների որոշակի տեսակի սահմանման խնդիրը, օրինակ, վիճահարույց կարգավիճակ ունեցող տարածաշրջաններում, բավականին խրթին է: Այդպես, Արևմտյան Սահարայի դեպքում գլխավոր խնդիրը որոշելն է, թե ով ունի տարածքի վերահսկողության իրավունք (արտաքին ինքնիշխանությունը): Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետությունը (ՄԱԴՀ) վերահսկում է տարածքի միայն 20%-ը («ազատ գոտի»), իսկ մնացած մասը գտնվում է Մարոկկոյի վերահսկողության ներքո: Մոտ հինգ տասնյակ ՄԱԿ անդամ պետություններ հաստատել են դիվանագիտական հարաբերություններ ՄԱԴՀ-ի հետ և համարում են Պոլիսարիոն (Polisario) Արևմտյան Սահարայի ժողովրդի շահերի օրինական ներկայացուցիչ: Մինչդեռ Մարոկկոն, իր հերթին, Արևմտյան Սահարայի ողջ տարածքը համարում է իր պետության մասը: Միաժամանակ ՄԱԿ-ն Արևմտյան Սահարան դասում է ոչ ինքնավար (չվերահսկվող) տարածքների շարքում: Էլ ավելի անորոշ է Պաղեստինի ազգային կառավարության կարգավիճակը: Իսրայելը վերահսկում է Պաղեստինի տարածքի զգալի մասը («C» գոտի՝ համաձայն Օսլոյի համաձայնագրի): Պաղեստինյան տարածքների մյուս մասը 2007թ. ձգնաժամից հետո բաժանվեց Համասի (Գազայի հատված) և ՖԱԹՀ-ի (Հորդանան գետի արևմտյան ափ) վերահսկողության տակ գտնվող գոտիների²³⁰:

Գոյություն ունեն չվերահսկվող տարածքների դասակարգման տարբեր հայեցակարգեր: Օրինակ Իլլինը, Մելեշկինան, Մելվիլը²³¹ չվերահսկվող տարածքները բաժանում են ինքնահռչակ, չճանաչված պետությունների, քվազի պետությունների և դեֆակտո պետությունների: Ընդ որում, վերջինները, նրանց կարծիքով, ունեն ամենամեծ շանսերը դառնալու լիարժեք ինքնիշխան պետություններ:

Մեքեմցովն ու Կոլոսովը «չվերահսկվող տարածքները» սահմանում են որպես պետական տարածքի այն մասը, որտեղ կենտրոնական իշխանությունները չեն կարողանում կամ չեն ցանկանում իրականացնել ուժային կամ այլ տեսակ վերահսկողություն, ինչպես նաև մասնակցել հասարակական ծառայությունների ստեղծմանն ու բաշխմանը: Հեղինակներն իրենց աշխատանքում դիտարկում են չվերահսկվող տարածքների հինգ տեսակ՝

1. Պետականություն չունեցող տարածքների մի մասը (սև անցք – черная дыра) ձևավորվել են հանցավոր և ահաբեկչական գործունեության, անարխիայի («բոլորի պատերազմը բոլորի դեմ») և կենտրոնական իշխանության թուլության արդյունքում: Մյուս մասն առանձին խմբավորումների (կլանների, ցեղերի) կողմից վերահսկվող

²²⁸Lamb R., Ungoverned Areas and Threats from Safe Havens. Final Report of the Ungoverned Areas Project, prepared for the Office of the Under Secretary of Defense for Policy, Center for International and Security Studies at Maryland, 2008, http://www.cissm.umd.edu/papers/files/ugash_report_final.pdf, (24.06.2016).

²²⁹Whelan T., Africa's Ungoverned Space, *Nagao e Defesa: Instituto de Defesa Nacional*, Verao, № 114, 3ª Serie, 2006, pp. 61-73.

²³⁰Себеццов А., Колосов В., նույն տեղում:

²³¹Ильин М., Мелешкина Е., Мелвиль А., նույն տեղում:

միավորներն են՝ առանց հստակ սահմանների և միասնական կենտրոնի տարածքները՝ ապակենտրոնացված վերահսկողության տարածքները (օր.՝ Սոմալիի հարավը²³²): Նմանատիպ տարածքներում զարգացած է ցեղային և կլանային ինքնագիտակցությունը, իսկ սովորույթները, պատվո վարքականոնը և կրոնական պատվիրաններն ավելի կարևոր են պաշտոնական նորմատիվային (կանոնակարգիչ) ակտերից: Պետականություն չունեցող տարածքներին բնորոշ են սահմանների անկայունությունը, վերահսկողության գոտիների ցածր մակարդակը և մասնատվածությունը, սակայն որոշակի ժամանակահատվածներում վերահսկողության առանձին տեսակներ (մասնավորապես ուժային) կարող են բավականին վառ արտահայտված լինել: Պետականություն չունեցող տարածքները հաճախ իրենց առջև ինդիք չեն դնում ապահովել «մայր պետության» կազմից փաստական դուրս գալու իրավական ձևակերպումը, քանի որ դա չի նպաստում տեղական ինքնակառավարման առաջնորդների շահերին (ռեսուրսների, հարկերի – рента վերահսկողություն), խանգարում է անօրինական գործունեությանը (թմրանյութերի, զենքի վաճառք, թրաֆիքինգ) կամ էլ հակասում է նրանց գաղափարախոսությանը (ամբողջ պետությունում կարգերի փոփոխություն և իշխանության զավթում և այլն)²³³:

2. Տարանցիկ պետականության տարածքներն ընդգրկում են չվերահսկվող տարածքների այն մասը, որոնք առաջացել են նպատակային (целевой) սեցեսսիայի փորձի արդյունքում կամ ամբողջ պետությունում իշխանությունը զավթելու համար: Առաջին դեպքում նոր իշխանությունները նպատակադրվում են ստեղծել իշխանության պետական մարմիններ, նոր ինքնիշխան պետություն կամ մտնել մեկ այլ պետության կազմի մեջ: Երկրորդ դեպքում օրինական իշխանությունների կողմից չվերահսկվող տարածքն օգտագործվում է որպես սեփական իշխանության դաշտի ընդլայնման, անհրաժեշտ տնտեսական և ռազմական ռեսուրսների ձեռքբերման հենակետային հիմք²³⁴:
3. Խռովարար (ինքնահռչակ) պետություններն իրենցից ներկայացնում են տվյալ տարածքի ապստամբների կողմից հռչակված տարածքները (օրինակ Մյանմայում Վա հանրապետությունը) կամ ապագա պետության մաս հռչակված տարածաշրջանները («կոմպակտ հեղափոխական գոտիներ», «ազատագրված տարածքներ», «ազատության տարածքներ» Հնդկաստանի և Նեպալի առանձին շրջաններում) և որոնց վրա իրականացվում է ուժային վերահսկողություն: Դրա հետ մեկտեղ, ապստամբներն ի գործու չեն իրականացնել հիմնական պետական գործառույթները: Ամբողջապես ապստամբների վերահսկողության տակ գտնվող տարածքների հետ մեկտեղ կան նաև անցումային տարածքներ, որտեղ վերահսկողությունը կայուն չէ²³⁵: Բացի այդ ինքնահռչակ պետություններում, մասնավորապես նրանց ծայրամասերում, կարելի է հանդիպել ապակենտրոնացված վերահսկողության տարածքներ²³⁶:

²³² Somalia: The Transitional Government on Life Support; Africa Report № 170, 21 February, 2011, <https://d2071andvip0wj.cloudfront.net/170-somalia-the-transitional-government-on-life-support.pdf>, (24.06.2016).

²³³ Себеццов А., Колосов В., նշվ. աշխ, էջ 38:

²³⁴ Себеццов А., Колосов В., նշվ. աշխ, էջ 39:

²³⁵ McColl R., The Insurgent State: Territorial bases of revolution, Annals Assoc Amer Geog, 1969, pp. 613-631 (ըստ Себеццов А., Колосов В., նշվ. աշխ, էջ 40):

²³⁶ Себеццов А., Колосов В., նշվ. աշխ, էջ 40:

4. Քվազիպետությունների դեպքում իրականացվում է ուժային վերահսկողություն և այդտեղ ապստամբ իշխանությունները իրականացնում են պետական գործառույթների մի մասը: Տարածքի վերահսկողության մակարդակը միջին է: Որոշակի կայունացումից և դիրքերի ամրապնդումից հետո ապստամբ իշխանությունները ձգտում են ձեռք բերել լեգիտիմություն և ձեռնարկում են խաղաղ կյանքի հաստատումը: Եթե նրանք նպատակ ունեն գավթել իշխանությունն ամբողջ պետությունում, ապա տվյալ քվազիպետության տարածքը հանդիսանում է նաև պետության մյուս մասերի համար ակնհայտ ազիտացիայի բաղադրիչ: Խաղաղ կյանքի հաստատումը նաև թույլ է տալիս տնտեսական գործունեությունից հավելյալ եկամուտ ստանալ: Միննույն ժամանակ, անցումը խաղաղ կյանքին հակասության մեջ է մտնում անօրինական գործունեությունից ստացվող միջոցների հետ, որոնք հաճախ բերում են ավելի շատ եկամուտներ, քան օրինական տնտեսական գործունեությունը: Այդպես, Շրի-Լանկայի հյուսիսում 2009թ. իր գոյությունը պահպանած Թալիբ-Իլամ քվազիպետությունում կազմավորվել էին իշխանության քվազիպետական մարմիններ՝ կառավարություն, դատական համակարգ, ոստիկանություն, առողջապահական և կրթական համակարգ: Նախկին ռազմական խմբավորումը՝ «Թալիբ-Իլամի ազատագրման վագրերը», վերածվել էին բանականման կառույցի, որտեղ անգամ հայտնվել էին ռազմա-օդային և ռազմա-ծովային ուժեր: Սակայն բնակչության կենսամակարդակը մնում էր ցածր: Քվազիպետությունը ստիպված էր օգտագործել շրի-լանկյան ռուփին և գրեթե ամբողջությամբ կախվածության մեջ էր գտնվում կենտրոնական իշխանությունների կողմից վերահսկվող մայրուղիով իրականացվող առաքումներից²³⁷:

5. Դե-ֆակտո պետությունների²³⁸ դեպքում տվյալ տարածաշրջանում նոր իշխանությունների կողմից սահմանվում է ամբողջական վերահսկողություն: Նրանք իրականացնում են բարիքների ստեղծման և բաշխման բոլոր պետական գործառույթները, սակայն նրանց ինքնիշխանությունը ճանաչված չէ պետությունների մեծամասնության կողմից: Որպես կանոն, նմանատիպ միավորների իշխանությունները (կառավարությունը) վայելում են բնակչության համատարած աջակցությունը, ինչպես նաև ունեն բավականին ամուր հիմքեր: Դե-ֆակտո պետություններն ունեն հստակ սահմանված տարածք և իրենց գոյությունը պահպանում են տասնամյակներով²³⁹:

Քաղաքական գիտություններում գոյություն ունի «վիճելի տարածքների» ունիվերսալ տիպաբանությունը ներկայացնող միայն մեկ փորձ, որը ներկայացված է Դ. Գելդենհեյսի կողմից իր «Վիճելի տարածքները միջազգային քաղաքականությունում»²⁴⁰ աշխատանքում, որտեղ հեղինակը ներկայացնում է վիճահարույց տարածքային միավորների 12 տեսակ՝

1. չճանաչված (non- or unrecognized) պետություններ,
2. դե-ֆակտո ճանաչված պետություններ,
3. պետականանման իրավական միավորներ,

²³⁷ Себеменов А., Колосов В., նշվ. աշխ, էջ 41:

²³⁸ Տես Ադյուսակ 3:

²³⁹ Себеменов А., Колосов В., նշվ. աշխ, էջ. 41:

²⁴⁰ Geldenhuys D., *Contested states in World Politics*. Palgrave Macmillan, London, 2009.

4. քվադրպետություններ (օր. Վենեսուելյան Հանրապետությունը, Մալթան և Բելգիան կազմավորման վաղ շրջանում),
5. նոմինալ պետություններ,
6. կեղծ-պետություն (օր. Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն),
7. պետությունը պետությունում,
8. մերձպետական կազմավորումներ (օր. Վատիկանը և Պաղեստինը),
9. առանց պետության ազգեր,
10. հատուկ ինքնիշխան կարգավիճակ ունեցող տարածքներ,
11. ոչ պետական դերակատարներ,
12. կիսատ պետություններ²⁴¹:

Գելդենհայսի աշխատանքում ներկայացված են չճանաչված պետությունների պատմության, գոյության և զարգացման ուղեգծերը: Վերլուծության են ենթարկվում 10 դեպք՝ Եվրասիական քառյակը (Արխազիա, Հարավային Օսիա, Մերձդնեստր, Արցախ), Կոսովոյի Հանրապետությունը, Սոմալիլենդը, Պաղեստինը, Հյուսիսային Կիպրոսը, Արևմտյան Սահարան, Թայվանը: Դրանցից ութի առանձնահատկությունները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Դե-ֆակտո պետությունները և նրանց առանձնահատկությունները

<u>Դե-ֆակտո պետություն</u>	<u>Արտաքին քաղաքական դաշնակից</u>	<u>Պաշտոնական /փաստացի տարադրամ</u>	<u>Բյուջեի կարևորագույն օրինական աղբյուրները</u>	<u>Միջազգային և ճանաչումը</u>
Չինաստանի Հանրապետություն (Թայվան)	ԱՄՆ	Նոր թայվանական դոլլար	Էլեկտրոնիկա, էլեկտրոտեխնիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ	21 պետություն / փաստացի ճանաչում ²⁴²
Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն	Թուրքիա	Թուրքական լիրա	Տուրիզմ, թեթև արդյունաբերություն	1 պետություն / մասնակի ճանաչում ²⁴³
Արցախի Հանրապետություն	Հայաստան	Հայկական դրամ	Հայաստանի Հանրապետության	Ճանաչված չէ /

²⁴¹ Geldenhuys D., նշվ. աշխ, pp. 67-74.

²⁴² Չինաստանի Հանրապետությունը (Թայվան) ճանաչվել է ՄԱԿ անդամ 20 պետությունների և Վատիկանի կողմից, տես Republic of China (Taiwan) Ministry of Foreign Affairs: Diplomatic Allies, <http://www.mofa.gov.tw/en/AlliesIndex.aspx?n=DF6F8F246049F8D6&sms=A76B7230ADF29736>, (27.06.2016).

²⁴³ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը հռչակել է իր անկախությունը 1983թ. և ճանաչվել է միայն Թուրքիայի Հանրապետության կողմից, տես Turkish Republic of Northern Cyprus Ministry of Foreign Affairs: Cyprus Issue, <http://mfa.gov.ct.tr/cyprus-negotiation-process/historical-background/>, (27.06.2016).

			օգնություն	նվազագույն ճանաչում ²⁴⁴
Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետություն	Ռուսաստան	Մերձդնեստրյան ռուբլի	Ռուսաստանի Դաշնության օգնություն	Ճանաչված չէ / նվազագույն ճանաչում ²⁴⁵
Հարավային Օսիայի Հանրապետություն	Ռուսաստան	Ռուսական ռուբլի	Ռուսաստանի Դաշնության օգնություն	5 ՄԱԿ անդամ պետություն , 3 ոչ անդամ պետություն / մասնակի ճանաչում ²⁴⁶
Աբխազիայի Հանրապետություն	Ռուսաստան	Ապսար / Ռուսական ռուբլի	Ռուսաստանի Դաշնության օգնություն, տուրիզմ	6 ՄԱԿ անդամ պետություն

²⁴⁴Արցախի Հանրապետությունը հռչակել է իր անկախությունը 1991թ. և ճանաչվել է հետխորհրդային տարածքի մյուս երեք չճանաչված պետությունների (ոչ ՄԱԿ անդամ)՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի կողմից:

²⁴⁵Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը հռչակել է իր անկախությունը 1990թ. և ճանաչվել է հետխորհրդային տարածքի մյուս երեք չճանաչված պետությունների (ոչ ՄԱԿ անդամ)՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի կողմից, տես Ministry of Foreign Affairs of the Pridnestrovian Moldavian Republic: International Treaties of PMR, <http://www.mfa-pmr.org/international-treaties-of-the-pmr/>, (27.06.2016).

²⁴⁶Հարավային Օսիայի Հանրապետությունը հռչակել է իր անկախությունը 1991թ. և ճանաչվել է ՄԱԿ անդամ հինգ պետությունների՝ ՌԴ-ի, Նիկարագուայի, Վենեսուելայի, Նաուրուի և Տուվալուի կողմից, ինչպես նաև հետխորհրդային տարածքի մյուս երեք չճանաչված պետությունների (ոչ ՄԱԿ անդամ)՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Մերձդնեստրի կողմից, տես Договор о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Республикой Южная Осетия и Российской Федерацией, Министерство иностранных дел Республики Южная Осетия, <http://www.mfa-rso.su/node/305>, (27.06.2016); Россия и Южная Осетия, Посольство Российской Федерации в Республике Южная Осетия, <http://rfsosetia.mid.ru/rossia-i-uznaa-osetia>, (27.06.2016); Gobierno de Reconciliation y Unidad Nacional Unida Nicaragua Triunfa, DECRETO No. 46-2008, http://www.cancilleria.gob.ni/publicaciones/r_osetia_s.pdf, (27.06.2016); Вручение верительных грамот Чрезвычайными и Полномочными Послами Республики Венесуэла и Республика Никарагуа Президенту Республики Южная Осетия, Министерство иностранных дел Республики Южная Осетия, <http://www.mfa-rso.su/node/107>, (27.06.2016); О встрече Министра иностранных дел РЮО с делегацией Республики Науру, Министерство иностранных дел Республики Южная Осетия, <http://www.mfa-rso.su/node/154>, (27.06.2016); Интервью Министра иностранных дел Республики Южная Осетия Д.Г. Санакоева ИА «РЕС», Министерство иностранных дел Республики Южная Осетия, <http://www.mfa-rso.su/node/963>, (27.06.2016); Интервью Министра иностранных дел Республики Южная Осетия Д.Г. Санакоева ИА «РЕС», Министерство иностранных дел Республики Южная Осетия, <http://www.mfa-rso.su/node/990>, (27.06.2016); Сообщение Министерсва иностранных дел Республика Южная Осетия об установлении дипломатических отношений между Республикой Южная Осетия и Тувалу, Министерство иностранных дел Республики Южная Осетия, <http://www.mfa-rso.su/node/436>, (27.06.2016).

				3 ոչ անդամ պետություն / մասնակի ճանաչում ²⁴⁷
Կոսովոյի Հանրապետություն	ԱՄՆ, ԵՄ	Եվրո	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ	114 պետություն / փաստացի ճանաչում ²⁴⁸
Սոմալիլենդի Հանրապետություն	Եթովպիա	Սոմալիական շիլլինգ	Եթովպական տարանցման սպասարկումը Բերբերի նավահանգստով, խոշոր եղջերավոր անասունների արտահանման նպատակով վաճառքը	Ճանաչված չէ / նվազագույն ճանաչում
Պաղեստինյան Պետություն	Արաբական պետությունների լիգա	Հորդանանի դինար	Գյուղատնտեսություն, ձիթապտղի յուղի արտադրություն	138 պետություն / փաստացի ճանաչում ²⁴⁹

²⁴⁷Աբխազիայի Հանրապետությունը հռչակել է իր անկախությունը 1999թ. և ճանաչվել է ՄԱԿ անդամ վեց պետությունների՝ ՌԴ-ի, Նիկարագուայի, Վենեսուելայի, Նաուրուի, Վանուատուի և Տուվալուի կողմից, ինչպես նաև հետխորհրդային տարածքի մյուս երեք չճանաչված պետությունների (ոչ ՄԱԿ անդամ) Հարավային Օսիայի, Լեռնային Ղարաբաղի և Մերձդնեստրի կողմից, տես Страны признавшие независимость Республики Абхазия, Посольство Республики Абхазия в Беливарианской Республике Венесуэла, <http://www.abjasia.org/recognition.html>, (27.06.2016).

²⁴⁸Կոսովոյի Հանրապետությունը հռչակել է իր անկախությունը 2008թ. և ճանաչվել է 114 պետության կողմից՝ 110-ը ՄԱԿ անդամ պետություններ (ԵՄ 27 անդամ պետություններից 22-ի, նաև ԵՄ-ն լքած Միացյալ Թագավորության, ՆԱՏՕ-ի 28 անդամ պետություններից 24-ի, Իսլամական համագործակցության կազմակերպության 57 անդամ պետություններից 34-ի կողմից), ինչպես նաև Չինաստանի Հանրապետության (Թայվանի), Մալթայի Ինքնիշխան Մարտական Ուխտի, Կուկի կղզիների և Նիուեի կողմից, թեև Կոսովոյի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում ներկայացված են միայն 96 պետությունները և 2012թ.-ից ի վեր տեղեկատվությունը չի թարմացվել, տես Ministry of Foreign Affairs of the Republic of Kosovo: Countries that have recognized the Republic of Kosovo, <http://www.mfa-ks.net/?page=2,33>, (04.12.2016): Այդուհանդերձ, «Կոսովոյի ժողովրդի երախտագիտությունը» ոչ պաշտոնական էջը մշտապես թարմացնում է տեղեկատվությունը, տես KosovoThanksYou, Who Recognized Kosova as an Independent State? The Kosovar people thank you, <http://www.kosovothanksyou.com/>, (04.12.2016):

²⁴⁹ Պաղեստինյան Պետությունը հռչակել է իր անկախությունը 1988թ. և ճանաչվել է 138 պետության՝ 136 ՄԱԿ անդամ պետությունների, ինչպես նաև Վատիկանի և ՄԱՀԴ-ի կողմից; տես State of Palestine Diplomatic Relations, Permanent Observer Mission of the State of Palestine to the United Nations, <http://palestineun.org/about-palestine/diplomatic-relations/>, (04.12.2016): 2012թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված 67/19 բանաձևը հաստատեց Պաղեստինի ոչ անդամ դիտորդ

<p>Մահարայի Արարական Դեմոկրատական Հանրապետություն (ՄԱՀ)</p>	<p>Աֆրիկյան միություն</p>	<p>Սահարական պետա Մարոկկոյի դիրհամ (դե-յուրե)</p> <p>Ալժիրական դինար Մավրիտանյան ուզիյա (դե-ֆակտո)</p>	<p>ՄԱՀ-ի վերահսկողության տակ գտնվող տարածքում չկան տնտեսական և արդյունաբերական ենթակառուցվածքներ: Մինչդեռ Մարոկկոյի վերահսկողության տակ գտնվող տարածքում եկամտի հիմնական աղբյուրը ձկնորսությունն ու ֆոսֆատի հանքարդյունաբերությունն է:</p>	<p>48 պետություն / փաստացի ճանաչում²⁵⁰</p>
--	---------------------------	--	--	---

• **Կառավարություն**

Տարածքի և բնակչության չափանիշներն, ըստ էության, ինչ-որ առումով ֆորմալ բնույթ ունեն. պետությունը կամ ունի տարածք և բնակչություն (կապ չունի, թե որքան կմ² և բնակչության թվաքանակ) կամ պետություն պարզապես չկա: Մնացյալ երկու չափանիշներն ավելի կիրառական են: Թերևս, պետության կայացման համար կարևորագույն պահանջն է, որ պետությունն ունենա գործունակ կառավարություն, թեև Մոնտեվիդեոյի կոնվենցիայում չի օգտագործվում «գործունակ» ածականը²⁵¹: Ի վերջո, կայուն քաղաքական համայնքի լավագույն վկայությունը գործադիր և օրենսդիր մարմիններ ունեցող գործունակ կառավարության առկայությունն է²⁵²: Վերոնշյալի հիմքում ընկած է այն գաղափարը, որ պետությունը կարող է համարվել այդպիսին միայն այն ժամանակ, երբ այն ի վիճակի է պատշաճ կերպով երաշխավորել իրավունքի գերակայություն²⁵³:

Միաժամանակ, կարելի է փաստել, որ միջազգային իրավունքը չի մատնանշում և պարտադրում կառավարության որևէ հստակ տեսակ. քանի դեռ իրավունքի գերակայությունը երաշխավորված է, միջազգային իրավունքն առարկություններ չունի: Որպես պետությունների ինքնիշխան հավասարության տրամաբանական հետևանք,

պետության կարգավիճակը; տես 67/19. Status of Palestine in the United Nations, http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/67/19, (04.12.2016):

²⁵⁰ ՄԱՀ-ն հռչակել է իր անկախությունը 1976թ. և ճանաչվել է 48 պետության կողմից (47 ՄԱԿ անդամ պետություններ և Հարավային Օսիան): Ընդհանուր առմամբ, անկախության հռչակումից ի վեր ՄԱՀ-ն ճանաչվել է 84 ՄԱԿ անդամ պետությունների կողմից, սակայն նրանցից 37-ը չեղարկել կամ սառեցրել է ճանաչումը և հաստատված դիվանագիտական հարաբերությունները: Թեև ՄԱՀ պաշտոնական անգլալեզու կայքէջում չկան ճանաչող պետությունների մասին տեղեկություններ, գոյություն ունեն ճանաչող պետությունների ցուցակը ներկայացնող ոչ պաշտոնական կայքէջեր; տես States which recognize the SADR, <http://www.arso.org/03-2.htm>, (28.06.2016).

²⁵¹ Klabbers J., նշվ. աշխ., p. 71.

²⁵² Crawford J., Brownlie's Principle..., p. 129.

²⁵³ Klabbers J., նշվ. աշխ., p. 71.

գոյություն չունի կառավարության հստակ սահմանված տեսակ: Անշուշտ, վերոնշյալը վիճահարույց է, քանի որ դա նշանակում է, որ բռնապետություններն ընդունվում են նույն կերպ ինչպես ժողովրդավար պետությունները, և այդ համատեքստում պատահական չեն կառավարման ձևի վրա ազդելու փորձերը: 19-րդ դարում վերոնշյալը կատարվում էր պետությունները քաղաքակիրթ և ոչ քաղաքակիրթ դասակարգելու միջոցով: Թեև պետության քաղաքակիրթ կամ ոչ քաղաքակիրթ լինելու չափորոշիչն այլևս չի գործում, այդուհանդերձ, դեռևս կարելի է նշմարել վերջինիս աղոտ արձագանքը ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի Կանոնադրության 38-րդ հոդվածում, որն ընդունում է «քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները» որպես միջազգային իրավունքի աղբյուր²⁵⁴: Կաղիչն ընդդեմ Կարաջիչի գործի շրջանակներում ԱՄՆ Վերաքննիչ դատարանը քննում էր այն հարցը, թե արդյոք Բոսնիայի և Հերցեգովինայի տարածքում գտնվող ինքնահռչակ Սերբական Հանրապետությունը (Srpska) պետություն է, որի ղեկավարության հետ կարելի է համագործակցել՝ հաշվի առնելով ինքնահռչակ ղեկավարների կողմից իրականացված բազմատեսակ վայրագությունները և անօրինությունները: Դատարանն իր եզրակացության մեջ ամփոփում է, որ Սերբական Հանրապետությունը բավարարում է պետության չափանիշներին՝ նշելով, որ այն վերահսկում է սահմանված տարածք, վերահսկում է իր ենթակայության տակ գտնվող բնակչությունը և այլ պետությունների կառավարությունների հետ համագործակցություն է հաստատել: Այն ունի նախագահ, օրենսդիր մարմին և սեփական արժույթ: Այս հանգամանքներն ակնհայտորեն վկայում են միջազգային իրավունքի շրջանակներում պետության բնութագրիչ հատկանիշներին համապատասխանության մասին»: Սերբական Հանրապետությունն իր պետությանը բնորոշ հատկանիշների շնորհիվ, իրավամբ, դե-ֆակտո պետություն է, որին բնորոշ են միջազգային համակարգի շրջանակներում պետություններին վերապահված իրավասությունները և ստանձնած պարտավորությունները²⁵⁵: Վերաքննիչ դատարանի նման որոշումը միանգամայն տրամաբանական էր, քանի որ Գերագույն դատարանն արդեն բավական երկար ժամանակ առաջ ճանաչել է, որ «յուրաքանչյուր կառավարություն, անկախ նրանից, թե որքան բռնի և անօրինական է իր բնույթով, պետք է համարվի դե-ֆակտո կառավարություն, եթե փաստացի լիարժեքորեն վերահսկում է տարածքը և ժողովուրդը համարվելու համար բավարար բնակչությունը...»^{256,257}: Այնուամենայնիվ, գործունակ կառավարությունը մի շարք դեպքերում ոչ պետական կամ ոչ բավարար է պետականության աջակցության համար: Որոշ պետություններ էլ կազմավորվել են մինչև իրենց կառավարությունների դեռևս ոչ այդքան գործունակ լինելը, ինչպես օրինակ Լեհաստանը 1919թ. և Բուրունդին և Ռուանդան, որոնք անդամակցեցին ՄԱԿ-ին 1962թ.²⁵⁸:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ թեև պետությունն անպայման չէ ունենա որևէ հատուկ տեսակի կառավարություն, սակայն անհրաժեշտ պայման է, որ կառավարությունը

²⁵⁴ Klabbbers J., նշվ. աշխ., p. 71.

²⁵⁵ Kadic v. Karadzic, Opinion of 2nd Circuit re: Subject Matter Jurisdiction, US Court of Appeals for the Second Circuit Nos. 1541, 1544, <http://avalon.law.yale.edu/diana/4298-12.asp>, (17.09.2016).

²⁵⁶ Ford v. Surget, 97 US. 594, 620 (1878), <https://supreme.justia.com/cases/federal/us/97/594/case.html>, (17.09.2016).

²⁵⁷ See Eggers A., When is a State a State? The Case for Recognition of Somaliland, *Boston College International & Comparative Law Review*, 30 (1), 2007, pp. 211-222.

²⁵⁸ Crawford J., *Brownlie's Principle...*, p. 129.

կարողանա տրամադրել ներպետական կայունության պատկան աստիճան և վայելել բնակչության զգալի մասի վստահությունը: Գործունակ կառավարությունը տրամադրում է իր քաղաքացիներին և բնակիչներին հիմնական ծառայությունները և ստանձնում է մյուս պետությունների հետ *vis-à-vis* պարտականություններ: Բացի այդ, կառավարությունը, ըստ էության, պետք է անկախ լինի այլ պետություններից, այդ թվում նաև՝ «մայր պետությունից»: Իհարկե, հարկ է հաշվի առնել, որ բացարձակ անկախությունն անհնար է, քանի որ այլ պետությունների հետ փոխգործակցությունն անհրաժեշտ է յուրաքանչյուր պետության արդյունավետ գործունեության համար, սակայն հասկապես ճանաչման համար պայքարող պետությունների համար, անշուշտ, անկախության և ինքնավարության գաղափարը բացառիկ նշանակություն ունի: Պետությունը պետք է անկախ լինի այլ պետություններից, և թե՛ այլ պետությունների, թե՛ միջազգային կառույցների կողմից որևէ տեսակ միջամտությունը պետք է լինի բացառապես միջազգային իրավունքի շրջանակներում: Եթե միավորն ունի իր սեփական գործադիր և մնացյալ այլ մարմինները, վարում է իր արտաքին քաղաքականությունն իր սեփական կառույցների միջոցով, ունի սեփական դատական և իրավական համակարգը և սեփական «քաղաքացիություն ձեռք բերելու մասին» իրավունքը, ապա կարելի է վստահաբար խոսել պետականության գոյության մասին: Այդուհանդերձ, չի կարելի արդարացնել արտաքին վերահսկողության անտեսումը, որը, ըստ էության, իրականացվում է անկախ պետական ապարատի միջոցով: Սակայն խոսքը գնում է համակարգված և շարունակական արտաքին վերահսկողության մասին, որը լայնամասշտաբ ազդեցություն է ունենում միավորում որոշումների կայացման գործընթացի վրա: Եվ այդ համատեքստում հարկ է պատշաճ կերպով տարբերակել միջնորդության և վերահսկողության, *ad hoc* միջամտության և «խորհրդատվության» միջև²⁵⁹:

• **Այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողություն**

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում անկախության գաղափարը ներկայացված է այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողությամբ: Վերջինս կարևոր պահանջ էր գաղութատիրության ժամանակաշրջանում, և Մոնտեվիդեոյի Կոնվենցիան, կնքված լինելով 1930թ., չէր կարող չլինել իր ժամանակաշրջանի արտացոլանքը: Գաղութատիրության դրոշմը հետևյալն էր. թեև մի շարք գաղութացված տարածքները վայելում էին զգալի ինքնավարություն, այդուհանդերձ, նրանք չէին կարող հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ՝ առանց մետրոպոլիայի համաձայնության: Սակայն, երբեմն վերոնշյալ օրենքը կարող էր նաև խախտվել, եթե քաղաքական նկատառումներից ելնելով համարվում էր նպատակահարմար: Օրինակ՝ Հնդկաստանը (Մեծ Բրիտանիայի գաղութը) դարձել է Ազգերի լիգայի անդամ, չնայած որ ստացել է անկախություն միայն Ազգերի լիգայի փլուզումից հետո: Սակայն, այսօր այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու պահանջը չի համարվում հույժ կարևոր. պրակտիկայում այն միտված է կարգավորելու այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու հնարավորությունները դաշնային պետությունների դեպքում: Օրինակ՝ ի շնորհիվ վերջինիս ակնհայտ է, որ ԱՄՆ միջազգային իրավունքի սուբյեկտ է և կարող է հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ, մինչդեռ նրա 51 նահանգները՝ չեն կարող: Այս պահանջը բնութագրվում է ավելի շատ որպես «եզրափակում, այլ ոչ թե ելակետ»²⁶⁰:

²⁵⁹ Crawford J., Brownlie's Principles..., p. 129-130.

²⁶⁰ Klabbbers J., նշվ. աշխ., p. 72.

Պետության կայացածության և կառուցման գործընթացի համար առանցքային նշանակություն ունի արտաքին աջակցությունը: Ընդ որում արտաքին աջակցությունը հաճախ ուղիղ կապ ունի ճանաչվածության հետ. պետությունները հիմնականում աջակցություն չեն ցուցաբերում իրենց կողմից չճանաչված պետություններին (իհարկե կան մի շարք բացառություններ. օրինակ ՀՀ-ն մեծամասշտաբ աջակցություն է ցուցաբերում Արցախի Հանրապետությանը, սակայն դեռևս չի ճանաչել այն): Պաշտոնական Ստեփանակերտը հայտարարում է, որ անգամ միջազգայնորեն ճանաչված չլինելով, քայլեր է ձեռնարկում և ձեռնարկելու այն պարտավորությունների կատարման ուղղությամբ, որոնք կստանձնի, երբ ի վերջո անդամակցի միջազգային կառույցների: Հատկանշական է, որ Արցախի Հանրապետությունը սահմանադրաիրավական ժողովրդավարության հաստատման և ամրապնդման ուղին ամենայն հաջողությամբ անցնում է անգամ առանց միջազգային հանրության և կառույցների ուղղորդման և օժանդակության, և այդ համատեքստում կարելի է միայն ենթադրել, թե ինչ հաջողություններ գրանցած կլինե՞ր Արցախի Հանրապետությունը ժողովրդավարության հաստատման գործընթացում, եթե վայելե՞ր միջազգային հանրության և կառույցների աջակցությունը:

Չճանաչված պետությունների դեպքում առկա են կայացման լրացուցիչ բարդություններ, մասնավորապես, պայմանավորված միջազգային կապերի խիստ սահմանափակվածությամբ: Այսպիսով, չճանաչված պետությունների կայացման բարդությունները մի կողմից պայմանավորված են ներքին գործոններով՝ սահմանների դյուրաբեկություն, իրավունքի գերակայության անլիարժեքություն, հարկային և ֆինանսական համակարգերի վերահսկողության դժվարություններ, մեծ թվով փախստականներ, իսկ մյուս կողմից՝ միջազգային քաղաքականության առաջատար դերակատարների՝ ազդեցիկ պետությունների, վերազգային կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների ոչ ստանդարտ համակարգով:

**Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված
պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները
Կոսովոյի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեպքերի համար**

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված հատկանիշներ	Կոսովոյի Հանրապետություն	Արցախի Հանրապետություն
Մշտական բնակչություն	2011թ. մարդահամար – 1.739.825 մարդ 2015թ. – 1.870.981 մարդ	1989թ. խորհրդային վերջին մարդահամար – 189.100 մարդ 1995թ. հետկոնֆլիկտային ժամանակաշրջան – 122.600 մարդ 2005թ. մարդահամար – 137.700 2015թ. մարդահամար – 151.161 մարդ
Սահմանված տարածք	10.908 կմ ²	11.458 կմ ² Տարածքի հարցը դեռևս բանակցությունների օրակարգում է
Կառավարություն	2008թ. ի վեր «հետժամանակավոր արտաքին կառավարման համախտանիշ» Ոչ արդյունավետ կառավարում Անգամ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի ջանքերը բավարար չէին, որպեսզի Կոսովոն, գտնվելով Եվրոպայի ժողովրդավարության բնօրրանի, կենտրոնում, դադարեց լինել բնօրրան այնպիսի անօրիական գործունեության համար, ինչպիսիք են թմրանյութերի, զինամթերքի ապօրինի վաճառքը, թրաֆիքինգը:	Իրականացնում է պետության կառավարումն անկախության հռչակումից ի վեր 25 տարի արդյունավետ ժողովրդավարական կառավարում

<p>Այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողություն</p>	<p><u>Ճանաչվել է 114 պետության կողմից</u></p> <ul style="list-style-type: none"> • 110 – ՄԱԿ անդամ պետություն • 4 – ոչ անդամ պետություն <p>Դիվանագիտական առաքելություններ – 25 Հյուպատոսական առաքելություններ- 27</p>	<p><u>Չի ճանաչվել ՄԱԿ անդամ պետությունների կողմից</u></p> <p><u>Ճանաչվել է հետխորհրդային տարածքի 3 չճանաչված պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի կողմից</u></p> <p>Մշտական ներկայացուցչություններ՝ ՀՀ, ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա Գերմանիա Ավստրալիա Մերձավոր Արևելքի երկրներ /գտնվում է Լիբանանում/</p>
--	--	---

2.4. Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման քաղաքական գործոնը

Յուրաքանչյուր իրավական գաղափար, սկզբունք, անգամ կոնկրետ նորմ ծնվում է սոցիալ-քաղաքական բնույթի որևէ պահանջարկի արդյունքում: Իհարկե, այս դեպքում բացակայում է զուտ տնտեսագիտական չափանիշներով առաջարկի և պահանջարկի փոխհարաբերությունը, սակայն չպետք է բացառել, որ նշված երևույթները ևս այս կամ այն կերպ արտահայտվող պահանջարկով են թելադրված: Եվ որքան քաղաքակրթությունը ձեռք է բերում նոր նվաճումներ, այնքան նման իրավական գաղափարների ու սկզբունքների անհրաժեշտությունը նկատելի է դառնում: Ազգերի ինքնորոշման իրավունքը ոչ միայն բացառություն չէ, այլև ասվածի վառ դրսևորումն է: Այսպես, ներկայումս հաճախակի են դարձել այն պնդումները, թե իբր աշխարհում ձևավորվել է ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների «սոցիալ-քաղաքական պահանջարկ», ինչը բավարար չափով հիմնավորված չէ: Սակայն ակնհայտ է, որ երբ էթնիկ խմբերի և ազգությունների թիվը (գերազանցում է 2500-ը) ավելի քան 12,5 անգամ գերազանցում է պետությունների թիվը (մոտ 200), պետությունների մասնատման գաղափարը չի կարող հրապուրիչ լինել, իսկ ազգային ինքնորոշման սկզբունքը չի կարող գերծ մնալ քաղաքական շահարկումներից: Չպետք է անտեսել նաև, որ գերտերություններն այսօր, ունենալով բազմազգ կառուցվածք, հաճախ

բնավ հակված չեն պետությունների մասնատման գաղափարին, երբ հատկապես մի շարք դեպքերում վերջինս ուղղակիորեն չի բխում իրենց շահերից²⁶¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային հարաբերություններին առնչվող քաղաքագիտական ուսումնասիրությունների, քննարկումների ու բանավեճերի օրակարգում իր մշտական տեղն ունի «քաղաքական շահե՞ր, թե՞ իրավական լուծումներ» երկրնորանքային հարցադրումը: Ակնհայտ է, որ այն առավել սրություն է ստանում այն տարածաշրջաններում, որտեղ բախվում են գերտերությունների կամ նման կարգավիճակի հավակնող երկրների շահերը: Իհարկե, դարեր շարունակ այդ շահերի պաշտպանության միակ գործիքը եղել է ուժը, սակայն, միաժամանակ, «կասկածից վեր է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային հարաբերություններում իրավական բաղադրիչն ունի կարևոր կազմակերպական նշանակություն»²⁶²: Հետևաբար, միջազգային հարաբերություններում կիրառվող մեխանիզմների և դրանց կիրառման հնարավորությունների ու արդյունավետության վերաբերյալ ամբողջական պատկերացումներ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել երկու հիմնական գործոնները՝ թե՛ քաղաքական շահերով պայմանավորված բաղադրիչը, թե՛ իրավական բաղադրիչը²⁶³:

«Իրավական մոտեցումներ, թե՛ քաղաքական շահեր» երկրնորանքային հարցադրմանը շահերի օգտին բացարձակ գերակայությամբ են պատասխանում անցած դարի 40-80-ականներին մեծ տարածում ստացած քաղաքական ռեալիզմի տեսության հետևորդները: Նրանց մոտեցումները հիմնված են «իրատեսական հարացույցի» վրա, որի երեք հիմնական գաղափարներն են.

- պետությունների միջև մշտական հակամարտությունների աղբյուրը շահն է,
- միջազգային հարաբերությունների միակ կարգավորիչը ուժն է, իսկ ցանկալի վիճակը՝ առաջատար երկրների ուժերի հավասարակշռությունը,
- բարոյականությունը ստորադաս է պետական շահերին²⁶⁴:

Ակնհայտ է, որ այս սկզբունքների, հետևաբար և, ըստ իրատեսական հարացույցի հետևորդների, պետության արտաքին քաղաքական գործունեության առանցքը պետական շահն է: Ավելին, նրանց ամենավառ ներկայացուցիչներից մեկը՝ Ն. Մորգենթաուն, ավելի կտրուկ է ձևակերպել. «շահը քաղաքական գործողության բացարձակ չափանիշն է»²⁶⁵:

Ինչպես տարբեր գաղափարախոսություն ու չափանիշներ դավանող իրավագետներ, այնպես էլ տարաբնույթ քաղաքական գործիչներ նույնպես հավաստում են, որ ինքնորոշման սկզբունքն անխուսափելիորեն մշտապես հանդիսանում է քաղաքական մանևրների նյութ,

²⁶¹Cassese A., *Self-Determination of Peoples: A Legal Reappraisal*, Cambridge University Press, Cambridge, New York, 1995.

²⁶²Кутейников А., *Правовые нормы международного урегулирования: Волны унификации. Международные процессы*, т.1, N 1(1), 2003 (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղ և Կոսովո. Հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2012):

²⁶³Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղ և Կոսովո. Հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2012, էջ 19:

²⁶⁴Панченко М., *Реалистская парадигма международного порядка: прошлое и настоящее*, *Полис*, N 5, 2009, сс. 6-17 (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղ և Կոսովո...):

²⁶⁵Morgenthau H., *The Decline of Democratic Politics*. Chicago, London, 1969, p. 92 (ըստ Թորոսյան Ս., Լեոնային Ղարաբաղ և Կոսովո...):

սակայն հարկ է նկատել, որ միանգամայն տարբեր են նրանց շարժառիթներն ու դիրքորոշումները: Այսպես, իրավագետներն ու քաղաքական գործիչները հաճախ քաղաքական մանր են համարում այն, որ ազգային ինքնորոշման պատրվակով փորձում են միջամտել պետությունների ներքին գործերին: Այս մոտեցումը բնորոշ է հատկապես էթնիկ բարդ կառուցվածք ունեցող այլ երկրների ևս: Այսպես, Չինաստանի պատվիրակության ներկայացուցիչ Շ. Գոֆանի՝ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 4011-րդ նիստում²⁶⁶ Կոսովոյի հարցի առնչությամբ ելույթում հայտարարել է. «էթնիկ հիմնախնդիրները պետք է լուծվեն բացառապես պետությունների կառավարությունների և ժողովրդի կողմից, դրանք չի կարելի որպես արդարացնող զենք օգտագործել պետությունների ներքին գործերին միջամտելու համար»²⁶⁷:

Դժվար չէ նկատել, որ ազգերի ինքնորոշման իրավունքը խիստ սահմանափակ մեկնաբանելու պահանջը բացահայտորեն ուղեկցվում է «անվտանգությանը սպառնացող գործոնների արթնացման» քարոզչությանը բնորոշ կանոններով. վտանգի տակ կողմի փխրուն խաղաղությունը, մարդկությունը կզրկվի բնականոն ու կայուն զարգացումից և այլն: Սակայն, հարկ է նկատել, որ ազգերի իրավունքների խախտման արդյունքում ազգերի ինքնորոշման իրավունքը ոչ թե պետք է դառնա շահարկումների և գործընթացներն անհարկի ձգձգելու գործիք, այլ շուտափույթ լուծման միջոց:

Վերջին երկու-երեք տասնամյակներում էապես մեծացել է այն ոլորտների և խնդիրների թիվը, որոնք փորձ է արվել կարգավորել միջազգային իրավունքի շրջանակներում: Միջազգային հարաբերություններում իրավական խնդիրների կարգավորման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ ՄԱԿ-ի նորմեր, պայմանագրային իրավունքի նորմեր, միջազգային ավանդության նորմեր: Դրանցից երկրորդն ու երրորդը չպետք է հակասեն առաջինին, երկրորդը՝ երրորդին²⁶⁸:

Հատկանշական է, որ միջազգային հարաբերություններում առաջին երկրորդ աստիճանների իրավական նորմերի գործնական կարևորության առաջին արձանագրման երկու դեպքերն էլ տեղի են ունեցել անցած դարի 70-ական թվականներին: Նախ 1970թ. Հոկտեմբերի 24-ին ընդունվեց «ՄԱԿ կանոնադրության համաձայն պետությունների բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային սկզբունքների մասին հռչակագիրը», ապա 1975թ. Հելսինկիում ստորագրվեց Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության եզրափակիչ ակտը: Առաջին փաստաթուղթն ուղղակի առնչություն ունի այն հակամարտությունների կազմավորման հետ, որոնց հիմքում ինքնորոշման իրավունքն է: Հռչակագիրը մինչև 80-ական թվականների վերջը համարվում էր ՄԱԿ նորմատիվային սկզբունքների միակ արմատական վերափոխումը, որը հռչակում էր ինքնորոշման իրավունքի իրացման ձևերն ու պայմանները և այդ «իրավունքի նպատակով գործող ժողովուրդներին աջացությունն ցույց տալու իրավաչափությունը»²⁶⁹: Հետաքրքիր է, որ միջազգային իրավունքի տեսակետից շրջափուլային համարվող այդ երկու

²⁶⁶United Nations: Security Council 4011th Meeting, New York, 1999, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BFCF9B-6D27-4E9C-8CD3CF6E4FF96FF9%7D/kos%20SPV4011.pdf>, (08.03.2016).

²⁶⁷Cassese A., նշվ. աշխ.:

²⁶⁸Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո..., էջ 23-25:

²⁶⁹Кутейников А., Правовые нормы международного урегулирования: “Волны унификации”, Международные процессы, Том 1. Номер 1 (1). Январь-апрель, 2003 (ըստ Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո...):

փաստաթղթերն էլ էական նշանակություն ունեն հակամարտությունների կարգավորման համար, թեև ակնհայտ է, որ դրանց շրջանակները տարբեր են: Եթե Հռչակագիրը սահմանում է ինքնորոշման իրավունքի իրացման ձևերը և բազմակի կիրառում է ունեցել է այդ իրավունքի իրացման դեպքերում, ապա Հելսինկյան եզրափակիչ ակտի նշանակությունը հակամարտությունների կարգավորման տեսակետից սահմանափակվում է «ինքնորոշման իրավունքի» և «տարածքային ամբողջականության սկզբունքի» սահմանումներով: Դա փորձ է արվել կիրառել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար: Այդ նպատակով մշակված «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող նախագծի²⁷⁰ հիմքում դրվել են այդ երկուսը, ինչպես նաև ԵԱՀԿ անդամ երկրների հարաբերությունները կարգավորող մյուս ութ սկզբունքներից մեկը՝ ուժի և դրա օգտագործման սպառնալիքի չկիրառման սկզբունքը: Այդուհանդերձ, երկու փաստաթղթերն էլ մինչ այժմ ըստ արժանվույն չեն գնահատվել միջազգային իրավունքի նորմերի առավել լայն կիրառմանը խոչընդոտող վերոհիշյալ պատճառներով²⁷¹:

Թեև XX դարի 90-ական թվականները ՄԱԿ-ը հռչակել էր միջազգային իրավունքի տասնամյակ, սակայն դեռևս քիչ չեն դեպքերը, երբ տարբեր խմբեր և պետություններ փորձում են միջազգային հարաբերություններում շրջանցել միջազգային իրավունքը՝ կոշտ ուժի դիրքերից իրենց համար շահավետ լուծումներ պարտադրելով ուրիշներին կամ միջազգային իրավունքի նորմերը մեկնաբանել իրենց համար հարմար ձևով՝ հիմնովին աղավաղելով դրանց էությունն ու բովանդակությունը: Բնորոշ օրինակ են 2008թ. գարնանը և աշնանը Միացյալ Նահանգների և Ռուսաստանի արձագանքները նախ Կոսովոյի, ապա Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության միակողմանի հռչակումներին: Գարնանը Վաշինգտոնը ճանաչեց Կոսովոյի անկախությունը, Մոսկվան այն համարեց ապօրինի և միջազգային իրավունքի նորմերին հակասող: Տարեվերջին, Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում իրավիճակը նույնությամբ կրկնվեց, սակայն Միացյալ Նահանգների և Ռուսաստանի հակառակ դերակատարմամբ: Ընդ որում, ոչ Մոսկվան, ոչ Վաշինգտոնը հարկ չհամարեցին որևէ բացատրություն ներկայացնել մի քանի ամսվա ընթացքում իրենց տեսակետները 180 աստիճանով փոխելու վերաբերյալ²⁷²:

Այդուհանդերձ, թեև արդի միջպետական հարաբերություններում պետությունների շահը մնում է հիմնական շարժիչ ուժը, սակայն վերջին տասնամյակների ընթացքում միջազգային իրավունքում տեղի ունեցած զգալի զարգացումները վկայում են, որ այն դառնում է կարևոր գործոն համաշխարհային քաղաքականության մի շարք ոլորտներում տարաբնույթ խնդիրների լուծման ժամանակ: Հատկանշական է, որ դա հաստատող լավագույն օրինակներից մեկը ևս վերաբերում է Կոսովոյի դեպքին: Թեև Կոսովոյի անկախությունը 2008թ. արդեն ճանաչել էր յոթ տասնյակ երկիր և Պրիշտինան վայելում էր Միացյալ Նահանգների ու Եվրամիության մեծ աջակցությունը, սակայն ի վերջո պահանջվեց խնդրի իրավական կողմի հստակեցում և հարցը ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի որոշմամբ դարձավ Արդարադատության միջազգային դատարանի քննության առարկա: Հետևաբար, միջպետական հարաբերություններում առկա այն խնդիրների լուծման ժամանակ, որոնց համար գոյություն ունեն միջազգային իրավունքի հստակորեն սահմանված նորմեր, շահագրգիռ երկրները, անգամ գերտերությունները, ստիպված են այս կամ այն ձևով հաշվի

²⁷⁰ Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, <http://www.osce.org/mg/51152>, (24.06.2016).

²⁷¹ Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո..., էջ 25-26:

²⁷² Թորոսյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո..., էջ 26-27:

նստել այդ իրողության հետ: Ավելին, եթե միջազգային հարաբերություններում առաջացող վեճի կողմ է ոչ ազդեցիկ պետություն և միջազգային իրավունքի նորմերի կիրառումն օգտակար է այդ կողմի համար, ապա իրավական բաղադրիչը դառնում է նման պետության հիմնական կովաններից մեկը (եթե ոչ գլխավոր կովանը), քանի որ մյուս՝ ուժային գործոն այդ դեպքում հազվադեպ է հաջողություն բերում (եթե, իհարկե, հակամարտությունը չի վերաճել զինված բախման կամ պատերազմի, որտեղ, բնականաբար, միակ ազդեցիկ գործոնը գերակշիռ ռազմական ուժի ցուցադրումն է)²⁷³:

Ի հակադրություն դրան՝ Հելսինկյան եզրափակիչ ակտը միշտ նշվում է որպես հակամարտությունների կարգավորման հիմնարար փաստաթուղթ: Մասնավորապես, ըստ Հարավային Կովկասի երկրներում Եվրոպայի Միության հատուկ ներկայացուցիչ Փ. Մեմենթի²⁷⁴, «Հելսինկյան եզրափակիչ ակտը հիմնարար բազա է Եվրոպայում անվտանգության և փոխհարաբերությունների համար: Այն սահմանում է տարբեր սկզբունքներ, այդ թվում՝ տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքները: Դրանք գործնականում հակասությունների մեջ են մտնում միմյանց հետ, օրինակ, երբ վերաբերում են Հարավային Կովկասի բոլոր սառեցված հակամարտություններին: Բայց դա չի նշանակում, որ այդ սկզբունքների կիրառումն անհնար է, հնարավոր չէ այդ սկզբունքները համատեղել»²⁷⁵:

Այսպիսով, յուրաքանչյուր պետության բնականոն էվոլյուցիան պետք է ընթանա հետևյալ 3 փուլերով՝ անկախության հռչակում, պետության միջազգային ճանաչում (անդամակցություն ՄԱԿ-ին)՝ որպես պետության միջազգային իրավասությունների պարտադիր պայման, և պետության կայացում, և ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունները, անշուշտ, չպետք է լինեն բացառություն: Մակայն, այն ինչ տեղի է ունենում գործնականում, ըստ էության, ոչ այլ ինչ է, քան բացառություն, քանի որ չճանաչված պետությունները, փաստորեն, կոտրել են սահմանված կարգը. անկախության հռչակումից հետո վերջիններս, ստիպված լինելով բաց թողնել ճանաչման գործընթացը, չճանաչված կարգավիճակի ներքո մեկնարկում են պետության կառուցման և կայացման գործընթացները: Հետևյալ համատեքստում չճանաչված պետությունների կայացման խնդիրներն ավելի էական են դառնում. կարևոր է գնահատել, թե ինչպիսի ազդեցություն է ունենում միջազգային կապերի խիստ սահմանափակվածությունը չճանաչված պետությունների կայացածության մակարդակի վրա:

Նախ և առաջ, պետություններն անկախություն հռչակելիս իրացնում են իրենց ազգերի ինքնորոշման իրավունքը, որը վերաբերում է հավասարապես բոլոր ազգերին՝ առանց բացառությունների: Ժամանակակից միջազգային իրավունքը հստակ ներկայացնում է ազգերի ինքնորոշման իրավունքի ընդգրկումը և բովանդակությունը, կարգավիճակը, և, ինչն ավելի կարևոր է, սահմանում է վերջինիս կարգավիճակը՝ *erga omnes* և *jus cogens* իրավունք,

²⁷³Թորոպյան Ս., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո...., էջ 28-29:

²⁷⁴Сэмнеби П., Решение конфликтов Южного Кавказа силовым путем исключено (Независимая газета, 26.12.2006) (ըստ Թորոպյան Ս., Լեռնային Ղարաբաղի...):

²⁷⁵Թորոպյան Ս., Լեռնային Ղարաբաղի....., էջ 14-15:

այն է՝ միջազգային իրավունքի անվերապահ նորմ, որը պարտադիր է բոլոր պետությունների համար:

Ինչ վերաբերում է միջազգային ճանաչմանը, ապա պետության ճանաչման գործընթացը կարգավորող դասական իրավական շրջանակը ներկայացնում է երկայուն համակարգ, որի հիմնասյուներն են Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված պետության իրավասությունները որոշող հատկանիշները և *jus cogens* նորմերի անխախտելիությունը: Ըստ էության, Մոնտեվիդեոյի կոնվենցիան ոչ միայն ներկայացնում է պետականության հիմնական հատկանիշները (մշտական բնակչություն, սահմանված տարածք, կառավարություն այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն), այլև անդրադառնում է պետականության «միջազգայնորեն ընդունմանը», այն է՝ ճանաչմանը: Եվ եթե վերոնշյալին ավելացնենք նաև այն փաստը, որ միջազգային իրավունքը սահմանում է ազգերի ինքնորոշման իրավունքը որպես *jus cogens* նորմ, ապա կարելի է ենթադրել, որ որևէ խնդիր կամ երկսայրաբանություն չպետք է առաջանա պետությունների ճանաչման գործընթացում: Սակայն իրականությունն ունի հակադիր պատկերը՝ անընդմեջ վերահաստատելով ճանաչումը որպես պետականության ամենաբարդ և ամենաքաղաքականացված ասպեկտ:

Միանգամայն ակնհայտ է, որ ազգերի ինքնորոշման իրավունքը խիստ սահմանափակ մեկնաբանելու պահանջը բացահայտորեն ուղեկցվում է «անվտանգությանը սպառնացող գործոնների արթնացման» քարոզչությանը բնորոշ կանոններով. վտանգի տակ կողմի փխրուն խաղաղությունը, մարդկությունը կզրկվի բնականոն ու կայուն զարգացումից և այլն: Մինչդեռ ազգերի ինքնորոշման իրավունքը ոչ թե պետք է դառնա շահարկումների և մանևրելու գործիք, այլ շուտափույթ լուծման միջոց: Դա վերաբերում է հատկապես այն պետություններին, որոնք դեռևս չեն ստացել միջազգային ճանաչում, քանի որ այդ պետություններն իրապես դժվարին պայմաններում, պայմանավորված որևէ տեսակ միջազգային հարաբերությունների խիստ սահմանափակվածությամբ, մեկնարկում են պետության կառուցման և կայացման գործընթացները մարտահրավերների այնպիսի համախմբի հետ զուգընթաց, ինչպիսիք են զինված հակամարտությունից հետո ողջ պետության վերակառուցումը և վերականգնումը, գլոբալիզացիայի խորացումը, և հետխորհրդային պետությունների դեպքում այդ մարտահրավերները համալրվում են նաև հետխորհրդային տրանսֆորմացիայի մարտահրավերներով: Իսկ նման համատեքստում այդպիսի մոտեցումը միանշանակ չի կարող նպաստել անվտանգության սպառնալիքների և ապակայունացման դեմ պայքարին, ինչը կենսական նշանակություն ունի ոչ միայն չճանաչված պետությունների, այլև տարածաշրջանային և միջազգային խաղաղության ու անվտանգության խթանման համար: Ըստ այդմ, այդ պետություններն ունեն ուղղորդման և աջակցության, այլ ոչ թե «մանիպուլյացիոն խաղերի» կարիք:

Պետության կայացածության խնդիրները, ընդհանուր առմամբ, չափազանց բարդ են բոլոր պետությունների համար, և կայացած պետություն կոչվելու «արտոնությունը» ստանալը, բնավ, դյուրին չէ: Սակայն խնդիրը կրկին ավելի բարդ է չճանաչված պետությունների դեպքում, քանի որ «չճանաչված» կարգավիճակն առաջ է բերում մարտահրավերների մի ամբողջ համախումբ պետության կայացածության բոլոր ոլորտների համար: Ուստի, զարմանալի չէ, որ վերջին ժամանակաշրջանում ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների մեծ մասը շատ հեռու է կայացած լինելուց (հատկապես եթե անցել է զինված հակամարտության փուլով): Նույնիսկ այն

պետությունները, որոնք արդեն ստացել են միջազգային ճանաչում (օրինակ, Հարավային Սուդան, Էրիթրեա և Արևելյան Թիմոր), դեռևս աչքի են ընկնում ծայրահեղ քաղաքական, տնտեսական և սոցիալական թերզարգացածությամբ և հանդիսանում են իրենց տարածաշրջանում ապակայանության գլխավոր աղբյուրը՝ գտնվելով ավելի վատ վիճակում, քան դեռևս չճանաչված շատ պետություններ: Սակայն վերջիններս, լինելով դեռևս չճանաչված, անշուշտ, ավելի դժվարին իրավիճակում են, քանի որ վերջնական իրավական կարգավիճակի շնորհման հետաձգումն այդ պետություններին մշտապես պահում է դյուրաբեկության և/կամ ձախողման սպառնալիքի տակ. անկախ իրենց զարգացման հետագծից, միջազգային հարաբերությունների սահմանափակվածությունը կամ բացակայությունը վաղ թե ուշ կհանգեցնի պետության կայացածության որևէ ոլորտի կամ, գուցե, միանգամից մի քանի ոլորտների (քանի որ նրանք սերտորեն փոխկապակցված են) դյուրաբեկությանը: Միաժամանակ, առկա են զգալի թվով պետություններ, որոնք ստացել են միջազգային ճանաչում բավականին երկար ժամանակ առաջ, սակայն, մեղմ ասած, չունեն կայացածության անգամ միջին մակարդակ: Այսպիսով, եթե պետության «թուլությունը» կամ դյուրաբեկությունը հանդիսանում են Սոմալիի, Էրիթրեայի կամ Հարավային Սուդանի նման պետություններում հակամարտության և ապակայանության հիմնական աղբյուր, ապա մի թե իրավացի քաղաքական որոշում չի լինի ճանաչել և կայացման հնարավորություն տալ այն միավորներին, որոնք, չնայած առկա դժվարություններին և չճանաչվածությամբ պայմանավորված մարտահրավերներին, փորձում են ստեղծել գործունակ ինստիտուտներ և ապահովել արդյունավետ կառավարում, եթե մնացյալ ամեն ինչ, այն է՝ միջազգային ճանաչման համար անհրաժեշտ չափանիշներին համապատասխանությունը, համառորեն անտեսվում և հաշվի չի առնվում:

ԳԼՈՒԽ 3.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԵՏԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Պետության կառուցումը պետություն-հասարակություն հարաբերություններով պայմանավորված պետության կարողությունները, ինստիտուտները և լեգիտիմությունը ամրապնդող էնդոգեն գործընթաց է²⁷⁶: Պետության կառուցումն առաջին հերթին ներքին գործընթաց է, որում ներգրավված են տեղական դերակատարները, ինչը նշանակում է, որ միջազգային դերակատարների ազդեցությունը համեմատաբար սահմանափակ է: Սակայն, ինչպես ճանաչված, այնպես էլ հատկապես չճանաչված պետությունների դեպքում, միջազգային գործընկերները՝ միջազգային ունիվերսալ, տարածաշրջանային, կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները և առանձին պետություններ, կարող են նպաստել պետության և հասարակության ճկուն հարաբերությունների հիմքերի ձևավորման ու ամրապնդման քաղաքական և ինստիտուցիոնալ գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Այդ բարդ և բազմագործոն գործընթացը հարկ է դիտարկել պետության կազմավորման և պետություն-հասարակություն հարաբերությունների ձևավորման ու զարգացման երկարաժամկետ պատմական և կառուցվածքային գործոնների համատեքստում՝ հաշվի առնելով դիտարկվող պետության առանձնահատկությունները: Դրանք կարող են լինել, օրինակ, ներքին կամ տարածաշրջանային հակամարտության հետևանքները, նոր հակամարտության վտանգը, համաշխարհային ճգնաժամով պայմանավորված տնտեսական կորուստների ազդեցությունը, պետության արտաքին պարտքը, սահմանափակ առևտրային հնարավորությունները, լայն սպառման ապրանքների բարձր գները և այլն: Այդ առանձնահատկությունների մեջ հատկապես առանձնանում են նրանք, որոնք պայմանավորված են պետության ճանաչված չլինելով: Չորս «պետականաստեղծ պայթյուններ» առանձնացրած Ֆ. Ռյոդերի կարծիքով դրանցից վերջինը, որն ի հայտ եկավ «սառը պատերազմի» ավարտից մեկ տասնամյակ անց, դեռևս չի ավարտվել²⁷⁷: Ինչպես արդեն նշվել է, չնայած ազգային ինքնիշխանության հավակնությունների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1990-ական թվականների առաջին կեսին²⁷⁸, սակայն ուսումնասիրությունները հաստատում են դրանց

²⁷⁶OECD, State Building in Situations of Fragility: Initial Findings, OECD DAC, Paris, 2008; Fritz, V., Rocha-Menocal A., Understanding State-Building from a Political Economy Perspective: An Analytical and Conceptual Paper on Processes, Embedded Tensions and Lessons for International Engagement, Report prepared for DFID's Effective and Fragile States Teams, 2007.

²⁷⁷Ռյոդերն առանձնացնում է չորս «պետականաստեղծ պայթյուններ», որոնք հետևել են ամերիկյան Անկախության հռչակագրին և ֆրանսիական Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրին. դրանք էին Վիեննայի կոնգրեսից Բեռլինի կոնգրեսն ընկած ժամանակահատվածը, 20-րդ դարի առաջին քառորդը, Երկրորդ համաշխարհային պատերազմից երեսուն տարի և Սառը պատերազմից մեկ տասնամյակ անց ընկած ժամանակահատվածները; Roeder Ph., Where Nation-States Come From: Institutional Change in the Age of Nationalism, Princeton University Press, Princeton, 2007, pp. 5-6.

²⁷⁸Gurr T., Marshall M., Peace and Conflict 2005: A global Survey of Armed Conflicts, Self-Determination Movements, and Democracy, College Park: Department of Government and Politics: Univ. of Maryland, 2005, p. 99, http://www.cidcm.umd.edu/publications/papers/peace_and_conflict_2005.pdf, (21.06.2013).

«երկարակեցությունը»²⁷⁹: Ավելին, Սառը պատերազմի ավարտից հետո ընկած ժամանակահատվածում ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված բոլոր պետությունները անցել են մետրոպոլիայի հետ զինված հակամարտությունների փուլով, և նրանց մեծամասնությունը դեռևս չի ստացել միջազգային ճանաչում²⁸⁰: Հետևաբար հետկոնֆլիկտային պետության (հետագոտության շրջանակներում այդպիսին են համարվում ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված, բայց դեռևս չճանաչված պետությունները՝ ռազմական գործողությունների դադարեցումից հետո) կառուցման ուսումնասիրությունը և դրա առանձնահատկությունների վերհանումն առանցքային նշանակություն ունեն ինչպես այդ պետության համար, այնպես էլ տարածաշրջանային, երբեմն էլ՝ գլոբալ զարգացումների տեսակետից: Առավել ևս, որ անգամ այն դեպքում, երբ պետությունն անկախություն է հռչակել միջազգային իրավունքի նորմերին լիակատար համապատասխանությամբ՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա, միջազգային ճանաչումն (անդամակցությունը ՄԱԿ-ին), որպես կանոն, տասնամյակներ տևող քաղաքական գործընթաց է, ժամանակաշրջան, որը կարող է վճռորոշ լինել պետության ձևավորման տեսակետից: Իհարկե, որպես կանոն, միջազգային կազմակերպությունների ավանդական մոտեցման համաձայն ինտեգրման կամ համագործակցության քայլերը չճանաչված պետությունների հետ բացառվում են մինչև ճանաչումը (թեև կան նաև բացառություններ, ինչպես, օրինակ, Կոսովոյի դեպքում)²⁸¹: Սակայն ակնհայտ է, որ այդ մոտեցումը հակասում է ոչ միայն ողջամիտ տրամաբանությանն, այլև միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին, քանի որ արդեն իսկ հակամարտության (հաճախ՝ մետրոպոլիայի ռազմական ագրեսիայի) ընթացքում ինքնորոշվող ժողովրդի կրած ծանր կորուստների հետևանքների վերացման աջակցությունը, որն ուղղակի կապ չունի ճանաչման հետ, պայմանավորվում է վերջինով: Մինդեռ այդ կորուստների վերականգնման և հատկապես մարդկանց հետագա տառապանքների բացառմանն ուղղված հնարավորությունները պետք է օգտագործվեն անվերապահորեն և առանց վարանման: Իսկ դրան ուղղված քայլերի ու ծրագրերի հաջողությունը մեծապես կախված է այդ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունից:

Աշխատանքում դիտարկվում է հետկոնֆլիկտային փուլին բնորոշ առանձնահատկությունների ազդեցությունը պետության կառուցման գործընթացի՝ պատմական և կառուցվածքային գործոնների վրա: Այդ առանձնահատկությունները կարելի է բաժանել չորս խմբի՝

- հակամարտության հետևանքներ,
- հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերներ,
- ինքնիշխան պետականության կառուցման փորձի ու գիտելիքների պակաս,
- չճանաչվածության հետևանքներ:

²⁷⁹ Marshall M., Cole B.R., Global report 2009: Conflict, Governance, and State Fragility, Center for Systemic Peace and Center for Global Policy, George Mason University, 2009, p. 40, <http://www.systemicpeace.org/Global%20Report%202009.pdf>, (21.06.2013).

²⁸⁰ A Safer world: State recognition and self-determination, <http://www.una.org.uk/content/safer-world-state-recognition-and-self-determination>, (14.06.2015).

²⁸¹ Торосян Т., Ильхам Алиев проиграл президентские выборы в Карабахе, ИА REGNUM, 2012, <http://regnum.ru/news/1559948.html>, (14.02.2013).

Հակամարտության հետևանքների խմբին են դասվում հակամարտության ընթացքում մարդկային կորուստները, կառույցների և ենթակառուցվածքների վնասները, նյութական կորուստները: Երկրորդ՝ հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների խմբում են պատերազմի վերսկսման սպառնալիքին դիմակայելու նպատակով իրականացվող ռազմական ծախսերի մեծ ծավալները, այդ սպառնալիքի հետևանքով՝ միգրանցիան, ֆինանսական և մարդկային ռեսուրսների պակասը, դաշտային հրամանատարների էական ազդեցությունը հետկոնֆլիկտայի կառավարման մարմիններում, և այլն: Ինքնիշխան պետականության կառուցման փորձի պակասն էականորեն ազդում է գործընթացի արդյունավետության վրա. շատ հաճախ պահանջվում է միաժամանակ և՛ լուծում գտնել առաջացող խնդիրների համար, և՛ ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ, և՛ կուտակված փորձի հիման վրա շտկել նախկինում ընդունված ոչ արդյունավետ որոշումների հետևանքները: Ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված, սակայն դեռևս միջազգայնորեն չճանաչված պետության կառուցման խնդրի գլխավոր առանձնահատկությունը, ինչպես նաև դժվարությունների զգալի մասը պայմանավորված է հենց այդ կարգավիճակով՝ չճանաչվածությամբ, և դրա հետևանքներով: Չճանաչված պետությունները հետկոնֆլիկտային փուլում խիստ սահմանափակ տնտեսական, իրավական ու քաղաքական աջակցության, ինչպես նաև միջազգային և տեղական վերահսկողական մեխանիզմների բացակայության կամ անբավարար մակարդակի պայմաններում ոչ միայն զրկվում են լրացուցիչ, հաճախ՝ վճռորոշ աջակցությունից, այլև կարող են բախվել նոր մարտահրավերների՝ անօրինական խմբավորումների ձևավորում, ապօրինի, քրեական գործունեության ծավալում և այլն: Նման մարտահրավերների ու իրավիճակների հաղթահարման ձգտումը պահանջում է պետության կառուցումը պայմանավորող գործոնների և դրանց վրա ազդող առանձնահատկությունների համապարփակ ուսումնասիրություն:

3.1. Պետության կառուցման պատմական և կառուցվածքային ժառանգությունը

Պատմական և կառուցվածքային ժառանգության ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ ձևավորված ավանդույթները, արժեքներն ու սկզբունքները մեծ ազդեցություն ունեն ժամանակակից քաղաքական գործընթացների վրա: Պետության կառուցման ջանքերը պետք է խարսխված լինեն այդ պետության տարածքում պատմական զարգացումների փորձի վրա: Այդ հարցի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԵԿ) զեկույցները և ուղեցույցները²⁸², որտեղ մեծ ուշադրություն է դարձվում պատմական և կառուցվածքային ժառանգության և հետկոնֆլիկտային և դիտարկել միավորներում վերջիններիս հնարավոր ազդեցության վրա: Այդ փաստաթղթերի, ինչպես նաև պատմական և կառուցվածքային

²⁸² OECD, State Building in Situations of Fragility: Initial Findings, OECD DAC, Paris, 2008; OECD, Concepts and Dilemmas of State-Building in Fragile Situations: From Fragility to Resilience, OECD/DAC Discussion Paper, OECD DAC, Paris, 2008; OECD, Do No Harm: International Support to Statebuilding, OECD DAC, Paris, 2010; OECD, Handbook on Contracting Out Government Functions and Services in Post-Conflict and Fragile Situations, OECD, Paris, 2010; OECD, States of Fragility 2015: Meeting Post-2015 Ambitions, OECD Publishing, Paris, 2015.

ժառանգության գործոնների սահմանմանն ու դասակարգմանը նվիրված հիմնական աշխատանքների հիման վրա այդ գործոնները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- *Պետության կազմավորման պատմություն:* Գաղութատիրական անցյալի փորձը և անկախության համար ծավալված պայքարի օրինաչափություններն ու հետևանքները կարող են ունենալ երկարատև ազդեցություն պետականության, պետության կառուցման և ազգային ինքնության ձևավորման և զարգացման դիսկուրսի վրա²⁸³: Առանձնահատուկ ուշադրության է արժանի կախվածությունը պատմական ուղեգծից: Կախվածությունը պատմական ուղեգծից սահմանափակում է հասարակության առջև բացվող հնարավորությունները և տարբերակները, քանի որ հետագա զարգացման ուղեծիրը պայմանավորված է նախորդիվ կատարված որոշումներով: Օրինակ, ապագաղութացումից տասնամյակ անց Ենթասահարական Աֆրիկյան չկարողացավ ապահովել մրցունակ հայրենական արտադրություն և ներդրումներ: Աֆղանստանում վերոնշյալը դրսևորվում է ոչ պետական կառույցների (զինյալ) դերակատարների մշտական միջամտությամբ քաղաքական հարցերին: Մինչդեռ Կոսովոյում դյուրաբեկության խորքային պատճառներն ուրվագծվում են էթնիկ բաժանումների և խտրականությունների երկարատև պատմությամբ²⁸⁴:

- *Հասարակության կառուցվածքային բաժանումներ (cleavages):* Պետության կառուցման վրա ազդեցություն է ունենում հասարակության բաժանումը տարբեր խմբերի՝ պայմանավորված դասակարգային, ռասայական/ազգային, մշակութային, տարածքային, սոցիալական գենդերային, կրոնական և «կենտրոն-ծայրամասեր» տարբերություններով: Կախված այն բանից, թե որքան խորն են այդ տարբերություններն ու դրանցով պայմանավորված խտրականություններն, այնքան ավելի մեծ է դրանց՝ խտրությունների և հակամարտությունների աղբյուր դառնալու հավանականությունը²⁸⁵:

- *Զինված հակամարտության պատմություն:* Հարկ է հաշվի առնել, որ զինված հակամարտություններն ինքնության վրա խոր հետքեր են թողնում: Դրա պատճառ կարող են դառնալ նախորդ կետում նշված խմբերի միջև հարաբերությունները, էթնիկ/ազգային ինքնագիտակցությունը և տեղական/տարածաշրջանային նույնականացումը (identification), ինչպես նաև ծայրահեղ քաղաքական դիրքորոշումները²⁸⁶:

- *Կառուցվածքային տարրեր:* Պետության դյուրաբեկությունը (state fragility) կարող է պայմանավորված լինել քիչ թե շատ կանխորոշված և փոփոխման ոչ ենթակա կառուցվածքային պայմաններով: Վերջիններս ներառում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, «վատ» հարևաններով շրջապատված լինելը, վերնախավի եկամուտների «անկախ» աղբյուրների (ապօրինի զենքերի, թմրադեղերի արտադրությունն ու առևտուրը, թրաֆիքինգը, չհարկվող ներմուծումն ու արտահանումը և այլն) առկայությունը, որոնք էապես նվազեցնում են իշխող վերնախավի կախվածությունը հարկատուներից, ինչպես նաև դրա հետ կապված պատասխանատվության

²⁸³Tilly Ch., War Making and State Making as Organized Crime, in Peter Evans (ed.), Bringing the State Back In, Cambridge University Press, Cambridge, 1985.

²⁸⁴Anten L., Briscoe I., Mezzera M., The Political Economy of State-Building in Situations of Fragility and Conflict: from Analysis to Strategy, Netherlands Institute of International Relations 'Clingendael', Hague, 2012.

²⁸⁵Tilly Ch., նշվ. աշխ.:

²⁸⁶Berger M., From Nation-Building to State-Building: The Geopolitics of Development, the Nation State System and the Changing Global Order, *Third World Quarterly*, Vol. 27, No. 1, 2006, pp. 5-25.

մեխանիզմներից: Միաժամանակ կառավարության կողմից բնական պաշարների սխալ, մասնավորապես, բացառապես սեփական շահերի համար օգտագործումը, կարող է դառնալ իրական պատուհաս պետության կառուցման և կայացման գործընթացների արդյունավետության տեսակետից²⁸⁷: Մեկ այլ առանցքային կառուցվածքային տարր է պետության աշխարհագրությունը: Մի շարք աշխարհագրական գործոններ (պետության տարածքը, մեծաթիվ բնակչությունը, դեպի ծով ելքի բացակայությունը, լեռնային շրջանները և այլն) վիճակագրորեն փոխկապակցված են քաղաքացիական պատերազմների կամ պետության դյուրաբեկության հավանականության աճի հետ: Տարածքի չափսերի ազդեցությունը, զուգորդված լեռնային շրջաններով և այլ աշխարհագրական խոչընդոտներով պայմանավորված դժվարանցանելիության ու կապի դժվարությունների հետ, վառ դրսևորվում է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում: Ի լրումն, դժվարանցանելիության և անմատչելիության խնդիրներին ավելանում են նաև տարիների ընթացքում պատկան ուշադրության բացակայության և պատերազմի պայմաններում պետության ենթակառուցվածքների ավերումը: Նման իրավիճակ է նաև Պակիստանում, որտեղ Բալուչիստանը, Պետական վերահսկողության տակ գտնվող ցեղային տարածքները և Հյուսիս-արևմտյան սահմանային նահանգի զգալի հատվածը լեռնային շրջաններ են, իսկ Փունջաբի հյուսիսային, Սինդհի արևելյան և Բաջուլիստանի մի շարք հատվածներն ընդարձակ անապատային տարածքներ են, ինչը լուրջ խոչընդոտներ է ստեղծում տրասնպորտի, կապի, հասարակական բարիքների մատակարարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև վերահսկողության և անվտանգության երաշխավորման համար: Հարևան Աֆղանստանը բախվում է սահմանային շրջաններում և պետության տարածքի մեծ մասի վրա վերահսկողության տարածման նույն աշխարհագրական մարտահրավերների հետ²⁸⁸:

• *Տնտեսական զարգացածության մակարդակ և աղքատության ցուցանիշ:* Աղքատությունը և անհավասարությունը՝ որպես արտաքսման, խտրականության, պատրիմոնիալիզմի զանազան (օրինակ՝ պետական, անդրպետական (sub-state), համայնքային, կենցաղային) մակարդակների դրսևորումներ, և վերնախավի կողմից պետության «զավթման» պայմաններին նպաստող քաղաքական և ուժային մեխանիզմների (կառույցների, կաղապարների) հետևանք, կարող են լինել դյուրաբեկության խթան²⁸⁹: Որտեղ տնտեսական կառույցներն գործունակ չեն, իսկ կառավարությունը՝ թույլ, մասնատված և հիմնված բացառապես սեփական շահերի վրա, տնտեսական բարեփոխումների գործընթացի մեկնարկը քիչ հավանական է: Որտեղ պետական եկամուտները հավաքագրվում և բաշխվում են անհավասարապես և անարդար, պետական զանձումներից սեփական շահույթն ապահովելու նպատակով իշխանության անցնելու ցանկությունն ավելանում է: Վերոնշյալի համար «ամենաարդյունավետ» միջոցն է ռեպրեսիան: Նման ռազմավարությունն որդեգրած պետությունում գործող իշխանությունը ձգտում է ժողովրդավարական կառույցների թուլացման միջոցով մարզինալացնել մրցակցությունը: Որպես կանոն, անվտանգության

²⁸⁷ Zaum D., *The Sovereignty Paradox: The Norms and Politics of international Statebuilding*, Oxford University Press, Oxford, 2007.

²⁸⁸ Anten L., Briscoe I., Mezzera M., *Op. cit.*

²⁸⁹ World Bank, *Engaging with Fragile States: An IEG Review of World Bank Support to Low-Income Countries under Stress*, World Bank, Washington, D.C., 2006.

ծառայությունները վերածվում են հասարակական վերահսկողության մեխանիզմի: Քաղաքացիները մշտապես ենթարկվում են ճնշումների և քաղաքական ընդդիմության գոյությունը հնարավոր չէ: Նման իրավիճակը բնորոշ է աղքատ և մեծ տարածք ունեցող, ըստ այդմ, մասնատման համար ավելի դյուրին պետություններին, ինչպիսիք են ԿԴՀ-ն, Սուդանը, Հարավային Սուդանը և Աֆղանստանը: Այդ պետություններում իշխանությունը տնօրինում է պետական գանձումների մեծ մասը, սակայն դեռևս բավականաչափ ուժեղ չէ պետության ողջ տարածքում անդրազգային խմբերի վրա լեգիտիմ բռնության մենաշնորհը տարածելու համար: Տորմալ քաղաքական ինստիտուտներն ամբողջությամբ ենթարկեցված են այդ գործընթացին, և միակ կիսակայուն և կասկածելի արդյունքը ռեսուրսներով ամենահարուստ դերակատարի կողմից վերնախավի բոլոր ներկայացուցիչների «համախմբումն» է շահի հետապնդման շուրջ²⁹⁰:

- *Բնաստիտուցիոնալ ժառանգություն*, որը ներառում է պետություն-հասարակություն հարաբերությունների ամրությունը, կառավարման կառույցների բնույթը, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների փոխազդեցության ձևերը²⁹¹:

Դժվար չէ նկատել, որ այդ տարրերից յուրաքանչյուրն այս կամ այն չափով դրսևորվում է ցանկացած պետության դեպքում (բացառություն է զինված հակամարտության պատմությունը): Մի խումբ պետությունների պատմության ընթացքում անցնում են զինված հակամարտության փուլով, մինչդեռ մյուսները՝ ոչ: Հետևաբար, պետության կառուցման տեսակետից առաջինների ուղին զգալիորեն ավելի բարդ է, պայմանավորված է վերոհիշյալ չորս խմբերի մեջ մտնող խնդիրների լուծմամբ ու մարտահրավերների հաղթահարմամբ և արժանի է առանձին ուսումնասիրության: Ընդ որում, վերջին տասնամյակների ընթացքում գլոբալիզացիայի շարունակական խորացման պայմաններում վերոհիշյալ խնդիրներն ու մարտահրավերներն էլ ավելի են ահագնանում և դառնում են տարածաշրջանային կամ միջազգային անվտանգության ու խաղաղության լուրջ սպառնալիքներ, պոտենցիալ անկայուն տարածաշրջանների ձևավորման նոր խթաններ:

3.2. Պետության կառուցման խնդիրն արդի գլոբալ միջավայրում

Ժամանակակից աշխարհի նոր պայմանները և մարտահրավերներն իրենց խոր ազդեցությունն են ունեցել հետկոնֆլիկտային փուլում գտնվող և դեռևս չկայացած պետությունների վրա: Մարդու իրավունքների, ժողովրդավարական կառավարման, մարդկային ներուժի զարգացման և գլոբալ անվտանգության շուրջ համաշխարհային դիսկուրսն առավել քան երբևէ արմատացած է միջազգային հարաբերությունների համակարգում և օրինականացնում է միջազգային կոլեկտիվ գործողությունների մեծ մասը²⁹²: Միաժամանակ, գոյություն ունի համոզմունք, որ «Արևմուտքը» չպետք է պարտադրի իր

²⁹⁰ Anten L., Briscoe I., Mezzera M., Op. cit.

²⁹¹ Goldstone J., Pathways to State Failure, *Conflict Management and Peace Science*, Vol. 25 (4), 2008, pp. 285-296.

²⁹² Fritz V., Rocha-Menocal A., Developmental States in the New Millennium: Concepts and Challenges for a New Aid Agenda, *Development Policy Review*, Vol. 25, No. 5, 2007, pp. 531-552.

մոդելները և նորմերն այլ քաղաքակրթության պատկանող երկրներին²⁹³ և, որ պետության կառուցումը հարկ է ընկալել որպես ներսից (էնդոգեն) առաջնորդվող գործընթաց, որը թե՛ քաղաքական է, թե՛ կոնտեքստային: Եվ երրորդ, «ահաբեկչության դեմ պատերազմը» առաջ է քաշել թերգարգացածության և դյուրաբեկության հետևանքով ստեղծված անվտանգության սպառնալիքներին առնչվող նոր մտահոգություններ, ինչի արդյունքում միջազգային գործընթացներին վերաբերող տեսությունները լրացվել են նոր հայեցակարգերով, իսկ ուսումնաքսիրությունները կենտրոնացել են նաև անվտանգության ու զարգացման միջև կապի վրա²⁹⁴:

Հատկանշական է, որ գլոբալիզացիայի որոշ ասպեկտներ, գլխավորապես 1970-ական թվականներից ի վեր, բացասական ազդեցություն են ունեցել աղքատ երկրներում պետության կառուցման գործընթացի խթանման վրա: Մուրը, Շմիդտը և Անսուորտը առանձնացնում են դրանցից մի քանիսը՝

- Ապօրինի ապրանքների արտահանումից ստացված եկամուտները նվազեցնում են պետություն-հասարակություն դրական հարաբերություններ հաստատելու վերնախավի շահագրգռվածությունը՝ նվազեցնելով վերջիններիս՝ ստացված պետական եկամուտների դիմաց արդյունավետ ծառայություններ տրամադրելու ցանկությունը (պաշտպանություն և հիմնական հանրային ծառայություններ): Կախվածությունն օգնությունից նույնպես կարող է խոչընդոտել, որ վերնախավն ավելացնի ներքին ռեսուրսների մոբիլիզացիան և բարելավի թափանցիկ հանրային (պետական) կառավարումը:
- Միջազգային դրամաշրջանառության ժամանակակից կառուցվածքը հեշտացրել է կապիտալի դուրսբերումը երկրից: Ֆինանսական ազատականացումը կրճատել է կապիտալի տեղաշարժի ծախսը, և հարկային «ապաստարանների» առկայությունը թույլ է տալիս խուսափել հարկերից և իրականացնել անօրինական գործունեությունից ստացվող փողերի լվացում: Դա ազդում է հարստության կուտակման, ներդրումների ընդլայնման և ենթակառուցվածքների կենտրոնացման, ինչպես նաև որոշ պետությունների հետ տնտեսական համագործակցության խորացման հեռանկարների վրա:
- Ռեզիդենտ և անվտանգության ծառայությունների զարգացող համաշխարհային շուկան խարխլում է «թույլ» պետություններում անվտանգության մեխանիզմների կենտրոնացման գործընթացը: Այն նաև քաղաքական վերնախավին թելադրում է «անվտանգության մասնավորեցում», այլ ոչ թե դրա՝ որպես հանրային բարիքի, ապահովում²⁹⁵: Ռեզիդենտ ոլորտի մեկ այլ մարտահրավեր է զինամթերքի արդյունաբերությունը և փոքր տրամաչափի հրազենների և թեթև ինքնաձիգների հասանելիությունը, որոնք զինված հակամարտությունների (պետական սահմաններից ներս և դուրս) կարևոր շարժիչ ուժ են²⁹⁶:

Նմանատիպ պայմաններում քաղաքական վերնախավերը պետք է նուրբ հաշվարկ կատարեն: Նրանք կարող են «դաժան» մարտավարության միջոցով գոյատևել

²⁹³ Huntington S., *The Clash of Civilizations and the Remaking of World Order*, Simon & Schuster, New York, 1996.

²⁹⁴ Brinkerhoff D., *Capacity Development in Fragile States: Dilemmas and Directions*, *Capacity.Org*, Issue 32, 2007.

²⁹⁵ Moore M., Schmidt A., Unsworth S., *Assuring Our Common Future in a Globalised World: The Global Context of Conflict and State Fragility*, DFID background paper for the 2009 White Paper “Securing our Common Future”, 2009.

²⁹⁶ OECD (2009a), *Armed Violence Reduction: Enabling Development*, OECD DAC, Paris, 2009.

պետության «ուսկորների» վրա: Սակայն, կարող են նաև թե՛ տեղական, թե՛ միջազգային ճնշման տակ դառնալ ավելի պատասխանատու իրենց պետությունում մարդու իրավունքների հանդեպ հարգանքի հաստատման և զարգացման նկատմամբ, ինչպես նաև սկսել գործել պետության ստանձնած պարտավորությունների շրջանակներում: Այդ ճնշումները վերնախավի մի շարք ներկայացուցիչների, մասնավորապես նրանց, ովքեր ունեն համապատասխան կրթություն և մուտք դեպի համաշխարհային կապերի ցանց, սպառնալիք են դարձնում վերնախավի մյուս ներկայացուցիչների համար²⁹⁷:

Բերված օրինակները միանգամայն բավարար են պնդելու համար, որ արդի գլոբալ միջավայրում պետության կառուցման պայմանները, մարտահրավերներն ու խթաններն արմատապես տարբերվում են անգամ մի քանի տասնամյակ առաջ գոյություն ունեցած ինդիաներից, և կայացման նպատակ հետապնդող, հատկապես՝ հետկոնֆլիկտային պետությունների համար բարդ մարտահրավերներ են առաջադրում:

Արդի գլոբալ միջավայրն իր ուրույն հետքն է թողել նաև միջազգային դերակատարների ներգրավվածության ծավալի և ձևաչափի վրա: Նոր հազարամյակում պետության կառուցման գործընթացը դարձավ առաջնահերթություն միջազգային հանրության համար: Ներկայումս գրեթե յուրաքանչյուր խոշոր միջազգային դոնոր առանձնացնում է պետության կառուցումը որպես առանցքային նպատակ, հատկապես դյուրաբեկ պետություններում: Դոնորները պետության կառուցման գործընթացին աջակցությունն ընդունում են որպես ավելի լայնամասշտաբ և բարդ միջամտություն, քան իրենց ավանդական աշխատանքն է կարողությունների կառուցման և մի շարք այլ զարգացման ինդիաների շուրջ ավելի կայուն տարածաշրջաններում: Դյուրաբեկ պետություններում պետության կառուցման գործընթացին աջակցելու դոնորների պատրաստակամությունն արտացոլվում է գործունեության շրջանակի ընդլայնմամբ, ինչը կարելի է նկատել առաջադրված կարգավորումներում Աֆղանստանում և Իրաքում, ինչպես նաև Ենթասահարական Աֆրիկայի, Ասիայի, Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի և Լատինական Ամերիկայի մի շարք պետություններում²⁹⁸:

3.3. Պետության կառուցումը պայմանավորող կարևորագույն գործոնները

Պետության կառուցումը պայմանավորող կարևորագույն գործոններն են՝

- Քաղաքական կարգավորումները, որոնք արտացոլում են «խաղի կանոնների» շուրջ գաղտնի կամ պաշտոնական համաձայնությունը (մասնավորապես՝ վերնախավի ներկայացուցիչների միջև), իշխանության բաշխումը և քաղաքական գործընթացները, որոնց միջոցով պետությունը և հասարակությունը փոխազդում են:
- Պետության՝ հիմնական գործառույթներն արդյունավետ կատարելու և հիմնական ծառայությունները տրամադրելու ունակությունն ու պատրաստակամությունը:
- Հասարակական ակնկալիքները և ընկալումները, թե ինչ գործառույթներ պետք է իրականացնի պետությունը, ինչ պայմաններ պետք է լինեն պետություն-

²⁹⁷Carment D., Gazo J., Prest S., Risk Assessment and State Failure, *Global Society*, Vol. 21, No. 1, 2007, pp. 47-69.

²⁹⁸ **Fritz V., Rocha-Menocal A.**, Understanding State-Building from a Political Economy Perspective: An Analytical and Conceptual Paper on Processes, Embedded Tensions and Lessons for International Engagement, Report prepared for DFID's Effective and Fragile States Teams, 2007.

հասարակություն փոխհարաբերությունների համար և պահանջները «լսելի» դարձնելու հասարակության ունակությունը:

- Պետության լեգիտիմությունը՝ որպես պետության կառուցման և կայացման գործընթացների հիմնարար և անվերապահ գործոն:

Ստորև ներկայացվում է այդ գործոնների վերլուծությունը, իսկ յուրաքանչյուր գործոնի վերլուծությունն ուղեկցվում է առանցքային դերակատարների և «կենտրոն-ձայրամասեր» հարաբերությունների հնարավոր դրսևորումների դիտարկմամբ՝ հաշվի առնելով հետկոնֆլիկտային պետության կառուցման առանձնահատկությունները:

3.3.1. Քաղաքական գործընթացները և կարգավորումները հետկոնֆլիկտային միջավայրում

Պետության կառուցման հեռանկարները մեծապես կախված են պետության հիմքում ընկած քաղաքական կարգավորումներից: «Քաղաքական կարգավորման» հայեցակարգը, ըստ էության, ներկայացնում է քաղաքական ներգրավվածության կանոնների շուրջ համաձայնության միջոցով վերնախավի ներկայացուցիչների միջև իշխանության բաշխումը: Քաղաքական կարգավորումը կարող է (վերա)ձևավորվել եզակի դեպքի (ինչպես, օրինակ, խաղաղության պայմանագրի) արդյունքում, կամ կարող է արտացոլել փոփոխությունների շարունակական գործընթացը, որտեղ գլխավորը հիմնական դերակատարների դիրքորոշումն է²⁹⁹:

Քաղաքական կարգավորումը վերաբերում է ոչ միայն քաղաքականության ֆորմալ, այլ նաև ոչ ֆորմալ քաղաքական ինստիտուտներին և դրանց կապերին, ինչպես նաև ոչ ֆորմալ կանոններին, սկզբունքներին, արժեքներին և արմատավորված սովորույթներին, որոնք ուրվագծում են քաղաքական փոխգործակցությունը և վարքը, ինչպես նաև հանդիսանում են յուրաքանչյուր քաղաքական համակարգի առանցքը: Քաղաքական կարգավորումը նաև դինամիկ երևույթ է, որը ժամանակի ընթացքում ենթակա է փոփոխման և վերաձևավորման (հակամարտության, փոխհամաձայնության և կարգավորման տարբեր մակարդակներ): Տարբեր պետական և ոչ պետական դերակատարներ պարբերաբար (վերա)հաստատում են իրենց հարաբերությունների ձևաչափը³⁰⁰:

Այնուամենայնիվ, քաղաքական կարգավորման առկայությունը դեռևս ներգրավվածության և մասնակցության մակարդակի ցուցանիշ չէ³⁰¹: Մի շարք դեպքերում դյուրաբեկությունն արտացոլում է քաղաքական կարգավորման բացառիկությունը և/կամ արտոնություններ է տրամադրում մի շարք խմբերի՝ այլոց նկատմամբ: Նմանատիպ կարգավորումների դեպքում ներքին հակամարտություններն ու անկայունությունը «խաղի կանոնների» վերափոխման համար ծավալվող պայքարի արդյունք են: Մինչդեռ, մի շարք դեպքերում, քաղաքական կարգավորումը կարող է դառնալ արմատավորված և կայուն՝ վիճելի հարցին հաղորդելով տևական բնույթ: Որոշ ժամանակ դա կարող է պետությունում կայունության տպավորություն ստեղծել, սակայն վաղ թե ուշ հասարակության սովոր շերտի (այդ թվում նաև էթնիկ փոքրամասնությունների) դուրսմղումը քաղաքական և

²⁹⁹Brown S., Gravingholt J., Framing Paper on Political Settlements in Peacebuilding and Statebuilding, OECD INCAF framing paper, 2009.

³⁰⁰նույն տեղում:

³⁰¹նույն տեղում:

հասարակական գործընթացներից և հորիզոնական անհավասարությունները³⁰² կարող են հանգեցնել ներքին հակամարտության և պետության դյուրաբեկության³⁰³: Չափազանց մեծ ընտրական մրցակցությունը, ինստիտուցիոնալ բարդությունները, նոր դերակատարների և եկամուտների այլընտրանքային աղբյուրների (այդ թվում արտաքին դոնորների, բնական ռեսուրսների արտահանումը և կազմակերպված հանցագործության) առկայությունը հանդեցնում են նոր հակամարտությունների ծագման և հասարակությանն «օտարում» են իշխանությունից: Թվացյալ առաջընթացը մի շարք դեպքերում, ինչպիսիք են, օրինակ, հետթալիբանական Աֆղանստանում *loya jirga*-ն³⁰⁴ (մեծ ժողովը), անկախության ձեռքբերումը Կոսովոյում կամ հակամարտության և մայաների համայնքի որոշումների ընդունման գործընթացից դուրսմղման ավարտը Գվատեմալայում, իր հետ առաջ է բերել դժվարին կացություն: յուրաքանչյուր դեպքում քաղաքական կյանքի նոր ձևաչափը կարճ ժամանակ անց հանգեցրել է զինված խմբավորումների և հանցավոր խմբերի հզորացմանը կամ կառավարության շրջանում ընդհատակյա գործունեության տարածմանը³⁰⁵:

Քաղաքական կարգավորման հայեցակարգն ու փորձը սերտորեն կապված են տնտեսական կարգավորման հետ: Քաղաքական կարգավորումը սկզբունքորեն ազդում է տարբեր խմբերի միջև ռեսուրսների բաշխման վրա: Անշուշտ, բոլոր պետություններում էլ բարիքների և ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունն անհավասարապես է բաշխվում, սակայն դյուրաբեկ պետություններում այդ անհամաչափությունը հաճախ հասնում է ծայրահեղ աստիճանի³⁰⁶:

Պետության և հասարակության միջև հարաբերությունները պայմանավորված են քաղաքական գործընթացներում կարգավորումների արդյունքներով, որոնք ներառում են հասարակության ակնկալիքների շրջանակները և բնակչությունը ներկայացնող քաղաքական «ձայնը»: Այդտեղ կարելի է առանձնացնել երկու վիճահարույց խնդիր: Նախ, գոյություն ունի պատասխանատվության խնդիր, որը վերաբերում է այն բանին, թե արդյոք կան վերահսկողության պատշաճ մեխանիզմներ և հնարավորություններ, որոնք թույլ կտան ապահովել հասարակության կարիքների բավարարումը³⁰⁷: Երկրորդ խնդիրը վերաբերում է քաղաքական ներգրավվածության մակարդակին և որակին, որոնք որոշվում են օրենքների (ֆորմալ նորմերի) և ոչ ֆորմալ նորմերի և փորձի համադրմամբ՝ որպես նպատակ դիտարկելով խոցելի խմբերի արդյունավետ քաղաքական մասնակցությունը պետության քաղաքական գործընթացներում: Թե՛ քաղաքական պատասխանատվության, թե՛

³⁰²Stewart F., *Horizontal Inequalities and Conflict: Understanding Group Violence in Multethnic Societies*, Palgrave Macmillan, Basingstoke, 2008; Stewart F., Langer A., Venugopal R., *Horizontal Inequalities and Post-Conflict Development*, Palgrave Macmillan, Basingstoke, 2011.

³⁰³Stewart F., նույն տեղում:

³⁰⁴ *Loya jirga*-ն ժողով է, որը հրավիրվում է պետության նոր ղեկավարի ընտրության համար նախորդի հանկարծակի մահվան դեպքում, նոր սահմանադրության ընդունման կամ ազգային/տարածաշրջանային խնդրի լուծման համար (օրինակ, պատերազմի) :

³⁰⁵ **Anten L., Briscoe I., Mezzera M.**, Op. cit.

³⁰⁶Debiel T., Terlinden U., *Promoting Good Governance in Post-Conflict Societies*, Discussion paper, Technische Zusammenarbeit, GTZ, Eschborn, 2005.

³⁰⁷Schedler A., *Conceptualizing Accountability in Andreas Schedler Larry Diamond and Marc F. Plattner (eds.) The Self-Restraining State: Power and Accountability in New Democracies*, Lynne Rienner Publishers, Boulder, 1999.

քաղաքական ներգրավվածության մակարդակները կարող են ի հայտ գալ, օրինակ, մրցակցային ընտրությունների արդյունքում³⁰⁸:

Թեև վերջին տասնամյակների ընթացքում էապես մեծացել է միջազգային հանրության կողմից ներպետական քաղաքական գործընթացների բարելավմանը ցուցաբերվող աջակցությունը, սակայն քաղաքական ներգրավվածության կանոնների շուրջ համաձայնություն, վերնախավի օրինապահ վարքագիծ, արդյունավետ և գործունակ քաղաքական կառույցներ ապահովող պատշաճ քաղաքական կարգավորման ստեղծումը ոչ թե արտաքին միջամտության, այլ տեղական քաղաքական ինստիտուտների համակարգված աշխատանքի արդյունք է:

Առանցքային դերակատարներ: Մեծ նշանակություն ունի, թե ովքեր են այն առանցքային դերակատարները, որոնք ազդեցություն ունեն քաղաքական կարգավորման վրա և ուրվագծում են տվյալ պետության ռազմավարական նախապատվությունները: Առանցքային դերակատարներ կարելի է համարել նրանց, ովքեր ի գորու են զգալիորեն ազդել (բարելավել, խաթարել կամ էականորեն ապակայունացնել) պետության կառուցման գործընթացը: Զինված հակամարտություններից հետո ձևավորված պետությունների դեպքում իշխանությունը կենտրոնացած է զինված խմբավորումները վերահսկող դերակատարների ձեռքում³⁰⁹, քանի դեռ չեն ընդունվել սահմանադրություն և համապատասխան օրենքներ, և դրանց հիման վրա կազմակերպվել պատշաճ ընտրություններ: Հետևաբար, առաջին փուլում առանցքային դերակատարները հենց այդ խմբավորումների ղեկավարներն են, որոնց դերակատարությունը երկրորդ փուլում աստիճանաբար նվազում է, եթե գործընթացն ունի ճիշտ զարգացումներ:

Հնարավորություններն ու խոչընդոտները, որոնց հանդիպում է (միջազգային, պետական, վերպետական մակարդակներում) տեղական քաղաքական վերնախավը ձևավորում են ուժերի հավասարակշռությունը մրցակից դերակատարների միջև, ինչպես նաև նրանց կարողությունն աջակցելու պետության կառուցմանը կամ այնպիսի գործընթացներին, որոնք սկզբունքորեն նպաստում են դրանց: Միջազգային և տարածաշրջանային գործընթացները ևս կարող են տարբեր (խրախուսող, աջակցող կամ խոչընդոտող) ազդեցություն ունենալ այդ գործընթացների վրա, որոնց արձագանքում են տեղական առաջնորդներն ու վերնախավը³¹⁰: Միաժամանակ, պետության կառուցման գործընթացի միջազգայնացումն առաջ է քաշել մի շարք հակասություններ: Որքան մեծ է միջազգային դերակատարների ազդեցությունը, այնքան ավելի մեծ է ներքին հակասությունների հավանականությունը: Վերոնշյալն արտացոլված է Աֆղանստանում միանգամայն տարբեր ձևաչափի քաղաքական կյանքի ձևավորման ներկայիս փորձերում, որն էականորեն տարբերվում է 2001թ. վարչակարգի փոփոխությանը հաջորդած առաջին տարիներին պետության կառուցման գործընթացի միջազգային և աֆղան կողմնակիցների ջանքերով խարսխված փորձերից³¹¹:

³⁰⁸Fritz V., Kaiser K., Levy B., Problem-Driven Governance and Political Economy Analysis, Good Practice Framework, World Bank, Washington D.C., 2009.

³⁰⁹Goldstone J., նշվ. աշխ.:

³¹⁰Morgan P., Some Findings on Donor Support to Capacity Development in Two Post-Conflict States, World Bank, Washington D.C., 2009.

³¹¹ **Sukhre A.**, The Rule of Law in Afghanistan: Missing in Inaction, Cambridge University Press, Cambridge, 2011.

Կենտրոն - ծայրամասեր հարաբերություններ: Քաղաքական կարգավորումները նաև ուրվագծում են կենտրոնի և ծայրամասերի միջև հարաբերությունները և, իրենց հերթին, դրանց արդյունքն են: Վերջինս կախված է այն բանից, թե ինչպիսի գարգացում են ունենում «քաղաքական խաղի կանոնները», ծառայությունների մատուցման և իշխանության կենտրոնացման կամ ապակենտրոնացման ինչ աստիճան է ընտրվում, ինչը մեծապես պայմանավորված է կենտրոնի եկամուտներից և ծայրամասերից հարկային գանձումների մոբիլիզացման ունակությունից: Ժամանակակից պետության ինքնակազմակերպման և խաղաղության պահպանման գործընթացներում առանցքային խնդիրներն են, թե արդյոք էթնիկ և անդրազգային քաղաքական միավորներն ի գործու են ստեղծել միասնական քաղաքական ինքնություն, տիրապետության օրինաչափություններ, որոնք բնութագրում են անդրազգային խմբերի միջև հարաբերությունները, ինչպես նաև նրանց հարաբերությունները կենտրոնի հետ, բնական ռեսուրսների շուրջ վեճերը և այլն³¹²:

3.3.2. Պետության հիմնական գործառույթների կատարումը հետկոնֆլիկտային փուլում

Պետությունները տարբերվում են իրենց նորմատիվային հիմքերով և լեգիտիմության աղբյուրներով: Այնուամենայնիվ, ստորև ներկայացվող մի շարք հիմնական գործառույթներ ընդհանուր են բոլոր կայացած պետությունների և նպատակ՝ կայացման ձգտող երկրների համար:

Անվտանգության ապահովումը: Առանց պետության և բնակչության անվտանգության ապահովման, տնտեսությունը և հանրային ծառայություններն ուղակի չեն կարող գործել, իսկ խաղաղություն հնարավոր չի լինի հաստատել (օրինակ՝ Սոմալի, Աֆղանստան): Պետությունը պետք է ի գործու լինի պաշտպանել ինքն իրեն ներքին և արտաքին սպառնալիքներից՝ միաժամանակ պարտավորված լինելով պաշտպանել բնակչությանը՝ անկախ էթնիկ պատկանելությունից: Իշխանության և պարտավորությունների հավասարակշռումը շատ կարևոր է պետության լեգիտիմության ամրապնդման, ինչպես նաև քաղաքացիների աջակցությունը ստանալու համար³¹³:

Պետական եկամուտների արդյունավետ բաշխում և հիմնական ծառայությունների տրամադրում: Իրավունքի գերակայության ապահովումը ֆինանսավորելու, ինչպես նաև անվտանգության և այլ հիմնական ծառայությունների տրամադրման համար՝ պետությունը պետք է կարողանա ապահովել եկամուտների գանձում և բաշխել դրանք՝ հաշվի առնելով հասարակական ակնկալիքները, ինչն, իր հերթին, պահանջում է պետական ֆինանսական կառավարման հուսալի և թափանցիկ համակարգ, հարկերի գանձման կարողություն և հաշվետվողականության մեխանիզմներ³¹⁴: Երբ գանձվող հարկերից ստացված պետական հասույթն օգտագործվում է հասարակական ակնկալիքները բավարարող հանրային ծառայությունների մատուցման և մատակարարման գործառույթների իրագործման համար,

³¹²Migdal J., *State in Society: Studying How States and Societies Transform and Constitute One Another*, Cambridge University Press, Cambridge, 2001.

³¹³Sisk T., Wyeth V., *Rethinking Peace-Building and State-Building in War-Torn Countries: Conceptual Clarity, Policy Guidance, and Practical Implications*, Draft discussion note for the OECD DAC International Network on Conflict and Fragility, 2009.

³¹⁴Carnahan M., Lockhart C., *Peace-Building and Public Finance in Charles T. Call with Vanessa Wyeth (eds.), Building States to Build Peace*, Lynne Rienner Publishers, Boulder, 2008.

ապա իշխանության և հասարակության միջև հաստատվում են «փոխադարձության» հարաբերություններ³¹⁵: Այսպիսով, բնակչությունը պատրաստակամորեն աջակցում է պետությանը, իսկ պետությունն էլ շահագրգռված է կատարել իր պարտավորությունները, քանի որ կախված է պետական եկամուտների համար անհրաժեշտ հարկերի հահավաքումից, որոնք ապահովում են նրա գործունեությունը և գոյությունը: Հարկերի գանձման և ծառայությունների մատուցման միջև ուղիղ կապի բացակայության պայմաններում իշխանության լեգիտիմությունը կարող է էականորեն տուժել³¹⁶:

Այնուամենայնիվ, գործնականում կարելի է հանդիպել բավականին հակասական դեպքերի. օրինակ, Հարավային Սուդանը հարուստ է բնական ռեսուրսներով: «Մինչսեղեսիոնիստական» Սուդանի 6.8 միլիարդ տակաո նավթային պաշարների (3-րդ ամենամեծը Ենթասահարական Աֆրիկայում) երեք քառորդը գտնվում է Հարավային Սուդանում՝ ոսկու և այլ օգտակար հանածոների չօգտագործված պաշարների հետ միասին: Թեև հողի 90%-ը բերրի է, որի կեսը դասակարգվում է որպես բարձրակարգ գյուղատնտեսական հող, այնուամենայնիվ, օգտագործվում է միայն 1-2%-ը: Պետությունը նաև ունի հարուստ ջրային ռեսուրսներ և ձկնատեսակներ: Այնուամենայնիվ, տնտեսական և սոցիալական ծանր պայմանները դժվարացնում են նորաստեղծ պետության կառուցման և զարգացման համար ռեսուրսների մոբիլիզացումը: Բնակչության ճնշող մեծամասնությունը շարունակում է զբաղվել մանրածավալ գյուղատնտեսությամբ, քանի որ մուտքը շուկա անհասանելի է, իսկ արտադրությունը շատ փոքր է էական շահույթ ապահովելու համար: Հարավային Սուդանի բնակչության 50-60% զբաղվում է անասնապահությամբ, սակայն դեռևս ոչ առևտրային, այն է՝ եկամուտ հետապնդելու նպատակով. երկրամասում դեռևս գերակայում է խոշոր եղջերավոր անասունների բուծումը որպես սոցիալական կարգավիճակի և տնտեսական անվտանգության աղբյուր դիտարկելու ավանդական ըմբռնումը: Այսպիսով, Հարավային Սուդանի տնտեսության միայն չնչին մասն է ներառում այնպիսի գործունեություն, որը ներկայացված է ինտիտուցիոնալ մակարդակում գործող առևտրային շուկայի, մասնավորապես, ինչն ավելի կարևոր է, փողային շրջանառությամբ իրականացվող գործարքների միջոցով: Ուստի, պետությունն ունի առևտրային շուկաներից և գործարքներից հարկահավաքման սահմանափակ հնարավորություններ³¹⁷ :

Իրավունքի գերակայության հաստատում: Պետությունները ստեղծում են պայմաններ, որոնց առկայության դեպքում կարող են ամրապնդել անվտանգությունը, մեծացնել պետական ինստիտուտների գործունեության արդյունավետությունը և իրականացնել այլ բարեփոխումներ, ինչպես նաև պետության ողջ տարածքում՝ արդյունավետ վերահսկողություն: Այդ գործառնությունն արտացոլում է պետության՝ հակամարտությունը կանխելու և լուծելու, օրենքի անաչառ, հետևողական և հավասար կիրառման ապահովման և օրինախախտներին ու հանցագործներին պատասխանատվության ենթարկելու կարողությունը: Արդարադատության համակարգը պետություն-հասարակություն հարաբերությունների և պարտավորությունների բաշխման առանցքային բաղադրիչն է: Հասարակությունը պետք է կարողանա իրավունքի գերակայության շնորհիվ օգտվել

³¹⁵Moore M., Revenues, State Formation, and the Quality of Governance in Developing Countries, *International Political Science Review*, Vol. 25, No. 3, 2004, pp. 297-319.

³¹⁶OECD, Service Delivery in Fragile Situations: Key Concepts, Findings and Lessons, OECD, Paris, 2008.

³¹⁷ **Lacher W.**, South Sudan: International State-Building and its Limits, Stiftung Wissenschaft und Politik German Institute for and Security Affairs: 5-33.

արդարադատության մեխանիզմներից և տեղյակ լինել պետություն-հասարակություն հարաբերություններում իր՝ որպես քաղաքացի, իրավունքներին և պարտավորություններին³¹⁸:

Օրինակ, Կոսովոյում դատական անկախության խթանման բարեփոխումները կենտրոնացել են քաղաքական ազդեցությունից դատական համակարգի պաշտպանության ուղղված երեք միջոցառումների՝ պաշտոնների նշանակման գործընթացի անկախության, կարգապահական գործընթացի անկախության և դատավորների պաշտոնավարման ժամկետի ընթացքում երաշխիքների փաթեթի (security of tenure for judges) ապահովման վրա: Կոսովոյում արդարադատության համակարգի փլուզումը հանգեցրեց այնպիսի դեպքերի, որոնց հաղթահարմանը նորաստեղծ արդարադատության համակարգը դեռևս պատրաստ չէր: Նույնիսկ այն բանից հետո, երբ 1999թ. վերջին ժամանակավոր դատական համակարգը փոխարինվեց ավելի ինստիտուցիոնալացված համակարգով, վերոնշյալ իրավիճակը պահպանվեց՝ վտանգի տակ դնելով կալանավորվածների գործերն առանց անհարկի ձգձգման դատարանում քննելու իրավունքը: Դատական համակարգի արդյունավետությունը հետագայում ավելի սահմանափակվեց դատարանի շենքի ֆիզիկական ոչնչացման, ինչպես նաև Կոսովոյում պատրաստված իրավաբանների սակավության պատճառով: Արդարադատության համակարգից և իրավագիտության ֆակուլտետից ալբանացիների դուրսմղման տաս տարիները հանգեցրեցին նրան, որ վերջիններիս պատրաստվածությունը և գիտելիքներն (մասնավորապես, մարդու իրավունքների միջազգային կարգավորումների մասին) այլևս հնացած և բավարար չէին: Հարավսլավիայի ամբողջապես վերանայված օրենսդրական շրջանակի և վերջինիս՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշների հետ համապատասխանության բացակայության պայմաններում այդ դատավորները պետք է յուրաքանչյուր առանձին դեպքի համար որոշում կայացնեին, ինչն էլ, իր հերթին, հանգեցրեց կիրառվող օրենքների շուրջ խառնաշփոթի: UNMIK-ը ձեռնարկեց արդյունավետության և հմտությունների հետ կապված վերոհիշյալ խնդիրների լուծումը հետևյալ երեք միջոցառումների օգնությամբ՝ ա) դատական համակարգի միջազգայնացում; բ) դատական համակարգի վերակազմակերպում և գ) դատավորների, դատախազների և իրավապաշտպանների համար իրավագիտական դասընթացների կազմակերպում: Հատկանշական է, որ UNMIK-ը, արձագանքելով Կոսովոյի դատական մարմինների կողմից դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ապահովման անկարողությանը, ըստ էության, խախտել է Կոսովոյի ինքնավարությունը, մասնավորապես, արդարադատության համակարգի անաչառության և անկախության իրավունքը: Այնուամենայնիվ, գործնականում UNMIK-ը ոչ միշտ է հաջողության հասել իր նպատակների իրագործման հարցում. չնայած արդարադատության համակարգի լայնածավալ միջազգայնացմանը, դատական անկախությունը ոչ միշտ է պաշտպանված, իսկ դատական համակարգի արդյունավետությունը դատավորների սակավաթվության և գործերի աճող քանակի պատճառով շարունակում է մնալ դուրսաբերելի³¹⁹: Սակայն, ավելի հետաքրքրական է այն փաստը, որ Կոսովոյի արդարադատության համակարգը չկարողացավ շարունակել UNMIK-ի նախագծած ուղեծիրը՝ տարեցտարի գրանցելով ավելացող հետընթաց: Ներկայումս

³¹⁸Fritz V., Kaiser K., Levy B., նշվ. աշխ.:

³¹⁹ **Zaum D.**, *The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding*, Oxford University Press, Oxford, 2007, 144-153.

այն ամենախոցելի և ամենակոռումպացված ոլորտներից մեկն է, որտեղ դեռևս աշխատում են պատկան հմտություններ և գիտելիքներ չունեցող դատավորներ, որոնք չեն կարողանում քննել դատական գործերի աճող թվաքանակը:

Տնտեսական զարգացման խթանում: Քաղաքական կայունությունը և հասարակության անվտանգությունը հնարավոր է ապահովել տնտեսական աճի և սոցիալական զարգացման պայմաններում: Միաժամանակ, տնտեսական զարգացման բարենպաստ պայմաններ պետք է ստեղծեն պետական կառույցները, որոնք ապահովում են ներդրումների համար պատշաճ ենթակառուցվածքներ, սեփականության իրավունքի պաշտպանություն, ֆինանսական և տնտեսական գործարքների համար կանոնակարգիչ շրջանակներ³²⁰:

Տարբեր պետական գործառույթների իրականացման և ծառայությունների մատուցման արդյունավետությունը կախված է իշխանություն-հասարակություն համագործակցությունից և դրա արդյունքում ձևավորվող համատեղ հաստատուն փոխգործակցությունից: Երբ մեկ կամ ավելի գործառույթներ ձախողվում են, դա կարող է ունենալ բացասական ազդեցություն մյուս պետական գործառույթների վրա և նպաստել դյուրաբեկությանը: Պետական գործառույթների ապահովման ձևն ու ծավալը կազմում են քաղաքական գործընթացների անքակտելի մաս, որի միջոցով ներդաշնակեցվում են քաղաքացիների և քաղաքական գործիչների՝ քաղաքական գործընթացներն ապահովողների, շահերը:

Պետությունը, որն ի գործ է իրականացնել վերոնշյալ գործառույթները, կայացած պետության ձևավորման ճանապարհին է: Ուստի, դրանց արդյունավետ իրականացումը կարող է դիտարկվել որպես պետության կառուցման անհրաժեշտ նախապայման: Դրանք կարող են հավասարապես արտահայտվել մի համատեքստում որպես հասարակական շարժման կամ կուսակցության համար նախապայմաններ, իսկ մեկ այլ համատեքստում՝ որպես իշխանություն-հասարակություն համագործակցության զարգացման նպատակ: Ի լրումն, որպես պետության՝ իր հիմնական գործառույթներն արդյունավետ կատարելու կարողության և խնդիրներին արագ արձագանքելու ցուցիչ՝ այդ գործառույթները հանդիսանում են հասարակական, քաղաքական և տնտեսական ակնկալիքների և քաղաքական կարգավորումների և գործընթացների անբաժանելի մաս: Հարկ է նկատել, որ վերոհիշյալ առանցքային պետական գործառույթների (իրավապահ, դատական մարմինների գործունեություն, հանրային ֆինանսական կառավարում և այլն) ամրապնդումը միայն տեխնիկական տեսանկյունից բավարար չէ: Դրանց ընդունումը սոսկ որպես տեխնիկական առաջադրանքներ, հակասում է պետության կառուցման քաղաքական հիմքերին՝ անտեսելով սպառնալիքներն ու մարտահրավեր նետելով քաղաքական շահերին, որոնք, իրենց հերթին, հանգեցրել են առկա «ստատուս քվոյին»:

Առանցքային դերակատարներ: Պետական ներկայացվածության և հնարավորությունների սահմանափակ լինելու պատճառով ծագող բարդությունները, հանդիպում են այն ժամանակ, երբ առանցքային գործառույթների և ծառայությունների տրամադրումը կենտրոնանում է մի շարք ոչ պետական գործիչների ձեռքերում՝ ներառյալ միջազգային և տեղական ոչ կառավարական կազմակերպությունների, ժառանգաբար իշխանության ստացածների, իսկ որոշ դեպքերում հանցավոր կամ զինված խմբավորումների, որոնք

³²⁰Fritz V., Rocha-Menocal A., Understanding State-Building from a Political Economy Perspective: An Analytical and Conceptual Paper on Processes, Embedded Tensions and Lessons for International Engagement, Report prepared for DFID's Effective and Fragile States Teams, 2007.

մարտահրավեր են նետում և մրցում լեզիտիմ իշխանության հետ³²¹: Ապստամբ խմբավորումների և ոչ պետական զինյալ խմբերի գործունեությունը և նպատակները հարկ է դիտարկել պետական ռեգեսիայի, մարզինալացման և տարածաշրջանային ֆորմալ ու ոչ ֆորմալ ցանցերի և ուժային կառույցների համատեքստում: Միաժամանակ, դյուրաբեկ միավորներում ուսումնասիրությունը հարկ է իրականացնել մեկ այլ դիտանկյունից նույնպես. նման միավորներում պետական իրադրությունը հասկանալու համար վարչակարգի և տնտեսական էլիտայի դերի ուսումնասիրության հետ մեկտեղ ոչ պակաս կարևոր է դիտարկել նաև ոչ պետական, ոչ ֆորմալ դերակատարների ազդեցությունը: Օրինակ, շարժման դերակատարները (քաղաքական, հասարակական կամ գաղափարախոսական), որոնք չեն ցանկանում «աշխատել համակարգի մեջ, համակարգի համար» ավտոմատ կերպով ընկալվում են որպես սպառնալիք՝ անկախ այն փաստից, թե ինչպիսին են նույն այդ համակարգի որակները կամ արդյոք այդ դերակատարներն ունեն բռնի մտադրություններ թե ոչ: Սակայն, եթե համակարգը մշտապես անտեսել կամ շահագործել է նրանց, ապա արդյոք ողջամիտ է ենթադրել, որ վերջիններս կցանկանան աշխատել համակարգի շրջանակներում³²²:

Կենտրոն - ծայրամասեր հարաբերություններ: Վերոնշյալ գործառույթների արդյունավետությունը հարկ է գնահատել նաև պետության ողջ տարածքում նրանց բաշխվածության տեսակետից: Դյուրաբեկ կամ հետկոնֆլիկտային պետությունը հնարավոր է, որ ունենա խիստ սահմանափակ իշխանություն սեփական տարածքի մի շարք շրջաններում: Պետության կառուցումը պատմականորեն կենտրոնանում է պետության հարկադիր (այն է՝ անվտանգություն, օրենքի գերակայություն), վարչական և ծառայությունների մատուցման կառույցների կենտրոնացման վրա³²³:

Հատկանշական է, որ դյուրաբեկ պետություններում կառուցման գործընթացն ավելի տեսանելի է մայրաքաղաքներում, իսկ ծայրամասերի բնակչությունը, որպես կանոն, ունի սահմանափակ և ոչ բավարար փոխազդեցություն պետության հետ: Այդ տարածքներում համայնքային կառավարման համակարգերը պետական ինստիտուտներից ավելի ակտիվ գործունեություն են ծավալում: Նման համատեքստում «վերից վար» պետության ինքնակազմակերպման կառուցման ավանդական ձևաչափը բախվում է խնդրի. այն կարող է ապահովել կենտրոնական վերնախավի դիրքն առանց տարածվելու խոշոր գյուղական վայրերում, որոնք շարունակում են մնալ տեղական առաջնորդների իշխանության տակ: Դա էլ հենց ներիմաստ գործարքների այն տեսակն է, որն ամրապնդում է վերնախավի իշխանությունը, բայց հանդիսանում է աղքատության և անապահովության գործոն մեծամասնության համար³²⁴:

Հետկոնֆլիկտային փուլում միջազգային և տեղական վերահսկողության մեխանիզմների բացակայության կամ թերզարգացածության պայմաններում, պետական իշխանությունը կարող է ունենալ խիստ սահմանափակ իշխանություն/վերահսկողություն սեփական տարածքի մի շարք շրջաններում, ինչն, իր հերթին, առավել քան բեղմնավոր պայմաններ է ստեղծում անօրինական խմբավորումների և գործունեության համար:

³²¹Batley R., Mcloughlin C., Engagement with Non-State Service Providers in Fragile States: Reconciling State-Building and Service Delivery, *Development Policy Review*, 28 (2), 2010, pp. 131-154.

³²² **Boas M., Jennings K.**, Insecurity and Development: The Rhetoric of the 'Failed States', *The European Journal of Development Research*, Vol. 17, No. 3, 2005, 385-395.

³²³Migdal J., նշվ. աշխ.:

³²⁴Migdal J., նշվ. աշխ.:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վերահսկողության և կառավարման մեխանիզմների առկայությունը դեռևս կայունության երաշխիք չէ: Անգամ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի ջանքերը բավարար չէին, որպեսզի Գոտովոն, գտնվելով Եվրոպայի՝ ժողովրդավարության բնօրրանի, կենտրոնում, դադարեր լինել բնօրրան այնպիսի անօրիական գործունեության համար, ինչպիսիք են թմրանյութերի, զինամթերքի ապօրինի վաճառքը, թրաֆիքինգը:

Վերոնշյալի մեկ այլ վառ օրինակ կարելի է գտնել մեկ այլ մայրցամաքում՝ Աֆրիկայում: Գաղութային կարգերի փլուզումից հետո աֆրիկյան պետությունների մեծ մասը չբախվեց անվտանգության լուրջ (արտաքին) սպառնալիքների: Արդյունքում, կենտրոնից դուրս վերահսկողություն իրականացնելու և/կամ եկամուտները մոբիլիզացնելու ունակ արդյունավետ պետական ապարատ ստեղծելու պահանջն ավելի ցածր էր: Աշխարհագրական դիրքը խթանեց այդ իրավիճակի սրմանը. բնակչության ցածր խտությունը և դժվարանացանելի տեղանքը պետական լիդերների համար իրենց իշխանությունը կենտրոնից դուրս տարածելը չափազանց ծախսատար էին դարձնում: Այդպիսով, լեզվատիրությունն ամրապնդելու և տեղի բնակչության հետ փոխզիջման (ուղղակի հարկահավաքի, պետության տարբեր հատվածները միմյանց միացնող ենթակառուցվածքների կառուցում և այլն) հասնելու ջանքերը գրեթե ամբողջությամբ բացակայում էին³²⁵:

3.3.3. Հասարակական ակնկալիքները հետկոնֆլիկտային փուլում

Կայացած պետությունը պետք է ի գորու լինի բավարարել հասարակության ակնկալիքները³²⁶: Կախված այն բանից, թե ինչպես է հասարակությունն ընկալում պետության գործառնությունները՝ առանձնացվում են հասարակական ակնկալիքների երկու տեսակ՝ «նորմատիվային» և «իրական»³²⁷:

Նորմատիվային ակնկալիքները հիմնվում են նորմաստեղծ կառույցների համոզմունքների և ընկալումների վրա, թե ինչպիսին պետք է լինի պետությունը, ինչ ծառայություններ պետք է մատուցի և ինչպես պետք է վերաբերվի հասարակությանը, ինչն իր հերթին կախված է այն բանից, թե ինչպես են լեզվատիրության գործառնություններն ազդում պետություն-հասարակություն հարաբերությունների վրա: Նորմատիվային ակնկալիքները, նախևառաջ, հանդիսանում են քաղաքական մրցակցության, գաղափարախոսությունների և համոզմունքների համադրման արդյունք³²⁸:

Իրական ակնկալիքները վերաբերում են հասարակության սպասելիքներին, թե իրականում ինչ ծառայություններ պետք է մատուցի պետությունը³²⁹:

Բոլոր պետություններում առկա է իրական և նորմատիվային ակնկալիքների միջև տարբերություն, քանի որ քաղաքացիները հիասթափվում են և՛ կառավարությունից, և՛ պետության արագ արձագանքման կարողություններից: Սակայն դուրաբեկ պետություններում բնակչությունը, որպես կանոն, ա.) ծառայությունների մատուցման տեսանկյունից քիչ ակնկալիքներ ունի պետությունից (մասնավորապես կապված անկարողության հետ), բ.) դիտարկում է պետությունը որպես ճնշումների և անկայունության աղբյուր կամ որպես վերնախավի կողմից «սեփականաշնորհված» տիրույթ: Նորմատիվային

³²⁵ Fritz V., Rocha-Menocal A., Op. Cit.

³²⁶ OECD, Service Delivery....

³²⁷ OECD, Do No Harm: International Support to Statebuilding, OECD DAC, Paris, 2010.

³²⁸ Նույն տեղում.

³²⁹ Նույն տեղում.

և իրական ակնկալիքների միջև անհամապատասխանությունները կարող են նպաստել տարբեր շահագրգիռ անձանց կողմից ընկալումների և կառավարման համապատասխան օրինաչափությունների խեղաթուրմանը: Բայց, ըստ էության, ամենակարևորն այն է, թե արդյոք պետություն-հասարակություն հարաբերությունները լեգիտիմ են, թե ոչ³³⁰:

Պետություն-հասարակություն հարաբերությունների վերաբերյալ հասարակական ակնկալիքները նաև ուրվագծվում են քաղաքական ձայնի և «վերից վար» սոցիալական մոբիլիզացման միջոցով: Որքան էլ արդյունավետ իրականացվեն փոփոխությունները, քաղաքական ձայնը ձևավորվում է ոչ միայն քաղաքական կարգավորման, այլ նաև քաղաքացիական հասարակության մոբիլիզացիայի հնարավորության առկա մակարդակների միջոցով: Այնտեղ, որտեղ հասարակությունը մասնատված է հակամարտությունների և բռնությունների պատճառով, քաղաքական ձայնի և հասարակական պատասխանատվության դրսևորման հնարավորությունները հաճախ խարխլվում են: Հատուկ մտահոգության առիթ է խոցելի կամ մարզինալացված խմբերի մոբիլիզացիայի հնարավորությունների հարցը, որը հաճախ սահմանափակվում է նախակոնֆլիկտային շրջանով և, մասնավորապես, հակամարտության մասնակից հասարակություններում խարխլվածության սպառնալիքի (վտանգի) դեպքում: Դյուրաբեկ պետություններում առանցքային իրավունքների շարունակական անտեսումը, այդ թվում՝ երեխաների իրավունքների ոտնահարումը, պարբերական բնույթ կրող գենդերային անհավասարությունները և բնիկների ու փոքրամասնություն կազմող խոցելի խմբերի դուրսմղումը քաղաքական և հասարակական գործընթացներից, բացատրվում է ձայնի իրավունքի և իրավական մասնակցության ուղիների բացակայությամբ³³¹:

Եվ, վերջապես, ինքնորոշվող տարածքներում իրավիճակն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ պետությունից հասարակական ակնկալիքները խիստ տարբեր են և բևեռացած: Դա մասամբ անդրադառնում է հասարակական համախմբվածության խնդիրների վրա, որոնք հանդիպում են այն պետություններում, որոնք անհավասարապես են մատուցում հանրային ծառայությունները: Որտեղից էլ ծագած լինի խնդիրը, համընդհանուր քաղաքացիական գիտակցությունը բացակայում է և քաղաքական կարգավորումը չի հաջողել սոցիալական համագործակցության տարբեր նորմատիվ հայացքների շուրջ անգամ ժամանակավոր համաձայնության (modus vivendi) ձեռքբերումը: Նմանատիպ պայմաններում խիստ անհրաժեշտ է, որ բարեփոխումներ անցկացնելու և փոփոխություններ իրականացնելու հարցում արտաքին ներգործությունը և/կամ աջակցությունը չափավորվի, որպեսզի հնարավոր լինի զերծ մնալ ուռճացված հասարակական ակնկալիքներից, որը հաճախ է պատահում դյուրաբեկ պետությունների դեպքում³³²:

Առանցքային դերակատարներ: Առանցքային դերակատարները ներառում են այն քաղաքական վերնախավերը, որոնք ունեն տարբեր քաղաքական հայացքներ: Ժողովրդավարական վարչակարգերում դրանք կուսակցություններն են: Ինքնորոշված պետություններում, որպես կանոն, քաղաքական վերնախավերում կարելի է հանդիպել թե՛

³³⁰Նույն տեղում.

³³¹Migdal J., նույն տեղում:

³³²նույն տեղում:

օրինական և թե՛ ապօրինի տարրեր, այդ թվում՝ անհատներ կամ խմբեր, որոնք ներքաշված են հանցավոր խմբերի և կոռուպցիոն գործունեության մեջ³³³:

Նման պայմաններում կուսակցությունները ստանում են աջակցություն վերնախավային կառույցներից կամ տնտեսական շահեր հետապնդող անձանցից կամ կազմակերպություններից: Պետության կառուցման գործընթացին արագ և արդյունավետ աջակցության հարցում որպես կարևոր դերակատարներ կարող են հանդես գալ ոչ կառավարական կամ հասարակական կազմակերպությունները: Այնուամենայնիվ, ոչ ֆորմալ դերակատարների դերում կարող են հանդես գալ նաև հրամանատարներ կամ հանցավոր խմբեր, որոնք մասնակից են ապօրինի գործարքների³³⁴:

Մի շարք դյուրաբեկ, հատկապես, զինված հակամարտության փուլով անցած պետություններ, ի գորու չլինելով ինքնուրույն իրականացնել պետության վերահսկողությունը և կառավարումը, ստիպված են դիմել արտաքին օգնության (միջազգային կառավարման): Մույն համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի արտաքին առանցքային դերակատարների դերը: Այստեղ կարելի է առանձնացնել երեք հիմնական խնդիր: Առաջինը, արտաքին կառավարման գործընթացը կարգավորող հստակ կանոնների բացակայության պայմաններում միջազգային առաքելությունների պաշտոնատար անձանց իրենք իրենց քիչ թե շատ բացարձակ իշխանությամբ օժտելն է: Պետությունների գործողությունները զսպվում և կարգավորվում են մարդու իրավունքների՝ միջազգային փաստաթղթերով, որոնք վերջիններս վավերացրել են, մինչդեռ դժվար է ասել՝ արդյո՞ք միջազգային առաքելությունները իրավականորեն սահմանափակված են դրանցով, թե ոչ:

Երկրորդ, հստակ չէ, թե ում և ինչպես են նրանք հաշվետու: Օրինակ, ՄԱԿ միջազգային կառավարման առաքելությունների դեպքում վերջիններս հաշվետու են Գլխավոր քարտուղարին, ով, իր հերթին, 3-ամսյա կամ 6-ամսյա պարբերականությամբ հաշվետվություն է ներկայացնում Անվտանգության խորհրդին: Սակայն Խորհուրդը, ըստ էության, չունի մեխանիզմներ, իսկ խորհրդի անդամները՝ ցանկություն մանրակրկիտ ուսումնասիրելու ժամանակավոր կառավարման առաքելության ընթացքը: Ինչ վերաբերում է «կառավարվողներին», ապա նրանք ունեն «լսելի լինելու» սահմանափակ մեխանիզմներ: Թերևս, միակ մեխանիզմները, որոնք նրանք կարող են օգտագործել (եթե, իհարկե, կարողանան), ազդեցիկ անդամ պետությունների լրատվամիջոցների և հասարակության ուշադրությունն իրենց վրա հրավիրելն է:

Երրորդ, և, թերևս, ամենախրթին հարցն առաքելություն իրականացնողների կողմից «կառավարվող» բնակչության մասին պատկան գիտելիքների և պատկերացումների հաճախ մակերեսային լինելն է (լավագույն դեպքում): Նրանք, ըստ էության, աշխատում են արտակարգ իրավիճակներում, որտեղ առաջնահերթությունը հասարակության անվտանգության և կարգուկանոնի ապահովումն է: Իրավիճակի արտակարգ բնույթն ավելի է ընդծվում այն այն պատճառով, որ նույն հասարակությունը հաճախ մասնատված է լինում միմյանց հանդեպ թշնամաբար տրամադրված խմբերի, իսկ իրավիճակը հաճախ ավելի է բարդացնում ասելություն քարոզող մեդիան («hate media»): Որպես վերոնշյալի հետևանք,

³³³Sisk T., Wyeth V., Rethinking Peace-Building and State-Building in War-Torn Countries: Conceptual Clarity, Policy Guidance, and Practical Implications, Draft discussion note for the OECD DAC International Network on Conflict and Fragility, 2009.

³³⁴OECD, Armed Violence Reduction: Enabling Development, OECD DAC, Paris, 2009.

առաքելություն իրականացնողներն իրենց իրավասու, հաճախ անգամ պարտավորված են զգում գործել ավտորիտար կամ բռնապետական ոճով և կարող են համարել, որ տեղի բնակչության ներկայացուցիչներին շուտափույթ իշխանությամբ օժտելը կամ կառավարման գործընթացին մասնակցության թույլտվությունը կարող է հանգեցնել իրական աղետի, թեև իրենց առաքելությունը, անշուշտ, ավարտվելու է տեղի բնակչության ներկայացուցիչներին իշխանության փոխանցմամբ, սակայն միայն պատկան աշխատանքների իրականացումից և ուրվագծված խնդիրների լուծումից հետո³³⁵։ Նման իրադրության համատեքստում ավելի է կարևորվում միջազգային ժամանակավոր կառավարիչների կողմից այդ պետության պատմական և կառուցվածքային ժառանգության, առկա քաղաքական և հասարակական հարաբերությունների, շահերի և խաղի սոցիալ-քաղաքական կանոնների մասին իրազեկվածությունը։ Եթե այդ գիտելիքները և պատկերացումները բացակայում են, ապա դա կարող է հանգեցնել մի շարք խնդիրների առաջացմանը, ինչպիսիք են տեղի քաղաքական վերնախավերի պատասխանատվության զգացումի և կարողությունների զարգացման խաթարմանը, արդեն մշտական բնույթ ստացած մեղադրանքների տեղատարափի (օրինակ, Բոսնիա և Հերցեգովինայում և Կոսովոյում), ինչպես նաև հասարակական համաձայնության հասնելու տեղական դերակատարների կարողությունների թուլացմանը³³⁶։ Մեկ այլ օրինակ է Աֆղանստանը, որտեղ արտաքին դերակատարների (մասնավորապես, ԱՄՆ և ԵՄ) կողմից աշխատավարձերի, ռազմական մարզումների, վերապատրաստման և սարքավորումների համար հատկացվող գումարներից գրեթե բացարձակ կախվածության պայմաններում հարց է առաջանում, թե ում ձեռքերում է աֆղանական զինված ուժերի հրամանատարությունը և ում շահերին է այն ծառայում։ Այդ իրավիճակում զինված ուժերը կարող են հանդես գալ որպես Աֆղանստանի պետության կառուցման գործընթացի մեխանիզմ միայն այն դեպքում, եթե աֆղանական շահերը համընկնում են արտաքին դերատակարանների շահերի հետ, սակայն, որպես ինքնավարության մեխանիզմ հանդես գալ չեն կարող³³⁷։

Կենտրոն-ծայրամասեր հարաբերություններ։ Թերի ժողովրդավարական վարչակարգերում պետություն-հասարակություն հարաբերությունների վերաբերյալ սոցիալական ակնկալիքները խիստ տարբեր են և հակասական։ Ամենայն հավանականությամբ հետագայում դա կարող է դրսևորվել կենտրոնի և ծայրամասերի միջև քաղաքական և աշխարհագրական մասնատվածությամբ և հասարակական և քաղաքական դերակատարների մենաշնորհների ձևավորմամբ³³⁸։ Պետության կառուցման մարտահրավերը պետություն-հասարակություն հարաբերությունների զանազան մակարդակների և հանրային իշխանությունից տարբեր ակնկալիքների ու դրանց իրագործման փորձերի համապատասխանության ապահովման արդյունավետությունն է³³⁹։

³³⁵ Mortimer E., International Administration of War-Torn Societies, *Global Governance*, Vol. 1, No. 1, 2004, pp. 7-14.

³³⁶ Monatanaro L., The Kosovo Statebuilding Conundrum: Addressing Fragility in a Contested State, Fundación para las Relaciones Internacionales y el Diálogo Exterior (FRIDE), 2009.

³³⁷ Sukhre A., Op. cit.

³³⁸ Rocha-Menocal A., Fritz V., Hybrid Regimes and the Challenges of Deepening and Sustaining Democracy in Developing Countries, *South African Journal of International Affairs*, Vol. 15, No. 1, 2008, pp. 29-40.

³³⁹ Migdal J., նշվ. աշխ.:

3.3.4. Հետկոնֆլիկտային պետության լեգիտիմություն

Լեգիտիմությունն իշխանություն-հասարակություն հարաբերություններում առանցքային նշանակություն ունի: Լեգիտիմությունը հիմք է ապահովում իշխանության համար, սակայն ոչ թե հարկադիր կերպով, այլ հասարակության համաձայնությամբ: Լեգիտիմության բացակայությունը, անշուշտ, նպաստում է պետության դյուրաբեկությանը, քանի որ խաթարում է կապն իշխանությունների և հասարակության միջև ու հարցականի տակ է դնում քաղաքական էլիտայի իշխանության ապագան: Լեգիտիմությունը համապատասխանում է իրավունքի և արդարության մասին մարդկանց գաղափարներին, դրանց հիմքում ընկած արժեքներին ու նորմերին, ինչպես նաև ընտրազանգվածի - էլիտայի - լիդերության ինստիտուտների միջև առկա այն օրինական փոխհարաբերություններին, որոնց վրա ձևավորվում է քաղաքական իշխանությունը: Իսկ վերջինը լեգիտիմ է, եթե ա) ժողովրդից է բխում և իրագործվում է մեծամասնության կամքին համապատասխան (պետական իշխանություն ունեցողն ուղղակի կամ անուղղակի ընտրված է ժողովրդի կողմից որոշակի ժամանակով և նրա կողմից էլ կարող է վերահսկվել), բ) պետական իշխանությունն իրականացվում է սահմանադրական սկզբունքներին համապատասխան³⁴⁰:

Պետության կառուցման տեսակետից բացառիկ նշանակություն ունի լեգիտիմության աղբյուրների և մակարդակների փոխազդեցությունը: Գոյություն ունեն լեգիտիմության հինգ հիմնական աղբյուրներ, որոնք տարբեր դրսևորում են ունենում քաղաքական, սոցիալական և այլ համատեքստերում՝

- Մուտքային (գործընթացային) լեգիտիմությունը վերաբերում է սահմանված ընթացակարգի պահպանմանը, որի շրջանակներում իշխանությունն ընդունում է պարտադիր ուժ ունեցող որոշումներ և ապահովում քաղաքացիների մասնակցությունը: Ժողովրդավարական երկրներում այդ ընթացակարգն ամրագրված է Սահմանադրության մեջ և ենթադրում է մրցունակ ընտրություններ, օրինապահ կառավարում և խախտումների դեպքում՝ քրեական պատասխանատվության մեխանիզմ³⁴¹: Միաժամանակ, գործընթացային լեգիտիմությունը հիմնված է նաև հասարակության մեջ տիրապետող արժեքների, սովորության իրավունքի և փորձի վրա³⁴²:
- Ելքային (կատարողական) լեգիտիմությունը հիմնված է այն ընկալումների վրա, թե ինչպիսին պետք է լինի պետության ծավալած գործունեության արդյունավետությունը և մատուցվող ծառայությունների որակը³⁴³: Անվտանգությունը, հիմնական հասարակական ծառայությունների և տնտեսական զարգացումն ու զբաղվածությունը խթանող և ապահովող մեխանիզմներ ձևավորելու ունակությունը հիմնարար նշանակություն ունեն³⁴⁴:
- Ընթացիկ լեգիտիմությունը ենթադրում է քաղաքականության մշակման այն գործընթացները, որոնք միջոցով որոշումները մուքայինից (գործընթացայինից) փոխակերպվում են էլքայինի (կատարողականի): Այն ներառում է ոչ միայն արդյունավետ

³⁴⁰OECD, The Legitimacy of the State in Fragile Situation, OECD DAC, Paris, 2010.

³⁴¹ Scharpf F., Governing in Europe: Effective and Democratic?, Oxford University Press, Oxford, 1999.

³⁴² OECD, The Legitimacy of the State in Fragile Situations, OECD DAC, Paris, 2010.

³⁴³ Schmidt V., Democracy and Legitimacy in the European Union Revisited: Input, Output and “Throughput”, *Political Studies*, Volume 61, Issue 1, 2013, pp. 2–22.

³⁴⁴ OECD, The Legitimacy...

և թափանցիկ որոշումների կայացման գործընթացը, այլև միջնորդության գործընթացները, որոնց միջոցով հասարակությունը ներակայացնում է իր շահերը, որոնք կարող են նույնիսկ հակադրվել ընտրողների մեծամասնության կարծիքին: Արդյունքում, ընթացիկ լեգիտիմությունը հասարակության հետ շահերի վրա հիմնված միջնորդության և խորհրդատվության միջոցով ներկայացնում է փոքրամասնությունների շահերը՝ անգամ չունենալով ձայների մեծամասնություն³⁴⁵:

- Ընդունված համոզմունքները, թե ինչպիսին պետք է լինի հանրային իշխանությունը՝ ձևավորված ըստ ավանդույթի, պատմական գործընթացների և սոցիալականացման կառույցների (այդ թվում՝ ազգային պատկանելություն, մշակույթ, կրոն և այլն)³⁴⁶: Լիդերի խարիզմայի վրա հիմնված լեգիտիմությունը նույնպես կարելի է ավելացնել այն համոզմունքների թվին, որոնք ձևավորվում են լեգիտիմությունը³⁴⁷:
- Միջազգային լեգիտիմությունը ենթադրում է պետության ինքնիշխանության և ընտրված իշխանության լեգիտիմության ճանաչում արտաքին դերակատարների կողմից³⁴⁸:

Կարելի է առանձնացնել լեգիտիմության երեք մակարդակ՝ պետության, վարչակազմի և տարածաշրջանի ղեկավարության: Առաջինն ուղղակիորեն կապված է պետության միջազգային ճանաչման հետ և դրա բացակայությունը գրեթե ինքնաբերաբար հանգեցնում է երկրորդի և երրորդի չճանաչմանը: Դա չի բխում միջազգային իրավունքից, սակայն միջազգային կազմակերպությունների ու ճանաչված պետությունների պրակտիկայում գրեթե անվերապահորեն կիրառվող մոտեցում է³⁴⁹:

Պետության կառուցման և քաղաքական կարգավորման զարգացման համար հիմնարար նշանակություն ունի լեգիտիմության և պետության հնարավորությունների միջև կապի ընկալումը: Լեգիտիմության մասին հասարակության պատկերացումները առանցքային նշանակություն ունեն իշխանության հետ համագործակցելու, ինչպես նաև «իշխելու իրավունքն» ընդունելու պատրաստակամության տեսակետից: Լեգիտիմությունն, իր հերթին, ավելացնում է պետության հնարավորությունները և կարողությունները, քանի որ պետությունը կարող է ապավինել հիմնականում ոչ հարկադրական իշխանությանը. քաղաքացիները կարող են շահագրգռվել, կազմակերպվել և ներգրավվել կոլեկտիվ կամ անհատական գործունեությունում, ինչը քաղաքացիների աջակցությունն է պետությանը: Քաղաքացիների աջակցությունը թույլ է տալիս պետությանն ավելի արդյունավետ գնահատել իր շահերը և օգտագործել հնարավորությունները, ինչպես նաև մշակել և վարել այնպիսի քաղաքականություն, որի իրագործումը կնպաստի քաղաքացիների կարիքները հոգալուն, նպատակների իրականացման ու շահերի պաշտպանությանը: Այդ կերպ պետության հնարավորությունները և լեգիտիմությունը փոխկապակցված են և կարող են ձևավորել ինչպես արդյունավետ, այնպես էլ (դյուրաբեկության վտանգի տակ գտնվող

³⁴⁵ Schmidt V., նշվ. աշխ.:

³⁴⁶ OECD, The Legitimacy...

³⁴⁷ Weber M., "The three types of legitimate rule". *Berkeley Publications in Society and Institutions*, 4 (1), 1958, pp. 1-11.

³⁴⁸ OECD, The Legitimacy...

³⁴⁹Торосян Т., նշվ. աշխ.:

պետություններում) ոչ արդյունավետ ինստիտուտներ (որտեղ հնարավորությունների պակասը խարխուլում է լեգիտիմությունը և հակառակը)³⁵⁰:

Լեգիտիմությունն առանցքային դերակատարություն ունի պետության կառուցման յուրաքանչյուր փուլում: Այն ապահովում է զուտ հարկադիր պետական կառավարումից անցում դեպի հասարակության համար այնպիսի բարձրագույն (լեգիտիմ) իշխանության, որն իրավասու կլինի հասարակության համար ընդունել և կիրառել պարտադիր կատարման ենթակա արդյունավետ որոշումներ: Պետության կառուցման գործընթացի ծավալմանը զուգընթաց լեգիտիմության հայեցակարգն էլ ավելի առանցքային դերակատարություն է ստանձնում պետություն-հասարակություն հարաբերությունների կառուցման գործընթացում, որոնք, իրենց հերթին, կարող են թե՛ դրականորեն, թե՛ բացասականորեն ազդել հակամարտության կարգավորման բանակցությունների ընթացքի, ռեսուրսների և լայն սպառման ապրանքների արտադրության և բաշխման վրա³⁵¹: Այսպիսով, պետության կառուցումը ենթադրում է լեգիտիմության տարբեր աղբյուրների և պետություն-հասարակություն հարաբերությունների ու հանրային իշխանության մասին ընդունված պատկերացումների միջև փոխներգործության և հավասարակշռության հաստատման բարդ համալիր գործընթաց:

Հետկոնֆլիկտային լեգիտիմության հետ կապված խնդիրների ուսումնասիրության համար հետաքրքրական դեպք է Կոսովոն: Կոսովոն շարունակում է մնալ ցածր եկամուտ ունեցող հետկոնֆլիկտային պետություն, որին հատուկ են թույլ ինստիտուցիոնալ ներուժը և լեգիտիմությունը, պետության ողջ տարածքի վերահսկողության և բռնության մենաշնորհի բացակայությունը, ինչպես նաև բնակիչներին հիմնական բարիքների և ծառայությունների մատուցման անկարողությունը: Ժամանակավոր միջազգային կառավարման առաքելության բարձրագույն մարմինը³⁵² համարում է, որ պետության անգործունակությունը պայմանավորված է վերջինիս «երիտասարդ և անփորձ» լինելու պատճառով: Նրանք շարունակում են աշխատել այն հիպոթեզի վրա, որ Կոսովոյի դյուրաբեկությունը տրանսֆորմացիոն գործընթացի մաս է, և պետությունը աստիճանաբար կբարելավվի մինչև Վեստֆալյան մոդելը: Սակայն ժամանակավոր միջազգային կառավարման և մարդասիրական միջամտության առաքելությունները, ըստ էության, ձախողել են իշխանության լեգիտիմության և ինստիտուցիոնալ ներուժի ձևավորման գործընթացը: Կարելի է արձանագրել, որ արտաքին դերակատարները ձախողվել են հակամարտությունների և պետության դյուրաբեկության հիմքում ընկած խնդիրների լուծման հարցում և անգամ խաթարել են պետության կառուցման շրջանակներում մի շարք կարևոր գործընթացների զարգացումը: Կոսովոյում նորմատիվային բազմակարծությունը՝ իր հասարակական ու քաղաքական կազմակերպությունների և լեգիտիմության կոնֆլիկտային մոդելներով, հանգեցրել է լեզալի և լեգիտիմի միջև տարակարծության լայնատարած ընկալմանը:

³⁵⁰Papagianni K., Participation and State Legitimation in Charles T. Call with Vanessa Wyeth (eds.), Building States to Build Peace, Lynne Rienner Publishers, Boulder, 2008.

³⁵¹Whaites A., States in Development: Understanding State-Building, Working Paper, DFID, London, 2008.

³⁵² UNMIK-ի ղեկավար կազմը՝ ՄՄԿ Գլխավոր քարտուղարի Հատուկ ներկայացուցիչ Կոսովոյում և Երեք հատուկ փոխներկայացուցիչներ; տես՝ UNMIK Leadership, <http://www.un.org/en/peacekeeping/missions/unmik/leadership.shtml>, (26.03.2017); Special Representative of the Secretary-General and Head of the UN Interim Administration Mission in Kosovo, <http://www.unmikonline.org/Pages/Leader.aspx>, (26.03.2017).

Գոյություն չունի հասարակությունն ուրվագծող հասարակական և մշակութային համընդգրկուն շրջանակ ապահովող «խաղի կանոնների» համընդհանուր ընկալում³⁵³:

Առանցքային դերակատարներ: Այն պետություններում, որտեղ դեռևս լիարժեքորեն կայացած չեն ֆորմալ կառույցները, ոչ ֆորմալ դերակատարները, ինչպես օրինակ, բանակի հրամանատարները, ապստամբները և հանցավոր օղակները, կարող են օգտվել պետության հնարավորությունների ու լեգիտիմության բացակայությունից և առաջարկել կառավարման համակարգի այլընտրանքային տարբերակ: Այդ իսկ պատճառով, լեգիտիմության հայեցակարգը բավականին խրթին է դյուրաբեկ միավորներում, քանի որ լեգիտիմության տարբեր աղբյուրներ են համագործակցում, մրցակցում և հակամարտում՝ միաժամանակ փոխազդելով իշխանության և շահերի այլ աղբյուրների հետ: Դա ավելի է բարդացնում արտաքին դերակատարների արդյունավետ միջամտությունը պետության կառուցման գործընթացին³⁵⁴:

Իսկ եթե վերոնշյալ խնդիրներին ավելացնենք նաև այն փաստը, որ շատ հաճախ հետկոնֆլիկտային միավորներում «վերից-վար» (վայրընթաց) մոդելները ձախողվում են, եթե հակասում են լեգիտիմ պետական իշխանության բնույթի վերաբերյալ տեղական ընկալումներին: Այդ իրավիճակը հանգեցնում է լուրջ հակադրությունների: Օրինակ, արտաքին դերակատարները պատրաստակամություն են հայտնում միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքների նորմերին և իրավական պատասխանատվության հայեցակարգին համապատասխան ցուցաբերել աջակցություն պետության ինքնակազմակերպման գործընթացին, սակայն վերջիններս կարող են չհամընկնել իշխանության լավագույն ձևով իրացման պատկերացումների և ավանդույթների հետ³⁵⁵:

Կենտրոն-ճայրամասեր հարաբերությունները: Հատկանշական է նաև, որ լեգիտիմության տարբեր աղբյուրներ փոխգործակցում և երբեմն անգամ մրցակցում են: Մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է կրոնին, մշակույթին և ավանդույթներին, նորմատիվային համոզմունքները կարող են զգալիորեն տարբերվել պետության զանազան մարզերում: Իսկ այնտեղ, որտեղ լեգիտիմության աղբյուրները բախվում են, քաղաքացիների (իրավունքների ու պարտականությունների շրջանակներում) և պետության միջև լայնամասշտաբ համաձայնության հնարավորությունները վերանում են:

Ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների հետկոնֆլիկտային կառուցումը պետք է հիմնված լինի քաղաքական, տնտեսական և սոցիալական ինստիտուտների արդյունավետ գործունեության վրա: Պետք է հաշվի առնվեն նախակոնֆլիկտային ժառանգությունը, հակամարտության ընթացքի առանձնահատկությունները և նոր գործոնները, ինչպիսիք են՝ հետկոնֆլիկտային շրջանում նոր ձևավորվող կառավարության առաջ ծագող խնդիրները և մարտահրավերները: Հետկոնֆլիկտային համատեքստում վերոնշյալ գործոնները նշանակում են խաղաղ համաձայնեցում և անցումային շրջանում ազդում են պետության կառուցման դինամիկայի վրա:

Միաժամանակ ծավալվող փոխկապակցված և՛ ներքին, և՛ արտաքին անցումային գործընթացները կարող են բարդացնել հետկոնֆլիկտային կարգավորումները:

³⁵³ Monatanaro L., Op. cit.

³⁵⁴ Paris R., Sisk T., The Contradictions of State Building: Confronting the Dilemmas of Post-War Peace Operations, Routledge, London, 2008.

³⁵⁵ OECD, The Legitimacy....

Խաղաղության ամրապնդումը, անվտանգության ապահովումը և պետության վերակառուցումը կախված են այդ անցումային գործընթացների ճիշտ կառավարումից, այդ թվում՝ քաղաքականության և հասարակության վերակազմավորումը, անվտանգության և իրավունքի գերակայության ամրապնդումը և կենսամակարդակի բարձրացումը:

Նոր հազարամյակի մեկնարկին պետության կառուցման գործընթացին արդի գլոբալ զարգացումների համատեքստում էլ ավելի մեծ ուշադրություն է հատկացվում, ինչն, իր հերթին, կարող է ն'խթանել, և՛ խաթարել պետության կառուցման գործընթացը: Բարդությունները, որոնք ծագում են պետական ներկայացվածության և հնարավորությունների սահմանափակ լինելու պատճառով չճանաչված պետությունների տարածքում, հանդիպում են այն ժամանակ, երբ քաղաքական կարգավորումները և առանցքային գործառույթների և ծառայությունների տրամադրումը կենտրոնանում են մի շարք ոչ ֆորմալ կառույցների ներկայացուցիչների ձեռքերում՝ ներառյալ միջազգային և տեղական ոչ կառավարական կազմակերպությունների, դաշտային հրամանատարների, ժառանգաբար իշխանության անցածների, իսկ որոշ դեպքերում հանցավոր կամ զինված խմբավորումների, որոնք մարտահրավեր են նետում և մրցում լեգիտիմ իշխանության հետ:

- Միևնույն ժամանակ, ժամանակակից աշխարհի նոր պայմանները և մարտահրավերներն իրենց խոր ազդեցությունն են ունեցել հակամարտությունների փուլով անցած և դեռևս չճանաչված պետությունների վրա: Հատկանշական է, որ վերոնշյալ ազդեցությունը մեծամասամբ բացասական է՝ ներառելով կախվածությունն արտաքին օգնությունից, ապօրինի ապրանքների արտահանումից ստացված եկամուտները, երկրից կապիտալի դուրսբերումը հեշտացրած միջազգային դրամաշրջանառության ժամանակակից կառուցվածքը, ինչպես նաև զինամթերքի արդյունաբերության զարգացող համաշխարհային շուկան և դրա հասանելիությունը:
- Քաղաքական կարգավորումների շրջանակներում արձանագրվում են օպերատիվ լուծումներ պահանջող այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են՝ բարիքների ու ռեսուրսների և դրանց վերահսկողության անհավասար բաշխումը, մի շարք խմբերի արտոնությունները՝ այլոց նկատմամբ, հասարակության կարիքների բավարարումն ապահովող վերահսկողության պատշաճ մեխանիզմների և հնարավորությունների դեռևս բացակայությունը կամ թերզարգացածությունը և քաղաքական ներգրավվածության ցածր մակարդակը և որակը: Վերջինս պայմանավորված է ֆորմալ (օրենքներ) և ոչ ֆորմալ նորմերի ու փորձի համադրմամբ, իսկ հակամարտության փուլով անցած և դեռևս չճանաչված պետությունների դեպքում առկա ինքնիշխան պետականության կառուցման փորձի պակասն էականորեն դժվարացնում է այդ գործընթացը: Խնդիրը բարդացնում է նաև այն փաստը, որ զինված հակամարտություններից հետո ձևավորված պետությունների դեպքում իշխանությունը կենտրոնացած է զինված խմբավորումները վերահսկող դերակատարների ձեռքում, քանի դեռ չեն ընդունվել Սահմանադրությունը և համապատասխան օրենքները, և դրանց հիման վրա կազմակերպվել պատշաճ ընտրություններ: Վերոնշյալն ունենում է նման ընթացք, եթե գործընթացն ունի ճիշտ զարգացում, սակայն այդ խմբավորումների ղեկավարները, որպես կանոն, չեն ցանկանում զիջել իշխանությունը:
- Պետության՝ հիմնական գործառույթներն արդյունավետ կատարելու և հիմնական ծառայությունները տրամադրելու շրջանակներում հետկոնֆլիկտային փուլում առանձնահատուկ ուշադրության է արժանի անվտանգության ապահովման գործառույթը:

հակամարտության փուլով անցած և դեռևս չճանաչված պետությունների համար անվտանգության ապահովումը պարզապես պետության հիմնական գործառույթ չէ, այլ ամենօրյա կենսական անհրաժեշտություն: Մակայն, ծավալուն և ինտենսիվ սպառազինումը ծախսատար է և բախվում է սպառազինման տեխնոլոգիաների անընդմեջ նորացման խնդրի հետ, ինչն էլ ավելի խնդրահարույց է սահմանափակ միջազգային հարաբերությունների (այդ թվում նաև տնտեսական համագործակցության) պայմաններում: Միևնույն ժամանակ, տնտեսական աջակցություն չստացող ռազմական ներուժը կործանարար կարող է լինել տնտեսական աճի համար: Ռազմական ծախսերին ավելանում են նաև ենթակառուցվածքների վերականգմանն ուղղված ոչ պակաս մեծածավալ ծախսերը, և այդ երկուսի համադրումը, բնավ, չի խթանում տնտեսական զարգացմանը:

- Պետության հիմնական գործառույթների կատարման և հիմնական ծառայությունների տրամադրման շրջանակներում հետկոնֆլիկտային փուլում կարելի է հանդիպել ոչ միայն դրանք պատշաճ կերպով իրականացնելու փորձի և գիտելիքների պակասի, այլ նաև անպատրաստականության արտաքին ֆինանսական աջակցությունը և/կամ եկամուտի այլընտրանքային աղբյուրները (մասնավորապես, ապօրինի գործունեությունից) «ազատում» են վերնախավին գանձվող հարկերից ստացված պետական հասույթի հիմնական հանրային ծառայությունների կատարման համար օգտագործման պատասխանատվությունից: Վերոնշյալը, զարմանալի չէ, քանի որ հետկոնֆլիկտային փուլում միջազգային և տեղական վերահսկողության մեխանիզմների բացակայության կամ թերզարգացածության պայմաններում այս պետությունները կարող են բարենպաստ միջավայր դառնալ անօրինական խմբավորումների և գործունեության համար:
- Հետկոնֆլիկտային միջավայրում հասարակության թե՛ նորմատիվային, թե՛ իրական ակնկալիքները բավական սահմանափակ են. հասարակությունը դիտարկում է պետությունը որպես «անկարողունակ» և, ինչն ավելի հետաքրքրական է, որպես ճնշումների և անկայունության աղբյուր կամ վերնախավի կողմից «սեփականաշնորհված» տիրույթ: Պարբերական բնույթ կրող մարդու իրավունքների խախտումները և խոցելի խմբերի (հատկապես էթնիկ փոքրամասնությունների - վառ օրինակ է Կոսովոն) հանդեպ ճնշումները չեն նպաստում իրավիճակի բարելավմանը:
- Հետկոնֆլիկտային փուլում պետության կառուցման գործընթացն ավելի տեսանելի է մայրաքաղաքներում, իսկ ծայրամասերի բնակչությունը, որպես կանոն, ունի սահմանափակ և ոչ բավարար փոխազդեցություն կենտրոնական իշխանության հետ: Խնդիրն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ հաճախ վերնախավն ունի խիստ սահմանափակ իշխանություն սեփական տարածքի մի շարք շրջաններում, և արդյունքում այդ տարածքներում ոչ պաշտոնական կամ համայնքային կառավարման համակարգերը պետական ինստիտուտներից ավելի ակտիվ գործունեություն են ծավալում: Մակայն հատկանշական է, որ, թեև խարխլվում է «վերից վար» պետության կառուցման ավանդական կաղապարը, այդուհանդերձ վերնախավը կարողանում է պահպանել իշխանությունն՝ առանց տարածվելու խոշոր գյուղական վայրերում, որոնք, շարունակում են մնալ տեղական առաջնորդների իշխանության տակ, սակայն նման իրավիճակն ունենում է իր բացասական ազդեցությունը հասարակության վրա և դառնում է աղքատության և անապահովության գործոն բնակչության մեծամասնության համար:

- Դյուրաբեկությունը, հակամարտությունը և բռնությունը միևնույն երևույթը չեն, սակայն նրանք կարող են գոյություն ունենալ միաժամանակ՝ հանդիսանալով մեկմեկու թե՛ առաջացման պատճառ, թե՛ արդյունք: Ուստի, պետության կառուցման գործընթացը հաճախ զարգանում է խաղաղության ապահովման փոխգործակցության հարաբերությունների հետ զուգահեռ, որտեղ երկու գործընթացներին էլ նպաստում են ինչպես արտաքին, այնպես ներքին էլ մի շարք դերակատարները, այդ թվում՝ զարգացող հասարակությունը (մասնավորապես քաղաքացիական հասարակությունը):
- Հետկոնֆլիկտային միջավայրում պետության կառուցման առանձնահատկությունների ուսումնասիրությունն ունի հետագա գործնական վերլուծության կարիք: Հատկանշական է, որ գոյություն ունեն հակամարտության փուլով անցած և դեռևս չճանաչված այնպիսի պետություններ, որոնք կարողացել են հաջողությամբ հաղթահարել վերոշարադրյալ մարտահրավերները (օրինակ, Լեռնային Ղարաբաղը), մինչդեռ գոյություն ունեն այնպիսի պետություններ, որոնք անգամ միջազգային վերահսկողության մեխանիզմների օգնությամբ չեն կարողացել հաղթահարել մարտահրավերները և միջազգային առաքելության ավարտից հետո չեն կարողացել սեփական ուժերով շարունակել պետության կառուցման և կայացման գործընթացը՝ ուղղորդելով պետությունը դեպի ապակայունացում, դյուրաբեկություն և/կամ ձախողում (օրինակ, Կոսովո):

ԳԼՈՒԽ 4.

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

4.1. Չճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունները

Չճանաչված պետությունների կայացածության գնահատման խնդիրների վերհանման և հնարավորությունների բացահայտման համար անհրաժեշտ է՝

1. ուսումնասիրել չճանաչված պետություններին անդրադարձող միակ մոդելի՝ «Ազատության վարկանիշն աշխարհում» զեկույցի, չճանաչված պետությունների գնահատման արդյունքները,
2. վերհանել չճանաչված պետությունների կայացածության գնահատման դժվարությունները,
3. աշխատանքում ներկայացված պետության կառուցումը և կայացումը պայմանավորող գործոնների համագումարի հիման վրա մշակել թե՛ ճանաչված, թե՛ չճանաչված պետությունների առանձնահատկությունները հաշվի առնող մոդել,
4. մշակված մոդելը փորձարկել Արցախի Հանրապետության կայացածության գնահատման շրջանակներում:

4.1.1. Չճանաչված պետությունների վարկանիշային ցուցանիշն ըստ «Ազատության վարկանիշն աշխարհում» զեկույցի

Ինչպես արդեն նշվել է, ցուցիչներից միայն մեկը՝ «Ֆրիդըմ հաուս»-ի կողմից տարեկան ներկայացվող «Ազատության վարկանիշն աշխարհում» զեկույցն է անդրադառնում չճանաչված պետություններին (համաձայն մոդելի՝ հարակից և վիճելի տարածքներ): 2016թ. զեկույցում³⁵⁶ առանձնացված են 2 «հարակից» (related) և 13 «վիճելի» (disputed) տարածքներ³⁵⁷, սակայն վերջիններիս թվին հարկ է ավելացնել նաև միայն մասնակի ճանաչում ստացած Կոսովոյի Հանրապետությունը (տես Աղյուսակ 5):

³⁵⁶ Freedom in the World, <https://freedomhouse.org/report/freedom-world/freedom-world-2016>, (17.08.2016).

³⁵⁷ Freedom in the World 2016, https://freedomhouse.org/sites/default/files/FH_FITW_Report_2016.pdf, p. 24, (17.08.2016).

«Ազատության վարկանիշն աշխարհում» 2018

Հարակից և վիճելի տարածքներ	Ազատության կարգավիճակ	Քաղաքական իրավունքներ	Քաղաքացիական ազատություններ
Աբխազիա	Մասամբ ազատ	4	5
Ղրիմ	Ոչ ազատ	7	6
Գազայի հատված	Ոչ ազատ	7	6
Հոնկոնգ	Մասամբ ազատ	5	2
Հնդկական Քաշմիր	Մասամբ ազատ	4	4
Լեռնային Ղարաբաղ	Մասամբ ազատ	5	5
Հյուսիսային Կիպրոս	Ազատ	2	2
Պակիստանի Քաշմիր	Ոչ ազատ	6	5
Պուերտո Ռիկո	Ազատ	1	1
Սոմալիլենդ	Մասամբ ազատ	5	5
Հարավային Օսիա	Ոչ ազատ	7	6
Տիբեթ	Ոչ ազատ	7	7
Մերձդնեստր	Ոչ ազատ	6	6
Հորդանան գետի արևմտյան ափ	Ոչ ազատ	6	5
Արևմտյան Սահարա	Ոչ ազատ	7	7
Կոսովո	Մասամբ ազատ	3	4

«Ֆրիդոմ հաուս»-ի կողմից ներկայացվող «Ազատության վարկանիշն աշխարհում» 2013թ. տարեկան զեկույցում պետությունների ազատության վարկանիշի սահմանման համար կիրառվում են քաղաքական իրավունքները և քաղաքացիական ազատությունները ներկայացնող երկու ամփոփ ցուցիչներ: Դրանք ձևավորվում են 7 ենթացուցիչների հիման վրա՝

Քաղաքական իրավունքներ

1. ընտրական գործընթաց,
2. քաղաքական բազմակարծություն և մասնակցություն,
3. կառավարության գործունեություն,

Քաղաքացիական ազատություններ

5. ինքնարտահայտման և դավանանքի ազատություն,
6. հաղորդակցական և կազմակերպական իրավունքներ,
7. օրենքի գերակայություն,
8. անձնական ինքնավարության և անհատական իրավունքներ:

Յուրաքանչյուր ցուցիչ և ենթացուցիչ ենթադրում է թվային միավոր 1-7 թվերի սահմանում, որտեղ 1 միավորը բնորոշում է տվյալ պետության քաղաքացիական ազատության կամ քաղաքական իրավունքների ազատության ամենաբարձր, 7-ը՝ ամենացածր վարկանիշը: Քաղաքական իրավունքներ և քաղաքացիական ազատություն ցուցիչների համադրումը տալիս է տվյալ պետության ազատության վարկանիշային

կարգավիճակը, որը ենթադրում է 3 կատեգորիա՝ ազատ, մասամբ ազատ և ոչ ազատ: 1-2.5-ը համարվում է ազատ, 3.0-5.0՝ մասամբ ազատ, իսկ 5.5-7.0՝ ոչ ազատ պետություն³⁵⁸:

4.1.2. Հետխորհրդային տարածքի չճանաչված պետություններն ըստ «Ազատության վարկանիշն աշխարհում» զեկույցի

Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի և Լեռնային Ղարաբաղի (զեկույցում դեռևս չի նշվում Արցախ անվանումը) կայացածության ցուցանիշների ուսումնասիրությունը հատկապես հետաքրքրական է, քանի որ՝

- դրանք ծագել են Խորհրդային Միության փլուզման համատեքստում,
- այդ պետությունները համեմատելի են, քանի որ ձևավորվել են գրեթե միաժամանակ, ունեցել են գրեթե նույն մեկնարկային պայմանները, թեև դրանցից յուրաքանչյուրի կազմավորման քաղաքական, իրավական և պատմաձևակության նախադրյալները, ինչպես նաև քսանհինգամյա գործունեության արդյունքները տարբեր են³⁵⁹,
- ընտրված պետությունների վրա ազդեցություն ունեն նույն առանցքային աշխարհաքաղաքական (Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Եվրոպական Միություն) և տարածաշրջանային դերակատարները, որոնք, սակայն, ունեն ներգրավվածության տարբեր աստիճան³⁶⁰,
- դիտարկվող պետությունները տարբերվում են ճանաչվածության աստիճանով, ինչը հնարավորություն է տալիս գործնականում բացահայտել չճանաչված պետությունների կայացածության մակարդակի և չճանաչվածության կապը և փոխազդեցությունը: Այս չորս պետություններից միայն Աբխազիան (6 ՄԱԿ անդամ պետություն, 3 ոչ անդամ պետություն) և Հարավային Օսիան (5 ՄԱԿ անդամ պետություն, 3 ոչ անդամ պետություն) են ստացել, ճիշտ է սահմանափակ, սակայն, այնուամենայնիվ, միջազգային ճանաչում իրենց ֆինանսական և ռազմական «հովանավոր»՝ Ռուսաստանի ջանքերի շնորհիվ:

Այսպիսով «Ազատության վարկանիշն աշխարհում» զեկույցը հետևյալ կերպ է ներկայացնում (թարգմանություն «Ազատության վարկանիշն աշխարհում» 2018թ. զեկույցից) քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների իրավիճակն Աբխազիայում, Հարավային Օսիայում, Մերձդնեստրում և Լեռնային Ղարաբաղում՝

Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի և Լեռնային Ղարաբաղի (զեկույցում դեռևս չի նշվում Արցախի

³⁵⁸ Methodology: Freedom in the World 2016, <https://freedomhouse.org/report/freedom-world-2016/methodology>, (17.08.2016).

³⁵⁹ Kapitonenko M., Resolving post-Soviet “frozen conflicts”: is regional integration helpful?, *Caucasian Review of International Affairs*, Vol. 3, No. 1, 2009, pp. 37-44.

³⁶⁰ Stu Lynch D., Engaging Eurasia’s Separatist States: Unresolved Conflicts and De Facto States, United States Institute of Peace Press, Washington D.C., 2004; Hoch T., EU Strategy towards Post-Soviet De Facto States, *Contemporary European Studies*, Vol. 2, 2011, pp. 69-85; Cooley A., Mitchell L., Engagement without Recognition: A New Strategy toward Abkhazia and Eurasia’s Unrecognized States, Center for Strategic and International Studies, *The Washington Quarterly*, 33:4, 2010, pp. 59-73; Melvin N., Prelz Oltramonti G., Managing Conflict and Integration in the South Caucasus: A Challenge for the European Union, European Policy Brief, 31 October 2016.

անվանումը) կայացածության ցուցանիշների ուսումնասիրությունը հատկապես հետաքրքրական է, քանի որ՝

- դրանք ծագել են Խորհրդային Միության փլուզման համատեքստում,
- այդ պետությունները համեմատելի են, քանի որ ձևավորվել են գրեթե միաժամանակ, ունեցել են գրեթե նույն մեկնարկային պայմանները, թեև դրանցից յուրաքանչյուրի կազմավորման քաղաքական, իրավական և պատմամշակութային նախադրյալները, ինչպես նաև քսանհինգամյա գործունեության արդյունքները տարբեր են³⁶¹,
- ընտրված պետությունների վրա ազդեցություն ունեն նույն առանցքային աշխարհաքաղաքական (Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Եվրոպական Միություն) և տարածաշրջանային դերակատարները, որոնք, սակայն, ունեն ներգրավվածության տարբեր աստիճան³⁶²,
- դիտարկվող պետությունները տարբերվում են ճանաչվածության աստիճանով, ինչը հնարավորություն է տալիս գործնականում բացահայտել չճանաչված պետությունների կայացածության մակարդակի և չճանաչվածության կապը և փոխազդեցությունը: Այս չորս պետություններից միայն Աբխազիան (6 ՄԱԿ անդամ պետություն, 3 ոչ անդամ պետություն) և Հարավային Օսիան (5 ՄԱԿ անդամ պետություն, 3 ոչ անդամ պետություն) են ստացել, ճիշտ է սահմանափակ, սակայն, այնուամենայնիվ, միջազգային ճանաչում իրենց ֆինանսական և ռազմական «հովանավոր»՝ Ռուսաստանի ջանքերի շնորհիվ:

4.1.3. Ճանաչված պետությունների կայացածության գնահատման դժվարությունները

Մինչ չճանաչված պետությունների կայացածության գնահատման դժվարությունների վերհանումը, աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել պետության կառուցման և կայացման գործընթացները պայմանավորող հիմնական գործոնները, ինչպես նաև վերջիններիս առանձնահատկությունները և հավելյալ մարտահրավերները հետևողականորեն միջավայրում³⁶³: Վերոնշյալ գործընթացների վերհանումը և ուսումնասիրությունը հանգեցրին ինտեգրալ գնահատման ցուցիչի ձևավորմանը, որը կներկայացներ և կգնահատեր վերոհիշյալ գործընթացները, ինչպես նաև հնարավորություն կտար բացահայտել պետության կայացածության մակարդակը նաև չճանաչված պետություններում: Սակայն ճանաչված պետությունների հետ մեկտեղ չճանաչված պետությունների կայացածության գնահատման նախաձեռնության շրջանակներում ի հայտ եկան մի շարք խնդիրներ:

³⁶¹ Kapitonenko M., Resolving post-Soviet “frozen conflicts”: is regional integration helpful?, *Caucasian Review of International Affairs*, Vol. 3, No. 1, 2009, pp. 37-44.

³⁶² Stu Lynch D., Engaging Eurasia’s Separatist States: Unresolved Conflicts and De Facto States, United States Institute of Peace Press, Washington D.C., 2004; Hoch T., EU Strategy towards Post-Soviet De Facto States, *Contemporary European Studies*, Vol. 2, 2011, pp. 69-85; Cooley A., Mitchell L., Engagement without Recognition: A New Strategy toward Abkhazia and Eurasia’s Unrecognized States, Center for Strategic and International Studies, *The Washington Quarterly*, 33:4, 2010, pp. 59-73; Melvin N., Prelz Oltramonti G., Managing Conflict and Integration in the South Caucasus: A Challenge for the European Union, European Policy Brief, 31 October 2016.

³⁶³ MY BOOK

Նախ և առաջ, չճանաչված պետությունների գնահատումը ներկայացնող միակ մոդելն է «Ազատություն աշխարհում» ցուցիչը, որն, իր հերթին, միայն առանձին ոլորտի գնահատման ցուցիչ է և հետևաբար չի վերաբերում մնացյալ ոլորտներին, որոնք առանցքային են պետությունների կայացածության գնահատման համար: Այդ իսկ պատճառով, ինչպես արդեն նշվել է, պետության կայացածության մասին լիարժեք պատկերացում կազմելու համար գնահատումը պետք է իրականացվի գնահատման ինտեգրալ մոդելի միջոցով: Այդ նպատակով սկզբում փորձ է կատարվել իրականացնել չճանաչված պետությունների գնահատումը Դյուրաբեկ պետությունների ցուցիչի³⁶⁴ (նախկինում Չախողված պետությունների ցուցիչ) միջոցով, որի ընտրությունը հիմնականում պայմանավորված է այն փոստով, որ պետության կայացածությունը և դյուրաբեկությունը միևնույն երևույթի հակադարձ դրսևորումներն են: Այնուամենայնիվ, պետության կայացածության գնահատման բոլոր մոդելները (բացառությամբ Ազատություն աշխարհում ցուցիչի), դիտարկելով բացառապես ճանաչված պետությունները, օգտագործում են ենթացուցիչներ, որոնք ամբողջությամբ չեն ներկայացնում և բացահայտում նորաստեղծ և չճանաչված պետությունների կայացածության խնդիրները և արդեն գոյություն ունեցող ցուցիչներում առկա են դյուրաբեկ կետեր, որոնք զգալիորեն խոչընդոտում են չճանաչված պետությունների կայացածության գնահատումը: Դյուրաբեկ պետությունների ցուցիչը նույնպես բացառություն չէր:

Ի լրումն վերոնյալ խնդիրներին ցուցիչներում առկա են մի շարք թերություններ ևս. օրինակ, Դյուրաբեկ պետությունների ցուցիչը³⁶⁵ տնտեսական ոլորտը գնահատելիս կենտրոնանում է միայն սոցիալական խմբերի տնտեսական զարգացման անհամաչափության, ինչպես նաև կտրուկ և/կամ ծանր տնտեսական անկման վրա, մինչդեռ պետության կառուցման և կայացման գործընթացներում անվիճելի է տնտեսական զարգացման խթանման կարևորությունը, քանի որ պետությունը պետք է ստեղծի բարենպաստ պայմաններ առևտրի, ներդրումների, զբաղվածության և տնտեսական զարգացման համար: Սակայն, չճանաչված պետությունների կայացածության գնահատման դեպքում վերոհիշյալ գործոնների ուսումնասիրությունն առանձնահատուկ կարևոր է (հատկապես առևտրի և ներդրումների հարցերը), քանի որ այդ պետությունները միջազգային/միջպետական հարաբերությունների խիստ սահմանափակվածության պայմաններում պետք է զարգացնեն իրենց տնտեսությունը միաժամանակյա ստիպված լինելով հաղթահարել մի շարք մարտահրավերներ, ինչպիսիք են ռազմական փուլի ավարտից հետո պետության վերակառուցումն ու վերականգնումը, գլոբալացման գործընթացի խորացումն ամբողջ աշխարհում, իսկ հետխորհրդային պետությունների դեպքում մարտահրավերների այդ փաթեթը նաև համայնվում է հետխորհրդային տրանսֆորմացիայի մարտահրավերներով:

Չճանաչված պետությունների կայացածության գնահատման մեկ այլ ոչ պակաս կարևոր խնդիր է տեղեկատվության պակասը, իսկ մի շարք դեպքերում իսպառ բացակայությունը: Հատկանշական է, որ ցուցիչների մեծամասնությունն օգտագործում են թե՛ պետությունների պաշտոնական կայքէջերում ներկայացված պաշտոնական տեղեկատվությունը, զեկույցներն ու վիճակագրական տվյալներ, թե՛ գիտական հոդվածներ և

³⁶⁴Fragile States Index, The Fund for Peace. Available from: <http://ffp.statesindex.org/rankings-2014>[Accessed 15.08.2014].

³⁶⁵FragileStatesIndex, *op. cit.*

մենագրություններ, ինչպես նաև իրականացնում են սեփական փորձագիտական գնահատումը, և վերոն շյալ երկու տեսակ հետազոտությունների հանրագումարը (քանակական տվյալների վերլուծություն և որակական տվյալների ներմուծում) ներկայացնում է տվյալ ցուցիչի շրջանակներում պետության կայացածության վերջնական գնահատականը («Խաղաղություն աշխարհին» ցուցիչի շրջանակներում օգտագործվում է նույն մեթոդաբանությունը): Այնուամենայնիվ, չճանաչված պետությունների պաշտոնական կայքէջերում հաճախ հնարավոր չէ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, հատկապես խնդրահարույց է հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների պաշտոնական կայքէջերում տեղեկատվություն գտնելը: Բացառություն է Արցախի Հանրապետությունը, որի համընդգրկուն ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկություններ են պարունակում վերջինիս պաշտոնական կայքէջերը³⁶⁶: Միաժամանակ, սակավաթիվ և հակասական են չճանաչված պետություններին նվիրված գիտական հոդվածները, մենագրությունները և հրապարակումները, մինչդեռ այդ պետությունները նույնպես ունեն իրենց պետության կայացման գործընթացի գնահատման և մշտադիտարկման կարիքը:

Վերոնշյալ հանգամանքները, իրենց հերթին, հանգեցնում են մեկ այլ բարդ խնդրի առաջացմանը. տվյալների (չճանաչված պետություններին անդրադարձող գնահատման ցուցիչներ, պաշտոնական տեղեկատվություն, գիտական հոդվածներ և մենագրություններ) բացակայության պայմաններում չճանաչված պետությունների կայացածության գնահատումը պետք է իրականացվի գլխավորապես փորձագիտական գնահատման միջոցով, որն, իր հերթին, հանգեցնում է մի շարք մարտահրավերների: Մասնավորապես, փորձագիտական գնահատման դեպքում պահանջվում է լուծել հավաքագրված տեղեկատվության գործարկման մի շարք խնդիրներ, օրինակ, բոլոր պետությունների համար գնահատման ստանդարտների նույնականությունը, գնահատման վավերականությունը և հուսալիությունը: Թերևս, ամենախրթինը վավերականության հարցն է, քանի որ հետազոտության նպատակը, ինչպես նաև հետազոտողի անձնական փորձը կարող է հանգեցնել կայացածության գնահատման գործընթացում արձանագրված պարբերական (երբեմն բնավ ոչ պատահական և չգիտակցված) սխալների, որոնք, իրենց հերթին, կհանգեցնեն գնահատման աղավաղման և վավերականության բացակայության: Փորձագիտական գնահատման որակը և օբյեկտիվությունը կարող է գնահատվել մի շարք պարամետրերով՝ կողմնորման ալգորիթմի թափանցիկություն, վերստուգման համար պահանջվող աղբյուրի հասանելիություն և մատչելիություն, փորձագետի որակավորում և այլն: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ փորձագիտական գնահատումը քաղաքական էմպիրիկ հետազոտությունների անքակտելի մասն է: Բավական է նշել, որ Polity IV նախագծի և Ֆրիդրմ Հաուսի

³⁶⁶President of the Artsakh Republic. Available from: <http://www.president.nkr.am/en/home/> [Accessed 20.08.2014]; Government of Nagorno-Karabakh Republic. Available from: <http://www.gov.nkr.am/en/> [Accessed 20.08.2014]; Nagorno-Karabakh Republic Ministry of Foreign Affairs. Available from: <http://www.nkr.am/en/> [Accessed 20.08.2014]; The National Statistical Service of Nagorno-Karabakh Republic. Available from: http://www.statnkr.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=1&Itemid=2&lang=en [Accessed 20.08.2014]; Ministry of Finance and Economics of Nagorno-Karabakh Republic. Available from: <http://minfin.nkr.am/> [Accessed 20.08.2014]; State Commission Regulating of Public Services and Economic Competition of Nagorno-Karabakh Republic. Available from: <http://www.kargavorum.nkr.am/> [Accessed 20.08.2014]; Ministry of Labour and Social Affairs of Nagorno-Karabakh Republic. Available from: <http://mss.nkr.am/home/index.php> [Accessed 20.08.2014].

կողմից ներկայացվող ժողովրդավարության մակարդակը գնահատող ամենահայտնի ցուցիչները համարյա ամբողջությամբ հիմնված են փորձագիտական գնահատման վրա: Այսպիսով, ինչպես արդեն նշվեց, չնայած առկա մի շարք մարտահրավերների, փորձագիտական գնահատումն ունի էական նշանակություն պետության կայացածության գնահատման գործընթացում և առանց դրա դժվար է ձևավորել գնահատման մոդել (առաջարկվող մոդելը նույնպես բացառություն չէ): Հետևաբար, առաջարկոց մոդելի շրջանակներում մենք չենք ձգտում նվազագույնի հասցնել փորձագիտական գնահատման դերը, փոխարենը մենք տեսնում ենք խնդրի լուծումը պետության կայացածության գնահատման ընթացքում elimination of the personalization մեջ:

Սակայն, առկա է մեկ այլ խնդիր ևս. գնահատման չափորոշիչի նույնությունը բոլոր պետությունների համար՝ անկախ նրանից ճանաչված թե չճանաչված: Այսպիսով, ստեղծված իրավիճակում ճանաչված պետությունների հետ, որոնք չունեն հաստատված միջազգային հարաբերությունների հետ կապված խնդիրներ, միաժամանակյա գնահատվում են չճանաչված պետությունները, որոնք այդ խնդիրներն ունեն: Հետևաբար, հարց է առաջանում, թե արդյո՞ք արդարացի է միաժամանակյա գնահատել չճանաչված պետությունները ճանաչվածների հետ, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ, լինելով չճանաչված կամ մասնակի ճանաչված, նրանց մոտ ամբողջությամբ կամ մասնակիորեն բացակայում են հաստատված միջազգային հարաբերությունները և այդ հարաբերություններով պայմանավորված հնարավորությունները: Սակայն յուրաքանչյուր մեղալ ունի հակառակ կողմ. Միաժամանակ, մի շարք ճանաչված պետություններ (գլխավորապես եվրոպական) ունեն ռազմական ներուժի պակաս, մինչդեռ մի շարք չճանաչված պետություններ դրա պակասը չունեն: Օրինակ, մի շարք ճանաչված պետություններում (օրինակ Շվեյցարիա) բանակի առկայությունը, առավել ևս նրա չափերը ամեննին կայացածության կարևոր գործոն չեն: Այդ երկրները հաջողությամբ օգտագործում են ուրիշ մեխանիզմներ, մասնավորապես, վերազգային կառույցները և անվտանգության երաշխիքները: Սակայն առկա ռազմական ներուժը կարող է դառնալ պետության ինքնիշխանության և ազգային անվտանգության ապահովման հիմնական միջոց, մասնավորապես, միջազգային կառավարման կառույցների և խաղաղության պահպանման հարցերում լուրջ ձախողումների դեպքում, առավել ևս ներկայումս ահաբեկչական խմբավորումների գործողությունների: Մինչդեռ գոյություն ունեն նաև այնպիսի երկրներ, որոնցում առկա է բնակչության թվաքանակի համեմատ մեծաքանակ բանակ(օրինակ Լեռնային Ղարաբաղ), սակայն դա դեռևս չի երաշխավորում այդերկրներում պետության կայացածության հետ կապված խնդիրների բացակայությունը: շարքը մեկ այլ կողմից դիտարկելով՝ կարելի է փաստել, որ տնտեսական աջակցություն չստացող ռազմական ներուժը կործանարար կարող է լինել տնտեսական աճի տեսանկյունից և արագ կորցնել իր նշանակությունը, այն է ծավալուն և ինտենսիվ ռազմական սպառազինումը ծախսատար է և բախվում է սպառազինման տեխնոլոգիաների անընդմեջ նորացման խնդրի հետ: Սակայն, դա չի նշանակում, որ պետք է հաստատված միջազգային հարաբերությունները և ռազմական ներուժը բացառել ենթացուցիչների շարքից, և հարկ է փնտրել վերոնշյալ խնդիրների լուծման հեռանկարներ:

4.2. Չճանաչված պետությունների կայացածության գնահատման հեռանկարները. «Խաղաղություն աշխարհին» ցուցիչ

4.2.1. «Խաղաղություն աշխարհին» ցուցիչ. Նպատակն ու խնդիրները

Վերոնշյալ խնդիրների լուծումը, անշուշտ, պահանջում է համալիր գործողությունների մի ամբողջ համախումբ: Դրանց լուծման համար առաջին քայլն է պետության կայացածության գնահատման ինտեգրալ մոդելի ներկայացումը, որի գլխավոր գնահատողական և վերլուծական գործիքն է ինքնին «պետության կայացածությունը»՝ որպես պետության իր հիմնական գործառույթներն իրականացնելու, ինչպես նաև միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու և իրավասուբյեկտության հատկանիշներով օժտված լինելու կարողություն:

Մոդելն իր առջև նպատակ է դնում ներկայացնել պետության կայացածության ունիվերսալ գնահատման ինտեգրալ մոդել, որը հնարավորություն կտա մեկ մոդելի շրջանակներում իրականացնել և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության գնահատումը: Աշխարհի բոլոր պետությունների կայացածության գնահատումը թույլ կտա վերհանել առկա խնդիրները՝ ստեղծելով մոդել, որը գործնական կիրառություն կունենա: Պետության կայացածության ինտեգրալ գնահատումը թույլ է տալիս միաժամանակ արձանագրել պետության կայացածության բոլոր ոլորտներում և՛ առաջընթացները, և՛ հետընթացները, ինչն էլ թե՛ պետություններին, թե՛ միջազգային հանրությանը հնարավորություն է տալիս ուշադրությունը սևեռել խնդրահարույց ոլորտների վրա և օպերատիվ հանձն առնել արձանագրված խնդիրների լուծումը: Նմանատիպ մոտեցումը թույլ կտա պայքարել անվտանգության սպառնալիքների և ապակայունացման դեմ՝ նպաստելով խաղաղության հաստատմանը (այստեղից էլ մոդելի անվանումը): Նպատակն իրականացնելու համար փորձ է կատարվել լուծել հետևյալ խնդիրները՝

- մոդելը կազմավորելիս ներառել պետության կառուցումն ու կայացումը պայմանավորող բոլոր հիմնարար գործառույթները՝ շեշտը դնելով հենց պետության կայացածության համակողմանի ուսումնասիրության, այլ ոչ ճանաչված և չճանաչված պետությունների տարանջատման և տարբերությունների վերհանման վրա:
- Որպես ենթացուցիչներ ընտրել պետության կայացումը պայմանավորող բոլոր գործառույթները՝ ներկայացնելով դրանք ըստ պետության կայացածության ոլորտների՝
 1. քաղաքական ցուցիչ,
 2. տնտեսական ցուցիչ,
 3. սոցիալական ցուցիչ,
 4. անվտանգության ցուցիչ:

Այդպիսով, վերոնշյալ ցուցիչները ներկայացնում են պետության գործունեության և պետության կայացածության հաշվարկման համար առանցքային բոլոր ոլորտները: Այդ ցուցիչներից յուրաքանչյուրն իր հերթին ներկայացված է ենթացուցիչների համախմբի տեսքով, որոնց ընտրության ժամանակ առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ վերջիններս համընդգրկուն ներկայացնեն ոլորտը և պետության կայացածության մակարդակը որոշելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Հատկանշական է նաև, որ վերջիններս ընտրվել են հաշվի առնելով պետության կառուցման և կայացման համար

առանցքային գործառույթները և նախապայմանները³⁶⁷, պետությունների կայացածության առանձին ոլորտների և ինտեգրալ գնահատման մոդելների ուսումնասիրությունը: Ինչպես նաև համաչափելիության և օբյեկտիվության հետ կապված խնդիրներից խուսափելու համար հարկ է ապահովել յուրաքանչյուր ցուցիչում ներառված ենթացուցիչների ունիվերսալությունը, այն է՝ կիրառելիությունը բոլոր պետությունների համար:

- առանձնակի ուշադրություն հրավիրել անվտանգության ոլորտի վրա: Որպես կանոն, անվտանգությունն ինտեգրալ մոդելներում որպես առանձին ոլորտ ներկայացված չի լինում, սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ մոդելի միջոցով գնահատվելու են նաև չճանաչված պետությունները, որոնք հետկոնֆլիկտային փուլում միջազգային և տեղական վերահսկողության մեխանիզմների բացակայության կամ թերզարգացածության պայմաններում բնօրրան են անօրինական խմբավորումների և գործունեության համար, անվտանգությունը պայմանավորող գործոնների համապարփակ ուսումնասիրությունն առանձնահատուկ ուշադրության կարիք ունի: Իսկ առավել ևս հաշվի առնելով ներկայումս միջազգային անվտանգության ու խաղաղության առջև ծառայած սպառնալիքները՝ ապակայուն տարածաշրջանների (կլինեն դրանք ճանաչված, թե չճանաչված պետություններում) ուսումնասիրությունը հարկ է տեղափոխել նոր հարթություն: Մինչդեռ գոյություն ունեցող ինտեգրալ մոդելներն իրենց ուսումնասիրության շրջանակներից դուրս են թողնում անվտանգության պոտենցիալ խաթարիչներ հանդիսացող չճանաչված պետություններին, ինչպես նաև անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում անվտանգության ոլորտի ուսումնասիրությանը՝ սահմանափակվելով հիմնականում քաղաքական ցուցիչներում ոչ տեղին ընդգրկված մեկ կամ առավելագույնս երկու ենթացուցիչներով:

Այսպիսով, պետությունների կայացածության գնահատման համար առաջարկվող մոդելն է՝

“Peace to the World” Index

Քաղաքական ցուցիչ	
Պետության լեգիտիմություն	
Քաղաքական կայունության աստիճան	
Կառավարման արդյունավետություն / World Bank /	
Սահմանադրականություն և իրավունքի գերակայություն	
Ընտրական իրավունքի առկայություն	
Քաղաքական բազմակարծություն և մասնակցություն	
Կոռուպցիայի դեմ պայքարելու արդյունավետ մեխանիզմների առկայություն	
Տնտեսական ցուցիչ	
Տնտեսական ազատության ցուցանիշ (Տնտեսական ազատության ցուցիչ և փորձագիտական գնահատում)	
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ/ ԱՄՆ դոլար/	
ՀՆԱ տարեկան աճի տեմպեր	

³⁶⁷ Շղում մենագրությանը

ՀՆԱ իրական աճի ինդեքս / % /	
ՀՆԱ ինդեքս-դեֆլյատոր (ընթացիկ և համադրելի գներով ՀՆԱ-ի ծավալների հարաբերակցություն) / % /	
Եկամուտներ / ծախսեր ՀՆԱ	
Ծառայություններին, արտադրությանը հատկացվող ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում	
Սպառում / ՀՆԱ %/(ներառյալ ծառայությունները) Մասնավոր սպառում/ ՀՆԱ %/ Պետական սպառում / ՀՆԱ %/	
Ներմուծում / զուտ արտահանում /ՀՆԱ %/ ապրանքների և ծառայությունների	
Արտաքին պարտքի հարաբերակցություն ՀՆԱ /%/	
Արտաքին օգնության մասնաբաժինը պետության համախառն եկամուտի մեջ	
Պետական եկամուտների արդյունավետ բաշխում/ Ջինիի գործակիցն փորձագիտական գնահատում/	
Սոցիալական ցուցիչ	
Հիմնական ծառայությունների տրամադրում	
Զբաղվածության ցուցանիշ	
Աշխատաշուկայի կայունություն	
Հասարակական ծառայությունների որակ	
Սոցիալական պաշտպանությանն պատկան մետուարդյունավետ քաղաքականություն	
Հասանելի և որակյալ առողջապահություն և պարտադիր բժշկական ապահովագրություն	
Կրթության մակարդակ	
Փախստականներ և ներքին տեղահանված անձանց նվազագույն սոցիալական պայմանների և իրավունքների պաշտպանություն	
Շրջակա միջավայրի պաշտպանություն	
Անվտանգության ցուցիչ	
Ուժային կառույցների որակն արդյունավետություն	
Սահմանային նմաքսային վերահսկողություն	
Պետության տարածքում անջատողական միտումների, քաղաքացիական պատերազմների, տարածքային հավակնություններ ունեցող միավորների, ոչ ինքնորոշման հակամարտությունների և ներքին զինված հակամարտությունների բացակայություն	
Օտարերկրյա ռազմակայանների և խաղաղարար առաքելությունների բացակայություն	
Անօրինական զինված կամ ավորումների բացակայություն	
Անօրինական գործունեության (թմրանյութեր, զենքի ապօրինի վաճառք, թրաֆիքինգ) բացակայություն	
Արտաքին սպառնալիքների բացակայություն	

4.2.2. Տեսական և մեթոդաբանական հիմքերը: Գնահատման մեթոդաբանությունը

Պետությունների կայացածության մակարդակը գնահատող «Խաղաղություն աշխարհին» ինտեգրալ ցուցիչի համար մշակվել է գնահատման այնպիսի մեթոդաբանություն, որը թույլ կտար առավելագույնս օբյեկտիվ իրականացնել յուրաքանչյուր պետության կայացածության գնահատումը:

Քանի որ ցուցիչը գնահատելու է ն՝ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության մակարդակը, հարկ էր մշակել միաժամանակ և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության գնահատման համար կիրառելի մեթոդաբանություն: Սա, թերևս, իրական մարտահրավեր էր, քանի որ համակողմանի ուսումնասիրության համար հարկ է օգտագործել որակական և քանակական տվյալների համագումարային վերլուծության մեթոդը, որը հնարավոր է կատարել 3 տեսակ տեղեկատվության հավաքագրման արդյունքում (ավելի մանրամասն տես I Փուլ՝ Առանձին դեպքի ուսումնասիրություն):

Ցուցիչը ներկայացնում է գնահատման և արդյունքների մշակման փուլային եռաստիճան համակարգ հետևյալ փուլերով՝

1. առանձին դեպքի ուսումնասիրություն,
2. կլաստերային վերլուծություն՝ ըստ տարածաշրջանների (տարածաշրջանում ընդգրկված և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների համախումբը), նաև առանձին կլաստերային վերլուծություն միայն չճանաչված պետությունների շրջանակներում,
3. գլոբալ համեմատություն:

Վերոնշյալ փուլերից յուրաքանչյուրի համար մշակվել է գնահատման հատուկ մեթոդաբանություն, որը թույլ կտա առավելագույնս արդյունավետ լուծել տվյալ փուլում առաջադրված խնդիրները: Հատկանշական է նաև, որ գնահատման և արդյունքների մշակման փուլային եռաստիճան համակարգի յուրաքանչյուրի փուլի շրջանակներում հրապարակվելու են առանձին պետությունների գնահատման ընթացքը և արձանագրած արդյունքները (I փուլ՝ առանձին դեպքի ուսումնասիրություն), ըստ տարածաշրջանների առանձնացված ճանաչված և չճանաչված պետությունների և առանձին չճանաչված պետությունների համախմբի շրջանակներում իրականացված վերլուծությունը (II փուլ՝ կլաստերային վերլուծություն), ինչպես նաև պետությունների գրանցած արդյունքների համեմատական վերլուծությունը (III փուլ՝ գլոբալ համեմատություն) ներկայացնող մանրամասն զեկույցներ:

I ՓՈՒԼ՝ Առանձին դեպքի ուսումնասիրություն

Սույն փուլում յուրաքանչյուր պետության կայացածության մակարդակի ինտեգրալ գնահատման համար ցուցիչն օգտագործում է որակական և քանակական տվյալների համագումարային վերլուծության մեթոդը, որը հնարավոր է կատարել հետևյալ 3 տեսակ տեղեկատվության հավաքագրման արդյունքում՝

1. պաշտոնական տեղեկատվության և վիճակագրական տվյալներ, պետական կայքէջերում տեղ գտած զեկույցներ,
2. գիտական հոդվածների ու մենագրություններ,
3. կատարած սեփական փորձագիտական հետազոտության արդյունքներ:

Սակայն վերոնշյալ տեղեկատվության մի մասի, մասնավորապես, պաշտոնական տեղեկատվության և վիճակագրական տվյալների, պետական կայքէջերում տեղ գտած զեկույցների, ինչպես նաև գիտական հոդվածների և մենագրությունների, հավաքագրումը չճանաչված պետությունների դեպքում խնդրահարույց է, քանի որ վերջիններս կամ

անհասանելի են, կամ, առհասարակ, բացակայում են: Պաշտոնական տեղեկատվության և վիճակագրական տվյալների հավաքագրման խնդրի որպես նախնական լուծում կընտրվի չճանաչված պետությունների հետ ուղիղ կապի հաստատումը և պաշտոնական տեղեկատվության հայցումը, և տվյալ մեթոդի արդյունավետությունը կգնահատվի գործնական կիրառության ժամանակ, այն է՝ ինքնին մոդելի կիրառման ընթացքում: Չճանաչված պետությունների հետ համագործակցելու համար վերջիններիս կներկայացվեն մոդելի նպատակները և խնդիրները, սակայն, անշուշտ, մտավախություն կա, որ մի շարք չճանաչված պետություններ կարող են չհամաձայնվել տրամադրել հայցվող տեղեկատվությունը: Հավանաբար այդ դեպքում լուծում կարող է լինել փորձագետների տեղում՝ չճանաչված պետություններում, պաշտոնական տեղեկությունների ձեռքբերման փորձը: Ինչ վերաբերում է գիտական հոդվածներին և մենագրություններին, ապա նախատեսվում է մշակել հատուկ որոնողական ծրագիր, որը կգտնի համացանցում տեղադրված բոլոր գիտական հոդվածներն ու մենագրությունները, այդուհանդերձ, չճանաչված պետություններին նվիրված գիտական աշխատանքները քանակական և որակական առումով ունեն թերություններ, որոնք փորձ կկատարվի լրացնել փորձագիտական գնահատման ընթացքում:

Մոդելի շրջանակներում մշակվել են յուրաքանչյուր ենթացուցիչի համար գնահատման միավորների պայմանների սահմանման չափանիշներ: Այն է՝ քանի որ յուրաքանչյուր ենթացուցիչ գնահատվում է 5 միավորի շրջանակներում, ապա յուրանքայուր միավորային արդյունքի համար նախօրոք սահմանված է այն պայմանը, որի դեպքում տվյալ իրադրությունը կստանա այս կամ այն միավորային գնահատականը (0-5):

II՝ կլաստերային վերլուծության, և III՝ գլոբալ համեմատության, փուլերի շրջանակներում մշակել I փուլում ստացված պետությունների գրանցած արդյունքների մշակման և համեմատական վերլուծության մեթոդաբանություն: Պետությունների գրանցած արդյունքների համեմատական վերլուծության թերարժեքությունից և հնարավոր խեղաթյուրումներից խուսափելու համար հարկ է համեմատության ենթարկել ոչ թե պետությունների գնահատման արդյունքում ստացված վերջնական գնահատականները, այլ համեմատությունն իրականացնել ըստ ենթացուցիչների, ինչը, անշուշտ, համեմատաբար ժամանակատար է, սակայն ավելի արդյունավետ:

Կլաստերային վերլուծություն

II փուլի, այն է՝ կլաստերային վերլուծության ժամանակ, որի շրջանակներում, ըստ ամենայնի, ներառվում են համեմատաբար քիչ թվով երկրներ (ըստ տարածաշրջանների, առանձին կլաստեր չճանաչված պետությունների համար) ըստ ենթացուցիչների համեմատական բովանդակային վերլուծությունն առավել քան հնարավոր է:

Գլոբալ համեմատություն

III փուլի, այն է՝ գլոբալ համեմատության ժամանակ, հաշվի առնելով մշակվելիք տեղեկատվության ահռելի ծավալը, ինչպես նաև I և II փուլերի ընթացքում թե՛ յուրաքանչյուր պետության գրանցած արդյունքների, թե՛ ըստ տարածաշրջանների համեմատական վերլուծության շրջանակներում արդյունքների արդեն իսկ համակողմանի ներկայացված լինելը, ավելի նպատակահարմար է սահմանափակվել ըստ ենթացուցիչների արձանագրած արդյունքների միայն թվային միավորների համեմատությամբ:

Ցուցիչի շրջանակներում նախատեսվում է յուրաքանչյուր տարի ներկայացնել տարեկան զարգացման դինամիկան ներկայացնող զեկույց, որը թույլ կտա ըստ ժամանակագրության (տարեկան կտրվածքով) ծանոթանալ յուրաքանչյուր պետության թե՛ առանձին ենթացուցիչների, թե՛ գրանցած ամփոփիչ արդյունքների զարգացման կամ, ընդհակառակը, հետընթացի դինամիկային: Նմանատիպ զեկույցները կարևորվում են նաև երկրների միջև դիրքային համեմատության շնորհիվ, ինչը միանգամայն հասկանալի է, քանի որ առանց դիրքային վարկանիշավորման գնահատման արդյունքների դիրքային և բովանդակային համեմատության գործնականում անհնար է համակողմանի պատկերացում կազմել թե՛ տվյալ պետությունում, թե՛ տարածաշրջանում, թե՛ աշխարհում տեղի ունեցող զարգացումների մասին: Գոյություն ունեցող մոդելներից մի քանիսը հրապարակում են տարեկան զարգացման (կամ մի շարք մոդելների դեպքում՝ հետընթացի) դինամիկան ներկայացնող զեկույցներ, այդուհանդերձ, վերոնշյալ մոդելները չեն հրապարակում պետությունների գրանցած ո՛չ ըստ ենթացուցիչների, և ո՛չ էլ ամփոփիչ արդյունքները ներկայացնող զեկույցներ՝ սահմանափակվելով միայն տարբեր տարիների ամփոփիչ ցուցչային արդյունքները (թվային արժեքներով) ներկայացնող տարատեսակ զծապատկերներով:

Քանի որ ցուցիչի նպատակն է խնդրահարույց ոլորտների հայտնաբերումը և դրանց լուծման հարցում առաջարկների ներկայացումը, ցուցիչի շրջանակներում նախատեսվում է նաև գնահատման արդյունքում դյուրաբեկ կամ ձախողված պետությունների ցանկում հայտնված պետությունների համար ներկայացնել առանձին զեկույցներ / խնդրահարույց ոլորտների համար ներկայացնել առանձին զեկույցներ:

4.2.3. Տեսաբանական և մեթոդական հիմքերը.

4.2.4. Theoretical and Methodological Basis: Field-Indexes and Sub-Indexes

Քաղաքական ցուցիչ

Պետության լեգիտիմություն: Լեգիտիմությունը հիմք է ապահովում իշխանության համար, սակայն ոչ թե հարկադիր կերպով, այլ հասարակության համաձայնությամբ: Լեգիտիմության բացակայությունը, անշուշտ, նպաստում է պետության դյուրաբեկությանը, քանի որ խաթարում է կապն իշխանությունների և հասարակության միջև և հարցականի տակ է դնում քաղաքական էլիտայի իշխանության ապագան: Լեգիտիմությունը համապատասխանում է իրավունքի և արդարության մասին մարդկանց գաղափարներին, դրանց հիմքում ընկած արժեքներին ու նորմերին, ինչպես նաև ընտրազանգվածի - էլիտայի - լիդերության ինտերակտիվների միջև առկա այն օրինական փոխհարաբերություններին, որոնց վրա ձևավորվում է քաղաքական իշխանությունը: Իսկ վերջինը լեգիտիմ է, եթե՝

ա) ժողովրդից է բխում և իրագործվում է մեծամասնության կամքին համապատասխան (պետական իշխանություն ունեցող ուղղակի կամ անուղղակի ընտրված է ժողովրդի կողմից որոշակի ժամանակով և նրա կողմից էլ կարող է վերահսկվել),

բ) պետական իշխանությունն իրականացվում է սահմանադրական սկզբունքներին համապատասխան:

Պետության լեգիտիմություն	
	5
	4
	3
	2
	1
	0

Քաղաքական կայունության աստիճան: Քաղաքական կայունության դիտարկումն առանցքային դեր ունի է տվյալ համատեքստում, քանի որ վերջինս սերտորեն փոխկապակցված է և փոխազդում է պետության կայացածության համար առանցքային մյուս նախապայմանների հետ: Օրինակ, քաղաքական կայունության ապահովման համար կառավարությունը պետք է ի գործ լինի հասարակությանը տրամադրել հիմնական ծառայությունները և իրականացնել պետական եկամուտների արդյունավետ բաշխում, մինչդեռ անկայուն քաղաքական միջավայրը կարող է զգալիորեն նվազեցնել տնտեսական զարգացածության մակարդակը, ներդրումների ծավալները՝ հանգեցնելով տնտեսական լճացման կամ անկման, քաղաքական ապատիայի, սոցիալական պայմանների վատթարացման և այլն:

Քաղաքական կայունության աստիճանի գնահատման համար հարկ է դիտարկել՝

- ա) հասարակությունում և քաղաքական վերնախավում սահմանված հարցերի շուրջ համաձայնության աստիճանը,
- բ) հասարակական վեճերի կամ քաղաքական ընդդիմադիր ուժերի միջնաբացառապես օրենքի շրջանակներում պայքարի մակարդակը,
- գ) իշխանափոխության խաղաղ և լեգիտիմ մեխանիզմների և ձևերի առկայությունը:

Քաղաքական կայունության աստիճան	
	5
	4
	3
	2
	1
	0

Կառավարման արդյունավետություն: Կառավարման արդյունավետության գնահատման բաղադրիչներին անդրադառնալուց առաջ, հարկ է նշել, որ «Խաղաղություն աշխարհին» ցուցիչը որպես «արդյունավետ» է որակավորում այն կառավարությունը, որն իրականացնում է այնպիսի պետական կառավարում, որի շրջանակներում հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքն ու անվտանգությունը, իրավունքներն ու ազատությունները հանդիսանում են բարձրագույն արժեքներ՝ ամրագրված լինելով երկրի հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ: Տվյալ համատեքստում կառավարման արդյունավետությունը գնահատելիս հարկ է դիտարկել՝

- ա) պետական քաղաքականության մշակման և իրագործման որակը,

բ) մշակված քաղաքականության կատարման համար պետականության անհրաժեշտ հիմքերի ստեղծմանն ու շարունակաբար ամրապնդմանն ուղղված մարտավարության իրականացման մակարդակը,

գ) բոլոր պետական ինստիտուտների առկայությունը, վերջիններիս արդյունավետ գործունեության աստիճանը, ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման մակարդակը,

դ) պետական կառավարման համակարգում հաշվետվողականության, թափանցիկության և պատասխանատվության սկզբունքների գերակայության ապահովումը,

ե) կառավարության ռազմավարական ծրագրերի քննարկմանը հասարակության ներգրավվածության աստիճան:

ընդլայնել պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությունն ու համակարգի վերաբերյալ իրազեկվածությունը, բարելավել պետական կառավարման համակարգի գործունեության թափանցիկությունը

Կառավարման արդյունավետություն / World Bank /	

Սահմանադրականություն և իրավունքի գերակայություն: Սահմանադրությունը՝ պետության հիմնական օրենքը, ամրագրում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, մարդու և պետության միջև հիմնարար հարաբերությունները, ինչպես նաև պետական իշխանության կառուցվածքը: Յուրաքանչյուր ժամանակակից Սահմանադրություն ունի երկու հիմնական խնդիր՝ երաշխավորել մարդու հիմնական իրավունքները և սահմանել ժողովրդավարության և իրավական պետության պահանջներին համապատասխանող պետական իշխանության մարմինների համակարգ: Ըստ այդմ, կարևոր է դիտարկել սահմանադրականության հարցը³⁶⁸, այն է՝ թե ինչպիսի արդյունավետությամբ է իրավցում իրական կյանքում Սահմանադրությամբ ամրագրված այս կամ այն դրույթը:

Ինչպես նշվում է ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հաշվետու զեկույցում, իրավունքի գերակայությունը կառավարման այն սկզբունքն է, համաձայն որի հասարակության բոլոր անդամները, պաշտոնատար անձիք, պետական և հասարակական կազմակերպությունները և միավորները, ինչպես նաև ինքնին պետությունը պետք է ենթարկվեն այն օրենքներին, որոնք, իրենց հերթին, հրապարակայնորեն հրապարակված, հավասարապես գործող և ինքնուրույն եսիմ ինչ, և որոնք համապատասխանում են մարդու իրավունքների միջազգային նորմերին և չափանիշներին: Այն նաև ենթադրում է համապատասխան միջոցների ձեռնարկում օրենքի գերակայության, օրենքի առջև հավասարության, օրենքի առջև պատասխանատվության, օրենքի կիրառման արդարության, իշխանությունների բաժանման, որոշումների կայացմանը մասնակցության, իրավական որոշակիության, իրավական

³⁶⁸Harutyunyan G., Constitutional Monitoring, “Njar”, Yerevan, 2016.

կամայականությունից խուսափելու, ինչպես նաև ընթացակարգային և իրավական թափանցիկության սկզբունքների երաշխավորման համար³⁶⁹: Արդարադատության համակարգը պետություն-հասարակություն հարաբերությունների և պարտավորությունների բաշխման առանցքային բաղադրիչն է: Հասարակությունը պետք է կարողանա իրավունքի գերակայության շնորհիվ օգտվել արդարադատության մեխանիզմներից և տեղյակ լինել պետություն-հասարակություն հարաբերություններում իր՝ որպես քաղաքացի, իրավունքներից և պարտավորություններին:

Սահմանադրականության և իրավունքի գերակայության աստիճանի գնահատման համար հարկ է դիտարկել, թե արդյոք պետությունում երաշխավորվում է՝

- մարդու արժանապատվության ճանաչումը և հարգումը, նրա իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորումը,
- դատաիրավական համակարգի, իրավապահ մարմինների աշխատանքի մշտապես կատարելագործումը, նրանց գործունեության նկատմամբ պետական հասարակական արդյունավետ վերահսկողության ապահովումը,
- օրենքի գերակայության երաշխավորումը և ապահովումը,
- իշխանությունների բաժանումը,
- անկախ դատական իշխանության առկայությունը,
- Սահմանադրության գերակայության երաշխավորումը:
 - քաղաքական, տնտեսական եւ վարչական ուժի օպտիմալ ապակենտրոնացումը,
 - իշխանությունների ընտրովիությունն ու վերահսկելիությունը,

Սահմանադրականություն և իրավունքի գերակայություն	

Ընտրական իրավունքի առկայություն: Ընտրությունների, հատկապես, արդար և թափանցիկ ընտրությունների, դերը:

Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի պահպանում նշանակում է հետևյալը.

ա) Սահմանադրությամբ, օրենքներով սահմանված տարիքը լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ընտրելու և ընտրվելու պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններում, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում, ընտրովի պաշտոններում՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պայմաններով և կարգով.

³⁶⁹Report of the Secretary-General on the rule of law and transitional justice in conflict and post-conflict societies (S/2004/616), <http://www.ipu.org/splz-e/unga07/law.pdf>, ()

բ) իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններում, ժողովրդական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում, ընտրովի պաշտոններում քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքն իրականացվում է՝ անկախ սեռական, լեզվական, դավանական կամ կրոնական հատկանիշներից, առանց քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագումի, ազգային փոքրամասնության կամ էթնիկ խմբի պատկանելու, գույքային կամ այլ նմանատիպ հանգամանքների որևէ խտրական բնույթի սահմանափակումների:

գ) ազգային ընտրությունների անցկացման ժամանակ իր պետության սահմաններից դուրս բնակվող կամ գտնվող յուրաքանչյուր քաղաքացի ունի իր պետության մյուս քաղաքացիներին հավասար ընտրական իրավունքներ: Դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց պաշտոնատար անձինք աջակցում են քաղաքացիների ընտրական իրավունքների և ազատությունների իրականացմանը:

դ) յուրաքանչյուր քաղաքացու երաշխավորվում է ընտրողների ցուցակում իրեն ընդգրկելու մասին տեղեկություն ստանալու, դրա ամբողջականությունը և իսկությունն ապահովելու նպատակով այդ տեղեկատվությունը ճշտելու, ընտրողների ցուցակում ընդգրկելու մերժումը օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու իրավունք:

Ընտրական իրավունքի առկայություն	

Քաղաքական բազմակարծություն և մասնակցություն

Քաղաքական բազմակարծության հասկացությունը վերաբերում է ժողովրդավարության բաղադրիչին, որտեղ կա բազմազանություն, կարծիքների բազմազանություն կամ բազմազանություն, եւ որտեղ խմբերը ազատ են արտահայտվում իրենց քաղաքական համակարգում: Պլյուրալի եւ ժողովրդավարության միջեւ կապը շատ կարեւոր է. Ժողովրդավարությունը պահանջում է, որ բոլոր մարդիկ, իրենց բոլոր տարբեր գաղափարախոսությամբ, կարծիքներով եւ արժեքներով, ազատ լինեն կառավարությանը: Իդեալում, բազմակարծությունը պահանջում է, որ ոչ մի խումբ չի ունենա հատուկ հայտարարություն, որը լսվում է ուրիշների առաջ կամ լռելու ուրիշներին: Այս իմաստով, ժողովրդավարությունը հաստատում է, որ հասարակության մեջ բոլոր խմբերն ու կարծիքները պետք է ազատ լինեն ուշադրության համար եւ հետեւորդների համար:

Ցանկացած հասարակության մեջ ավելի մեծ ժողովրդավարացման իրականացման համար պահանջվող կարեւոր պահանջը իրական քաղաքական բազմակարծության պրակտիկան է, որը նույնպես կարող է դրսևորվել այդ հասարակության բոլոր մակարդակներում լիարժեք փչացած բազմակուսակցական քաղաքական զիջման մեջ:

Քաղաքական բազմակարծության համար հաջողության հասնելու համար, շրջակա միջավայրը, որը պետք է կիրառվի, պետք է լինի այն, ինչը թույլ է տալիս աշխատել, այսինքն՝ գոյություն ունի բազմակուսակցական քաղաքականության հիմք: Երկրորդը, մարդիկ պետք է վայելեն իրենց քաղաքացիական եւ քաղաքական ազատությունները: Նույնքան կարևոր է, որ քաղաքական բազմակարծությունը պահանջում է, որ քաղաքական կուսակցությունները ոչ միայն լինեն տեղական մակարդակով, այլ նաեւ իրականացնում են ներքին ժողովրդավարությունը եւ ուժ ունենան այդ մակարդակում լավ եւ արդյունավետ կազմակերպելու համար: Վերջապես, քաղաքացիական հասարակության դերը կարևոր է քաղաքական բազմակարծության հաջողության խթանման եւ ապահովման գործում:

Մասնակիցը ժողովրդավարության բաղադրիչն է, որը վերաբերում է այն գործընթացներին, որոնց միջոցով մարդիկ գործել են քաղաքական ձեւերով, կառավարությանը կապելու եւ այդպիսով դառնալ ինքնակարգավորվող կառավարություն: Դեմոկրատական մասնակցությունը կարող է տեղի ունենալ երկու ձեւով. Նախ, մարդիկ կարող են մասնակցել ժողովրդավարության ընդունված ձեւերի հաստատված կառույցների միջոցով, հիմնականում ընտրությունների միջոցով, որոնք պետք է լինեն ազատ եւ արդար, եւ, որոշ դեպքերում, հիմնական քաղաքական հարցերի վերաբերյալ հանրաքվեների միջոցով: Երկրորդ, նրանք կարող են մասնակցել այլընտրանքային ալիքների միջոցով, որոնք տրամադրվում են ակտիվ քաղաքացիական հասարակության կողմից, որտեղ մարդիկ կազմակերպվում են քաղաքացիական հասարակություններում եւ իրենց շահերն ու մտահոգությունները հայտնում են: Նման ասոցիացիաներին մասնակցելը կարևոր է, քանի որ նրանք օգնում են պաշտպանել խմբի շահերը եւ բարձրացնել որոշակի խնդիրների վերաբերյալ տեղեկացվածությունը: Բացի այդ, այդպիսի ասոցիացիաների եւ խմբերի միջոցով մասնակցությունը վերացնում է անհատական մեկուսացումը եւ ուժեղացնում է ժողովրդի դիրքերը առաջնորդների ներգրավման համար սեփական շահերի եւ ընդհանուր առմամբ համայնքի համար:

Քաղաքական բազմակարծություն և մասնակցություն	

Կոռուպցիայի դեմ պայքարելու արդյունավետ մեխանիզմների առկայություն

Կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրական բացերի, կոռուպցիա ծնող պատճառների վերացում, այդ գործընթացում թափանցիկության բարձրացում՝ շեշտադրելով կոռուպցիայի դեմ պայքարի «կանխարգելիչ» մոտեցման գերակայությունը

Հակակոռուպցիոն կոռուպցիան, որպես այդպիսին, չպետք է ընտրվի առանցքային հատվածի իր ծայրահեղ բնույթի պատճառով, սակայն այն կարող է լինել որոշակի գործողությունների առարկա, երբ առկա են քաղաքական կամ սոցիալական «հնարավորությունների պատուհանները»: Հատուկ աջակցության դեպքում այն կարող է թիրախ դարձնել այնպիսի

կարողությունների զարգացում, ժողովրդավարացման (ընտրություններ, խորհրդարաններ, լրատվամիջոցներ եւ այլն), պետական կառավարման բարեփոխումների (պետական ֆինանսների կառավարման, ապակենտրոնացման) եւ քաղաքացիական հասարակության մասնակցության եւ ամրապնդման ոլորտներում թափանցիկության եւ հաշվետվողականության խթանումը: Որոշ օժանդակություն կարող է նաեւ տրամադրվել իրավապահ մարմիններին կամ այլ հաստատություններին, ինչպիսիք են `« հակակոռուպցիոն հանձնաժողովները », եթե այն ներգրավված է ավելի մեծ երկրում գտնվող հակակոռուպցիոն կամ դոնորների կողմից իրականացվող ամբողջականության ռազմավարության մեջ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է զգույշ գնահատել նոր ծառայությունների հաստատումը, այլ ոչ թե գործող ծառայությունների մասնագիտացված ստորաբաժանումները:

Կոռուպցիայի դեմ պայքարելու արդյունավետ մեխանիզմների առկայություն	

Տնտեսական ցուցիչ

11. գործարարության ազատությունը,
12. առևտրի ազատությունը,
13. հարկաբյուջե տային ազատությունը,
14. կառավարության ճախսերը,
15. դրամավարկային ազատությունը,
16. ներդրումների ազատությունը,
17. ֆինանսական ազատությունը,
18. սեփականության իրավունքը,
19. կոռուպցիայից դերձ մնալը,
20. աշխատանքի ազատությունը:

Տնտեսական ազատության ցուցանիշ (Տնտեսական ազատության ցուցիչ և փորձագիտական գնահատում)	

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ/ ԱՄՆ դոլար/	

ՀՆԱ տարեկան աճի տեմպեր	

ՀՆԱ իրական աճի ինդեքս / % /	

ՀՆԱ ինդեքս-դեֆլյատոր (ընթացիկ և համադրելի գներով ՀՆԱ-ի ծավալների հարաբերակցություն) / % /	

Եկամուտներ / ծախսեր ՀՆԱ	

Ծառայություններին, արտադրությանը հատկացվող ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում	

Սպառում / ՀՆԱ %/ (ներառյալ ծառայությունները)	

Ներմուծում / զուտ արտահանում /ՀՆԱ %/ ապրանքների և ծառայությունների	

Արտաքին պարտքի հարաբերակցություն ՀՆԱ /%/	

Արտաքին օգնության մասնաբաժինը պետության համախառն եկամուտի մեջ	

Պետական եկամուտների արդյունավետ բաշխում / Ջինիի գործակիցն փորձագիտական գնահատում/	



Սոցիալական ցուցիչ

Հիմնական ծառայությունների տրամադրում	

Զբաղվածության դրույքաչափերը սահմանվում են որպես միջոցներ, որոնք առկա են մատչելի աշխատատեղեր: Դրանք հաշվարկվում են որպես բնակչության հարաբերակցությունը: Զբաղվածության ցուցանիշները զգայուն են տնտեսական ցիկլի նկատմամբ, սակայն երկարաժամկետ հեռանկարում դրանք զգալիորեն ազդում են կառավարությունների եւ բարձրագույն կրթության վրա: Աշխատակիցները 15 տարեկան կամ ավելի են, ովքեր աշխատում են հանգստյան օրերին: Աշխատանքային տարիքի բնակչությունը վերաբերում է 15-64 տարեկան անձանց: Այս ցուցանիշը սեզոնային կերպով ճշգրտված է եւ այն չափվում է 15-ից բարձր տարիքի մարդկանց թվով, եւ որպես աշխատանքային տարիքի բնակչության տոկոս:

Զբաղվածության ցուցանիշ	

Չնայած աշխատանքի անապահովության աճող ընդհանուր զգացողությանը, զբաղվածությունը շարունակում է մնալ կայուն: Կայուն զբաղվածության հարաբերությունները դրդում են ընկերություններին ուսուցանել իրենց աշխատողներին, մինչդեռ փոխհատուցման կառուցվածքը ընկերության համար աշխատելը եւ չխանգարելն է: Արդյունքն այն է, որ աշխատողի արտադրողականության բարձրացումը եւ ընկերության արտադրանքը:

Կայուն զբաղվածության հարաբերությունները կարող են օգնել տնտեսության կողմից, ապահովելով կայուն եւ աճող գնողունակություն եւ խթանելով սպառողական պահանջարկը: Այնուամենայնիվ, երկարաժամկետ աշխատանքային հարաբերությունները պարտադիր չէ, որ կապված են աշխատանքի անվտանգության զգացումների հետ: Ճապոնիան նկարագրում է այս լավ արդյունքը, քանի որ երկարատեւ աշխատունակությունը զուգորդվում է աշխատանքի անաշխատունակության մեծ զգացումով: Այս պարադոքսին շատ պատճառներ կան. Տնտեսական ճգնաժամ, անկում, աճող գործազրկություն եւ ԶԼՄ-ների հաշվետվություն, բոլորը ազդում են աշխատողների, նույնիսկ երկարաժամկետ աշխատատեղերի ընկալման վրա:

Եթե, մյուս կողմից, սոցիալական պաշտպանության համակարգ է մշակվում, աշխատողների եւ գործատուների շրջանում տարածվում է աշխատանքից ազատվելու բեռը, տնտեսական անկման բացասական ազդեցությունը կարող է մեղմվել: Գործազրկության ապահովագրությունն այդպիսի հաստատություն է:

Աշխատաշուկայի կայունություն	

Հասարակական ծառայությունների որակ	

Սոցիալական պաշտպանությանն պատկան տուարդյունավետ քաղաքականություն	

Հասանելի և որակյալ առողջապահություն և պարտադիր բժշկական ապահովագրություն	

Կրթության մակարդակ	

Փախստականները եւ ներքին տեղահանված անձանց ցուցիչը չափում են այնպիսի պետությունների վրա, որոնք առաջ են բերում սոցիալական, քաղաքական, շրջակա միջավայրի կամ այլ պատճառների հետեւանքով խոշոր համայնքների հարկադիր տեղահանման հետեւանքով, չափում երկրներում տեղահանվածությունը, ինչպէս նաեւ փախստականների հոսքերը մյուսների մեջ: Այս ցուցանիշը փախստականներին վերաբերում է Ապաստանի երկրի կողմից ՝ ընդունելով, որ բնակչության ներհոսքը կարող է լրացուցիչ ճնշում գործադրել հանրային ծառայությունների վրա, եւ երբեմն էլ կարող է ավելի հումանիտար եւ անվտանգության խնդիրներ առաջացնել ստացող պետության համար, եթե այդ երկիրը չունի կլանման կարողություն եւ համապատասխան ռեսուրսներ: Ցուցանիշը նաեւ չափում է ներքին տեղահանված անձանց (ՓԼ / ԱՖ) եւ Փախստականների կողմից ծագման երկիրը, ինչը նշանակում է ներքին պետական ճնշում ՝ բռնության, շրջակա միջավայրի կամ առողջության համաճարակների այլ գործոնների հետեւանքով: Այս միջոցները հաշվի են առնվում պետության բնակչության համատեքստում (մեկ շնչի հաշվով) եւ մարդկային զարգացման տրաֆիկով եւ ժամանակի ընթացքում (տարին մեկ անգամ),

ճանաչելով, որ որոշ տեղահանվածներ կամ փախստականներ, օրինակ, երկար ժամանակով տեղահանվել են:

Փախստականներ և ներքին տեղահանված անձանց նվազագույն սոցիալական պայմանների և իրավունքների պաշտպանություն	

Անվտանգության ցուցիչ

Ուժային կառույցների որակ և արդյունավետություն	

Սահմանային և մաքսային վերահսկողություն	

Պետության տարածքում անջատողական միտումների, քաղաքացիական պատերազմների, տարածքային հավակնություններ ունեցող միավորների, ոչ ինքնորոշման հակամարտությունների և ներքին զինված հակամարտությունների բացակայություն	

Օտարերկրյա ռազմակայանների և խաղաղարար առաքելությունների բացակայություն	

Անօրինական զինված կազմավորումների բացակայություն	

Անօրինական գործունեության (թմրանյութեր, զենքի ապօրինի վաճառք, թրաֆիքինգ) բացակայություն	

Արտաքին սպառնալիքների բացակայություն	

մշակել պետության կայացածության գնահատման արդյունքների դիրքային վարկանիշավորման հնգաստիճան մեթոդաբանություն, այն է՝ ստացված արդյունքները խմբավորել ըստ պետության կայացածության մակարդակների՝

1. կայացած - ,
2. միջին կայացածության - ,
3. դյուրաբեկ - ,
4. ձախողման սպառնալիքի տակ - ,
5. ձախողված - :

I փուլի՝ առանձին դեպքի ուսումնասիրության շրջանակներում ներկայացնել յուրաքանչյուր պետության գնահատման արդյունքներն ըստ ենթացուցիչների:Գոյություն ունեցող ցուցիչների մեծամասնությունը չի ներկայացնում պետությունների գնահատման բովանդակային մասը՝ փոխարենը յուրաքանչյուր ենթացուցիչի դիմաց հրապարակելով միայն միավորային գնահատականները և, իհարկե, դրանց գումարը՝ ամփոփիչ միավորային գնահատականը:Այդ պարագայում պարզապես անհնար է ծանոթանալ պետությունների գնահատման արդյունքներին, գնահատել վերջիններիս օբյեկտիվությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև կիրառել դրանք սեփական հետազոտության շրջանակներում: Վերոնշյալ խնդիրներից խուսափելու համար «Խաղաղություն աշխարհին» մոդելի շրջանակներում իրականացրած յուրաքանչյուր պետության գնահատման արդյունքները հրապարակվելու են ըստ ենթացուցիչների ներկայացված մանրամասն զեկույցներում: